

825
P-67

1929

269

W31

1/5

30 MAY 2011

Գ. ԲԻՉԸՐ-ՍՏՈՒԻ

820

P-67

910-54

820
P-67
Բարձրագույն դասակարգված
ժամկետային ցուցակ

ԱԿ-1775 23/24

ԱԿ Յ. 392 Ի 3.000.000

ՔԵՌԻ ԹՈՄԱՍԻ ՏՆԱԿԸ

Թարգմ. Ա. Զ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1929

ԳԼՈՒԽ I

ԶՐՈՒՅՑ ՇԵԼԲԻ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

Փետրվարի ցուրտ յերեկո չեր: Ընդարձակ, կոկ սեղանա-
տանը յերկու մարդ, մի շիշ ողու առաջ նստած՝ աշխուժ զրու-
ցում ելին:

Զրուցողներից մեկը, վորի անունը Գելի չեր, կարճ, պնդա-
կազմ մարդ էր՝ կոպիտ, չար արտաքինով: Մյուսը, տանտերը,
միտեր Շելբին, թողնում էր փափկասեր ամերիկացի աղայի
տպավորութուն, վոր վորոշ կրթութուն ունի և բավական փա-
փուկ բնավորութուն:

— Իսկապես, Գելի, թո՞մասը աղնվազույն մարդ է, շատ ըն-
դունակ, և նա այդ գումարն արժի:

— Ազնիվ է, ինչպես նեզը, — քմծիծաղ տալով՝ ասաց Գե-
լին և ողի լցրեց իր բաժակը:

— Վոչ, թո՞մասն, իսկապես, ազնիվ է և աշխատասեր: Նա
կառավարում էր իմ կալվածքը և մի անգամ դեռ չի խաբել ինձ:
Նրան առաջարկեցին փախչել Կանադա*), բայց հրաժարվեց, այդ
քայլը համարելով անազնիվ բան: Գելի, չեթե դու խիղճ ունե-
նայիր, կհամաձայնեիր թո՞մասին վերցնել իմ ամբողջ պարտքի
փոխարեն:

Այո, — հանաքով պատասխանեց Գելին, — չես ճիշտ այն-
քան խիղճ ունեմ, վորքան հարկավոր է վաճառականին:

— Ուրեմն ինչո՞վ վերջացնենք, — հարցրեց միտեր Շելբին:

— Ե, վերադիր գոնե մի տղա կամ աղջիկ տվեք:

— Միտեր Գելի, յես ավելորդ մարդ չունեմ և, բացի դրա-
նից, չեմ սիրում մարդկանց վաճառել:

Հանկարծ դուռը բացվեց, և վազեմյազ սեղանատուն մտավ
մի գեղեցիկ թխազեմ չորս թե հինգ տարեկան տղա:

*) Կանադան Ամերիկայի հյուսիսում գտնվող յերկիր է, վոր պատկա-
նում է անգլիացիներին, ուր փախչող նեզրերն սղատ կյանք ելին վարում:



2910-54

Հրատ. № 1137

ՊԵՏՐՈՍԻ ՅԵՐԿՐՈՐԳ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

— Յեկ այստեղ, Գարրի, — կանչեց տղային միստեր Շելլին: Գարրին մոտեցավ: Միստեր Շելլին քնքշորեն մոտեցրեց նրան իրեն և ասաց.

— Հապա, Գարրի, մի ցույց տուր, թե ինչպես ես պարում ու յերգում:

Փոքրիկ տղան իր դիւզ զրնգուն ձայնով յերգեց մեկն այն տարրինակ, վայրենի յերգերից, վոր յերգում են նեղրերը: Ու յերգի հետ միաժամանակ սկսեց պարել:

— Բռավո՛ւ, — բացականչեց Գելլին և մի կտոր նարինջ նետեց աւային:

— Իսկ այժմ, Գարրի, ցույց տուր, թե ինչպես ե քայլում Քեջո պապը, յերբ հողացավը բռնում ե:

Գարրին ամբողջովին կուչ յեկավ, կռացավ և, կաղալով, տիրոջ ձեռնափայտը ձեռին, քայլեց սենյակում:

— Իսկ յեկեղեցու յերեցփոխն ի՛նչպես ե սաղմոս յերգում: Յերեխայի դեմքը հանկարծ ծերունու կերպարանք ընդունեց, և նա սկսեց սաղմոս յերգել:

Միստեր Գելլին հիացավ:

— Կեցցես: Դրան տվեք ինձ՝ Թոմին վերադիր: Սրանով ել կվերջացնենք...

Դուռը նորից բացվեց, և սենյակ մտավ մի ջահել մուլաթ*) կին — խոշոր, սև, փայլուն աչքերով և վառ կարմրությունը թուխ դեմքին:

Դա Լիզան եր, Գարրիի մայրը:

Յերեխան նետվեց դեպի մայրը, Լիզան գրկեց նրան և շտապով դուրս յեկավ սենյակից:

— Այ քեզ լս՛ւ ապրանք, — բացականչեց Գելլին: — Այդ կնոջը Որլյանում կարելի յե մեծ գումարով ծախել:

— Այդ մասին խոսք լինել անգամ չի կարող: Կինս յերբեք չի բաժանվի Լիզայից:

— Այդ դեպքում զիջեցեք ինձ յերեխային:

— Նա ձեր ինչի՞ն ե պետք:

— Ո՛, յես կարող եմ նրան ծախել շատ ձեռնտու գնով: Հարուստ մարդիկ սիրում են իրենց մոտ գեղեցիկ ծառաներ ունենալ, իսկ այդ սատանի ճուտը շատ զվարճալի յերեխա յե:

*) Այսպես են կոչվում այն յերեխաները, վորոնք ծնվում են սպիտակ մարգու և նեղրուհու ամուսնությունից:

— Վո՛չ, ի՛նչպես կարելի յե յերեխան բաժանել մորից:

— Յես, — ասաց Գելլին, — ինքս ել տանել չեմ կարողանում, ջերբ լսում եմ այն կանանց լաց ու կոծը, վորոնց յերեխաները խլում են: Յես մեղմ եմ վարվում, յես բնավ խստասիրտ չեմ: Ձեր Լիզայի հետ կար՛էի յե վարվել այսպես. դուք նրան ուղարկեցեք մի վորեւ մոտիկ տեղ, իսկ մենք մինչ այդ մեր գործը կտեսնենք: Իսկ յերբ նա վերադառնա, ձեր կինը նրան ականջի ողեր կնվիրի կամ հագուստի համար կտոր, և նա կհանգըստանա:

— Ձեմ կարծում ..

— Նեղրերը ամեն բանի կղիմանան. նրանք սպիտակ մարդիկ չեն: Հավատացեք ինձ, վոր այդպիսով ամեն բան ավելի քան լավ կլինի:

Միստեր Շելլին վոչինչ չառարկեց:

— Ուրիմն ի՛նչպես ենք վերջացնում, — պնդեց Գելլին:

— Յեկեք այստեղ, յերեկոյան ժամը ութին, յես կնոջս հետ կխոսեմ և ձեզ պատասխան կտամ:

Միստեր Գելլին գնաց:

— Ո՛, — շնչաց նրա յետևից տանտերը, ձեռքերը բռունցք շինած, — ի՛նչ հաճույքով կզլորեյի քեզ սանդուղներից ներքև... վորտեղ եմ հասել, վոր ստիպված եմ այդպիսի մի դարձելի աբարածի ինձ հետ սեղան նստեցնել... Ու այդ դեռ բավական չի, ստիպված եմ այդ ավագակին հանձնել իմ հավատարիմ, ակնիվ Թոմասին... Յեթե մեկը գուշակեր, թե յես յերբեկից ստիպված կլինեմ վաճառել իմ ստրուկներից մեկին, յես կթքեյի նրա յերեսին, բայց, արի տես, իսկապես, ուրիշ յեղ չունեմ այժմ և հարկադրված եմ այդ սրիկային տալ վոչ միայն Թոմասին, այլ խղճուկ Գարրիին... Այ ինչ ե նշանակում պարտքերի տակ ընկնել... Այդ ստոր հոպին տեսնում ե իմ դժվարին կացությունը և ոգավում ե զրանից...

Խեղճ ստրուկները վոչ մի տեղ այնքան լավ չեն ապրում, ինչպես Կենտուկիում: Այդ՛ առավելապես հողագործ՝ նահանգում կոլոնիստներն ավելի բարոյական և համեստ մարդիկ են, քան Ամերիկայի մյուս նահանգներում. ստրուկների աշխատանքն այստեղ այնքան ծանր չի, և տերերը նրանց գնում են բացառապես նրա համար, վորպեսզի իրենց տրամադրության տակ լավ վրտանելի աշխատողներ ունենան. նրանք մեղմ են վարվում նեղրերի հետ և, հեշտությամբ փող վատակելու նպատակով, չեն

զբաղվում այդ իրավագուրի և միանգամայն անպաշտպան մարդկանց վաճառքով:

Ով չեղել է կենտուկիում և տեսել է, թե ինչպես տերերն այստեղ մարդավարի չեն վերաբերվում իրենց ստրուկներին, և ինչպես ստրուկները հավատարիմ են նրանց, նա ակամա վրոխադրված է զգում իրեն այն վաղուց անցած-գնացած բանաստեղծական ժամանակները, յերբ աշխարհում տիրում էին նասպետական բարքերը: Դժբախտաբար, այդ պայծառ պատկերը մոայլում է մի ստվեր: Այդ ստվերը որեհմէն է... Առայժմ որեհմէն նեղրերին (վորոնք նույնպես բաբախող սիրտ ունեն և զարգացած զգացումներ, ինչպես մյուս մարդիկ) նաչում է վորպես իրի և առարկայի. առայժմ այդ լավ տերերի ազբատությունը, անզգուշությունը, դժբախտությունը, մահը չուրաքանչյուր բոպե կարող է նրանց խողալ և տանելի կյանքը փոխել տաժանակիր աշխատանքի՝ դաժան ստրկատերերի ձեռքն անցնելու դեպքում, և անբարոյական որեհմէն անարկու ստվերը մշտապես պիտի սավառնի դժբախտ նեղրերի գլխավերև:

Միստեր Շելլին հիանալի մարդ էր, ներողամիտ և բարի՝ շրջապատողների նկատմամբ, միանգամայն անընդունակ՝ իր ստրուկներին գիտակցաբար գեթ ամենափոքր տանջանքը պատճառելու: Բայց, դժբախտաբար, նա անզգուշություն ունեցավ լայն ձեռնարկություններ սկսելու, վորոնց պատճառով մի բավական խոշոր գումար փոխ առավ: Նրա բոլոր մուրհակները գնեց ստրկավաճառ Գելին, վորը և շտապեց իր պարտապանին պատին սեղմել, նեղել, վորպեսզի ձեռնտու գործարք կատարի: Դրանով ել բացատրվում է վերև բերված զրույցը, զրույցը այն յերկու մարդու, վոր այնքան տարբեր էին իրարից:

ԳԼՈՒԽ II

ԼԵՉԱՆ ՈՒ ԶՈՐՉԸ

Լիզան, լսելով միքանի խոսք միստեր Շելլիի և Գելիի զրույցից, հասկացավ, վոր բանը վերաբերում է ստրուկներից վորևե մեկին վաճառելուն:

— Նա, չերևի, ուզում է ծախել իմ յերեխային, — ձևոց Լիզան: Ու խեղճ մտքը աղաչին այնպես պինդ սեղմեց իր կրքձքին, կարծես կամենում էր պաշտպանել նրան դժբախտությունից:

Հուզված, այլալված Լիզան մտավ տիրուհու սենյակը, վոր ոգնի նրան հազնվելու: Տիկին Շելլին իսկույն նկատեց, վոր Լիզան ինչ-վոր բանից հուզված է:

— Ի՞նչ է պատահել քեզ, Լիզա, — հարցրեց նա կարեկցաբար:

Լիզան վոչինչ չպատասխանեց և լաց յեղավ:

— Ասա մի տեսնեմ՝ ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս:

— Սեղանատանը ինչ-վոր վաճառական նստած՝ զրուցում է պարոն Շելլիի հետ: Վախենում եմ — չլինի թե պարոնը ուզում է ծախել իմ Գարրիին:

— Ծախել Գարրիին: Ինչէր էս ասում: Նա ո՞ւմ է պետք: Իզուր մի անհանգստանա... Իսկ մյուս անգամ՝ ականջ մի դնի դռների մոտ:

— Յես ականջ չեմ դրել... Իսկ... իմ բարի տիրուհի, այդ բանը յերբեք թույլ չեք տա, այնպես չի՞:

— Իհարկե, չէ: Յեվ վոչվոք ել այդ մասին չի մտածում: Հերիք է անհանգստանաս. ավելի լավ է մաղբրս սանրիր և ոգնիր ինձ հազնվելու:

Տիկին Շելլին չգիտեր իր ամուսնու նեղ զրությունը. բացի դրանից, շատ կապված էր Լիզային. այդ պատճառով մտքովն անգամ չեր կարող անցնել, թե մարդը կարող է ծախել այդ բարի և գեղեցիկ աղջկան: Լիզան մանկուց յեղել էր տիկին Շելլիի մոտ և նրա սիրելին էր: Գեղեցիկ, նազելի, նուրբ ձայնով և հաճելի շարժումներով՝ Լիզան շատ բան ձեռք էր բերել և այն խրնամոտ դաստիարակությունից, վոր տվել էր նրան տիկին Շելլին: Հենց վոր նա չափահաս աղջիկ դարձավ, տիկինը թույլ տվեց նրան ամուսնանալ մի ջահել և շատ ինտելիգենտ մուլատի հետ, վորն ստրուկ էր չեղել հարևան ազգայկներից (Ֆերմա) մեկում: Լիզան ու Զորջը (այսպես էյին անվանում մուլատին) առիթ ելին ունեցել միմյանց տեսնելու և սիրելու: Վորովհետև նրանք միանգամայն հարմար զույգ էյին, ուստի տիկին Շելլին ոգնեց նրանց միանալու:

Զորջի տերը, պարոն Գարրիսը, տվել էր նրան մանածագործարան, ուր շուտով արժանացավ նա ուշադրության իր աչքի ընկնող ընդունակությունների շնորհիվ: Իմիջի այլոց, նա հնարել էր կանեփ մշակելու մեքենա, ինչ վոր ցույց էր տալիս, թե նա հազվագյուտ խելքի տեր է, գրեթե հանճար, նկատի առնելով նրա ծագումը, դաստիարակությունը և այն, վոր հատուկ կրթություն չեր ստացել:

Գեղեցիկ, ճարպիկ, ուրախ և վարվել կարեցող Ջորջն ամբողջ գործարանի սիրելին էր: Դժբախտաբար, քանի վոր նա, որենքով, մարդ չէր, այլ իր, և գտնվում էր կոպիտ, տգետ և խստասիրտ տիրոջ իշխանութան տակ, ուստի չկարողացավ ստրկությունից ազատվել:

Լսելով, վոր Ջորջը մեքենա չէ հնարել, Գարրիսն ուզեց տեսնել նրան, ու գնաց գործարան: Գործարանատերը նրան ընդունեց գրկաբաց, շնորհավորեց, վոր այդպիսի տաղանդավոր ստրուկ ունի, և տարավ նրա հնարած մեքենան ցույց տալու:

Ջորջն ինքն էր աշխատում իր մեքենայի վրա և այնպիսի հպարտ ու բախտավոր տեսք ունեւր, խոսում էր այնպես գեղեցիկ և այնպիսի յեռանդով էր ցույց տալիս իր արվեստը, վոր պարոն Գարրիսն ահամա զգաց նրա գերազանցութունն իր հանդեպ, և այդ բանը շատ անհաճո թվաց նրան:

«Այդ էր պակաս,—մտածեց նա ինքն իրեն,—վոր ստրուկները մեքենաներ հնարեն և հպարտանան դրանով իրենց տերերի առաջ: Այս բանը չպետք է թույլ տալ, թե չէ բանն, ով գիտի, ուր կհասնի: Յես հենց հիմա սրան կտանեմ այստեղից և ձեռը բահ ու թի կտամ. տեսնենք՝ կարող է ելի քեթն այսպես բարձրացնել իմ առաջ»:

Վոչ միայն գործարանատերը, այլև նրա մոտ աշխատողները՝ բոլորը զարմացան, յերբ պարոն Գարրիսը պահանջեց Ջորջի աշխատավարձը և հայտնեց, թե մտադիր է նորից տանել նրան իր ազարակը:

— Ի՞նչ էք ասում, պարոն Գարրիս,—բացականչեց գործարանատերը,—ինչո՞ւ յեք ուզում տանել նրան այստեղից: Չե՞ վոր նա այստեղ հենց իր տեղումն է, չե՞ վոր...

— Ո՞վ է այս տղայի տերը, դո՞ք թե յես,—կոպտորեն ընդհատեց պարոն Գարրիսը:

— Իհարկե, դուք, բայց... Գիտեք ինչ, յես սիրով կրկնակի վճար կտամ Ջորջի համար, միայն թե թողեք նրան ինձ մոտ:

— Վոչ, պարոն. յես փողի կարիք չունեմ. քանի վոր ասի, թե ուզում եմ, վոր իմ ստրուկն ինձ մոտ լինի, նշանակում է—ամեն մի առարկութուն ձեր կողմից այդ մասին իզուր կլինի:

— Բայց, պարոն, նա այստեղ այնպես լավ է կատարում իր գործը:

— Գուցե: Յես ինքս ել շատ գործ ունեմ, վոր, հույս ունեմ, նույնպես լավ կկատարի:

— Խեղճ: Յերևակայեցիք, նա մեքենա չէ հնարել և այժմ ատիպված է թողնել այդ մեքենան,—անզգուշաբար նկատեց բանվորներից մեկը: Բայց այդ բանը կրակի վրա յուղ լցրեց միայն:

— Այո, նա մեքենան հնարել է նրա համար, վոր իր աշխատանքը պակասեցնի. այնպե՞ս չի,—հարեց պարոն Գարրիսն ամբողջովին կարմրած: —Նա մոռացել է, վոր ինքը վոչ այլ ինչ է, բայց յեթե մեքենա, պարտավոր է աշխատել այնչափ, վորչափ կստիպեն իրեն: Նա իրավունք չունի ցույց տալու, թե իր աշխատանքը ծանր է, և թե ցանկանում է թեթևացնել այն: Տես, մեքենայի խելքը փչել է ուրիշ մեքենա հնարելու, հա-հա-հա:

Ջորջն սկզբում քարացավ սարսափից, լսելով իր տիրոջ դատավճիռը, վորի իրավունքներն անսահման էյին իր վրա, հետո նրան տիրեց բուռն զայրույթ: Չեռները կրծքին ծալած և շրթերն ամուր սկզմած՝ նա մերթ կարմրում էր մինչև մոգերի արմատը, մերթ գունատվում մեռելի պես, և նրա գեղեցիկ աչքերը կայծակներ էյին արձակում: Այն հրաբուլիսը, վոր աղմկում էր նրա կրծքի տակ, հավանորեն, դուրս պիտի ժայթքեր; յեթե գործարանատերը, նրա թեղ կամացուկ բռնելով, չզննջար նրան.

— Հնազանդվիր և գնա, Ջորջ. կաշխատենք շուտով վերադարձնել քեզ:

Պարոն Գարրիսը չլսեց գործարանատիրոջ խոսքերը, բայց նրանց իմաստը գուշակեց. և այդ բանն ավելի գրգեց նրան՝ «յերես առած» ստրուկին ցույց տալու իր ամբողջ իշխանությունը:

Նա Ջորջին վերցրեց տարավ գործարանից և սկսեց տալ նրան ամենածանր աշխատանքները: Յերիտասարդն անխոս լենթարկվում էր այն բոլորին, ինչ պահանջում էլին: Նա վոչ մի խոսք չէր ասում, բայց նրա մտախոհ զեմքից և փայլատակող աչքերից յերևում էր, վոր նա իրեն զգում է մարդ, և վոր նրա հետ չի կարելի վարվել վորպես իրի հետ:

Նա Լիզաչի հետ պսակվել էր դեռ այն բախտավոր օրերին, չիրը գործարանում էր գտնվում: Տիկին Շելլին հիացած էր, վոր իր սիրելին այդպիսի հարմար ամուսին գտավ, ու ինքը հագցըրեց նրա պսակի շորերը և այնպիսի սեղան բացեց հարսանիքին, կարծես մարդու յիր տալիս իր մոտ ազգականուհուն:

Յերկու տարվա ընթացքում Լիզան ու մարդը տեսնվում էյին բավական հաճախ: Վոչինչ չիր մոռալի ջանել ամուսինների ջերջանկութունը, յեթե չլիներ լերկվորյակների մահը, վորոնք

ծնվեցին առաջին իսկ տարում: Այդ կորուստը այնպես տխրեցրեց Լիզային, վոր չեթե տիկին Շելբիի միտթարանքը չլիներ, նա, հավանորեն, ինքն ել կմեռներ կամ կխեղադարվեր:

Գարրիի ծնունդը բուժեց Լիզայի սրտի վերքը և ստիպեց, վոր նա իր մայրական քնքռութունը կենտրոնացնի նրա վրա: Ամեն ինչ լավ գնաց կրկին՝ մինչև այն ճակատագրական ուրը՝ յերբ պարոն Գարրիսը Զորջին դուրս բերեց գործարանից, վորպեսզի զգացնել տա նրան իր բռնակալութւան ամբողջ ուժը:

Յերկու շաբաթ անց, հավատացած, վոր պարոն Գարրիան այժմ մեղմացած կլինի, գործարանատերը, իր խոսքին հավատարիմ, չեկավ ագարակատիրոջ մոտ և իր ամբողջ պերճախոսութունը գործ դրեց, վորպեսզի համողի այն չար և համառ մարդուն՝ Զորջին կրկին գործարան թողնելու: Բայց հաջողութուն չունեցավ:

— Դուք իզուր ժամանակ և խոսքեր եք վատնում, պարոն: Յես ինքս գիտեմ, թե ինչ պիտի անեմ,— կոպտորեն բղավեց ագարակատերը:

— Յես չեմ ասում, թե չգիտեք, բայց կարծում եմ, վոր ձեր սեփական շահը նկատի չունեք. չէ՞ վոր չես շատ բարձր գին եմ առաջարկում ձեր ստրկի համար,— ասաց գործարանատերը:

— Ո՛ր, յես այնքան ել հիմար չեմ, ինչպես կարծում եք: Յես շատ լավ եմ հասկանում, թե ինչ եք ուզում անել... Դուք կարծում եք՝ յես չտեսնեմ, թե ինչպես աչքով արիք ու փսփսացիք այդ տղի հետ այն ուրը, յերբ նրան բերում եյի ձեր մոտից: Ամեն բան տեսա և ամեն ինչ հասկացա... Ձեր ուզածը չի լինի, պարոն, չի լինի: Մենք դանվում ենք ազատութւան յերկրում, պարոն: Այդ տղան պատկանում ե ինձ, և յես, ինչպես ուզում եմ, այնպես ել վարվում եմ նրա հետ. վաչվոք իրավունք չունի այդ բանում ինձ խանգարելու... Բայց հերիք ե: Այլևս չեմ ուզում խոսել այդ մասին:

Այսպես խորտակվեց Զորջի վիրջին հույսը: Նրա սաջե ել վոչինչ չեր մտում, բացի անվերջ ստորացումն ու տանջանքը. իսկ այն գիտակցութունը, թե այլևս անկարելի չի յերբևիցե ազատվել ծանր լծից, ստիպեց նրան սրտին մոտ ընդունել ամեն մի ջնջին բան, վորի վրա ուրիշ ժամանակ ուշ ել չեր դարձնի:

Մեր որերի նշանավոր իրավագետներից մեկն ասել ե, թե մեծագուշն չարիքը, վոր կարելի չի պատճառել մարդուն, դա կյանքից զրկելն ե. բայց նա սխալվել ե. կա ավելի վատ չարիք— դա մարդուն ազատութունից զրկելն ե:

ԳԼՈՒԽ III

ՋՈՐՋԸ ՓԱԽՉՈՒՄ Ե ԿԱՆԱԴԱ

Տիկին Շելբին գնաց հյուր: Լիզան մնաց պատշգամբում և սխրությամբ հետեց հեռացող կառքին: Հանկարծ նա զգաց, վոր մեկի ձեռն իջավ իր ուսին: Լիզան շուռ չեկավ. նրա առջև կանգնած էր Զորջը:

— Զորջ, Զորջ: Շատ ուրախ եմ, վոր չեկար, վոր քեզ տեսնում եմ, վերջապես: Տիկինը գնաց և ամբողջ յերեկոն չի գա: Գնանք իմ սենյակը՝ զրուցենք:

Լիզան Զորջին տարավ իր կոկիկ սենյակը, ուր փոքրիկ Գարրին խաղում եր՝ ուրախ և անհոգ:

— Ինչո՞ւ այդպես մոռալ ես,— հարցրեց լիզան տագնապով և նստեց Զորջի կողքին, վորը փոքրիկ Գարրիին ծնկանը գնելով՝ սկսեց նրա մազերը շոյել:

— Տես, Զորջ, ինչքան ե Գարրին մեծացել, գեղեցկացել:

— Ավելի լավ կլիներ՝ չծնվեր: Լավ կլիներ՝ յես ինքս ել չծնվի:

Լիզան, զարմացած ու վախեցած, լաց չեղավ:

— Յես քեզ ել դժբախտացրի,— շարունակեց Զորջը:— Լավ կլիներ բոլորովին չհանդիպելիլ ինձ. ավելի բախտավոր կլինելիլ:

— Հանգստացիլ, Զորջ. մի՞թե կարելի չի այդպես խոսել:

— Այո, Լիզա, յես դժբախտ, կորած մարդ եմ: Յես կորչելու չեմ և քեզ ել տանելու յեմ իմ յետևից: Ել ինչո՞ւ յենք աշխատում մի բան անել, մի բան իմանալ, մի բան դառնալ: Ել ինչո՞ւ ապրել առհասարակ: Յես կուզիլ մեռնել:

— Հերիք ե, սիրելիս. այդպես բաներ մի ասի: Գիտեմ, զբուժելունդ ծանր ե, տերդ դաժան, բայց չպետք ե հուսահատվել... Դիմացիլ դեռ, գուցե մի բան փոխվի...

— Դիմանալ,— ընդհատեց Զորջը նրան:— Մի՞թե քիչ եմ դիմացել: Մի՞թե յես մի խոսք գոնե ասի, յերբ նա չեկավ ինձ վերցրեց այն տեղից, ուր բոլորը բարի եյին դեպի ինձ: Յես աղքատորեն իմ ամբողջ վաստակը, մինչև վերջին կոպեկը տալիս ելի նրան, և բոլորն ասում եյին, վոր յես լավ եմ աշխատում:

— Այո, դա սարսափելի չի,— ասաց Լիզան:— Բայց մի մոռանա, Զորջ, վոր նա քո տերն ե...

— Իմ տէրը: Բայց ի՞նչ իրավունքով ե նա իմ տերը: Մի-
թե յես նուշնալիսի մարդ չեմ, ինչպես և նա: Վոչ, յես ավելի
լավ եմ նրանից. չես նրանից ավելի լավ եմ աշխատում, ավելի
լավ եմ կարգում, և իմ ձեռագիրն ավելի լաջն է: Յե՞վ այս բոլո-
րի համար յես պարտական եմ միմիայն ինձ: Նա ինձ խանդա-
րում եր սովորելու, բայց յես, այնուամենայնիվ, սովորեցի: Հիմա
ի՞նչ իրավունքով ե պոկում մի աշխատանքից, վորին ընդու-
նակ եմ, ու լծում ե մի գործի, վոր ձիերը պիտի անեն... Ի՞նչպես
ե համարձակվում տանջել և վիրավորել ինձ: Յես շատ եմ դիմա-
ցել, բայց ել չեմ կարող: Լսիր, թե ինչ պատահեց յերեկ: Յես
քար եյի բարձում սալին: Նրա տղան, Թոմը, այդ անտանելի
յերես առածը, մտրակը շրխկացրեց և ձիուն վախեցրեց: Յես
քաղաքավարի խնդրեցի վերջ տա. այդ ժամանակ Թոմն սկսեց
մտրակով հարվածել ինձ: Յես նրա ձեռը բռնեցի: Տղան սկսեց
ճչալ, վազեց հոր մոտ ու հայտնեց, վոր չես նրան ձեծել եմ:
Հայրը հրամայեց, վոր ինձ ծառին կապեն, տղայի ձեռը մի կապ
ուռեր տվեց և հրամայեց ձեծել ինձ մինչև հոգնելը: Տղան այդպես
ել արավ: Բայց յես նրան ցույց կտամ...

Բռունցքները սեղմած, Ջորջը, գայրույթից շնչասպառ լի-
նելով, բացականչեց.

— Ել տանել չեմ կարող: Բոլորի փոխարեն պիտի հատու-
ցեմ նրանց: Դիտես, Լիզա, նրանք տանջեցին իմ խեղճ շանն
ել, վոր դու նվիրել եյիր ինձ:

— Ինչպես, շանն ել տանջեցին:

— Դու հո գիտես, շունն իմ միակ մխիթարութունն եր:
Այս քանի որը ուզեցի սեղանի թերմացքով կերակրել նժար: Տերս
տեսավ այդ բանը և սկսեց բղավել, թե ինքը թույլ չի տա,
վոր նեգրերն իր հաշվին շուն պահեն: Ու հրամայեց ինձ շանը
ջուրը գցել խեղդել: Յերը յես այդ անելուց հրաժարվեցի, այդ
ժամանակ նա ինքը, իր տղի հետ միասին, քար կապեցին շան
վիզը ու տարան դեպի լիճը: Իսկ ինձ ձեծեցին նրա համար,
վոր հրաժարվեցի շանս ջուրը գցել խեղդել: Սպասեցե՞ք դուք,
կստանաք և դրա համար...

— Ո՞, Ջորջ: Այդպես մի խոսի, վախենում եմ: Տիրուհիս
միշտ ասում ե, թե պետք ե համբերել. պետք ե անտրտունջ տա-
նել այն բոլոր դժբախտութունները, վոր բախտը վիճակում
ե մեզ:

— Այդպես կարող են դատել այն մարդիկ, վոր ապրում են

շքեղության մեջ և կառքերով զբոսանք են կատարում. թող մի-
նրանք իմ կաշվի մեջ մտնեյին, ել այդպես չեյին խոսի: Ուրախու-
թյամբ կուզեյի բարի լինել, բայց սիրտս արվում ե. և նրան-
սանձահարել չեմ կարող: Դու յել կհամաձայնես ինձ հետ, յերբ
բոլորն իմանաս: Յես դեռ ամենագլխավորը չեմ ասել քեզ:

— Ի՞նչ ե պատահել Ջորջ:

— Մեր տերն ուզում ե ինձ ու քեզ բաժանի իրարից: Այս
քանի որը հայտնեց, թե ամսոսում ե, վոր թույլ տվեց ինձ ու-
րիշ կալվածատիրոջ պատկանող աղջկա հետ պսակվելու: Նա պա-
րոն Շելլիին տանել չի կարողանում. նրան համարում ե հպարտ
մարդ. ասում ե, վոր յես ել քեզանից մեծամտութուն եմ սովո-
րել, և հայտնեց, վոր ինձ արևս չի թողնելու քեզ մոտ: Սկզբում
վախեցնում եր ինձ, ասում եր միայն բարկացած ժամանակ:
Բայց յերեկ, հանկարծ, հրամայեց ինձ պսակվել Մինի հետ և
բնակվել կալվածքի անակներից մեկում: Իսկ չեթե չհամաձայ-
նեմ, ծախելու չե ինձ:

— Ի՞նչպես թե, — բացականչեց Լիզան: — Ձե՞ վոր դու պսակ-
ված ես ինձ հետ. ել ի՞նչպես կարող ես պսակվել ուրիշի հետ:

— Դու միթե չգիտես, Լիզա, վոր ստրուկը չի կարող պը-
սակվել. տերը կարող ե անել այն, ինչ ուզում ե. յերբ ել կամե-
նա, կարող ե ամուսիններին բաժանել իրարից: Ահա դրա
համար եմ ասում, վոր ավելի լավ կլինե՞ր չճնվելի, նուշնալես և
այդ խեղճ յերեխան: Ձե՞ վոր նրան ել այդպիսի վիճակ ե սպա-
սում:

— Ո՞, չե, մեր տերերն այնքան բարի չեն:

— Բարե՞: Պարոն Շելլին կարող ե մեռնել, և Գարրին կը-
ծախեն: Ի՞նչ ոգուտ, վոր Գարրին գեղեցիկ ե և խելացի: Վոր-
քան լավ կլինի տղադ, այնքան ավելի փող կտան:

Լիզան գունատվեց. նա հիշեց սեղանատան խոսակցու-
թյունը:

— Մնաս բարով, Լիզա, — ասաց Ջորջը. — չես գնում եմ: Յես
վորոշել եմ փախչել Կանադա: Յես այնտեղ շատ փող կաշխատեմ
և այն ժամանակ փողով կազատեմ քեզ:

— Իսկ չեթե քեզ բռնե՞ն...

— Կենդանի անձնատուր չեմ լինի: Մնաս բարով, Լիզա:
Ջորջը գրկեց Լիզային և արագորեն հեռացավ: Միքանի
քայլ գնալով՝ լսեց խուլ հեկեկանքներ: Այդ խեղճ Լիզան եր
լալիս:

ԳԼՈՒԽ IV

ՔԵՌԻ ԹՈՄԱՍԻ ՏՆԱԿՈՒՄ

Քեռի Թոմասի տնակը գերաններին շինած փոքրիկ շենք էր. գտնվում էր տերերի տան մոտ: Թե տնակը, թե նրա առջև ընկած փոքրիկ պարտեզը գրավում էին Շելլիի տնեցիներին ու ծառաներին:

Մարդ լավ էր զգում իրեն քեռի Թոմասի տնակում, ուր ոջախի մոտ շարունակ աշխատում էր բարի և հյուրասեր հորքուր Խլոյան, Թոմասի կինը, վոր ամբողջ շրջանում ամենալավ կերպակուր չեփողի համբավ ունեւր:

Սիրում էր այդ տնակը հաճախել և պատանի Ջորջը, պարոն Շելլիի վորդին: Ջորջը հաճախ գալիս էր Թոմասի մոտ, կարգալ-գրել էր սովորեցնում նրան, հյուրասեր հորքուր Խլոյան, դրա համար, հյուրասիրում էր նրան համեղ բլիթներով:

Ջորջը քեռի Թոմասի մոտ գնաց և այն րը, չերբ պարոն Շելլիի առանձնասենյակում վճռված էր արգեն քեռի Թոմասին և փոքրիկ Գարրիին պարոն Գելլին վաճառելու խնդրը:

Թե Ջորջը, թե քեռի Թոմասը դեռ չգիտեցին այդ մասին, դրա համար, ինչպես միշտ, զրուցում էին բարեկամաբար: Թոմասը նստել էր սեղանի մոտ խնամքով տառեր էր գրում գրատախտակի վրա, իսկ Ջորջը, հենց այդտեղ կանգնած, մերթընդմերթ ցուցումներ էր տալիս իր աշակերտին:

Յերբ դասը վերջացավ, հորքուր Խլոյան սեղանի վրա դրեց նոր թխած բլիթներ: Ջորջն սկսեց ուտել, իսկ Թոմասի յերեխաները պտտվում էին հենց այդտեղ և ազահորեն նայում բլիթների ափսեյին:

— Գնացեք, կորեք, — ձչում էր նրանց վրա հորքուր Խլոյան:

Յերեխաները բնավ չէին ուզում հեռանալ և սպասում էին, վոր իրենց էլ բլիթ տան: Բայց բլիթ ուտելուց հետո չել չհանգստացան: Նրանք դեռ ինչ-վոր բանի էին սպասում. նրանք ուզում էին խաղալ իրենց հոր՝ քեռի Թոմասի հետ:

Թոմասը գիտեր, թե յերեխաներն ինչ են ուզում: Նա փոքրիկ աղջկանը վերցրեց, դրեց իր հաստ ուտերին և սկսեց թըռչկոտել ու պարել: Ջորջը թափահարում էր թաշկինակը, իսկ մյուս յերկու յերեխան՝ Մոսին և Պետին, անասելի աղմուկով վազվզում էին նրա շուրջը:

Հորքուր Խլոյան այնպես էր ցուց տալիս, թե բարկանում է, և հավատացնում էր, թե «գլուխը տրաքում է» այդ աղմուկից: Բայց վոչվոք ուշ չգործեց նրա վրա, և ճիչը, քրքիչը և բարախուխուրը շարունակվեց այնքան, մինչև վոր բոլորը հալից ընկան:

— Ե, վերջապես, հանգստացեք, — ասաց հորքուր Խլոյան, — հիմա քնելու ժամանակ է, — և սկսեց յերեխաներին դնել անկողին:

Վորովհետև Թոմասը «գրագետ» էր, այսինքն կարող էր գիրկապ անելով, այդ պատճառով նա իր տնակում հավաքում էր նեգր-ընկերներին և բարձրաձայն կարող էր նրանց մի գիրք, ուր խոսվում էր բնության, յերկնային լուսատուների, նշանավոր մարդկանց և ազատության համար պայքարողների մասին: Նեգրերը հաճույքով լսում էին նրա ընթերցումը: Յերբեմն նրանց համար բան էր կարգում և Ջորջը, պարոն Շելլիի վորդին:

Ներս էին տանում յերկու դատարկ տակառ, անշալ ժ մնալու համար մեջները քար էին դնում և վերևից ծածկում տախտակով: Հետո մի յերկու տաշտ, մի յերկու փաշտե դուչլ էին շուռ տալիս և խախտված աթոռները ամբայնում: Այս պատրաստությունները տեսնելու էին ընթերցման համար:

— Պարոն Ջորջը լավ և կարգում, լավ կանի՝ այսոր էլ նեգութուն քաշի, — ասաց հորքուր Խլոյան:

Ջորջը սիրով համաձայնեց կատարել նրա ցանկությունը, հասկանալով, վոր այդպիսով կարող է աչքի ընկնել:

Շուտով տնակը լցվեց ամեն հասակի մարդկանցով, սկսած գլուխը ճերմակ ութսունամյա նահապետից մինչև պատանիները: Սկզբում անմեղ զրուցի էին անում: Ապա հայտնեցին, թե Սալլի տատը նոր կարմիր գլխաշոր է գնել, թե տերուհին խոստացել է Լիդային տալ իր բատիստե դգեստը, վորի վրա անդուշաբար գինի յե թափել և այլն: Հավաքվածներից միքանիսը պատկանում էին հարևան կալվածատերերին, ուտի և ամեն մեկը կարողանում էր մի վորեկ նոր բան պատմել, վոր լավում էր առանձին հետաքրքրությամբ:

Բարոյական խնդիրներում առանձին հեղինակություն էր վայելում քեռի Թոմասը: Իբնե բարոյական, ավելի ոժտված լինելով պայծառ և լուսավորվելու ընդունակ խելքով, քեռի իր ցեղակիցների մեծը մասը, նա ակամա դատվում էր իր շրջապատից, վորը և ընդունում էր նրա գերազանցությունը և նրան համա-

բում լավագույն մարդ: Յեւ, իսկապես, նրա պարզ, սրտազին, անկեղծ զգացումով տոգորված համոզմունքները կարող ե- չին հուզել և ավելի կուլտուրական մարդկանց:

* * *

Այն ժամանակ, չերք քեռի թոմասի տնակում հավաքված՝ կարգում ելին, տերերի տանը բոլորովին այլ բան եր կատար- վում:

Պարոն Շելբին ու Գելլին կրկին նստել էլին սեղանատանը, բայց այս անգամ ուրիշ սեղանի շուրջը, վորը ծածկված եր թղթ- թերով և դարդարված դրենական առարկաներով:

Պարոն Շելբին քրքրեց թղթերի կուլտը, շուկեց նրանցից մի քանիսը, ուշադիր նայեց նրանց, հետո ավեց Գելլին, վորը, իր հերթին, ուշադիր նայեց նրանց:

— Ամեն բան կարգին ե, — ասաց, վիրջապես, վաճառակա- նը: — Այժմ մնում ե ստորագրել միայն:

Պարոն Շելբին գրիչը ձեռն առավ արագ և անհաճո բանից շուտով ազատվել ցանկացող մարդու տեսքով ստորագրեց՝ ինչ պետք եր, սպա նորից ստրկավաճառի առաջը դրեց ստորագրած թղթերը՝ մի կապ փողի հետ միասին:

— Ահավասիկ, վերջացավ հիմա, — ասաց Գելլին, թղթերն ու փողը խնամքով տեղավորելով իր աճազին դրամապանակում ու տեղից չեղնելով:

— Այո, այժմ ամեն ինչ վերջացած ե, — մտախոհ կրկնեց պարոն Շելբին, — և վերջացած ե անվերադարձ կերպով:


— Դուք այդ ասում եք աչնպես, կարծես ինչ-վոր բանից դժգոհ եք, — նկատեց Գելլին:

— Գելլի, հուշս ունեմ՝ դուք ձեր խոստումը չեք մոռանա — թոմասին ծախելու զեպքում լավ մարդու տվեք, — ասաց պարոն Շելբին խնդրանքի չեղանակով:

— Դուք նրան ծախեցիք, առանց հետաքրքրվելու... չես լսվ եմ թե՛ վատ, — հեզնանքով ասաց առևտրականը:

— Ինձ հարկադրեցին հանգամանքները, — ասաց պարոն Շելբին:

— Այդ հանգամանքները կարող են հարկադրել և ինձ... Բայց և այնպես, չես՝ ինչ վոր ձեռքս դա՛ կանեմ, վոր թոմասն իրեն վատ չզգա. չես ինքս ել հավատացած յեղեք, նեղութուն չեմ տա նրան: Յես՝ դաժան մարդ չեմ:



Գրեթե բոլորովին անձանոթ մարդու այս հավաստիացումը չեր կարող հանգստացնել պարոն Շելբին, բայց վորովհետև այդ բուսեյին դա չեր նրա միակ մխիթարութունը, նա այլևս չառար- կեց և, ստրկավաճառին հրաժեշտ տալով, շտապեց ուղեղը թըմ- րեցնել թունդ ծխախոտով:

ԳԼՈՒԽ V

ԼԻՉԱՆ ՓԱԽՉՈՒՄ Ե ՇԵԼԲԻՒ ՏՆԻՑ

Յերեկոյան, չերք պարոն Շելբին կնոջ հետ միասին վերա- դարձան թատրոնից և անցան իրենց ննջարանը, տիկին Շելբին հարցրեց ամուսնուն.

— Այդ կոպիտ պարոնն ո՞վ եր, վոր հրավիրել ելիր ճաշի:

— Նրա աղբահունը Գելլի յե, — պատասխանեց Շելբին փոքր

ինչ շփոթված:

— Նա նեղրերի առևտրով ե դբաղվե՞մ:

— Այո: Բայց քեզ ո՞վ ասաց այդ:

— Լիզան: Այսոր առավոտյան նա յեկավ ինձ մոտ և, ար- ցունքն աչքերին, պատմեց, թե դու բանակցում ես առևտրականի հետ և ուզում ես Գարրիին ծախել նրա վրա: Յես հանգստացրի նրան, համոզեցի, վոր դու այդ բանը չես անի, վոր դու վորդին մորից չես խլի և առհասարակ ցանկութուն չունես քո ծառա- ներին ծախելու:

— Լիզան չի սխալվել: Դժբախտաբար, չես աչնպիսի դրու- թլան մեջ եմ ընկել, վոր հարկադրված եմ այդ անելու: Յես հա- մաձայնեցի թոմասին ծախելու:

— Ի՞նչպես. մեք բարի, աշխատասեր թոմասին, վորին ման- կութունից ճանաչում եմ: Հիշի՛ր, քանի անգամ եք խոսել, թե նրան պետք և պատուութուն տալ: Իսկ հիմա դու ծախում ես նը- րան: Դրանից հետո չես ամեն բանի կարող եմ հավատալ, մին- չև անգամ նրան, վոր դու կարող ես ծախել և Գարրիին, Լիզայի միակ յերեսային:

— Դժբախտաբար, չես սխալվում, — պատասխանեց Շելբին: — Յես համաձայնեցի ծախել թոմասին և Գարրիին, և չեմ հասկա- նում, թե ինչու այդ բանը սարսափեցնում ե քեզ. չե՞ վոր չես անում եմ միայն այն, ինչ բոլորն են պնդում:

Թեմի թոմասի տնակը—2



Handwritten vertical text: Գելլի 0 1 2 3 4 5 6 7 8 9

— Բայց ինչո՞ւ համար ես հենց այդ յերկուսին ընտրել, և վոչ ուրիշ վորևե մեկին,—հարցրեց տիկին Շելլին:

— Վորովհետև նրանց ավելի գին են տալիս, քան մյուս ստրուկներին: Լիզայի համար Գելին ավելի մեծ գումար առաջարկեց ինձ:

— Սրիկն, — բացականչեց տիկին Շելլին:

— Այ տեսնո՞ւմ ես, գիտե՞լի, վոր դու չես ցանկանա Լիզայից բաժանվել, դրա համար կտրուկ կերպով մերժեցի նրան ծախել:

— Սիրելիս, — ասաց տիկին Շելլին, — չես, այնուամենայնիվ, չեմ կարող հաշտվել թոմասին ծախելու մտքի հետ: Նա բարի, ազնիվ մարդ է: Հավատացած եմ, վոր չեթե հարկ լինի, նա իրեն կզոհի քեզ համար:

— Գիտե՞մ, — պատասխանեց պարոն Շելլին, — բայց ուրիշ կերպ չեմ կարող. դա միակ միջոցն է ինձ համար պարտքերից ազատվելու:

— Չի կարելի՞ արդյոք, թոմասին պահելու համար, դրամական վորևե զոհաբերություն անել: Յես, իմ կողմից, պատրաստ եմ շատ բանից զրկել ինձ, միայն թե չանել այդպիսի սարսափելի անարգարություն: Դու գիտես, վոր չես ամբողջովին նվիրել եմ ինձ այն բանին, վոր իմ պարտքը կատարեմ մեր ստրուկների հանդեպ: Յես իմացել եմ նրանց վշտերը և ուրախությունները և, հնարավորության չափ, աշխատել եմ թեթևացնել նրանց ծանր դրությունը: Ել ի՞նչպես կարող եմ նայել նրանց յերեսին, չեթե, վողորմելի շահի համար, թույլ տամ ծախել մի ազնիվ մարդու, վոր ամբողջովին նվիրված է մեզ...

— Թոմասին ծախել. բռնությամբ պոկել նրան այն բոլորից, ինչ մենք ինքներս սովորեցրել ենք հարգելու սիրելի... Մենք բացատրեցինք նրան մարդու և կնոջ, ծնողների և յերեսխանների փոխադարձ պարտականությունները, և նա հիանալի կերպով հասկացել ու յուրացրել է դրանք: Հիմա ի՞նչպես կարող ենք հակառակ գնալ մեր սեփական խոսքերին: Ի՞նչպես կարող ենք ապացուցել, թե մենք միայն խոսքով ենք ընդունում բնության կապը, սրտի իրավունքը և բարոյական որոնքը, իսկ գործով ամեն ինչ ժխտում ենք, յերբ դա մեր շահը պահանջում է:

— Յես Լիզային շարունակ ասել եմ, թե նա պետք է ամեն տեսակ խնամք ցույց տա իր յերեսխային և աշխատի դաստիարակել

ճակիլ նրան, վորպես ազնիվ մարդու: Մթթե չես այդ արել եմ միայն նրա համար, վոր մի սարսափելի որ այդ յերեսխային լույն նրանից և ծախեմ առաջին պատահած սրիկային... Յեթե չես կարողանալի նախատեսել, թե բանն այդտեղ կհասնի, այն ժամանակ չես Լիզային կհասկացնելի՞ բանի տեղ չդնել իր յերեսխային, այլ նայել նրան, վորպես իր, վոր ժամանակավորապես հանձնված է նրան պահելու... Ավելին. չես կսովորեցնելի նրան մեռցնել այդ յերեսխային... Հազար անգամ բացատրել եմ նրան, թե մարդկային մի հոգին աշխարհի բոլոր գանձերից թանգ արժի... Հիմա նա ի՞նչ պիտի մտածի, յերբ հանկարծ տեսնի, վոր մենք վողորմելի փողի համար իր վորդին ծախում ենք մի ինչ-վոր սրիկայի, իր վորդին, վորին գնահատել ենք սովորեցրել նրան: Դրանով, թերևս, մենք վաղաժամ մահվան դատապարտենք նրան:

— Այ, եմիլիս, — ասաց պարոն Շելլին, ոգտվելով կնոջ բողբոջական լուսթյունից, — Իսկապես, վոր չես պակաս չեմ տանջվում այն բանից, ինչ արված է: Միանգամայն հարգում եմ քո զգացումները, վորոնք թելադրում են քեզ այդ զայրույթով լի խոսքերը: Այդ խոսքերին համամիտ եմ և յես: Բայց կրկնում եմ, ուրիշ յեղ չունեմ. պետք է բաժանվեմ թոմասից և վերցնեմ Լիզայի յերեսխային... Մինչև այժմ չես վոչինչ չեղի ասում քեզ մեր գործերի մասին, իսկ այժմ չեմ կարող թագցնել քեզնից, վոր մեր գործերը շատ և շատ վատ են, և չեթե թոմասին ու յերեսխային չծախենք, այն ժամանակ պետք է ծախենք մեր ամբողջ կայքը: Կամ որոնքը պիտի կործանվի կամ մենք — այսպես է դրված հարցը. ուրիշ յեղ չկա: Գելին դարձել է իմ մուրհակ-ների սեփականատերը և այդպիսով ինձ իր ձեռքն է առել: Յես փող դարձրի ամեն բան, ինչ կարող էյի, մինչև անգամ փոխառություն արի, վորքան իվիճակի էյի, և, այնուամենայնիվ, շատ բան եր պակասում լրացնելու այն գումարը, վորով պիտի փրկեցինք մեր մուրհակները: Առևտրականը, գումարը լրացնելու համար, պահանջեց թոմասին, վորին ճանաչում է, և նրա վրա մի վորևե բան... Յեկ այդ ժամանակ ներս վազեց Գարրին. չես ստիպեցի նրան միքանի հանաքներ անել, վորոնցով այնպես զվարճացնում է բոլորին: Դա Գելին դուր յեկավ, և նա այնպեց, վոր թոմասի հետ միասին ծախեմ և այդ յերեսխային կամ թե, այդ յերկուսի փոխարեն, Լիզային: Յես ավելի լավ համարեցի յերեսխային ծախել, իսկ մորը թողնել քեզ... Յեթե դու դեմ

ես մեր մարդկանցից չերկուսից բաժանվելու անհրաժեշտութեան, ի՞նչ կասեյիր ապա, թե հարկադրված լինելիք ծախել բոլորին:

Տիկին Շելլին չպատասխանեց. չերեսը ձեռներով ծածկած լալիս էր կամաց:

— Ի՞նչ սարսափելի բան է ստրկութունը, — սոսայ նա կամաց: — Դա անեծք է թե ստրկի համար և թե տիրոջ համար: Իսկ յես՝ հիմարս յերևակայում եյի, թե չարիքը կարելի յէ մեղմել, թե կարելի յէ մի վորևէ լավ բան տնել այդ դժբախտների համար: Վնչվոք, վնչվոք իրավունք չունի մի ստրուկ պահելու: Միշտ այսպես եյի մտածում յես, չերբ. դեռ փոքր աղջիկ եյի, բայց ինձ թվում էր, թե յեթե հող տանենք նեղերի մասին, կարդալ-գրել սովորեցնենք նրանց, կարելի յէ բախտավոր դարձնել նրանց, և նրանց կյանքը վոչնչով չի տարբերվի ազատ մարդկանց կյանքից: Ո՛ր, վորքան սխալվում եյի, վորքան հիմար եյի:

— Հանգստացիր, սիրելիս, ինձ համար ևս ծանր է, բայց հասկացիր, վոր յեթե յես այդ բանը չանեյի, մեզ բոլորիս կապառնար աղքատութունը, վորովհետև Գեյլին կարող է քայքայել ինձ, յեթե կամենա: Հենց վաղը առավոտ Գեյլին գալու յէ մարդկանց տանելու: Յես կհեռանամ տնից, վոր այդ բանը չտեսնեմ:

— Իսկ յես, — սոսայ տիկին Շելլին, — չեմ գնա: Յես կիրթամ մեր բարի թոմասին տեսնելու: Իսկ Լիզայի մասին մտածել անգամ չեմ կարողանում: Խեղճ, խեղճ Լիզա...

Յերբ տիկին Շելլին Լիզային արձակեց քնելու, Լիզան իր սենյակը չգնաց, այլ թագնվեց ննջարանի կողքին գտնվող փոքրիկ մութ սենյակում: Առավոտը լած խոսքերը հանգիստ չեյին տալիս նրան, և նա վճռեց իմանալ ճշմարտութունը: Խեղճ կինն, այսպիսով, լսեց Շելլի ամուսինների ամբողջ դրույցը և այժմ էլ կասկած չուներ, վոր իր վորդու բախտը վճռված է:

Յերբ ձայները լսեցին, Լիզան զգուշութամբ դուրս չեկավ մութ սենյակից: Նա ամբողջովին դողում էր, բայց դեմքն արտահայտում էր վճռականութուն. դժվար էր ճանաչել այդ հեզ և խոնարհ սպասուհուն: Նա կամացուկ անցավ միջանցքով և մտավ իր սենյակը: Դա մի սիրուն անկյուն էր: Ահա մեծ լուսամուտը, վորի առաջ հաճախ նստել է աշխատանքի. ահա տերևեր

նվիրած գրքերի և խաղալիքների դարակը և պահարանը, ուր պահվում էր իր հագուստեղենը: Այստեղ նա չեղել է բախտավոր, այստեղ է ծնվել ու մեծացել նրա փոքրիկ Գարրին:

Բայց չպետք է դանդաղել. յուրաքանչյուր բոպեն թանգ է: Լիզան հագնվեց, չերեխայի շորերը կապոց արավ, չմոտացավ այնտեղ դնել և նրա սիրած խաղալիքները: Հետո արթնացրեց նրան և սկսեց շտապ-շտապ հագցնել:

— Մամա, մենք հեր ենք գնում:

— Մոռո, Գարրի: Մի չար մարդ քեզ ուզում է խլել ինձանից: Մենք հեռանանք — թագնվենք:

Փոքրիկ տղան անխոս թույլ տվեց շորերը հագցնելու: Ապա մայրը փաթաթեց նրան մի շալի մեջ և մի անգամ էլ կրկնեց, վոր ձայն չհանի, գրկեց և կամացուկ լուսամուտով դուրս յեկավ պատշգամբ, իսկ այնտեղից՝ բակը:

Գիշերը թարմ էր և պայծառ. չերկինքը լիքն էր շողշողուն աստղերով: Ավելի պինդ փաթաթելով չերեխային, վոր լուռ կպել էր մորը և ձեռով գրկել նրա վիզը, Լիզան վճռական քայլերով գնաց դեպի բակի դուռը, վոր պահպանում էր մի պառավ շուն: Ըստ սովորութեան, շունը, հեռացող ջահել կնոջը տեսնելով, վեր կացավ և խուլ մուռաց: Լիզան կամացուկ տվեց հավատարիմ չորքոտանի պահապանի անունը: Լիզային ճանաչելով՝ շունը պոչը շարժեց ուրախ-ուրախ և պատրաստվեց ուղեկցել նրան, սաստիկ տարակուսված, թե ինչ է նշանակում այս անսովորական գրոսանքը: Շունը, չերեխի մութ կերպով ըմբռնում էր, վոր այստեղ ինչ-վոր անհարմար բան կա, դրա համար հաճախ կանգ էր առնում անվճռականութեան մեջ ու նայում մերթ Լիզային, մերթ տանը: Վերջապես, նա, հավանորեն ավելի կարևոր համարեց պահպանել ջահել, չերեխան գրկին մենակ կնոջը, քան տունը, վոր բացակայութեան ժամանակ վոչվոք չեր գողանա չերևի, և, արդեն առանց տատանվելու, վազեց շտապ հեռացող Լիզալի յետևից:

Լիզան, չերեխան գրկին, ուղղվեց դեպի քեռի թոմասի տնակը: Յերբ նա, միջանի բոպե անց, դուռը ձեռեց, տանը դարթուն եյին դեռ:

— Ի՞նչ է պատահել, — վախեցած բացականչեց Խլոյան՝ թոմասի կինը: — Այդ դժու չես, Լիզա, այս ժամին, այն էլ չերեխան հետդ:

Լիզան թոմասին ու Խլոյային պատմեց բոլորը, ինչ գիտեր:

— Արդ՛ք յերազ չի աչս բոլորը,—բացականչեց Թոմասը և գլխիկոր նստեց աթոռին:

—Մթթե ձիշտ ե,— ձեռները շարժեց հորքուր Խլոյան:—Սա ի՞նչ ե արել, վոր պարոնը ծախում ե սրան:

— Սա վոչինչ չի արել,—պատասխանեց Լիզան:—Յես լսեցի, թե ինչպես պարոն Շելբին ասում եր, վոր ինքը պարտ ե այդ ատևտրականին, վոր ինքը պետք ե տա նրան քեռի Թոմասին ու Գարբիին. թե չե պարոն Գելին կվերցնի նրա աճբողջ կալվածքն ու բոլոր մարդկանց:

— Լսիր, ծերուկ,—ասաց հորքուր Խլոյան,—գուցե լավ կանես՝ դու չել հեռանաս, հը: Մթթե սպասելու յես, վոր քեզ տանին հարավում ծախեն, ուր նեղրերին սպանում են ծանր աշխատանքով կամ սովամահ են անում: Գնա Լիզայի հետ միասին. մի բան վոր անցաթուղթ ունես, ուր ուզես, կարող ես գնալ: Շուտ արա, Թոմաս, պատրաստվիր, չես իրերդ կկապեմ չիմի:

Թոմասը գլուխը բարձրացրեց և ասաց դանդաղ ու հանգիստ.

— Վոչ, վոչ, չես չեմ գնա: Դու, Լիզա, գնա. դա քո իրավունքն ե. դու պարտավոր ես յերեխայիդ փրկել, իսկ յես կմնամ: Դու լսեցիր, չե՞, Խլոյա, վոր կամ ինձ պիտի ծախի, կամ բոլորին: Թող, ուրեմն, ավելի լավ ե ինձ ծախեն, չես այդ բանը ուրիշներեց վատ չեմ տանի,—ավելացրեց նա, և նրա ձայնը կտրվեց հեկեկանքից:—Իսկ իմ պարոնին չես յերբեք չեմ խարել, իմ անցաթուղթը չերբեք իչարը չեմ գործադրել և չեմ գործադրի: Պարոնն արդեն հոգ կտանի քո և յերեխաների մասին:

Թոմասը շուռ չեկավ դեպի կոպիտ մահճակալը, վորի վրա չերևում էին յերեք սև, գանգուր գլուխներ: Նա որորվեց և ընկավ աթոռի թիկունքին, չերեսը ձեռներով ծածկելով:

— Լսեցեք ինչ եմ ասում,—ասաց Լիզան, դուան միջ կանգ առնելով.—չես այսոր ամուսնուս տեսա. տերը սաստիկ տանջել ե նրան, և նա մտադիր ե փախչել Կանադա: Յերբ տեսնեք, ասացեք, վոր հեռացել-գնացել եմ, և բացատրեցեք, թե ինչու: Գուցե և նորից հանդիպենք:

Լիզան յերեխային ամուր սեղմեց՝ գրկին, կարծես վախենում եր, վոր նրան կխլեն իրենից, ու գնաց...

ԳԼՈՒԽ VI

ՇՈՒՋՈՒՄ ՇԵԼԲԻ ՏԱՆԸ՝ ԼԵՉԱՅԻ ՓԱՆՈՒՍԻՑ ԶԵՏՈ

Ծանր մտքերով պաշարված՝ պարոն և տիկին Շելբիները յերկար չկարողացան քնել. այդ պատճառով հետևյալ առավոտը զարթնեցին սովորականից ուշ:

— Այս ինչ՞ու Լիզան չի գալիս,—ասաց տիկին Շելբին; միքանի անգամ իրար գանգահարելով իր սիրելի սպասուհուն: Մարզը նստել եր հայելու առջև, պատրաստվում եր ածելվել: Ջահել նեգրը մտավ ներս, բերելով մի բաժակ տաք ջուր:

— Անդի,—ասաց նրան տիրուհին,—գնա Լիզային կանչի. տասն անգամ զանգահարեցի, բայց նա, յերևի, չի լսում... Խեղճ,—հոգոց քաշելով. ավելացրեց տիկին Շելբին:—Նրա սարսափելի վիշտն ինձ ցավ ե պատճառում:

Նեղրը մի բոպելից վերադարձավ զարմանքից չուած աչքերով:

— Տեր և տիրուհի,—կակաղելով խոսեց նա,—Լիզայի սենյակը դատարկ ե, արկղն ու պահարանը բաց են, բոլոր լրերը շաղ տված... Ինչպես յերևում ե, փախել ե:

Ամուսիններն իսկույն հասկացան բանն ինչուեմն ե:

— Նա, հավանորեն, գլխի յե ընկել, թե ինչ ե սպասում իրեն, ուստի վարդել ե հեռանալ մեզանից,—նկատեց տիկին Շելբին:—Յեվ շատ լավ ե արել. հույս ունեմ, վոր կարողացել ե արդեն բավական հեռանալ:

—Գուցե,—խոսեց պարոն Շելբին: Բայց ի՞նչ անհաճ դրության մեջ եմ ընկնում հիմա յես: Գելին առտնց այն ել նկատեց, վոր յես շատ ել չեմ ուզում այդ յերեխային տալ իրեն, իսկ հիմա պիտի մտածի ուղղակի, թե յես խոսքս մեկ եմ արել մոր հետ՝ իրեն խաբելու... Դա վերաբերում ե իմ պատվին, ուստի ինչ ել ուզում ե լինի, պետք ե փնտռել նրան և վերադարձնել: Յեվ նա սաստիկ հուզված՝ դուրս չեկավ սենյակից:

Մի խումբ փոքրիկ տղաներ վագեցին դեպի դարպասը, շուտով այդ բանը պարոն Գելին հայտնելու:

— Գլուխս մեռնի, յեթե նա չկատաղի,—բացականչեց Անդին, ակնարկելով ստրկավաճառին սպասող հիասթափությունը:

— Այ կհայհոյի հա՛,—ուրախացած ավելուցրեց նեգրուհի Ջեկը:

— Ո՛ր, ալո: Նա լավ հայհոյել գիտի,—ասաց փոքրիկ Մանդին, վորը զարմանալի գանգուր գլուխ ուներ:—Յես լսեցի՛ ինչ-

պես յերեկ հանոյում եր պարոնին, յերբ սեղանատնից դուրս եր գալիս: Սարսափելի բան եր, — լըջությամբ ավելացրեց նա:

Յերբ, վերջապես, Գեղին չեկավ, բոլորովին պատրաստ մեկնելու, պատանիներն ու յերեխաները, իրար խոսք կտրելով, հայտնեցին նրան Լիզայի փախուստը: Նրանք չկիրն սխալվում իրենց սպասումների մեջ. Գեղին, խեղապես, կատաղեց և սկսեց ընտիր հայնոյանքների հեղից թափել, ինչ վոր յերեխաներին շատ ուրախացրեց. նրանք սկսեցին թռչկոտել Գեղի շուրջը, աշխատելով, սակայն, հեռու մնալ նրա մտրակից, վոր նա բռնելեր ձեռին:

Թռչկոտելուց հողնելով՝ նրանք աղմուկով, ծիծաղով, կանչով սկսեցին թավալվել խոտի վրա և հրհրել միմյանց. նրանց ուրախությանը չափ չկար:

— Ա՛խ, դուք, ավարաներ, — փրփուրը բերանին բղավեց Գեղին, մտրակը շարժելով: — Դուք դեռ համարձակվում եք ծիծաղել ինձ վրա: Սպասեցեք, ցուց կտամ ձեզ, թե ինչ ե նշանակում ծիծաղել ինձ նման մարդու վրա... Ձեր կաշին կըքերթեմ:

— Չեռներդ կարճ են, պարոն ստրկավաճառ, — հեղնեց նրան Անդին, ծամածռություններ անելով:

Գեղին թքեց կատաղած և հսկաչական քայլեր անելով՝ գնաց դեպի տուն:

— Մի՛թե ճիշտ ե, պարոն Շելբի, վոր ձեր աղջիկը փախել ե իր... — սկսեց նա, նետվելով ընդունարանը, ուր ամուսինները նստած սպասում եյին նրան:

— Կինս այստեղ ե, — խստորեն ընդհատեց նրան պարոն Շելբին:

— Ա՛խ, ներողություն, տիկին, — թեթևակի վոտը վոտին խփելով և գլուխն իջեցնելով ասաց ստրկավաճառը, վորի ճակատի յերակներն ուռել եյին, և աչքերը կալծեր եյին ցալտուժ: — Բայց մի՛թե դա ձիշտ ե:

— Պարոն, — նկատեց պարոն Շելբին, — չեթի դուք ուզում եք խոսել ինձ հետ, այդ դեպքում դուք իզուր չեք սրահպանում կանոնավոր մարդկանց մեջ ընդունված քաղաքավարության կանոնները... Անդի, վերցրու պարոնի գլխարկն ու մտրակը: Նըստեցեք, պարոն... Այո, դժբախտարար, պետք ե հաստատեմ ձեզ հասած լուրը, վոր Լիզան, ըստ յերեութիւն, վորեկ կերպ իմանալով մեր մեջ կատարված գործարքը, գիշերն անհետացել ե յերեխայի հետ միասին:

— Յես այդպես ել սպասում ելի, վոր աշխատելու չեն ինձ հիմարացնել այս գործի մեջ, — կոպտորեն արտասանեց ստրկավաճառը:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով, — հպարտորեն ասաց պարոն Շելբին: — Յեթի կամենում եք դրանով կասկած հայտնել իմ ազնվության մասին, այդ դեպքում չես կանեմ մի առարկություն, վոր ձեզ այնքան ել դուր չի գա:

Գեղին հասկացավ ականարկը և ցածր ձայնով ասաց, թե ինքը չեր ցանկանա, վոր պարոն Շելբին զգար այն, ինչ զգում ե ինքը, անազին կորուստ ունենալով:

— Գիտեք ինչ, պարոն Գեղի, — պատասխանեց տանտիրը, — չեթի չիմանալի, թե դուք հիմք ունեք դժգոհելու, չերբեք թույլ չեյի տա, վոր դուք այդպես կոպիտ և անքաղաքավաբի խուժեք իմ տունը: Միաժամանակ պիտի ավելացնեմ, վոր թույլ չեմ տա վորեկ կասկած իմ ազնվության մասին: Յես պատրաստ եմ ձեռիցս չեկածը չխնայել, վորպեսզի ոգնեմ ձեզ՝ ձեր սեփականությունը վերստանալու. այդ բանի համար ձեր տրամադրության տակ կգնեմ իմ ծառաներին, ձիրերը և առհասարակ ամենը, ինչ ունեմ: Իսկ առայժմ, — ավելացրեց նա միանգամայն այլ տոնով, — խորհուրդ եմ, սալիս չբարկանալ և բարեկամաբար նախաձառել մեզ հետ: Պետք ե կարծել, վոր մի ժամվա մեջ փախստականը շատ հեռու չի գնա: Ձիով միշտ կարելի չե հասնել նրա յեակից:

Տիկին Շելբին վեր կացավ: Հայտնելով, վոր տնտեսության գործերով չի կարող ներկա լինել նախաձառչին, նա տարիքավոր մուլատ կնոջը կարգադրեց՝ սուրճ պատրաստել ու դուրս չեկավ սենյակից, սուանց հյուրին ցտեսություն ասելու:

— Սակայն պառավ տիկինն այնքան ել բանի տեղ չի դնում ձեր խոնարհ ծառային, — նկատեց Գեղին:

— Խնդրում եմ կնոջս մասին խոսել ավելի հարգանքով, — չորությամբ ընդհատեց նրան պարոն Շելբին:

— Ներեցեք: Բայց, չե՞ վոր ձեր տիկինն իրոք ջահել չի, — թունալից ծիծաղով արտասանեց ստրկավաճառը:

— Միանգամայն ճիշտ ե, բայց դա արատ չի և չի կարող կարգին մարդուն առիթ տալ հեզնական նկատողություններ անելու, — առարկեց պարոն Շելբին:

«Տես, ինչքան ե հպարտացել մուրհակները յես ստանալուց հետո», մտածեց ինքն իր մեջ Գեղին. «Յերեկ սա ինձ հետ»

ալսպես անքաղաքով սրի չեր: Դե, արի ու մարդկանց ազատի դժբախտութիւնն յի:

Լիզալի փախուստը և քեօի Թոմասին ծախելու լուրը հուզել էր բոլորին: Գեօի Թոմասին հարգում և սիրում էին միտն աչն Շելբիի տանը, այլև շրջակա ամբողջ բնակչութիւնը: Դա զարմանալի սիրալիր, բարի և աղնիվ մարդ էր, վորի տնակում շարունակ հավաքվում էին ստրուկ նեգրերը՝ կարևոր գործերի մասին խոսելու և խորհրդակցելու:

Ուստի զարմանալի չէ, վոր Թոմասին ծախելու լուրը բոլորին միանգամայն անհավատալի թվաց:

Հուզումը սաստկացավ, յերբ իմացան Լիզալի փախուստը: Տանը սարսափելի իրարանցում էր տիրում: Մարդիկ վազվզում էլին, ճչում, դռները շրխկացնում, տարբեր տեղեր հավաքվում էին ամեն յերանգի սև դեմքեր: Մեկը միայն, վոր կարող էր լույս սփռել այդ պատմութեան վրա, համաուրեն լուծում էր: Հորքուր Խլոյան, մուսլ դեմքով, անխոս, նախաճաշի համար հաց էր թխում, կարծես չէր տեսնում և չէր լսում, թե ինչ է կատարվում շուրջը:

Բակում կանգնել էր «Սև Սեմը» (այդպես կոչվում էր նրա համար, վորովհետև բոլոր մյուս նեգրերից սև էր) և մտածում էր բոլորին հուզող դեպքի մասին—Լիզալի փախուստի և Թոմասին ծախելու վրա:

— Բանը վատ է,—ասում էր նա:—Բանը վատ է ով գիտի ում կվերցնեն Թոմասի տեղ:

Սև Սեմի մտքերի թելը կտրեց սպասավոր Անդրեյը, հայտնելով նրան Շելբիի հրամանը—անմիջապես յերկու ձի թամբել:

— Ինչո՞ւ համար:

— Լիզալի յետևից գնալու: Բայց իմացիր, Սեմ, վոր տիկինը չի ուզում՝ Լիզային բռնեն:

— Ի՞նչպես.—զարմացավ Սեմը:

— Այո, հավատացիր. յես գիտեմ՝ ինչ էս ասում:

— Լավ,—ասաց Սեմը և դիմեց դեպի ախոռը:

Միքանի ըոպե անց՝ Սեմը բերեց ձիերին և կռպեց Գելիի ջահել ու վախկոտ ձիու կողքին: Սեմն արդեն միջոց էր հնարել իր տիրուհուն հաճույք պատճառելու: Նա մոտեցավ Գելիի ձիուն և, ցույց տալով, թե թիմարում է նրան և թամբը ուղղում, աննկատելի թամբի տակը կոխեց փշփշոտ մի ընկույզ:

— Ե, հիմի հանգիստ կարող ես լինել,—ասաց նա քմծիծաղով և քաշվեց մի կողմ:

Փոքր անց հայտնվեց և ինքը Գելին:

Համեղ նախաճաշից լավ տրամադրված՝ նա յերգում էր ինչ-վոր: Նրան տեսնելով՝ նեգրերը, արտաքուստ վուրթկոտ շարժումներով, նետվեցին դեպի նրա ձին, վոր «ոգնեն» նրան ձի նըստելու:

Սեմն այնպես էր քրքրել արմավենու տերևներից շինած իր գլխարկը, վոր նրա տերևները կախկախվել էին ամեն կողմի վրա, հիշեցնելով հնդիկ ցեղապետի գլխարկ, վոր շինված է լինում սովորաբար փետուրներից: Իսկ Անդին, ընդհակառակը, կտրել էր իր շլլապի յեղերը, այնպես վոր նա նմանում էր կաթսայի: Գլխարկի այդ ձևն, ըստ յերևութին, շատ էր դուր յեկել ջահել նեգրին, նա ընդունեց սարսափելի հպարտ տեսք, ինչպես անում են միշտ նեգրերը, յերբ յերևակայում են, թե հագել են մի վորևէ շատ գեղեցիկ բան:

— Ճամպա ընկնենք, տղերք,—ասաց Գելին, պատշգամից իջնելով:—Պետք է շտապենք, թե չէ առանց այն էլ շատ ժամանակ ենք կորցրել:

— Մենք պատրաստ ենք, պարոն,—խոնարհ գլուխ տալով ասաց Սեմը:—Միայն թույլ ավելք ոգնել ձեզ նստելու, հետո քամու պես կթռչենք:

Մինչ Գելին ձի յեր նստում, Անդին պատվում էր իրենց հանգիստ կանգնած ձիերի շուրջը, ցույց տալով իբր թե նայում է տեսնելու՝ ամեն ինչ կարգին է արդյոք:

Հագիվ ստրկավաճառը տեղավորվել էր թամբի վրա, յերբ նրա ձին ծառս յեղավ հանկարծ, կանգնեց յետին վոտների վրա և տիրոջը գցեց գետին, այնպես վոր քիչ մնաց նա մյուս ձիերի վոտի տակն ընկնելու: Սարսափի ձիչ արձակելով՝ Սեմը, վորքան ուժ ուներ, ձգեց Գելիի ձիու սանձը, աշխատելով ստիպել նրան հարմար դիրք ընդունել չորս վոտի վրա, բայց այդ անելիս՝ գըլխարկի տերևներն այնպես էր խշխշացնում, վոր կենդանին էլ ավելի կատաղեց: Աշխատելով դուրս պրծնել նրա ձեռից, ձին կատաղած դես ու դեն ընկավ, յիտ-յիտ գնաց և կանգնեց նորից յետին վոտների վրա:

Վերջապես, նա—Սեմի ծածուկ ուղնութեամբ—ազատվեց և ահագին փնչոցով դուրս յեկավ դարպասի բաց դռներից ու վազեց դեպի դաշտը: Մյուս յերկու ձին նույնպես վազեցին նրա յետևից: Անդին ու Սեմը վայրի կանչերով հետևեցին նրանց: Շրներն անընդհատ հաջում էլին, իսկ փոքր ինչ հեռու կանգնած

յերեխաներն անսովոր յեռանդով թռչկոտում եյին, ճչում, ճղճղ-
դում և ծափ տալիս: Առհասարակ բարձրացավ մի անասելի աղ-
ժուկ, իրարանցում:

Գելիի կրակոտ ու արագավաղ ձին կարծես հասկանում եր
նեզրերի գաղտնի մտքերը և աշխատում եր վարձան կարելի չի բա-
րեխիղճ կերպով ոգնել նրանց: Դուրս գալով գեղեցիկ դաշտը, վոր
փուլած եր ընդարձակ տարածությամբ, նա ուղղակի դարձանալի
խաղեր եր անում: մերթ թուշում եր չեա ու առաջ, սանձը չետևից
քաշ տալով, մերթ կանգ եր առնում հանկարծ ու կարծես ցանկու-
թյուն հայտնում, վոր իրեն բռնեն: Բայց հաղիվ վորևե մեկը
մոտենում եր, նա աղմկալի փնչոցով, հսկայական քաշերով նետ-
վում եր անտառ, վոր մի կողմից յեզերում եր դաշտը:

Սեմը մտքումը դրել էր, թե թուշլ չի տա, վոր ձիերը վո-
րոշած ժամանակից առաջ բռնվեն. բայց և այնպես ցույց եր տա-
լիս, թե ջանք չի խնայում նրանց բռնելու: Նա չերևում եր այն
բոլոր տեղերում, ուր, թվում եր, հնարավոր ե բռնել ձիերից
մեկն ու մեկին: Նա վաղում եր, ձեռները թափահարում և գո-
ռում թոքերի ամբողջ ուժով. «Կանգնիր: Բռնիր դրան... Հիմի
ել չես ազատվի», և նման բաներ: Բայց դրանով նա ձիուն խըրտ-
նեցնում եր միայն, այնպես վոր նա շճմած նետվում եր մի կողմ
և նորից չքանում:

Գելին նույնպես, խելագարի նման, վազվզում եր դաշտում
անեծքների ու հայհոյանքների հեղեղ թափելով. անուժ կատա-
ղության մեջ վոտները խփում եր գետնին և մտրակը շրխկացնում,
վորից ձիերն ավելի կատաղում եյին:

Իր ազարակի դռանը կանգնած՝ պարոն Շելքին հրամանա-
տարի ձայնով կարգադրություններ եր անում շուրջկալի վերա-
բերմամբ, իսկ նրա կինն իր սենյակի լուսամուտից նայելով՝ հրճ-
վում եր այդ կոմիկական տեսարանի հանդես և ծածուկ ծիծա-
ղում Գելիի կատաղության վրա:

Վերջապես, յերկու ժամ հետո, Սեմը, Ջերիին հեծած, բե-
րեց առևտրականի ձին՝ ամբողջովին քափ ու քրտնքի լեջ կո-
րած, բայց լայն բացված ուռնգներով և արյունով լցված աչքե-
րով, վոր ցույց եր տալիս, թե նա գեռ բոլորովին սանձահար-
ված չե:

— Բռնեցի, — հաղթական տեսքով բացականչեց Սեմը: — Յեթե
չես չլինեյի, մինչև առավոտ պիտի քաշ գայիք յետևից. բայց չես
գիտեմ ինչպես պետք ե դրանց բռնել, և հրես բռնեցի:

— Այո, յեթե դու չլինեյիր, վոչինչ ել չեր պատահի, — ա-
սաց Գելին կատաղությունից խուլոտած ձայնով: — Այս բոլորը
կատարվեց քո շնորհիվ:

— Ի՞նչ եք ասում, պարոն, — վիրավորված անմեղության-
տոնով արգարացավ Սեմը, ձեռները հուսահատ շարժելով: — Ի՞նչ
մնաց վոտս դուրս ընկներ ձիերի յետևից վաղելիս: Տեսեք, հա-
լից ընկել եմ, քրտինքս ջրի պես գնում ե...

— Այո, տեսում եմ, տեսում եմ, — ատամները կրճտելով
սասց ստրկավաճառը: — Քո հիմարության շնորհիվ յերեք ժամ
կորցրի... Դե, պնանք, վերջապես, բալց տես, հիմարություն չա-
նես:

— Ի՞նչպես, սլարոն. ուղճւմ եք գնալ արդեն, — զարմացած
տեսքով սասց Սեմը: — Ուրեմն դուք ուզում եք սպանել մեզ ել,
ձիերին ել: Մենք այլ հուշածությունից մեռնում ենք, իսկ
ձիերը քրտնքի մեջ կորած են: Մինչև ճաշ չենք կարող գնալ:
Պետք ե առաջ ձիերին մաքրել. տեսեք — ամբողջովին ցեխոտ են:
Դուք մի անհանգստանաք. մենք, միևնույն ե, Լիզային կհասնենք-
դա դժվար բան չի, վորովհետև նա վատ ճանապարհ գնացող ե:

Այդ ժամանակ պատշգամ չելավ տիկին Շելքին, վոր լսել էր
արդեն Սեմի ասածները: Անկեղծ ցավ հայտնելով Գելիին կա-
տարվածի առիթով, նա թախանձագին խնդրեց նրան ճաշել ի-
րենց մոտ, ավելացնելով, թե դրա վրա շատ ժամանակ չի կոր-
չի, վորովհետև սեղանն արդեն պատրաստում են:

Հասկանալով, վոր իրեն ել վոչինչ չի մնում անել, Գելին
կես-թթու, կես-քաղցր տեսքով ընդունեց հրավերը և նորից մը-
տավ տուն, մինչդեռ Սեմն ուրախությունից վալյոզ աչքերով՝
ձիերը տարավ ախոռ:

— Տեսա՞ր, Անդի: հը՞, — հարցրեց նա ընկերոջը: — Տեսա՞ր
վոնց եր ձեռները թափահարում ու հահոյում: Ծիծաղելի չե: Նա
իրեն ուտում եր, հայհոյում, իսկ չես մտածում ելի ինքս լմ մեջ-
«Հայհոյիր ինչքան ուզում ես, գրողը քեզ տանի, բայց ձին քու
ձեռը չի ընկնի, մինչև վոր յես չբռնեմ ու բերեմ»:

Ել յերկյուղ չունենալով, թե կարող են իրենց լսել, յերկու
նեզրն ել սկսեցին բարձր ծիծաղել:

— Հապա մի տեսնեյիր, — շարունակեց Սեմը, — թե ինչպես
եր կատաղած, յերբ, վերջապես, ձին բերի մոտը: Կարող եր ինձ
ուտել, յեթե միայն համարձակվեր:

— Յես բոլորը տեսա ու լսեցի, — ասաց Անդին: — Դու իսկա-
կան քաջի պես պահեցիր քեզ, Սեմ:

— Բա հո հիմար չեմ. դիտեմ, թե ինչ կարելի յե անել. Իսկ դու տեսար, թե ինչպես մեր տիրուհին կանգնել եր լուսամուտի առաջ ու ծիծաղում եր:

— Չե, չես այդ չտեսա. իմ աչքերն այնքան սուր չեն, ինչպես քոնը:

— Այո, — համաձայնեց Սեմը, — իմ աչքերը սուր են. յես սովոր եմ ամեն կողմ նայել, վոր իմանամ, թե ինչ ե կատարվում շուրջս: Դա լավ սովորութիւնն ե: Խորհուրդ կտայի որինակ վերցընել ինձանից: Դրանից ավելի լավ սովորութիւն չկամեղ՝ սեւ վամորթներիս համար:

— Իսկ ինձ թվում ե, վոր չեթե յես չլինեյի, դու մինչև հիմի չել չեյիր իմանա բանն ինչունն ե, — նկատեց Անդին:

— Հա, դու չել ընդունակ տղա չես, — ներողամտաբար ասաց Սեմը: — Կարծում եմ, վոր դու չել առաջ կերթաս, չեթե ամեն բանում ինձանից որինակ վերցնես: Իսկ հիմի գնանք խոհանոց: Տիրուհին, չերեի, մի քաղցր բան կտա ուտելու...

Թեև տիկին Շելբին խոստացավ, թե ճաշը շուտով պատրաստ կլինի, բայց հարկ յեղավ յերկար սպասել:

Այդ որը Շելբիի բոլոր սպասավորները, դրանց թվում և հորքուր Խլոյան՝ քեռի Թոմասի կինը, իրենց կորցրել էին. խոհանոցում ծառայող տղան արգանակը (սոււլը) թափեց. հարկ չեղավ նորից պատրաստելու: Հորքուր Խլոյան դանդաղ, խոհանոցային արվեստի բոլոր կանոններով եր չեփում կերակուրը և ըշտապեցնելու բոլոր հորդորներին պատասխանում եր, թե ինքը չի կարող հում կերակուրը տալուտելու: Մի սպասավոր ջրի դուլը ձեռին ընկավ և ստիպված եր յերկրորդ անգամ գնալ ջրհորից թարմ ջուր բերելու, մի ուրիշը վարը գցեց չուղով լի ափսոս:

Անցավ ուղիղ յերկու ժամ, մինչև, վերջապես, ճաշեցին: Իսկ ճաշից անմիջապես հետո պ. Շելբին կանչեց քեռի Թոմասին և հայտնեց իր վորոշումը:

— Թոմաս, — ասաց Շելբին, — այսոր դեռևս ազատ ես դու, իսկ վաղը պիտի գնաս նոր տիրոջը մոտ: Յեթե նշանակած ժամանակին չլինես այն տեղում, ուր նա ցույց կտա քեզ, այն ժամանակ յես այդ պարոնին ստիպված պիտի մեծ տուգանք վճարեմ:

— Պարոն, — ասաց Թոմասը, — ութ տարեկանից ձեր տանն եմ: Յերբեից արդյոք խաբել եմ ձեզ:

— Մենք քեզ նորից յես կառնենք, — միջամտեց տիկին Շել-

բին: — Թող միայն մեր գործերը լավանան: Պարոն Գելին չի հրաժարվի տեղեկացնել մեզ, յեթե քեզ ծախելու լինի:

— Իհարկե, ինձ համար միևնույնն ե. առնել, ծախել, ծախածը նորից առնել միայն թե վաստակ լինի...

Վերջապես, ձիերը բերին, և Գելին իր յերկու ուղեկիցներով գնաց փախած Լիզային հետապնդելու:

ԳՒՈՒԽ VII

ԳԵԼԻ ԸՆԱՋՈՂ ՇԵՍԱՊՆԴՈՒՍԸ

Ազարակից դուրս գալով՝ Գելին ասաց վճռապես.

— Մենք կերթանք ուղիղ դեպի գետը: Նա, հավանորեն, այդ կողմն ե գնացել: Դուք բոլորդ, սատանաներ, չերբ ուզում եք փախչել, գնում եք դեպի կանաչա:

— Դա շատ ճիշտ ե, պարոն, — ասաց Սեմը: — Իսկույն յերեւում ե, վոր այդ գործերում փորձված եք, և ձեզ խաբել չի կարելի... Բայց ցավը նրանումն ե, վոր այստեղից յերկու ճանապարհ ե գնում դեպի գետը. մեկը մեծ, մյուսը՝ փոքր: Հիմա վորով կհրամայեք գնալ:

Անդին, թեև շատ զարմացած եր ընկերոջ արած տեղազրահան գլուտով, բայց և այնպես շտապեց հաստատել նրա ասածը:

— Իմ կարճ խելքով, — շարունակեց Սեմը, — Լիզան անպայման փոքր շավիղով ե գնացել, վորովհետև նրանով գնացող չեկող քիչ ե լինում:

Գելին հին աղվես եր, նրան խաբելը շատ դժվար եր. բայց ներկա դեպքում նա ինքն այն կարծիքի յեր, վոր յեթե շավիղ կա, փախստականն, Դհարկե, պետք ե գնար հենց այդ շավիղով:

— Բայց, գուցե ե, ավարաներ, դուք ստում եք, թե շավիղ կա, — ասաց նա փոքր մտածելով:

Այդ յենթադրութիւնն այն աստիճան ղվարճալի թվաց ծիծաղկոտ Անդիին, վոր նա կրկին քրքջաց և քիչ մնաց գլորվեր ձիուց: Իսկ Սեմը պահպանում եր անայլաչլ լըջութիւն, ինչ վոր պատշաճում ե այնպիսի մի մտածողի, վորպիսին նա յեր:

— Յեթե մեղ չեք հավատում, պարոն, — արժանապատվութիւնը ասոց նա, — գնանք մեծ ճանապարհով: Չեր բանն ե: Մեզ համար միևնույնն ե՝ վոր կողմը գնալ, միայն թե դուք գոհ մնաք մեզնից... Յես հիմա ինքս ել կարծում եմ, վոր նա փախած կլինի մեծ ճանապարհով, վորովհետև դա ավելի կարճ ճամպա չե:

— Հասկանալի բան է,—բարձրաձայն մտածեց Գեղին, ու չ
չգարձնելով Սեմի խոսքերին,—նա ընտրած կլինի ավելի խաղաղ,
անմարդ ճանապարհ:

— Դա հաստատ ասել չի կարելի,—նկատեց Սեմը,—կանաչք
ուրիշ տեսակ խալիս են: Նրանք յերբեմն այնպիսի բաներ են ա-
նում, վոր զարմանքից բերանդ բաց է մնում: Յեթե դուք կար-
ծում եք, վոր մեր փախստականը գնացել է այս ճամպով, ուրեմն,
ներան գտնելու համար, պիտի գնալ մի ուրիշ ճամպով: Սկզբում
չես կարծեցի, վոր նա շավիղով գնացած կլինի նրա համար, վոր
ամենահարմար ճամպան է, բայց հիմա կարծում եմ, վոր նրան
պիտի փնտռել մեծ ճամպին:

Վորքան շատ եր խոսում Սեմը, այնքան ավելի սաստկա-
նում եր Գեղի ցանկութունը՝ անել բոլորովին հակառակը, ինչ
խորհուրդ եր տալիս նեզրը, այսինքն գնալ շավիղով: Նա համոզ-
ված եր, վոր Սեմը խորամանկութուն է անում և ուզում է շեղել
ներան այդ ճամպին:

— Յեթե շավիղով գնանք, չե՞րբ կարող ենք գետին հասնել,—
հարցրեց նա Սեմից:

— Այս ճամպին մի քիչ չե՞րկար կլինի,—պատասխանեց նեզրը՝
աչքով անելով կողքից գնացող Անդիին այն աչքով, վոր
ուզոված եր նրա կողմը, մինչդեռ մ.ուս աչքը մնաց անշարժ:—
Բայց, իմ կարծիքով, լավ է չգնալ այդ ճամպով: Յես միքանի
անգամ գնացել եմ դրանով, բայց չերրիք ել համբերութունս չի
տվել մինչև վերջը գնալու: Շատ ձանձրալի ճամպա չե. վոչ մարդ
ես հանդիպում, վոչ ել տուն-տեղ կա: Հանկարծ մարդ մոլորվի
ու, ով է իմանում, ուր ընկնի:

— Ե, այնտեղ կտեսնենք,—ասաց Գեղին,—չես ուզում եմ
գնալ հենց այդ ճամպով:

— Բայց արդյոք լավ կլինի, պարոն: Հիշում եմ, մեկն ինձ
ասաց, վոր այդ ճամպի վերջում, գետի մոտ, մեծ ճահիճ կա, վո-
րից անկարելի չե դուրս գալ, անցնել: Դու այդ մասին լսե՞լ ես,
Անդի,—գարձավ Սեմն ընկերով:—Կարծեմ, քեզ մոտ էլին ասում:

Անդին հաշտեց, թե մութ կերպով հիշում է, վոր լսել է
այդ մասին, բայց հաստատ չզիտի: Առհասարակ ջահել նեզրը
շատ զգուշ եր իր կարծիքները մեջ, վորպեսզի հետո, դեպք չե-
ղած ժամանակ, հնարավորութուն ունենա իրեն պաշտպանելու:

Գեղին, սովոր լինելով, վոր սևամորթները յերբեք ճշմարտու-
թյուն չեն ասում իրեն, մտածեց, վոր չեթե Սեմը խոսում է հո-

գուտ մեծ ճանապարհի, դա նշանակում է, թե նա հավատացած է,
վոր կինն այդ ճամպին չի ընտրել, ուստի պիտի գնալ մյուսով:
Նա նկատեց, վոր Սեմի խոսքերի մեջ շփոթութուն կա. ըստ չե-
րևութին, նա կամենում եր սխալեցնել իրեն, տանել սխալ հեռ-
քով և, այդպիսով, ողնել Լիզային ծղկիլու:

— Յուզց ատը շավիղը,—հրամայեց Գեղին կտրուկ:
Սեմը ցույց տվեց, և Գեղին ձին քշեց նեղ արահետով, վոր
իսկական ճանապարհից ձգվում եր մի կողմ: Նեզրերը հետևեցին
ներան՝ իրար աչքով անելով ու կամացուկ ծիծաղելով:

Արահետը ձիավորներին դուրս բերեց, իսկապես, շավիղը
վորով առաջ գնում ելին դեպի գետը, բայց այն որվանից, յերբ
չինվել եր մեծ խճուղին, շավիղը մոռացվել եր հետզհետե: Այժմ,
ամբողջովին խոտով ծածկված, նա հազիվ եր նկատվում և, բացի
զրանից, չե՞րկու վերստից գեներ նրան հատում ելին ագարակները
և մշակած դաշտերը, վոր շրջապատված ելին ցանկապատերով:
Սեմն այդ շատ լավ գիտեր, բայց հարկ չե՞ր համարում ասելու:
Սեմն այդ շատ լավ գիտեր, վորքան կարելի չե շատ ժա-
նրա նպատակն եր—ստիպել Գեղին վորքան կարելի չե շատ ժա-
մանակ կորցնի, ինչ վոր և աջողվեց նրան, իր խորամանկության
շնորհիվ: Կամենալով ցույց տալ, թե ինքը ընավ չե՞ր ցանկանում
այդ ճամպով գնալ, նա, հնազանդ կերպով, հետևում եր Գեղին
չե՞րհիմն անեծքներ մոմում, յերբ իր ձիու՝ Ձերբի վոտը քարի չե՞ր
դիպչում:

— Իսկի ձիու հարմար ճամպա չի,—քրթմնջում եր նա այն-
պես, վոր Գեղին լսի:—Ազնվացեղ ձիերի համար ավելի վատ
բան չկա, քան այսպես անիծյալ ճամպերը: Մեկ խոտի մեջ են
ընկնում, մեկ վոտներն է քարի դիպչում:

— Ձեներ պիտի, կտրես թե չե, կապիկ. —բղավեց Գեղին
ներա վրա:—Շատ լավ եմ հասկանում քեզ դու ուզում ես, վոր չես
գնամ այն ճամպով, վորովհետև փախստականս այս ճամպով է
գնում: Բայց չես բավական սովոր եմ ձեր խաբեբայութուննե-
րին և սկի չեմ հավատում ձեզ: Յես, բարեկամ, քո ասած մար-
դը չեմ: Ում ուզում ես, կարող ես խաբել, բայց ինձ—վոչ:

— Ի՞նչ եք ասում, պարոն. չես քանի գլխանի չեմ, վոր
ձեզ խաբեմ,—բացականչեց Սեմը:—Յես անկեղծ իմ կարծիքը
հաշտեցի: Յես կարծում եմ՝ Լիզան գնացած պիտի լինի մեծ
ճամպով հենց, այն պատճառով, վորովհետև այս ճամպին շատ
վտանգավոր է: Իսկ չեթե դուք, պարոն, ուզում եք գնալ, կամ-
քը ձերն է:

Այս խոսքերն ասելով՝ նա կրկին աչքով արավ Անդիին, վոր հազիվ գապեց իր քրքիջը:

Ճանապարհին Սեմը զարմանալի չեռանդ էր ցույց տալիս: Նա թեքվում էր մերթ այս, մերթ այն կողմի վրա, աշխատելով կարծես առջևից գնացող Գեղի յետևից դիտել ճանապարհը. մերթ ճչում էր, թե հեռվում կին է տեսնում, մերթ հարցնում էր ընկերոջը, թե նրան չի թվում արդյոք, վոր ներքևի ձորակում թագնված լինի Լիզան: Իր բոլոր դիտողություններն ու հարցումները նա անում էր միայն այնպիսի տեղերում, ուր հնար չկար ձիերը սրբաբազվ քշելու, և այդպիսով Գեղիին պահում էր մշտական հուզված դրուժյան մեջ:

Հանկարծ, ճանապարհի վտորանը կտրելուց հետո, մեր ճանապարհորդները անսպասելի՝ սլանալով մտան մի մեծ ֆերմայի բակ: Ազարակի բոլոր բնակիչները գնացել էին դաշտային աշխատանքի, այդ պատճառով շունչ չկար այնտեղ: Ճամպեն էլ կտրվում էր այդտեղ:

— Ա՛յ տեսնում եք, պարոն,—ասաց Սեմը,—եւ գնալու ճամպա չկա. շուրջն ամբողջ դաշտեր են: Յես դգուշացրի ձեզ, վոր այստեղ արգելքներ կան, դուք ինձ չհավատացիք: Դուք, պարոն, առաջ յերբեք այս տեղերում չեք յեղել, բայց ուզեցիք ավելի լավ իմանալ, քան այն մարդը, վոր այստեղ ծնվել ու մեծացել է:

— Ավարա, դու գիտեցիր, վոր ճանապարհը վերջանում է այստեղ,—կատաղությամբ բղավեց Գեղին, մտրակը նրա վրա թափ տալով:

— Բայց չե՞ վոր յես ասի, թե դրանով հեռու չենք գնա,—սառնասիրտ առարկեց Սեմը:—Յես ձեզ հավատացնում եյի, վոր դրա առաջը կտրում են շենքերն ու ցանկապատերը: Անդին լսեց իմ խոսքերը և կարող է հաստատել: Յի՞թե դուք, ձեր մտքերով զբաղված, այդ չեք չսել, յես մեղավոր չեմ:

Գեղին հիշեց, վոր Սեմն, խակապես, ինչ-վոր բան ասաց իրեն, բայց ինքը լավ չլսեց: Առևտրականին այլևս ուրիշ բան չէր մնում, քան դուրս գալ նորից մեծ ճանապարհը: Նա այդպես էլ արավ:

Նույն այդ ժամանակ Լիզան փախչում էր՝ յերեխան գրկին սեղմած:

Նրա գլուխը լիքն էր ամեն տեսակ մտքերով: Թողել էր այն տունը, ուր անցրել էր մանկութունն ու յերիտասարդութունը,

թողել էր այն ապաստանը, վոր աշխարհում միակն էր իր համար: Ու մտքով հրաժեշտ էր տալիս յուրաքանչյուր տան, ծառի, վորի կողքով անցնում էր: Ո՛ւր է գնում նա: Ի՞նչ է սպասում իրեն: Բայց յերբ յերեխան՝ Գարրին միտն էր ընկնում, նա մոռանում էր իր բոլոր յերկյուղներն ու կասկածները: Մայրական սերը հաղթում էր մյուս զգացումներին:

Գարրին բավականաչափ մեծ էր՝ սեփական վտտքերով քայլելու համար, և ուրիշ ժամանակ Լիզան կտաներ նրան ուղղակի ձեռը բռնած: Բայց յերեխային կորցնելու յերկյուղից՝ տանում էր գրկած, սրտին ամուր սեղմած: Յեվ յերեխան փետուրի պես թեթև էր թվում նրան: Նա գնում էր և հոգնածություն չեք ըզգում. ձյունը ճոճում էր նրա վտանների տակ, և նա վախ էր զգում ամեն մի հնչյունից:

— Մամա, կարելի՞ յե քնել,—հարցրեց տղան,—դու ինձ ուրիշի յես տա, չե՞:

— Բնի՛ր, քնի՛ր, բալիկս: Յես քեզ վոչվոքի չեմ տա:

Փոքրիկ տղան ձեռը պատ տվեց մոր վզով, գլուխը դրեց նրա ուսին և շուտով քնեց: Լիզան շարունակում էր գնալ առանց կանգ առնելու, առանց քայլերը դանդաղեցնելու: Յերբ որը բացվեց, նա մեծ ճանապարհին էր, շատ մղոններով հեռու այն բոլորից, ինչ մոտ էր նրա սրտին:

Լիզան իր տիրուհու հետ հաճախ էր գնացել ծանոթների մոտ՝ Ոհայո գետի ափին գտնվող փոքրիկ գյուղը, և լավ գիտեր այնտեղ տանող ճանապարհը: Գետը հասնել և անցնել մյուս ափը—սա յեր Լիզայի մոտավոր նպատակը. թե ինչ կլիներ հետո, նա ինքն էլ չգիտեր:

Յերբ բոլորովին լուսացավ, և ճանապարհին պատահել ըսկըսեցին սալեր, կանօքեր, Լիզան մտածեց, վոր իր արագ քայլվածքը և այլալված տեսքը կարող է ուշադրություն գրապել և կասկած հարուցել: Նա նոր վարթնած Գարրիին դրեց ցած՝ գետնին, կարգի բերեց շորերն ու գլխարկը և ճանապարհը շարունակեց կամաց: Նրա կապոցի մեջ կար խմորեղենի և խնձորի պաշար, և նա ողտվեց դրանից, վորպեսզի խրախուսի այժմ իր վտտով քայլող, բայց յետ մնացող տղային: Լիզան խնձորը գլորում էր գետնին, իսկ տղան վազում էր նրա յետևից ու բռնում, և այդպիսով, Կոնկանտի անցնում էին վերստ վերստի յետևից:

Շուտով հասան նրանք մի փոքրիկ անտառ, ուր շառաչում էր մի բարակ առու: Գարրին հաց և շուր ուզեց. Լիզան մտավ

ծառերի մեջ և յերեխայի հետ նստեց մի մեծ քարի յետև, վորը ծածկում էր նրան մեծ ճանապարհի անցորդներին աչքից: Գարրին ախորժակով կերավ խմորեղենը, վշտացավ, վոր մաչրը վոչինչ չի ուտում և աշխատեց գոնե մի փոքրիկ պատառ կոխել նրա բերանը: Բայց Լիզան վոչինչ չէր կարող ուտել. ինչ-վոր մի բան դեմ էր առել նրա կոկորդին և, թվում էր, իսկույն և եթ խեղդելու չէ նրան. բացի դրանից՝ անհանգստությունը նրան մղում էր առաջ ու առաջ:

— Չե, չե, Գարրի,—ասում էր նա, յետ չեմ կարող ուտել, մինչև վոր դու ապահով չլինես: Մենք պետք է գնանք, գնանք, վորքան կարելի չի շուտ, մինչև վոր հոսսենք գետին:

Նա վեր կացավ և, յերեխայի ձեռք բռնելով, շարունակեց ճանապարհը: Այժմ արդեն նա տնից հեռու յեր և ել չէր վախենում ծանոթներին հանդիպելուց: Թի նրա և թե Գարրիի գուհնն աչքան սպիտակ էր, վոր անցորդներին մտքովը չէր կարող անցնել, թե նա ստրկուհի չի: Այս հանգամանքը փոքր ինչ հանդրստացրեց Լիզային. դրա հետ միաժամանակ նա հոգնածություն և քաղց էր զգում, և կեսորին նույնիսկ վճռեց մտնել մի ագարակ, վորպեսզի հանգստանա և հաց ուտի:

Վերջապես, յերեկոյան դեմ, Լիզան՝ հոգնած վոտները հագիվ քաշ տալով՝ հասավ Ոհայո գետի ափին ընկած գյուղը: Ամենից առաջ նայեց գետին, վորի աչք կողմը, Լիզային թվում էր, ալիտաց չերկիրն է:

Գարնան սկիզբն էր. դետը բարձրացել, յեռում էր, և սառուցի ահագին կտորներ տարվում էին մուկ ալիքներով: Այդ սառցակտորները դիպչում էին իրար, լցնելով գետի նեղ տարածությունը, մի ափից մինչև մյուսը: Լիզան գիտեր, վոր վոչվոք չի ցանկանա և չի համարձակվի իրեն նավակով կամ ալ կերպ գետի մյուս ափը անցկացնել: Նամտավ հենց ափին գտնվող հասարակ ճաշարանը, վորպեսզի տեղեկություններ իմանա գետն անցնելու մասին:

Ճաշարանի տիրուհին, զգացված ջահել կնոջ հուզված տեսքից, սիրով հայտնեց, թե ճաշարանում մի առևտրական կա, վորը ընուզում է գիշերը իր տակառներն անցկացնել մյուս ափը: Դրան սպասելով՝ Լիզան հոգնած Գարրիին դրեց մահճակալի վրա և նրա թաթիկները բռնեց, մինչև վոր յերեխան քնեց խոր քնով: Նա ինքը քնել չկարողացավ: Այն միտքը, վոր իրեն կարող են հետապնդել, կրակի պես այրում էր նրան, և նա տխրությամբ

նայում էր մուլ, հորդ գետին, վոր ընկած էր նրա և ազատության միջև:

Հազիվ Լիզան կարողացել էր փոքր ինչ հանգստանալ, յերբ ճաշարանին մոտեցավ Գեյին՝ իր ուղեկիցներով: Սեմը, վոր գնում էր առջևից, իսկույն լուսամուտից տեսավ Լիզային և, վորպեսզի նրան նախազգուշացնի, ձեռով հրեց գլխարկը, ձևացրեց, թե քամին տարավ ու բարձր աղաղակեց: Լիզան, նրա ձայնը լսելով, լուսամուտից յետ ցատկեց, յերեխային վերցրեց ու, յետին սենյակի դռնով, վոր տանում էր ուղիղ դեպի գետը, վազեց դեպի ափը: Նա ափից իջնում էր արդեն, յերբ Գեյին նկատեց նրան և ուղեկիցներին ձայն տալով, վազեց նրա յետից: Լիզան մի վայրկյան կանգ առավ. նրա վոտներին մոտով սրընթաց անցնում էր մուկ հոսանքը, վոր ափը բաժանում էր մեծ սառցակտորից: Հանկարծ նա մի հուսահատ թոխը կատարեց և կանգնեց սառուցի վրա: Աչքուհետև մի սառցակտորից մյուսի վրա ցատկելով՝ նա վայրենի ճիչով սլացավ առաջ. սառցակտորներով աչքպես էր անցնում, կարծես գետնի վրա չէր քայլում:

Սառուցը ճաճում էր նրա վոտների տակ. նա կոշիկները կորցրեց, գուլպաները պատուտեց և վոտները վերավորեց, բայց կանգ չէր առնում և վոչինչ չէր զգում, բացի մահացու սարսակից, թե՛ ահա ուր վոր է՝ Գեյին կհասնի իրեն ու յերեխան կխլի ձեռքից. նա, կարծես յերազի մեջ, հասավ մյուս ափը և տեսավ մի ինչ-վոր մարդ, վոր ձեռները մեկնել էր դեպի իրեն, վոր ոգնի տիվը դուրս գալու:

— Այ, կեցցես, այ քեզ կնիկ,—բացականչեց մարդը:
Լիզան ճանաչեց և ձայնը, և մարդուն. դա իր տերերի հարևանությամբ ապրող ծանոթ ագարակատերն էր:
— Փրկեցեք ինձ, պարոն Սիմես,—աղաչեց Լիզան,—փրկեցեք: Յերեխայիս թագցրեք, սրան ծախել են աչք մարդուն, վորը հետևում է ինձ,—և նա ցույց տվեց հակառակ ափը:—Ո՛հ, միտար Սիմես, չե՞ վոր դուք ել վորդի ունեք:

— Այո, ունեմ,—պատասխանեց Ֆերմերը, ոգնելով թշվառ կնոջը ափը դուրս գալու:—Բայց ինչպես կարող եմ քեզ ոգնել. քեզ թագցնելու տեղ չունեմ: Գիտե՞ս ինչ: Գնա, այ, այնտեղ,—ասաց ագարակատերը, ցույց տալով մի մեծ սպիտակ տուն, վոր կանգնած էր առանձնակի՝ գյուղի գլխավոր փողոցում:—Այնտեղ բարի մարդիկ են ապրում: Նրանք քեզ կոգնեն. նրանք ամենքին ոգնում են:

— Ի՞նչպես շնորհակալ լինեմ ձեզնից.— հուզումից կերկե-
րուն ձայնով ասաց Լիզան:

— Չարժի, չարժի: Ինձ համար դժվար չեր ձեռս մեկնեի
քեզ,— ասաց պարոն Սիմեոն:

— Յե՛վ դուք մարդու բան չեք ասի, չե՞, թե վորտեղ եմ:

— Ե, գրողը տանի, դու ինձ ինչի՞ տեղ ես դրել,— բացա-
կանչեց ագարակատերը զայրացած:— Մի՞թե չես մատնիչ եմ: Գնա
և վոչ մի բանից մի վախենա:

Լիզան յերախտագիտությամբ լի մի հայացք գցեց նրավրա
և, յերեխան գրկին սեղմելով, հաստատուն ու արագ քայլերով
գնաց դեպի սպիտակ սուռը:

«Գուցե Շելլին կարծի, թե յես հարևանի պես չվարվեցի»,
ասաց ինքն իրեն պարոն Սիմեոն, հեռացող կնոջ յետևից նայե-
լով: «Բայց, խղճով դատելով, ուրիշ ի՞նչ կերպ կարող ելի վար-
վել»...

Գելին ապշած հետևում եր Լիզայի խենթ խիզախությանը,
ըսպե առ ըսպե սպասելով, թե ահա ուր վոր ե նա, իր աչքի ա-
ռաջ, շուրջ կընկնի: Միայն այն ժամանակ, յերբ Լիզան թագ-
նըվեց գետի մյուս կողմը, Գելին յետ դարձավ և աչքերի հարցա-
կան հայացքը հառեց իր ուղեկիցներին, կամենալով կարծես ի-
մանալ նրանց կարծիքը:

— Տեսաք վո՞նց փախավ,— բացականչեց Սեմը:

— Դա կին չի, այլ սատանա,— ասաց Գելին:— Վայրի կատ-
վի պես եր ցատկոտում:

— Հույս ունեմ, վոր պարոնը չի բարկանա մեզ վրա, վոր
չհետևեցինք այդ կնոջ որինակին,— քաղաքավարի հարցրեց Սե-
մը: Յե՛վ Անդրեյին աչքով անելով, ծիծաղեց ուրախ:

— Դու դեռ ծիծաղում ես, անասուն,— գոռաց Գելին և
մտրակը վրա բերեց նեղրերին: Նրանք ճարպկորեն խուսափե-
ցին հարվածներից:

— Բարի գիշեր, պարոն,— լրջությամբ ասաց Սեմը:— Մեր՝
տուն գնալու ժամանակն ե: Տիկինը, չերևի, անհանգստանում է
արդեն ձերի համար:

Սեմը հանաքով հրեց Անդրեյի կողմը և ձիու գլուխը բաց թո-
ղեց: Անդրին հետևեց նրան: Նրանք շուտով աներևութացան-
միայն հեռվից գալիս եր դեռ նրանց ծիծաղի ձայնը:

ԳԼՈՒԽ VIII

ԲԱՐԻ ՄԱՐԴԻԿ

Բուխարիում փառալույզ կրակը պայծառ, փայլուն շերտեր եր
պցում հյուրասենյակում փռած թանգագին գորգի վրա և ուրախ
լուսով լուսավորում սեղանին դրված թելի գեղեցիկ պարագա-
ները: Այդ հյուրասենյակի տերը՝ դատավոր Բերդը՝ բուխարու
առաջ, բազկաթոռի մեջ նստած՝ կոշիկները փոխում եր հոգաթափ-
ների, վոր ասեղնագործել եր կինը: Ինքը տիկին Բերդը շատ
գոհ դիմքով նայում եր, թե ամեն ինչ կարգին է արդյոք սեղա-
նի վրա, և կարգի յեր հրավիրում յերեխաներին, վոր, ըստ սո-
վորության, չարությունն էլին անում:

— Թո՛մ, դուան կոթին ձեռ մի տա, դա խաղալիք չի... Մե-
րի, հանդիստ թող խեղճ կատվին, պոչը մի քաշի: Ձիմ, դա ի՞նչ
բան է: Հեռացիր սեղանից: Մի՞թե կարելի չէ սեղանի վրա ման
գալ... Ախ, սիրելիս,— գիմեց նա այնուհետև ամուսնուն,— շատ
ուրախ եմք, վոր այսօր վերադարձար տուն:

— Յես ինքս ձեզնից ավելի ուրախ եմ, վոր այդ հոգնեց-
նող ճամպորդությունից հետո նորից տանն եմ: Այնպես եմ հոգ-
ներ, վոր յերևակայել չեմ կարող. և գլուխս էլ չզրտեմ ինչու,
ցավում ե:

Տիկին Բերդն ուղեց գլխացավի դեղ տալ նրան, բայց դա-
տավորը հրաժարվեց:

— Չե, Մերի, աղատիր ինձ ամեն տեսակ դեղերից: Ինձ
հանգիստ է պետք և մի բաժակ տաք թեյ: Ել ուրիշ վոչինչ չեմ
ուզում... Ախ, վորքան ծանր են որենայիր մարդու պարտակա-
նությունները:

Յե՛վ դատավոր Բերդը ժպտաց այն մտքից, թե ինքը զո-
հաբերում է իրեն հայրենիքի բարորության համար:

— Իդեպ, այդ ի՞նչ եք արել դուք ձեր սենատում,— հար-
ցրեց տիկին Բերդը, յերբ յերեխաները տեղավորվեցին սեղանի
շուրջը և, ունենրը ուտելիքին տված, դադարեցին չարությունն ա-
նելուց:

Փոքրիկ, բարեհոգի կնոջ կողմից տրված այդ հարցը նորու-
թյուն եր, վորովհետև նա սովորաբար հետաքրքրվում եր նրա-
նով, ինչ կատարվում եր իր տանը. մնացյալի հանդեպ, առանձ-
նապես պիտական գործերի նկատմամբ, շատ անտարբեր եր: Այդ

պատճառով պարոն Բերդը, կնոջ անսպասելի հարցից զարմացած, աչքերը չռեց, բայց և այնպես պատասխանեց.

— Ի՞նչ ենք արել: Վոչինչ առանձնապես:

— Ինչպես թե՛ վոչինչ,— առարկեց կինը:— Ձե՛ վոր այնտեղ ձեզ մտա քննվում ե մի որե՛նք, վոր արգելում ե հաց և ջուր տալ թշվառ փախստական նեղրերին: Յես առաջ լսել էյի, վոր ուզում են մի այդպիսի որե՛նք առաջարկել, բայց չերբեք չեյի կարծում, վոր ձեր որե՛նսդիրները կհամաձայնեն մի այդպիսի անխիղճ որե՛նք սահմանելու:

— Մերի, այդ ինչո՞ւ հանկարծ տարվեցիր քաղաքականությամբ:

— Այստեղ ինչ քաղաքականություն կա: Ձեր ամբողջ քաղաքականությունը ինձ համար զրոշի արժեք չունի... Բայց սա որե՛նք ե... սա մի բան ե, վոր հակառակ ե գնում մարդասիրությունն ու արդարությունը. ուզես-չուզես, կհետաքրքրվես: Հուշս ունեմ, վոր դուք չեք հաստատի այդ դաժան որե՛նքը:

— Այո, սիրելիս, մենք, իսկապես, հաստատեցինք մի որե՛նք, վորն արգելում ե վորևե ոգնություն ցույց տալ կենսուկիեցի ստրուկներին: Այդ արդիցիոնիստները *) մեր կենսուկիեցի յեղբայրներին ուղղակի հուսահատություն դուռն են հասցրել: Այդ պատճառով անհրաժեշտ չեղավ, արդարությունը չվերավորելով, ձեռք առնել մի քանի միջոցներ հուզված մտքերը հանդրատացնելու համար:

— Յե՛վ այդ միջոցներն արգելում են դիշիրը ապաստան և հաց ու ջուր տալ մի թշվառ ելակի, վոր հետո հնարավորություն տրվի նրան իր խաղաղ գործը շարունակելու:

— Այո, ոգնել նրանց— նշանակում ե խրախուսել նրանց և նպաստել նրանց փախուստին...

Տիկին Բերդը, ինչպես ասինք, փոքրիկ կին եր, հանդիստ, համեստ և ամոթխած. նա կարծրում եր ամեն մի շնչին բանից և վախենում եր ամեն ինչից, այնպես վոր բավական եր մի վորևե շուն ատամները ցույց տար նրան, վորպեսզի նա ուշաթափվեր: Նրա դեմքն իր քնքշությամբ հիշեցնում եր հենց նոր հասած դեղձ. նրա կապույտ աչքերը, հանդարտ, մեղմ և դուրեկան ձայնը արտահայտում եյին անսահման բարություն: Նրա ամբողջ

*) Արդիցիոնիզմը— քաղաքական կուսակցություն եր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, վորն իրեն նպատակ եր դրել վերջացնել ստրկությունը, վերջ տալ նեղրերի վաճառքին:

աշխարհը սահմանափակվում եր ամուսնով, յերեխաներով և անտեսությամբ. շրջապատողների վրա նա ազդում եր ավելի խնդրելով ու համոզելով, քան պահանջներով ու համառ պնդումներով:

Միայն մի բան կարող եր ստիպել նրան փոխել իր սովորական զսպվածությունը, բայց դա բղխում եր նրա անսահման բարությունից.— նա չեր կարողանում հաշտվել դատարանության վորևե արտահայտություն հետ. դա նրա մեջ առաջ եր բերում զայրույթ և կատաղություն, վոր մեծ տպավորություն եյին թողնում, վորովհետև դրանք սովորական յերևույթներ չեյին նրա մտա: Նա բոլոր մայրերից ամենաներողամիտը և քնքշագույնն եր, բայց նրա յերեխաները չերկար հիշում եյին, թե ինչպես խիստ պատժեց իրենց; յերբ մի անգամ տեսավ կատվին քար գցելիս: Պատմելով այդ դեպքի մասին, նրա ավագ վորդին՝ պարոն Բիրլը, ասում եր.

— Բայց լավ պատժվեցինք մենք այդ անգամ: Մայրս իրեն կորցրեց: Նա հրամայեց մի լավ ձեռքով մեզ, հետո առանց ընթրիք տալու՝ ուղարկեց քնելու: Ամեն ինչ կատարվեց այնքան շուտ, վոր մինչև անգամ ժամանակ չունեցանք ուշքի գալու: Գիշերը լսեցի, թե ինչպես մայրս լալիս ե. դա բոլոր տեսակի պատիժներից ավելի շատ ազդեց մեզ վրա, և այդ որվանից մենք ել յերբեք չտանջեցինք կենդանիներին:

Այսպիսի կին եր տիկին Բերդը: Մեր նկարագրած յերեկոյան նա, մարդու պատասխանից հետո, ամբողջովին կարծրած և հուզումից դողահար, վեր թռավ տեղից և մարդուն մոտենալով, ասաց խիստ.

— Ասա ինձ, Ձոն, մի՞թե դու անձամբ այդ որե՛նքը գրտնում ես արդարացի և արդարության սկզբունքներին համաձայն:

— Բայց, սիրելիս...

— Յես յերբեք քեզնից այդպիսի բան չեյի սպասում, Ձոն: Թշվառ մարդկանց թողնել առանց վորևե ոգնություն— ինչը կարող ե լինել ավելի ամոթալի, անբարոյական, անխիղճ ու սարսափելի, քան այդ վորոշումը: Ծանաչել անգամ չեմ ուզում ձեր գեղեցիկ որե՛նքը և խախտելու յեմ առաջին իսկ հարմար առիթին, դրանում կարող ես համոզված լինել... Բայց, հուշս ունեմ, վոր նա շուտով պիտի փոխվի, վորովհետև մեզնից վոչվոք չի կատարի այն... Ի՛նչ կլինի աշխարհում, չեթե մենք՝ կանայքս

զրկվենք հոգածութունից ու քաղցից մեռնող մարդկանց կերակրելու և ապաստան տալու հնարավորութիւնն: Յեւ վարդաբունքն են այդ թշուառներին ոգնել միայն նրա համար, վոր ստրուկներ են, վոր առանց այդ ել դառն ե նրանց կլանքը... Յեթե ուզում են ստրուկներին փախչելուն վերջ տալ, թող նրանց հետ վարվեն մարդավարի — ահա բոլորը: Հավատացիր, վոր այդ ժամանակ նրանք ել չեն մտածի փախչելու մասին: Յեթե չես ըստրուկ ունենայի, — նրա մտքովն ել չեր անցնիլ ինձնից հեռանալու: Նրանք ինչո՞ւ պիտի փախչեն այնտեղից, ուր իրենց լավ են դգում... Յեթե նրանք փախչում են այն տներից, ուր վատ են ապրում, դա, իհարկե, դարմանալի չի... Առհասարակ նրանք, առանց այն ել, շատ են տանջվում ցրտից, քաղցից, զանազան տեսակ վտանգներից ու բռնվելու չեղկուղից, լակ մենք պիտք ե զինվենք նրանց դեմ և ավելացնենք նրանց տանջանքները, փոխանակ ոգնելու: Ինչ վերաբերում ե ինձ, յես չեմք նրանց դեմ չեմ գնա, իմացիլ:

— Մերի, Մերի, խելքդ գլուխդ հավաքիր...

Այդ կրիտիկական բոպեյին ներս մտավ ծերունի ծառան՝ կուջոն և տիրուհուն խնդրից կարևոր գործով գնալ խոհանոց: Նեղն ընկած սենատորն ուրախացավ, վոր ազատվեց կնոջ հարձակումից և սկսեց աչքի անցնել լրագրիները, վոր հավաքվել էին նրա բացակայութեան միջոցին:

Բայց մի բոպեյից հետո նա լսեց կնոջ մեղմ ձայնը, վոր կանչում եր իրեն.

— Ձոն, Ձոն, արի այստեղ:

Պարոն Բերդը գնաց խոհանոց: Խոհանոցի մեջտեղը, չերկու աթոռի վրա ուշագնաց դրութեան մեջ պառկած եր մի ջահել, գեղեցիկ կին, առանց կոշիկների, արյունոտած վտաններով և թաց, պատուոված շորերով:

Լիզան եր: Հենց այդտեղ, նրա կողքին, ծերունի ծառան գրկել եր Գարրիին ու աշխատում եր տաքացնել ու գուրգուրել նրան:

Փոքր անց՝ Լիզան աչքերը բաց արավ և պղտոր հայացքով նայեց շրջապատողներին: Նրա առաջին խոսքը վորդու մասին եր.

— Գարրի, դու այստեղ ես: Նրանք տարան նրան, — ասաց խեղճ կինը, դեռ բոլորովին չհասկանալով, թե վորտեղ ե գտնվում ինքը:

Գարրին թռավ դեպի մայրը, ձեռները պատ տվեց նրա վզով և սկսեց գուրգուրել նրան:

Լիզան շուտով հանգստացավ, շնորհիվ տիկին Բերդի սիրալիր հոգածութեան: Նրա համար տեղ գցեցին վառարանի մոտ, և նա իսկույն քնեց, չերեխան կրծքին սեղմած: Յերեխային ուզում ելին քնեցնել առանձին, բայց Լիզան սարսափով հակառակեց դրան: Նա սարսափում եր կես ժամով անգամ բաժանվել չերեխայից:

Լիզան քնեց խոր քնով, ինչպես քնում եր շատ տարիներ առաջ, չերբ դեռ փոքրիկ աղջիկ եր և մայրական ջերմ փաշիպանք եր տեսնում միայն: Յեւ մի զարմանալի չերազ տեսավ. — նա գտնվում եր մի գեղեցիկ չերկրում — հանգստի, խաղաղութեան և ուրախութեան չերկրում: Այնտեղ, մի սքանչելի տնակում, փարթամորեն ծաղկած մի մեծ այգու մեջ, նստած ե նա լուսամուտում և նայում ե դեպի հեռուն: Նրա մոտն ե Գարրին, ուրախ, թուլուն մի տղա: Ամուսինը՝ Ջորջը դեռ չի յեկել տուն: Նա աշխատում ե գործարանում, ուր բոլորը սիրում և հարգում են նրան, վորպես լավ և գործունյա աշխատավորի: Բայց ահա լավում են ինչ-վոր մեկի հաստատուն քայլերը, մեկը բարձրանում ե Լիզայի սենյակը տանող սանդուղով: Դուռը բացվում և ներս ե մտնում Ջորջը: Նա հոգնել ե աշխատանքից, դեմքը մըրոտ ե, հագուստը՝ փոշոտ: Բայց գոհ, չերջանիկ տեսք ունի, վորովհետև վոչվոք նրան չի խանգարում իր սիրած գործով զբաղվելու, վոչվոք չի հալածում և ստորացնում նրան: Ջորջը մոտենում ե Լիզային, նստում ե կողքին և ինչ-վոր բան ե պատմում կամացուկ...

Լիզան զարթնեց: Նրա կողքին խոր քնով քնած եր Գարրին. սեղանի վրա վառվող մոմը վերջանալու վրա չեր: Լիզան խնդրեց աղախնին, վոր տիրուհուն կանչի: Տիկին Բերդը, մարդու և չերկու տղայի հետ, մտավ խոհանոց: Ձահել կինն ալժամ նստել եր նստարանին և մտախոհ աչքերը սեևել կրակին: Տիկին Բերդը սիրալիր խոսեց նրա հետ, հավատացնելով, վոր վոչընչից չվախենա, վոր ինքն այստեղ ապահով տեղ հի Տեսնելով՝ Լիզան փոքր ինչ հանգստացավ, տիկինը հարցրեց, թե ո՞վ ե նա և վորտեղից ե յեկել:

Լիզան արավ իր տխուր պատմութունը: Բոլորը լսում ելին վշտակցելով ու զարմանքով. առանձնապես բոլորին զարմացրեց գեան անցնելու պատմութունը: Տիկին Բերդը, վոր չերբորդ վորդուն վերջերս եր կորցրել, լաց չեղավ. լաց չեղավ և աղախինը՝ Դինան, և պարոն Բերդը նույնիսկ չերեսը շրջեց դեպի լուսամուտը և ծածուկ սրբեց արցունքները:

— Հիմա դու ո՞ւր ես ուզում գնալ, — հարցրեց տիկին Բերդը:

— Կանադա. բայց չգիտեմ, թե վորտեղ ե: Հեռու չե այստեղից այդ Կանադան, — հարցրեց Լիզան, վստահությամբ նայելով տիկին Բերդին:

— Խեղճ, — ակամա բացականչեց տիկին Բերդը. — դա շատ հեռու չե, բայց մի անհանգստանա, մենք կաշխատենք քեզ ուղարկել այնտեղ, իսկ այժմ պառկիր ու մի լավ հանգստացիր:

Յե՛վ տիկին Բերդը կարգադրեց Դինային Լիզայի համար անկողին պատրաստել խոհանոցի կողքին գտնվող փոքրիկ սենյակում:

Ամուսինները վերադարձան հյուրասենյակ:

— Դիտե՛ս ինչ, Մերթի, — ասաց մարդը, փոքր մտածելուց հետո, — այդ կնոջ այստեղ մնալն անկարելի չե: Վաղը նրա տեղը կարող ե գալ և գտնել մեզ մոտ: Յեթե մենակ լինի, դեռ հեշտ և թագցնել: Բայց չերեխային ինչպես պահել: Նա մեկ ել տեսար դուրս թռավ բակը կամ նայեց լուսամուտից, և բանը վատ կլինի: Անհրաժեշտ ե, վոր նա այս գիշեր իսկ մտնի այստեղից:

— Այս գիշեր: Բայց ո՞ւր կարող ե գնալ:

— Յես արդեն գիտեմ, թե ուր, — ասաց մարդը նստելով և կոշիկները վտաքերին քաշելով: — Դիտես ինչ, չես մի ծանոթ ունեմ, վոմն Վան Տրոմպ, վորն իր սարուկներին ազատություն ե տվել և այստեղից չոթ մղոն հեռու հող ե գնել՝ մի խուլ անտառում: Այնտեղ այդ կնոջը վոչվոք չի գտնի, և յես ինքս դրան այս գիշեր իսկ կտանեմ այնտեղ:

Այդպես ել վճռեցին: Մինչ պարոն Բերդը հագնվում եր, կինը նեգր կուջոյին կարգադրեց ձիերը լծել վորքան կարելի չե կամաց, վոր հարևաններից վոչվոք չհկատի և ուշադրություն չգարձնի: Հետո նա գնաց Լիզայի համար միքանի շոր գտնելու: Ապա բաց արավ մեռած յերեխայի իրերի և խաղալիքների արկղը, ուր կային տարբեր մեծության ու ձևի շորեր, գուլպաներ, մաշված կոշիկներ. այդտեղ դրված եյին ձի, գնդակ և ուրիշ խաղալիքներ: Տիկին Բերդն անհրաժեշտ իրերի մի կապոց արավ, դրեց մի փոքրիկ ճամպրուկի մեջ, փակեց և մարդուն խնդրեց հետը տանի կառքի մեջ գնի, իսկ ինքը գնաց Լիզային զարթեցնելու:

Փոքր անց ջահել կինը շորերը փոխած, գլխարկով, չերեխան գրկին դուրս յեկավ տնից և պարոն Բերդի հետ կառք նըս-

տեց: Հուզմունքից Լիզան չեր կարողանում խոսել: Նա գլուխը հանեց կառքի լուսամուտից, ձեռը մեկնեց իրեն ճանապարհ գրող տիկին Բերդին, ուզեց ինչ-վոր բան ասել և չկարողացավ: Նայեց տիկինը միայն յերկար, շնորհակալություն արտահայտող հայացքով, ապա յետ ընկավ և յերեսը ծածկեց ձեռներով: Կառքը շարժվեց:

Անձրևներից հեղեղված, քանդված ճանապարհը սարսափելի չեր: Կառքն ամեն բոպե խրվում եր ցեխի մեջ և ընկնում փոսերը, վորտեղից դուրս ելին քաշում նրան ընդհանուր ջանքերով: Ուշ յերեկս յեր արդեն, յերբ թաց, ցեխոտ կառքն անցավ գետը և կանգ առավ մի մեծ ագարակի առաջ:

Տրոմպը, վոր ամբողջ շրջանում հայտնի չեր վորպես կարեկից մարդ ու հոչակվել եր նրանով, վոր միքանի տարի տուջ ազատություն եր տվել իր բոլոր սարուկներին, շատ ջերմ վերաբերվեց Բերդի առաջարկին՝ սպաստան տալ Լիզային ու յերեխային:

— Թող մի փորձեն քեզ հետապնդողներն այստեղ գալ, — ասաց նա Լիզային, պատից կախված հրացանը ցույց տալով, — յես ու իմ վեց վորդին նրանց կընդունենք, ինչպես հարկն ե:

Լիզան մնաց Տրոմպի մոտ, իսկ պարոն Բերդը, շտապելով հասնել պոստի կառքին, հրաժեշտ տվեց Տրոմպին ու Լիզային և շուտով մեկնեց:

ՓԼՈՒՍ IX

ՔԵՌԻ ԹՈՄԱՍԸ ՇԵՌԱՆՈՒՄ Ե ԻՐ ՏՆԻՑ

Փետրվարյան մուսյլ առավոտ եր: Թոմասը մտքերի մեջ խորասուզված՝ նստած եր իր տանը, ծղոտադորձ բազկաթոռի մեջ հորքուր Խլոյան յեռանդով տղամարդու շապիկներ եր հավաքում: Դեռ վաղ եր, և յերեխաները քնած եյին իրենց մահճակալում: Թվում եր՝ այդ կոկիկ տնակում թագավորում են խաղաղությունն ու հանգստությունը:

Բայց ահա Թոմասը վեր կացավ տեղից, մոտեցավ յերեխաների մահճակալին և սասց տխուր.

— Վերջին անգամ...

Հորքուր Խլոյան չհամբերեց և լաց յեղավ: Թոմասը, հանգիստ ու հաստատակամ, աշխատեց հանգստացնել նրան, համո-

դի, վոր չհուսահատվի, այլ համբերությամբ սպասի. կգան լավ ժամանակներ, և տերը կկարողանա նորից չետ դնել իրեն:

— Ինձ ուրախացնում ե մի բան,—ասաց թոմասը,—վոր պարոնն ինձ ե ծախել, այլ վոչ թե քեզ կամ չերեխաներին: Դուք այստեղ ապրում եք լավ, չեթե մի բան պատահի, պատահելու յե ինձ, իսկ յես այնքան ուժ ունեմ, վոր կարող եմ դիմանալ և վատ կլանքի: Ո՛վ ե իմանում, մի տարուց հետո տիկին Շելբին, գուցե, կարողանա գնել ինձ, և մենք նորից կապրենք առաջվա պես:

— Հավատ չունեմ,—ասաց հորքուր Խլոյան,—քեզ կտանեն հարավի կողմը, ուր ստրուկները սովից ու հիվանդությունից մեռնում են հազարներով:

Վորպեսզի միքիչ հանգստանա, հորքուր Խլոյան սկսեց նախաձաշ պատրաստել: Ու փոքր անց հացի սեղանին դրեց տաք ապուր և թոմասի սիրած բլիթները: Բաց վոչ թոմասը, վոչ Խլոյան չկարողացան մի կտոր բան ուտել և միայն յերեխաները, վոր վոչինչ չեյին կասկածում, սկսեցին յեռանդով ուտել:

Տղաները, սեղանին դրած բոլոր բաներն ուտելուց հետո, գլխի ընկան, վոր տանն ինչ-վոր վատ բան ե կատարվում: Հայրը տխուր եր, մայրը լալիս եր, այդ ժամանակ իրենք նույնպես սկսեցին լաց լինել: Քեռի թոմասը փոքրիկ աղջկանը գրկեց և սկսեց խաղալ նրա հետ, թույլ տալով, վոր նա յերեսը չանգոի և մազերը քաշի:

— Ուրախացիր, խաղա,—ասաց հորքուր Խլոյան.— քո հերթն ել կգա լաց լինելու, յերբ մարդիդ կամ յերեխայիդ կծախեն: Ձեզ ել, յերեխեք, ձեզ նույնպես կծախեն, հենց վոր մեծանաք և մի բանի պետքական դառնաք: Ավելի լավ ե նեղրերը վոչվոք չունենան և վոչվոքի հետ չկապվեն:

Այդ բոպիյին տղաներից մեկը բացականչեց.

— Հրե տիկինը գալիս ե:

— Ի՞նչ ե ուզում վոր, միենուոյն ե, ոգնել չի կարող,— քրթմնջաց հորքուր Խլոյան:

Ներս մտավ տիկին Շելբին: Հորքուր Խլոյան աթոռ առաջարկեց նրան, իր հուզումը հազիվ թագցնելով: Բաց տիկին Շելբին չնկատեց վոչ աթոռը, վոչ նրա հուզումը: Տիկինը գունատ եր և տխուր: Նա ուզեց ինչ-վոր բան ասել, բայց հանկարծ կանգ առավ. նայեց իրեն շրջապատող լուռ ընտանիքին, յերեսը ծածկեց թաշկինակով ու լաց չեղավ:

— Իմ թանգագին թոմաս,—ասաց նա հանգստանալով,— չես քեզ ձանապարհածախս չեմ կարող տալ, վորովհետև կխլեն քեզանից: Բայց, հավատա ինձ, յես քեզ յետ կգնեմ, հենց վոր մեր գործերը լավանան:

— Վաճառականը գալիս ե,—հանկարծ բացականչեցին յերեխաները:

Գելին շտապով մտավ ներս:

— Ե՛յ, սե,—գոռաց նա,—պատրաստվիր ձամպա ընկնելու, գնա սայլակ նստիր:

Հորքուր Խլոյան խնամքով կապեց թոմասի իրերի սնդուկը, վորը թոմասը դրեց ուսին և գնաց դեպի սայլակը, ուղեկցությամբ իր ընտանիքի և տիկին Շելբիի: Տղաները նոր միայն հասկացան, թե ինչ ե կատարվում և, մոր շրջազգեստը բռնած, լաց յեղան բարձրաձայն: Լաց ելին լինում և հարեանուհիները, վոր շրջապատել եին թոմասի նստած սայլակը: Նրա վտտները կապել եին ծանր շղթաներով:

— Դե,—ձայնեց Գելին: Ձիերը շարժվեցին, և սայլակը գլորվեց առաջ: Քեռի թոմասը նստել եր մեջքը ձիուն արած և բոլոր ժամանակ տեսնում եր՝ ինչպես հետդհետ չքանում են աչքից իր տունն ու հարազատ վայրերը: Նա շատ տխուր եր...

Գելիի սայլակն անցնելով թոմասին ծանոթ և սիրելի տեղերից, պարոն Շելբիի կալվածքի սահմանը կտրելուց հետո, թեքվեց դեպի խճուղին: Փոքր անց Գելին կանգ առավ դարբնոցի առաջ, դարբնին կանչեց և նրան ձեռի շղթաներ ցույց տալով՝ ասաց.

— Ամբացրու սրա ձեռներն ու վտտները. միայն շուտ, թե չի՛ ժամանակ չունեմ:

— Տեր իմ աստված,—բացականչեց դարբինը թոմասին նայելով,—սա հո քեռի թոմասն ե... Մթթե պարոն Շելբին ծախել ե սրան.. Ձի կարող պատահել:

— Իհարկե ծախել ե. բա հո չեմ գողացել,—կոպտորեն պատասխանեց Գելին:

— Ծախել եսպես մարդուն... Ա՛խ, տեր աստված: Յերեք չեյի հավատա, չեթե աչքերովս չտեսնեյի... Թույլ տվեք ասեմ ձեզ, պարոն, վոր դրա ձեռները շղթայելու կարիք չկա: Դա շատ աղնիվ և խղճով մարդ ե...

— Գիտեմ, գիտեմ,—խստորեն ընդհատեց ստրկավաճառը,—այն նեղրերը, վորոնց մասին այդպես լավ են խոսում, նրանք

մյուսներէից շուտ են փախչում: Անպետք նեղրերն իրենց տեղա-
փոխութեանը նայում են անտարբեր. նրանց համար միևնույնն է,
թե ուր կլինի: Յե՛վ դա հասկանալի չէ, վորովհետև ծուլերի և
հարբեցողներն համար ամեն տեղ միատեսակ վատ է կամ լավ:
Իսկ կարգին մարդիկ այնպես են կապված իրենց տանը, տեղին,
վոր չեթե նրանց այնտեղից վերցնես, նրանք սիրով կփախչեն ու
կմեռնեն, քան կամովին կհնազանդվեն նոր տիրոջը.. Չէ, սրան
պետք է շղթայել անպատճառ, թի չէ առաջին իսկ հարմար դեպ-
քում կփախչի:

— Լավ, կամքը ձերն է, — ասաց դարբինը, հարկավոր դոր-
ծիքը փնտռելով, — միթե թո՞մասին նուշնպես տանում եք հարա-
վային պլանացիաները, ուր սովորաբար ծախում են նեղրերին:
Ախար նրանք ենտեղ աշունքվա ճանճերի պես կոտորվում են:

— Դա յե՛լ լավ է ելի. վորովհետև չեթե նրանք այնտեղ յեր-
կար ապրեն, այդ դեպքում ել մենք՝ վաճառականներս ի՞նչ պի-
տի անենք, — ցինիկ ծիծաղով պատասխանեց Գեղին, — լավ է ելի,
վոր մեր առուստերը չեն դադարեցնում:

— Ո՛ր, տեր աստված, — հողոյ քաշելով շարունակեց դարբի-
նը, — ցավալի չէ, վոր եսպես գործունչա, հանգիստ և ամեն կող-
մից լավ մարդը ծախվելու յե շաքարի պլանտացիաներում աշ-
խատելու, վոր իր արջունով հողը պարարտացնի:

Դարբինն ուզում էր ասել «ի՞ր արջունով ձեր գրպանները
լցնի», բայց ժամանակին ուշքի յեկավ և խոսքը փոխեց.

— Բայց սա գուցե վողջ մնա, — ասաց Գեղին, — յես խոսաա-
ցել եմ այնպես անել, վոր դժվար չապրի. յես մտածում եմ սը-
րան ծախել մի վորևէ լավ ընտանիքի վրա, վորպես սպասավոր:
Յեթե սա կլիմային ընտելանա և դողերոցքին ել դիմանա, կա-
րող է լավ ապրել, հավատացեք:

— Իսկ կինն ու յերեխերը այստեղ են մնացել:

— Այո: Բայց նոր տեղում սրան ուրիշ կին կտան: Կին՝
ամեն տեղ կա:

Հանկարծ լավեց սրընթաց յեկող ձիու քայլերի ճայն: Թո-
մասը դեռ յիտ չէր նայել, յերբ սայլակը ցատկեց Ձորջ Շեղրին
և, ձեռները ձեռ ծառայի վզովը պատ տալով, լաց յեղավ:

— Ո՛ր, ինչ ստորութունն է, — ճչում էր տղան արցունքներից
ընդհատվող ձայնով: — Յես վոչ մեկիցն ել չեմ վախենում և հայ-
տարարում եմ, թող բոլորն իմանան, վոր քեզ ծախելը ստոր և
անխիղճ բան է... Ո՛ր, յեթե յես մեծ լինելի, այս բանը յիրբեք

չէր պատահի... Յես յերբեք այդ բանը թույլ չեյի տա, — ավելաց-
րեց նա ասամները իրար սեղմած:

— Սիրելի պարոն Ձորջ, վորքան յերջանիկ եմ, վոր կարող
եմ մնաս բարև ասել քեզ, — ասաց թո՞մասը ի պատասխան տղայի
գուրգուրանքին: — Ծանր եր ճամպա ընկնել առանց քեզ տեսնելու,
իսկ հիմա սիրտս թեթևացավ:

Այս ասելով՝ թո՞մասը հանկարծ վոտները շարժեց, և տղան
լսեց շղթայի ձայնը:

— Դա ի՞նչ բան է, վոտներիդ շղթա կա՞, — զայրացած գո-
ռաց Ձորջը: — Յես կսպանեմ այդ սրիկային... կսպանեմ:

— Չե, պարոն, դուք այդ չեք անի, — մեղմ, բայց լուրջ
ասաց թո՞մասը: — Յե՛վ լավ կանեք չրդավեք այդպես. դրանով մի-
այն կբարկացնեք նրան, և նա իր բարկութունը կթափի ինձ
վրա:

— Այդ դեպքում յես կզսպեմ ինձ, թեև շատ դժվար է...
Ախ, վորքան սարսափելի յե: Բա լավ բանն է իմ ծնողների արածը,
վոր չհայտնեցին քո գնալու մասին: Յեթե կինկողնը չլիներ, յես
չեյի կարող գնաս-բարձով ասել քեզ... Բայց տանը մի այնպիսի
աղմուկ բարձրացրի, վոր յերկար չեն մոռանա, հավատա:

— Այդ լավ բան չեք արել, պարոն, — ասաց թո՞մասը:

— Գուցե, — համաձայնեց Ձորջը, — բայց ինձ զսպել չեյի
կարող: Քեզ ասում եմ, վոր նրանց արածը համարում եմ ան-
խիղճ բան... Քեռի թո՞մաս, — շունչով շարունակեց տղան, մեջքը
դարբնին դարձնելով, — յես իմ դուլարը բերել եմ քեզ:

— Իզուր, պարոն, վոչ մի դեպքում չեմ վերցնի, — ասաց
խորապես հուզված նեղրը:

— Կվերցնես, անպայման կվերցնես, յեթե չես ուզում ինձ
վիրավորել, — պնդեց Ձորջը: — Լսի՛ր, յես հորքուր խլոյին ասի, վոր
իմ դուլարն ուզում եմ քեզ տալ, և նա խորհուրդ տվեց ծակել
ու թելով կախել քո վզից, վոր շորիդ տակ մնա, վորպեսզի Գեղին
չտեսնի ու չխլի... Ախ, ինչպես կուզեյի շարքել այդ սրիկային:

— Դու ելի, պարոն, քոնն ես ասում, — հանդիմանանքով
նկատեց թո՞մասը:

— Լավ, ել չեմ անի, չեմ անի... — ասաց տղան և թագուն
դուլարն անցրեց թո՞մասի վիզը: — Խնդրեմ, քեռի թո՞մաս, կոճակ-
ներդ լավ մեր գցի և իմ նվերը պահի: Դա ինձ նվիրել են բախ-
տավոր լինելու համար, յես ել տալիս եմ քեզ, վորպես թալիս-
ման: Թող դա քեզ հիշեցնի իմ մասին և այն, վոր յես յերբեկեց
Քեռի թո՞մասի տնակը—4

կգամ քո չեռերից, վորպեսզի նորից չեռ բերեմ քեզ մեր տունը: Յես այդ բանն ասել եմ արդեն հորքուր Սլոյին: Հորս հանգիստ չեմ տա, հոգին կհանեմ, մինչև վոր քեզ չեռ առնի:

— Ո՛ր, պարոն, միթե կարելի յե այդպես խոսել հարազատ հոր մասին:

— Ինչո՞ւ չի կարելի, յերբ նա վատ բան ե անում:

— Դա մեր դատելու բանը չի, պարոն: Հիշեցեք իմ խոսքերը: Աշխատեցեք ինքներդ միշտ լավ լինել և բարի ու չերբեք մի դատեք մեծերին: Միբեցեք ձեր մորը: Մի նմանվեք այն յերիտասարդներին, վոր, հիմարութեամբ, մոր խորհուրդներն ու խրատները լսելը ստոր բան են համարում: Հիշեցեք, վոր կյանքում միքանի լավ բան կրկնվում են միքանի անգամ, իսկ մայրը լինում ե միայն մի անգամ: Կարող եք խոսք տալ ինձ, պարոն, վոր կաշխատեք լավ մարդ դառնալ:

— Կարող եմ, և տալիս եմ, քեռի Թոմաս, — լրջ րեն ասաց Ջորջը:

— Հիշեցեք, ուրեմն, պարոն: Ձեր խոսքը միտներդ պահեցեք: Հույս ունեմ, վատ որինակի չեք հեռակ: Նախքան մի խոսք ասելը լավ մտածեցեք, թե կարող ե պատահել ձեր ծնողներին վիրավորեք... դուք հո չեք բարկանում, վոր այս բոլորն ասում եմ ձեզ:

— Ո՛ր, չե, չե, սիրելի քեռի Թոմաս, — աշխուժով բացականչեց Ջորջը: — Յես կաշխատեմ լավ մարդ դառնալ, քեռի Թոմաս, խոստանում եմ քեզ: Կաշխատեմ դառնալ աշխարհի լավ մարդկանցից մեկը... Իսկ դու դարդ մի անի. այնպես կանեմ, վոր շուտով ելի մեզ մոտ լինես: Հենց վոր մեծանամ, քեզ համար նոր տուն կշինեմ և ընտիր կահ-կարասի կտամ քեզ... Ո՛ր, դու դեռ կապրես մեզ մոտ:

Այդ ըոպելին Գելին դուրս յեկավ դարբնոցից:

— Լսեցեք, — դիմեց նրան Ջորջը, սալակից դուրս գալով, — չես հորս ու մորս ասելու չեմ, թե ինչպես եք վարվում Թոմասի հետ:

— Ասացեք, ինչ ուզում եք, — պատասխանեց ստրկավաճառը:

— Յեվ ինչպես չեք ամաչում մարդկանց առևտուր եք անում ու նրանց պահում գաղանների պես շղթայած, — տաքացած շարունակեց տղան: — Ձե՛ վոր դա վատ բան ե...

— Քանի վոր ձեր դասի մարդիկ իրենք մարդ են առնում, ինչո՞ւ չես չծախեմ: Յես վոչ մի տարբերութուն չեմ տեսնում առնելու և ծախելու մեջ: Ել ինչից պիտի ամաչեմ:

— Այո, դուք իրավացի չեք, պարոն Գելի, — ասաց Ջորջը մի փոքր մտածելով: — Սոսք եմ տալիս, վոր չերբեք մարդ չեմ առնելու և չեմ ծախելու... Յես մինչև հիմա հպարտանում եյի, վոր կենսուկիեցի յեմ, իսկ հիմա ամաչում եմ, վոր այստեղ եմ ծնվել:

Յեվ թամբի վրա թռչելով՝ նա ուղղվեց հպարտորեն ու չերեսը դարձրեց ստրկավաճառից:

— Գնաս բարով, քեռի Թոմաս, — ասաց նա փաղաքշանքով: — Մի տխրիր և հույսդ դիր ինձ վրա:

— Մնաս բարով, իմ սիրելի և թանգագին պարոն, — դողդոջուն ձայնով պատասխանեց Թոմասը, քնշքշանքով ու հիացմունքով նայելով նրան: — Այո, կենսուկիում, իսկպես, ձեզ նման լավ մարդ քիչ կա, — ավելացրեց նա տղայի յեռերից, վորն շտապեց հեռանալ, վորպեսզի նորից լաց չլինի և չկռվի:

Թոմասն այնքան նայեց նրա յեռերից, մինչև վոր մարեց նրա ձիու վոտնատրոփի վերջին հնչյունը, չբացող չերջանկութեան վերջին արձագանքը: Թշվառ նեզը ձեռ սեղմեց այն տեղին, ուր զգում եր Ջորջի դուլարի հպումը: Վոսկու այդ կտորը, վոր տղան տվեց ինչպատակ, կարծես զգվում և ջերմացնում եր նրան:

— Դիտե՛ս ինչ, սևուկ, — ասաց Գելին, սայլակ նստելով և ձեռի շղթան նախկին տեղը գցելով, — չես հիմա ձեռներիդ շղթա չեմ հագցնի, չես այդ շղթան տվել, վոր միքիչ լայնացնեն, վորովհետև շատ նեղ եր: Բայց նախազգուշացնում եմ, կհագցընեմ, հենց վոր նկատեմ ամենափոքր կասկածելի շարժում քո կողմից: Նկատի ունեցիր, վոր յես մտադիր եմ քեզ հետ մարդակողմից: Նկատի ունեցիր, վոր յես մտադիր եմ անասարակ նեղրերի հետ, վարի վարվել, ինչպես վարվում եմ առհասարակ նեղրերի հետ, միայն թե չխաբես ինձ: Յերբ ինձ չեն դիպչում, չես ել վոչվոքի չեմ դիպչում անտեղի: Հարցրու ում ուզում ես, բոլորը քեզ կասեն, վոր յես ձեզ՝ նեղրերիդ վոչ մեկին չեմ վիրավորում, միայն թե ինձ համբերութունից չհանեն:

— Կրկնում եմ, — հնազանդվիր ինձ, և մենք բարեկամներ կլինենք: Միաժամանակ պիտի ասեմ քեզ, վոր դիտեմ ձեր բոլոր հնարքները և դրանց դեմ միջոցներ ունեմ, այնպես վոր բոլոր հնարքները և դրանք գեմ միջոցներ ունեմ, այնպես վոր բոլոր ըովին իզուր կլինեն դորձադրել այդ հնարքները. միևնույն ե, բան չի դուրս գա, և դրանով միայն կվատացնես քո գրութունը: Այն նեղրերը, վոր հնազանդ են ինձ և չեն աշխատում փախչել, նրանց լավ եմ վերաբերվում, հակառակ դեպքում իրենք են մեղավոր, յեթե պատիժ ստանան ինձանից:

վելուն սպասելով՝ մարդիկ յեռանդով զրուցում էլին, հրհրում միմյանց և հրապարակը լցնում ընտիր հայհոյանքներով, առանց վորի ապրել չի կարող ամերիկյան ազատ քաղաքացիները ամբարձր:

Վաճառքի բերված նեզերը առանձին խմբով կանգնած, շշուշով հայտնում էլին միմյանց իրենց տպավորութունները: Ագարը, աֆրիկյան ցեղի տիպիկ մի ներկայացուցչուհի, գրեթե կուլը, իր վաթսուներեք տարիքից ավելի ծեր էր թվում, շնորհիվ չարքաշ կյանքի: Նա ամբողջովին կուսացած էր և հողացավից ուռած վտանների վրա հազիվ էր կանգնում: Նրա կողքին նստած էր փոքր վորդին՝ Ալբերտը, գեղեցիկ և առողջ սասչորս տարեկան մի տղա: Նրանից բացի խեղճ նեզերուհու մոտ էլ վոչվոք չէր մնացել իր լերբեմին բազմանդամ ընտանիքից, վոր հետոհետե վաճառել էլին իր աչքի առաջ: Դողացող ձեռք տղայի գլխին դրած՝ նա սարսափով նայում էր յուրաքանչյուր մարդու, վոր մոտենում էր տղային նայելու:

— Հորքուր Ագար, մի վախի, — շշուշով մխիթարեց նրան ստորուկ Ջոնը, — պարոն Թոմասը բարի մարդ է, նա խոստացավ այնպես անել, վոր դու և տղադ մեկի ձեռն ընկնեք:

— Իհարկե, լես դեռ բանի պետք եմ, — ասաց Ագարը, իր ծեր ձեռները բարձրացնելով, — կարող եմ յիպել, լվանալ կարել... Յեթե ինձ եժան առնեն, փնաս չեն անի... Դու այդ բանը նրանց ասա, ասա, — արագ ավելացրեց նա:

Այդ ժամանակ նրանց մոտեցավ Գեյլին: Ամբողջ «ապրանքի» վրա մի հայացք գցելով, նա մոտեցավ Ջոնին, նրա բերանը բաց արավ, նայեց, շոշափեց լնդերն ու ատամները. հետո նեզրին հրամայեց՝ ուղիղ կանգնել, հերթով ձեռներն ու վտանները մեկնել առաջ, մեջքը ծռել և միքանի շարժումներ անել, վոր հնարավոր լինի գողտփոր կազմել նրա մկանների ուժեղության մասին: Ապա անցավ մլուսներին և նույնպես լենթարկեց մանրազնին դիտողության: Շոշափեց փոքրիկ տղայի՝ Ալբերտի կոները, նայեց ձեռների ափին ու մատներին և ստիպեց նրան թռչկոտել վոր իմանա՝ ժիր ու ձկուն և արդյոք:

— Ես տղեն ինձ հետ միասին տիտի ծախվի, — անհանդըստացած շտապեց հայտնել Ագարը: — Մեզ միասին են ծախում: Յես դեռ ուժ ունեմ և կարող եմ աշխատել, կարող եմ լավ բան անել, պարոն:

— Դու կարող ես պլանտացիայում աշխատել, — քմծիծաղով

ասաց Գեյլին, արհամարհական հայացք գցելով պառավի վրա: — Յերևում ե խեղուչն, թե ինչ աշխատող ես:

Յեզ իր սրամտութունից միանգամայն գոհ, նա սիգար ծխեց, ձեռները դրպանները դրած և գլխարկը մի կողմի վրա թեքած:

— Ինչպես եք գտնում ապրանքը, — հարցրեց դատական պրեստաֆներից մեկը՝ Թոմաս Ֆլինտը, վոր զեկավարում էր ստրուկների վաճառքը և հետևում, թե ինչպես և Գեյլին նայում ծախուստրուկներին:

— Վոչինչ: Յես ուզում եմ բոլորին վերցնել, բացի այս ավերակից, — պատասխանեց Գեյլին, ձեռք պառավին դիպցնելով:

— Բայց դրան ուղում են իր տղայի հետ միասին ծախել, — ասաց պրեստավը, վորին Գեյլին ընդունեց հասարակ դիտողի տեղ, չտեսնելով նրա վրա պաշտոնական դիրքի վորեկ նշան:

— Այս պառավ ագոաֆն ում ե պետք, — ծիծաղելով առարկեց ստրկավաճառը: — Սա ախր չարժե վոչ միայն այն հացը, վոր պիտի ուտի, այլև մի պտղունց աղ:

— Դուք, ուրեմն, դրան չեք վերցնի:

— Իհարկե, չե: Խե՛նթ եմ, ինչ է, վոր մի այդպիսի անպետք բանի փող տամ և հետո պահեմ... Չե, շատ շնորհակալ եմ. խելքս չեմ կորցրել, վոր այդպիսի հիմարութուններ անեմ:

— Սակայն, այսպիսիներին ել գնում են մարդիկ, վորոնք, չի կարելի ասել, թե հիմար են: Այս տեսակ պառավը քիչ ոգուտ չի տա, մանավանդ վոր նրան եժան են ծախելու:

— Թեկուզ բոլորովին ձրի յել տան, յես դրան չեմ վերցընի, — կտրեց պրեստավի խոսքը Գեյլին:

— Ափսոս, շատ ափսոս, — ասաց Ֆլինտը: — Այս տղան պառավի կրտսեր վորդին և և վերջինը նրա ամբողջ ընտանիքից: Ասում են՝ պառավն այնպես է կապված վորդուն, վոր լեթե նըրանց բաժանեն, նշանակում է սպանել պառավին և մեղքի մեջ ընկնել:

— Յես ավելորդ փող չունեմ, իզուր տեղը դեն գցեմ, — ասաց Գեյլին: — Իսկ այդ պառավի մեռնելու ժամանակն և վաղուց այն աշխարհում արդեն, յերևի, լապտերով փնտոում են դրան: Առհասարակ, յես դրան չեմ վերցնի — անհ բոլորը: Տղային կառնեմ՝ պլանտացիաներում ծախելու. նրանից մի բան դուրս կգա:

— Խեղճ կին. ինչպես պիտի տանջվի, — տխրությամբ ասաց պրեստավը:

— Դա վնչ առաջինն է, վնչ վերջինը,— չորությամբ նկատեց Գեղին:

Ամբոխը հանկարծ շարժվեց, վորովհետև այդ ժամանակ նրա միջով առաջ եր գալիս գնահատողը, կարճահասակ, բայց շատ փքված մի մարդ:

Ագարը բնազդաբար վորդու Քաշեց դեպի իրեն:

— Ինձանից մի հեռանա, սիրելիս: Մեզ միասին պիտի ծախեն,— շնչաց նա վորդու:

— Ո՛ր, մամա, վախենում եմ եղպես չանեն,— ասաց տղան, արցունքոտ աչքերով մորը նայելով:

— Անպատճառ միասին,— հավատացնում եր պառավը վնչ այնքան վորդու, վորքան իրեն:— Ուրիշ կերպ չի կարելի: Յես առանց քեզ կմեռնեմ:

Բայց գնահատողի ձայնն ահա հայտարարեց, թե աճուրդը բացված է: Շուտով բոլորը, բացի Ագարից ու նրա վորդուց, ծախվեցին աչնպիսի բարձր գներով, վորոնք ցույց ելին տալիս, թե ստրուկների պահանջը շատ մեծ է:

— Տղա, արի այստեղ և քեզ ցույց տուր,— կանչեց գնահատողն Ագարի վորդուն:

— Մեզ միասին ծախեցեք, պարոն, խնդրում եմ,— աղերսեց պառավը, վորդու փեշերից բռնած:

— Ձեռք կտրի, պառավ,— կոպտորեն բղավեց գնահատողը:— Քո բանը չի, թե քեզ ինչպես կծախեն... Դե, տղա, թուր ու ցույց տուր քո ձարսկութունը,— նորից դիմեց նա նեղրուհու վորդու:

Տղան վազեց դեպի պատվանդանը, արագորեն սրբելով արցունքի կաթիլները, վոր կարկառի պես գլորվում ելին նրա սիրուն, թուխ դեմքի վրայով. . . Նրա յետևից լավեց մի սրտապատառ ճիչ: Նա ցնցվեց, կարծեն դանակի հարվածից, բայց չկարողացավ յետ դառնալ և մի անգամ ևս նայել մորը:

Նրա գեղեցիկ կազմվածքը, ճկուն ձեռն ու վոտը և ծաղկուն տեսքը մեծ մրցակցութուն առաջ բերին գնորդների միջև, աչնպես վոր նրա գինը քանի գնում մեծանում եր: Գնահատողը հազիվ եր կարողանում առաջարկները լսել ու պահել հիշողության մեջ: Վերջապես, նրա մուրճը թրխկաց յերրորդ անգամ— հաղթանակը տարավ Գեղին, վոր, բացի դրանից, ձեռք եր բերել նաև յերկու հասակավոր ստրուկ:

Հրաման ստանալով՝ գնալ նոր տիրոջ մոտ, տղան գլուխը

կախեց կրծքին, բայց նույն րոպեյին բարձրացրեց կրկին և նայեց մորը, վոր դողողալով ձեռները մեկնել եր դեպի իրեն:

— Պարոն, ինձ ել տեք... Իսեր ասածո, առեք: Կմեռնեմ, յեթե չառնեք,— ճչաց նա, Գեղի վոտներն ընկնելով ու նրա ձեռները բռնելով:

— Յեթե առնեմ, դու ավելի շուտ կմեռնես,— դաժան ծիծաղով պատասխանեց ստրկավաճառն ու շուտ չեկավ:

Թշվառ պառավին դնեց պրիստաֆն ինքը՝ Թոմաս Ֆլինտը, մտածելով, վոր պառավն իր տանը գեթ հանգիստ կլինի, և աչնտեղ կաշխատեն նրան միտթարել, վորքան հնարավոր է:

Աճուրդը վերջացավ, և ամբոխն սկսեց ցրվել:

Մի կերպ, համոզելով ու միտթարելով, պրիստավը կարողացավ դժբախտ մորը տանել, թողնելով, վոր վերջին անգամ համբուրի վորդուն:

Իր ձեռքով նոր գնած ստրուկներին մի ընդհանուր շղթայով կապելուց հետո՝ Գեղին քշեց նրանց բանտ:

Միքանի որ անց՝ նա դրանց հետ նստեց «Սիրուն դետ» նավը, վոր լողում եր Ոհիո գետով: Նա հույս ուներ իր ապրանքի» թիֆն ավելացնել ամեն մի կայանում, ինչպես անում եր միշտ, վորի համար և ամեն տեղ դրժակալներ եր պահում:

Նաֆն ուրախ վազում եր գետն ի վար: Յեղանակն սքանչելի յեր, այդ պատճառով տախտակամածի վրա հավաքվել ելին մեծ թվով ճամպորդներ, վոր ուրախ-ուրախ զրոսնում ելին: Ագատ Ամերիկալի աստղազարդ դրոշը փողփողում եր պարզ ողում: Քնութունը հրճվանքի մեջ եր, հրճվում ելին ճամպորդները. ուրախանում ելին և նավի ծառայողները, նայելով պարզ կապույտ յերկնքին, արևի վոսիկ դիսկին, գետի փայլուն արծաթավուն ալիքներին և ափերի կանաչին: Տխուր ելին միայն ստրկավաճառ Գեղի խեղճ ստրուկները, վոր մուս ապրանքների հետ միասին տեղավորված ելին նավի նեղվածք, մտալ ու հեղձուղիչ նկուղում (ջրում. ում): Նրանց տխուր դեմքերից յերևում եր, վոր նրանք այնքան ել համոզված չեն իրենց նոր տիրոջ մարդասիրությանը, չնայած վոր նա՝ այդ նոր տերը շարունակ խոսում եր այդ մասին: Իրար կողքի թիկն տված՝ նրանք կամացուկ զրուցում ելին միմյանց հետ:

— Տղերք, — ձայն ավեց Գեղին վերևից, — հույս ունեմ, վոր այդտեղ բոլորդ միասին չեք ձանձրանում: Համենայն դեպս, աշխատեցեք, վոր տխուր մատթ չտեսնեմ: Պահեցեք ձեզ ինչպես կարգն է, և յես ձեզ չեմ նեղացնի:

— Լսում ենք, պարոն,—պատասխանեցին իրենց մշտական դարավոր խոսքով թշվառ սարուկները:

Բայց նրանք զլուծման էլին միայն խոսքով, այլ վոչ իրապես. միթե կարող էին նրանք ուրախ լինել, չերբ ամբողջովին կլանված էին իրենց թանդագին հարադատների մասին մտածելով, հարազատներ, վորոնց թողել էին հարկադրանքով, բըսնությամբ:

— Խեղճ կինս հիմի, ով գիտի, ինչպես ե տանջվում,— խոր հոգոց քաշելով ասաց Ջոնը, վորին ստրկավաճառը գնել էր Ագարի վորդու հետ միասին:— Նա չգիտի, թե ինձ ինչ են անելու:

— Իսկ վո՞րտեղ ե կինդ,— հետաքրքրվեց թոմասը, վոր անմիջապես կապված էր նրան:

— Ծառայում ե վաշինգտոնի մոտ գտնվող մի ճաշարանում,— պատասխանեց Ջոնը:— Գոնե մի անգամ ել տեսնելի նրան, ել վոչինչ հարկավոր չեիր:

Յե՛վ թշվառ Ջոնը լաց յեղավ մի վորեւ սպիտակամորթից վոչ պակաս: Թոմասն սկսեց մրիթարել թշվառության իր ընկերակցին:

Իսկ այդ դատապարտված թշվառները զլսավերե ազատ կուշտ ե զուգված-զարգարված հայրեր ու մայրեր հրձվում էին, նախելով իրենց յերեսաներին, վորոնք ուրախ, անհոգ թոչկոտում էին նրանց շուրջը, ե գտնում, վոր աշխարհը շատ գեղեցիկ ե:

— Մամա,— ասաց տասը տարեկան, լավ հագնված մի տղա իր ասրեց մորը,— մեր նավի վրա նեպեր կան. քիչ առաջ տեսա, թե ինչպես նկուղը տարան նրանց: Տեսա նրանցով առևտուր անող վաճառականին ել: Նա առաջին կարգի կայոսում (ոթջակ) նստած՝ նախաճաշում ե:

— Խեղճ նեպեր,— ցավելով ասաց մայրը:
— Ի՞նչ ե պատահել նրանց,— հարցրեց նրա հարեանուհին, նույնպես տարեց մի կին:

— Բորն ասում ե, թե տեսել ե նրանց նավի նկուղում,— պատասխանեց առաջինը:

— Այո, բոլորն ել շղթայակապ են,— նշանակալից գեմքով նկատեց տղան:

— Դա խայտառակութուն ե մեր յերկրի համար,— նկատեց յերրորդ, ավելի ջահել կինը:

— Բայց,— ասաց մի ուրիշ ջահել կին, վոր հրձվում էր իր յերկու յերեխայի խաղով,— չէ՞ վոր նեպերը ծնվել են ստրկության համար, ե յես նկատել եմ, վոր այն նեպերը, վորոնք ազատության մեջ են ապրում, ավելի վատ են ապրում, քան ստրկության մեջ գտնվող իրենց ցեղակիցները:

— Նյութականի կողմից— գուցե, բայց այն ել վոչ միշտ,— ասաց առաջին կինը:— Սակայն, ստրկության սարսափն այն ե գլխավորապես, վոր ստրկությունը ծաղրում ե ամենասրբազան կապերը— կտրում ու վոչնչացնում ե ընտանեկան կապերը:

— Այո, դա, իսկապես, վատ ե,— անտարբեր համաձայնեց ջահել կինը:— Բայց դա, համեմատաբար, սակավ ե պատահում:

— Դժբախտաբար, այնքան ել սակավ չի,— առարկեց առաջին կինը:— Յես այդ շատ լավ եմ տեսել, վորովհետեւ յերկար ժամանակ ապրել եմ Կենտուկիում ե Վերգինիում: Խնթանալ կարելի չե, թե ինչպես են վարվում այնտեղ նեպերի հետ... Ի՞նչ կասելիք դուք, յեթե հանկարծ ձեր յերկու յերեխան խլիջին ձեզանից, վորպեսզի պլանտացիաներում ծախեն:

— Նու, ինչպես ե ձեր լեզուն գորում այդպիսի բան ասել,— վախեցած բացականչեց ջահել կինը:— Միթե կարելի չե մեր զգացմունքները համեմատել այդ վայրենիների զգացմունքների հետ:

— Դուք, հավանորեն, բոլորովին չեք ճանաչում նեպերին,— տաքացած շարունակեց առաջին կինը:— Յես ծնվել, դաստիարակվել ե ամբողջ կյանքս անցրել եմ նրանց շրջանում, այդ պատճառով բաղմաթիվ առիթներ եմ ունեցել համոզվելու, վոր նրանք նույնպիսի ուժեղ զգացումներ ունեն, ինչպես ե մենք, ե, թերեւ, ավելի խոր:

— Ե՛, ասում եք ելի,— արհամարհանքով, ատամները արանքից արտասանեց ջահել կինը:— Նրանք ձեացնում ու կոտորավում են միայն,— ավելացրեց նա, յերեխաներին մոտ կանչելով, վոր կանֆետ տա՛:

Բայց ինչ՞ե նկարագրել այն, ինչ ամեն որ կատարվում ե մեր աչքերի առջև: Նա առանց այդ ել ճանճրացրել ե բոլորին:

Գելին մտադիր եր իջնել մոտակա կայանում ե այն ե՛ ուղում եր ստրուկներին դուրս բերել տախտակամածը, բայց ինչ վոր մի ծանոթ, վոր հենց այդտեղ շոգենավ նստեց, ասաց նրան, վոր նրա իջնելն ավելորդ կլինի, վորովհետեւ խոսք չկա,

Թե մտտակայքում վորեւ տեղ նեգրեր լինեն վաճառվելիս: Այդ պատճառով Գելին մնաց նավի վրա, իսկ սարուկներին նորից նկուղ քշեց, բացառութեամբ Թոմասի, վորին նա թույլատրեց մնալ տախտակամածի վրա:

Շուտով նավը հեռացավ նավահանգստից, և ամեն բան նորից նախկին տեսքն ընդունեց նրա վրա: Տղամարդիկ ծխում, խմում, կարդում, խոսում և ծիծաղում եյին, կանայք զրուցում եյին զգեստների մասին, իսկ յերեխաներն ուրախ խաղում եյին նրանց շուրջը:

Հետեյալ նավահանգստում շոգենավ մտավ Գելիի գործակալներից մեկը և հրավիրեց նրան ասի իջնել: Գելին գնաց նրա չետեկից և շուտով վերադարձավ, ուղեկցութեամբ մի ինչ-վոր սեւավամորթ կնոջ, վոր գրկին յերեխա ուներ: Նրա չետեկից գալիս եր մի նեգր՝ փոքրիկ ճամպրուկը ձեռին: Յերբ դրանք նավ մըտան, կինը ճամպրուկն առավ նեգրից, ուրախ-ուրախ միքանի խոսք ասավ նրան ու մնաս բարով արավ, վորից հետո նեգրն շտապեց ասի իջնել: Չանգը տվին, սուրիչը շվացրեց, մեքենան հեաց-տնքաց, և նավը հանդարտ հեռացավ նավահանգստից:

Նոր ճամպորդուհին նստեց ուղղակի տախտակամածի վրա, հակերի ու արկղների մեջտեղ, և սկսեց խաղալ իր յերեխայի հետ: Գելին մտտեցավ նրան և անտարբեր միքանի խոսք ասաց: Թոմասը, վոր հետևում եր այդ տեսարանին, նկատեց նեգրուհու դեմքի հանկարծակի փոփոխութիւնը, և լսեց, թե ինչպես նա ձչաց:

— Եդ չի կարող պատահել... Դուք ինձ վրա ծիծաղում եք... Յես դրան չեմ հավատում...

— Յեթե իմ խոսքերին չես հավատում, սրան հո կհավատաս,—ասաց Գելին, ցույց տալով նրան ինչ-վոր մի թուղթ:— Սա վաճառման թուղթն է, վորին ստորագրել է քո նախկին տերը, ահա և ստացականը, վոր ինձանից փող է ստացել...

— Չե, եդ չի կարող պատահել,— հետզհետե աճող սարսափով ձչաց կինը:— Յես չեմ կարող հավատալ, վոր իմ պարոնն ինձ այդպես խաբած լինի:

— Դու, ինչպես յերևում է, կարդալ չգիտես, այդ ժամանակ թուղթը տանք մեկ ուրիշի կարդալու... Եյ, հայրենակից,— զիմեց Գելին յերբորդ կարգի ճամպորդներից մեկին,— կարդացեք, խնդրեմ, ինչ է գրված: Սա իմ խոսքերին չի հավատում, չնայած վոր ճշմարտութիւնն էմ ասում:

— Սա վաճառման ակտ է, ստորագրել է Ջոն Ֆորդիկը,— ասաց անծանոթը, թուղթն աչքի անցնելով:— Գրված է, թե Ջոն Ֆորդիկը՝ Լյուսին և նրա յերեխային ծախել է ստրկավաճառ Գելին...

Թշվառ կինը մի ձիչ արձակեց և ուշաթափվեց: Յերեխան լաց չեղավ, թաթիկներով մոր վիզը գրկելով: Ճամպորդները շարձապատեցին դրանց, վոր իմանան, թե բանն ինչու է: Գելին միքանի խոսքով բավարարեց նրանց հետաքրքրութիւնը:

Շուտով Լյուսին ուշքի չեկավ, բայց, հիշելով իր սարսափելի դրութիւնը, սկսեց լաց լինել:

— Ինչպես անսիրտ կերպով խաբեցին ինձ,— ձչում եր նա:— Իմ պարոնը հավատացնում եր, թե ուղարկում է ինձ Լուիզիլի ճաշարանը, ուր մարդս ծառայում է... Չե, յես դրան չեմ հավատում... Եդ յերկու պարոնն ուղղակի ծիծաղում են ինձ վրա:

— Ավա՛ղ, սիրելիս,— ասաց մի գլխասիրտ պարոն, իր հերթին թուղթը կարդալով, վոր տվեց նրան Գելին,— քո պարոնն, իսկապես, քեզ ու քո յերեխային ծախել է այս պարոնին:

Յեմ նա ցույց տվեց Գելիի վրա:

— Ե՛հ, ել ասելու բան չի մնում ինձ,— հաստատուն ձայնով արտասանեց կինը, հանկարծ իրեն տիրապետելով:

Յերեսը սրբելով՝ նա յերեխան սեղմեց գրկին, նստեց իր ճամպրուկի վրա և անշարժ հայացքը հռեց գետի ջրերին:

«Ե՛, սա պի՛նդ է յերևում», մտածեց Գելին. «Սա շատ գըլխացավանք չի պատճառի»:

Ջահել նեգրուհին, իսկապես, քանի նավը հեռանում եր ասփից, հանգստանում եր աստիճանաբար: Մեղմ հովը շուրջում եր նրա դեմքը, կարծես բարերար լողու թարմացնող շունչ: Արևը անթիվ ճաճանչներով անդրադառնում եր գետի ջրերում. շուրջը լիքն եր խնդութեամբ և ուրախութեամբ: Յերեխան, մոր ծնկներին նստած, ծիծաղելով թաթիկները մեկնում եր ջրի վրայով թռչող ճային և ինչ-վոր անհասկանալի խոսքեր ասում:

— Գեղեցիկ յերեխա յե,— ասաց մի ինչ-վոր տղամարդ, Լյուսիայի առջև կանգնելով:— Ինչքան է,— հարցրեց նա:

— Տասնուկես ամսական,— պատասխանեց Լյուսին:

Անծանոթը յերեխային ավեց մի կտոր շաքար, վոր նա ուրախութեամբ ճիչով տարավ դեպի բերանը:

— Տես, իսկույն հասկացավ ինչ բան է,— ասաց անծանոթը:

Մի փոքր ել կանգնելով և հիանալով, թե ինչպես է յերեսխան աշխատում շաքարը ծծել, նա գնաց դեպի Գելին, վոր նըստած եր մեծ արկղի վրա, և ասաց.

— Գուք յերեկելի բան եք գնել, պարոն: Կինը վոր—շատ լաջն է, իսկ տղան խոստանում է իսկական հսկա դառնալ. դեռ մի տարեկան չկա, բայց չերկու տարեկանի տպավորությունն է անում:

— Այո, վատ ապրանք չի,—անտարբեր ասաց Գելին, ծխախոտի ծուխ թողնելով:

Անծանոթը նուչնպես սիգար ծխեց և հարցրեց.

— Դրան հարմով եք տանելու:

Գելին գլուխը շարժեց դրականապես:

— Պլանտացիաները:

— Գուցե,—պատասխանեց ստրկավաճառը.—Մի պլանտացիայից պատվեր ունեմ, և այս ջահել կինը շատ հարմար է բամբակ հավաքելու: Նա, ասենք, և լավ յեփել գիտի, ինչպես ասացին ինձ: Համենայն դեպս, կծախեմ ձեռնտու գնով:

— Իսկ չերեսխան ինչ է անելու, չերբ սկսի սլլանտացիայում աշխատել,—շարունակեց անծանոթը:

— Յերեսխան կծախեմ առաջին իսկ առիթին,—ասաց Գելին, սիգարի մնացորդը դեն գցելով և նորը վառելով:

— Իսկ ինչ գին եք ուզում այդ չերեսխալի համար,—հետաքրքրվեց խոսակիցը, նստելով նրա մոտ մի ուրիշ արկղի վրա:

— Ինքս ել չգիտեմ ինչ գին նշանակեմ: Յերեսխան, ինքներդ տեսնում եք, շատ առողջ չերեսխա յե:

— Այո, բայց նրա հետ դեռ չերկար պիտի քաշ գալ, մինչև վոր վոտի կանգնի և մի բանի պիտանի լինի:

— Ե, նեգր չերեսխաները, միևնույնն է, շան լակոտները նման բան են. շատ արագ սկսում են վազվզել և սովորում են յորաքնալ առանց կողմնակի ոգնության:

— Յես, գուցե, վերցնելի դրան: Յես դրանցից միքանիսը ունեմ արդեն. չի խանգարի, վոր մի ընկեր ևս տանեմ նրանց, մանավանդ վոր անցյալ շաբաթ նրանցից մեկը, ազախնի վորդին, խեղդվեց լճակում: Նույնպես ծծկեր եր, և մարդը գոհ կլինի, չեթե նրան մի ուրիշ ծծկեր տամ:

Սոսակիցները միառժամանակ լուռ ծխում էին, յուրաքանչյուրն իր մտքում կշռադատելով սկսված առևտրի հավանականութունները: Վերջապես անծանոթն ասաց.

— Քանի վոր ձեզ անհրաժեշտ է չերեսխալից ազատվել, ուստի կարծում եմ՝ բավական կլինի վճարել և տասը դոլլար, հը:

— Ծիծաղում եք, ինչ է.—արժանապատվությամբ ասաց Գելին, թքելով:

— Իսկ վերջան եք ուզում:

— Վերջան... Պարզ է, իհարկե, վոչ թե տասը դոլլար... Գուք ինքներդ գիտեք, թե ինչ արժի այդպիսի չերեսխան. դուք հենց հիմա գովեցիք նրան: Յես ինքս ել ախր կարող եմ նրան մեծացնել: Մի տարի հետո նրա դինը կլինի հարյուր դոլլար, իսկ չերկու տարի հետո—կրկնակի: Իսկ այժմ յես նրան կարող եմ ծախել հիսուն դոլլարով, վոչ մի կուպեկ սպասա:

— Ե, արդեն դուք եք ծիծաղում ինձ վրա: Հիսուն դոլլար մի այդպիսի, իրոք, անպետք բանի համար...

— Յես չեմ խնդրում: Յես միայն իմ գինն եմ ասում:

— Յերեսուն դոլլար կտամ—շատ լավ գին է:

— Կղիջեմ հինգ դոլլար: Ավելին չեմ կարող:

— Տվեք ձեր ձեռը,—ասաց անծանոթը.—Տղան ինձ շատ է դուր յեկել:

— Լավ: Գուք վեր: ոեղ եք իջնելու:

— Լուրիվիում:

— Շատ լավ: Մինք այնտեղ կհասնենք չերեկոյան: Յերեսխան քնած կլինի, և մենք նրան զգուշությամբ կտանենք, այնպես վոր նա վոչինչ էլ չի նկատի: Միայն հարկավոր է մոր ուպես անել: Յես միշտ ել, գիտեք, աշխատում եմ, վոր այդ տեսակ գործերը կատարվեն վորքան կարելի յե սուս ու փուս...

— Ահա ձեզ քառասուն ու հինգ դոլլար: Գնանք այժմ ներս և պաշմանազիր գրենք:

Յերկուսն էլ չելան տեղներից և իջան ցած:

Յերբ, ուշ չերեկոյան, նավը կանգ առավ Լուրիվիի մոտ, չերեսխան գնող անծանոթը մոտեցավ Լյուսիին և կարեկից տունով ասաց նրան.

— Քիչ առաջ դու ասիր, վոր մարդդ ծառայում է Լուրիվիում՝ ճաշարանում: Ահա և Լուրիվի: Գուցե թե մարդդ ուղարկված է հյուրերը դիմավորելու: Գնա դեպի սանդուղը և նայիր, իսկ յես առայժմ կպահեմ չերեսխադ:

Միքած մարդուն գոնե հեռվից տեսնելու հույսն այնպես կլանեց Լյուսիին, վոր նա, առանց վորեք բան մտածելու, չերե-

ԳԼՈՒԽ XI

ՅԵՎԱՆ ՈՒ ՔԵՌԻ ՔՈՄԱՍԸ

Հորիզոնի յետև թագնաված արևի վերջին ճառագայթները դեռ դողդողում էյին առատաջուր Մխստիսիայի (գետ) ալիքներին մեջ: Ափի յերկարությամբ բուսած ճկուն յեղեգները և բարձր ու մամուռով ծածկված մուսյլ նոճիները հանդարտ անդրադառնում էյին ջրերում, մինչդեռ նրանց կողքով հպարտորեն անցնում էր ծանրաբեռ շոգենավը:

Տախտակամածի մեջտեղը բռնել էյին բամբակի՝ մեկը մյուսի վրա դրած հակերի սյուները, իսկ մնացած տարածությունը լիքն էր ճամպորդներով: Այդտեղ էր գտնվում և մեր խոնարհ բարեկամ Թոմասը, վոր նստել էր հակերի մի փոքր խմբի մեջտեղ:

Նրա համար արդյոք, վոր պարոն Շելլերի հանձնարարականն էր ազդեցությունն էր ունեցել, թե՞ շնորհիվ իր հանդիստ ուխտադաղ բնավորության, Թոմասին աջողվել էր արժանանալ պարոն Գելիի լիակատար վստահության: Սկզբում ստրկավաճառն աչքերը չորս արած հետևում էր նեգրին և գիշերները շղթայում նրան, բայց ազնիվ նեգրի անդամաճան հնազանդությունն ու համբերատարությունը, վերջապես, համոզեցին նրան, վոր այդ միջոցներն ավելորդ են, և նա վերջ տվեց դրանց: Թոմասն իրավունք ստացավ ազատ ման դալ նավում, ազնիվ խոսք տալով, վոր իր պարոնի վստահությունը իշարը չի գործադրի:

Միշտ համեստ ու քաղաքավարի, միշտ պատրաստ ծառայություն անելու, ուր պետք էր, Թոմասը շուտով դեպի իրեն տրամադրեց նավի ծառայողներին և իր բոլոր ուղեկիցներին: Նույնպես սիրով էր ոգնում նա նավաստիներին՝ իրենց աշխատանքի մեջ, ինչպես յերբեմն աշխատում էր կենտուկիի ազարակում, և քիչ ոգուտ չէր տալիս նրանց: Իսկ չերբ անելու վրչինչ չէր լինում, նա նստում էր հակերի վրա ու կարդում: Այժմ այդ գրության մեջ էլ տեսնում ենք նրան:

Նոր-Որլանի*) շուրջ՝ հարյուր մղոն յերկարությամբ՝ Մխստիսիային թավալում է իր խոռվահույզ ալիքները բոլորովին տափակ ափերի միջով, վորոնք տեղ-տեղ ալիքների գրոհից պաշտպանված են բարձր ամբարտակներով: Այսպիսով, այդտեղից՝ տախտակա-

*) Նոր-Որլանը—Հարավային Նահանգների գլխավոր քաղաքն է:

մածի բարձրությունից կարելի չէ տեսնել ընդարձակ տարածությամբ հողեր: Յերբ Թոմասը գլուխը բարձրացնում էր գրքից, նա տեսնում էր իր առջև իրար հետևող բամբակի պլանտացիաների անսահման պանորաման. դա հնարավորություն էր տալիս նրան վաղորդք ծանոթանալու իր ապագա աշխատանքի բոլոր մանրամասնություններին:

Նա տեսնում էր, թե ինչպես են ստրուկներն աշխատում առավոտից մինչև յերեկո, տեսնում էր նրանց՝ իրար կողքի շինված խցճուկ տնակները, իսկ դրանցից փոքր ինչ հետո՝ պլանտատորների շքեղ տները: Վորքան ավելի չէր տարածվում այդ տխուր պատկերը նրա աչքի առջև, Թոմասն այնքան ավելի չէր կարոտում կենտուկիի ազարակը, նրա դաշտերը, նրա այգին. այնքան ավելի սիրով էր հիշում իր տնակը, վոր պատած էր կանաչով, ուր ապրել էր ինքն ընտանիքի հետ միասին: Յերբ նա աչքերը փակում էր, տեսնում էր, թե ինչպես է կինը քաշ գալիս տնակում, ինչպես պատրաստվում է կերակրել յերեխա-ներին, տեսնում էր և այդ սիրելի մանուկներին, լսում էր նրանց ուրախ ծիծաղը, վորի միջից ջոկվում էր փոքրիկ աղջկա հրճվալից ճիչը: Բայց անա ինչ-վոր մեկի սուր ձայնը սթափեցրեց նրան իր քաղցր ցնորքներեց, նա աչքերը բաց արավ կըրքեց և պատկերը փոխվեց մի ակնթարթում. նրա առջև դարձյալ կին—և պատկերը փոխվեց մի ակնթարթում. նրա առջև դարձյալ քարձրանում էյին մուսյլ նոճիները և տարածվում էյին անսահման պլանտացիաները՝ վոռոգված իր ցեղակիցների քրտինքով ու արյունով, և լսում էր նորից անիմսերի աղմուկը և մեքենայի շխկոցը: Յեվ նա խորը հոգոց քաշելով ասում էր ինքն իրեն, Վոր նախկին դրախտային կյանքն իր համար անցավ ընդմիշտ:

Նման դրության մեջ գտնվելով, դու, բարի ընթերցող, հոգիդ կզկզիլի՞ր գոնե թղթի վրա՝ կնոջ ու չերեխաներիդ քո վիշաք հայտնելու, բայց Թոմասը կարգալ էր սովորել միայն, իսկ գրել հաշտեցրել, ուստի և զրկված էր այդ չնչին մխիթարությունից: Ընտանիքից բաժանվելը նրան պատկերանում էր վորպես մի անազին անդունդ, վորից մխիթարանքի խոսք չէր կարող հասնել սրտի սիրածներին:

Շոգենավի (ուր տեղավորվել էր Գելին իր ստրուկներով) ճամպորդների թվում գտնվում էր նոր-Որլանցի մի հարուստ պլանտատոր՝ անունը Սենտ-Քլեր: Նրա հետ էր և նրա փոքրիկ աղջիկը՝ վեց տարեկան Յեվան: Դա մի զարմանալի յերեխա յեր, վորի կողքից անցնելիս՝ անկարելի չէր կանգ չառնել հիացած:

Թոմասին կարգադրել ելին՝ աղջկա կանչելուն պես գնալ մոտը, ամեն մի այլ աշխատանք թողնել և նրա հետ լինել այնքան ժամանակ, վորքան Յեվան կցանկանա: Ու Յեվան ժամերով խաղում էր իր սևամորթ բարեկամի հետ: Մի անգամ հայրը այգում հանդիպեց այսպիսի տեսարանի. Թոմասը նստել էր փայտե նստարանին. նրա բաձկոնի լուրաքանչյուր կոճակի տեղը հասմիկի ծաղիկներ ելին խրված, իսկ վզին Յեվան կախում էր վարդերից հյուսած գիրլանդ. այդ ծաղկահյուսը կախելուց հետո Յեվան ծաղի պես թեթև թռավ, նստեց Թոմասի ծնկներին:

— Ա՛խ, Թոմաս, վորքան ծիծաղելի չես,—ասաց նա ուրախ ծիծաղելով:

Թոմասի դեմքն ուրախությունից փայլում էր. նա Յեվայի խաղով հրճվում էր փոքրիկ աղջկանից վոչ պակաս:

Մի ուրիշ անգամ Յեվան Թոմասի ոթյակը վազեց այն ժամանակ, չերբ նա սեղանի մոտ նստած՝ յեռանդով բան էր խազում գրատախտակի վրա: Բանն այն էր, վոր խեղճ նեզրը ընտանիքին շատ էր կարօտել և վորոշել էր նամակ գրել: Դրա համար նա Յեվայից խնդրել էր մի թերթ թուղթ, բայց փորձում էր առաջ սևագրություն անել գրատախտակի վրա: Նա աշխատում էր հիշել այն բոլորը, ինչ ողորել էր նախկին տիրոջ վորդուց՝ Ջորջից, բայց բանն առաջ էր գնում բավական վատ, վորովհետև մրքանի տառեր բոլորովին մոռացել էր. իսկ մյուս տառերը թեև հիշում էր, բայց չգիտեր վորտեղ գնի: Նա չարչարվում ու տնքում էր այդ աշխատանքի վրա, յերբ Յեվան ներս ընկավ նրա սենյակը, թռավ նրա աթոռին ու չետևից նայեց նրա գրածին:

— Ո՛, քեռի Թոմաս: Այդ ինչ ծիծաղելի բաներ ես նկարում:

— Յես ուզում եմ իմ պառավին ու յերեխաներին նամակ գրեմ, բայց, որիորդ Յեվա, վախենում եմ բան չդուրս գա:

— Ինչպես կուզելի ոգնել քեզ, սերելի Թոմաս: Անցյալ տարի յես բոլոր տառերը գիտեյի, բայց հիմի, կարծեմ, մոռացել եմ:

Յեվան իր վոսկենք գլուխը մոտեցրեց նրան, և յերկուսով սկսեցին լրջորեն քննել իրենց անելիքը, բայց յերկուսն էլ հավասարապես վոչինչ չգիտեյին: Նրանք չերկար խորհրդակցեցին ամեն մի խոսքի վրա և, վերջապես, սկսեցին գրել: Յերկուսն էլ հիացած ելին, վոր բանն այդպես հաջող գնաց:

— Տեսնում ես, քեռի Թոմաս,—բացականչեց Յեվան,—այժմ իսկական նամակի նման է: Այ կուրախանան կինդ ու յերեխաներդ հա՛: Ա՛խ, ինչքան վատ է, վոր քեզ բաժանել են նրանցից: Յես հայրիկին կինդրեմ անպատճառ, վոր քեզ տուն թողնի:

— Տիկին Շելբին խոստացել է ինձ յես առնել, հենց վոր փող հավաքի: Յես էլ ուզում եմ հայտնել նրանց, թե վորտեղ եմ, հետո կուզելի մի փոքր մխիթարել հորքուր Խլոյին, վոր իրեն սպանում էր, յերբ յես գալիս եյի:

— Թոմաս,—լավեց այդ ըոպելին Սենտ-Քլերի ձայնը: Նա գալիս էր սենյակ:

Թոմասն ու Յեվան ցնցվեցին:

— Դուք այստեղ ի՞նչ եք անում,—հարցրեց զարմացած Սենտ-Քլերը:

— Քեռի Թոմասը նամակ է գրում իր կնոջն ու յերեխաներին,—հպարտորեն ասաց Յեվան,—իսկ յես ոգնում եմ նրան: Լա՛վ չէ:

Սենտ-Քլերը նայեց գրատախտակին և Ժպտաց:

— Յես չեմ ուզում վշտացնել քեզ, Թոմաս,—ասաց Սենտ-Քլերը,—բայց կարծում եմ, վոր լավ կլինի, յեթե այդ նամակ գրելը հանձնես ինձ: Կգրեմ, հենց վոր զրոսանքից վերադառնամ:

Թոմասի նամակն իսկապես գրվեց հենց նույն բըր և ուզարկվեց Շելբիի ազարակը:

Ստրուկները Սենտ-Քլերի տանն ավելի լավ ելին ապրում, քան ուրիշ տներում: Տերը շատ բարի է մեզմ մարդ էր, ծառայաներին յերբեք չէր վիրավորում և չէր պատժում: Բայց փոքրիկ Յեվան իր քնքոշ և զգալուն հոգով հասկանում էր, թե վորքան սարսափելի չէ սևամորթ ստրուկներին դրությունը: Նա հաճախ լինում էր խոհանոցում, ուր պատմում էլին, թե ուրիշ տներ վորքան դաժան են վարվում նեզրերի հետ. խեղճ ստրուկներին ծեծում են ջեղցներու աստիճան: Փոքրիկ աղջկա սիրտը կծկվում էր, դեմքը գունատվում էր, և աչքերը լցվում էլին տըրտըրությամբ:

— Այդ տեսակ բաները դիպչում են սրտիս, Թոմաս,—ասում էր Յեվան խոհանոցում մի վորևե ծանր պատմություն լսելուց հետո:

Յեվան այդ մասին հաճախ էր խոսում հոր հետ, վորն ինքը ևս դեմ էր ստրուկության, խոսում էր հորաքույր Ռֆելիայի հետ, վորը Սենտ-Քլերի հորեղբոր աղջիկն էր և չեկել էր Անգլիայից:

Թե հայրը, թե հորաքույր Ռֆելիան տագնապով ելին վերաբերվում այդ գրույցներին, նրանք վախենում ելին, վոր փոքրիկ փխրուն Յեվան շատ և տարվում այդ գույցներով և, վոր դա կարող ե ազդել նրա առողջութեան վրա: Բայց նրանք չեկին կարող վերջ տալ նրա հարաբերութեան նեղերի հետ, չեկին կարող մանավանդ խանդարել, վոր նա բարեկամութուն չանի Թոմասի հետ, վորից Յեվան պրեթե չեր բաժանվում:

ԳԼՈՒԽ XII

ՀՈՐԱՔՈՒՅՐ ՈՖԵԼԻԱՆ

Ավելորդ չի լինի, չեթե միքանի խոսք ասենք որիորդ Ռֆելիայի մասին: Նա քառասունհինգ տարեկան եր: Ծնվել և ապրել եր Նոր-Անգլիայի այն գեղեցիկ գյուղերից մեկում, վորոնց տեսքը միայն ուրախացնում ե ուղևորին: Յերևակայեցեք ընդարձակ մաքուր ափարակ, վոր գտնվում ե դարավոր ծառերի ստվերում և շրջապատված ե կանաչ դաշտով: Ամենուրեք տիրում ե խաղաղութուն, անդորր, կարգ ու կանոն և տնարարութուն. ամեն ինչ իր տեղումն և, և վոչ մի ավելորդ բան: Ազարակը շրջապատող փայտե վանդակապատի մի ձողն անգամ պակաս չե, բակում մի շյուղ անգամ չկա ընկած. վոչ մի անկարգորեն փռված շոր, վոր վիրավորի ձեր հայացքը, մինչև անգամ լուսամուտների տակ ծաղկած յասամանու թփերի վրա չեք տեսնի վոչ մի չոր վոստ: Ընդարձակ տան ներսն այնքան մաքուր ե և այնքան սարքին, կարծես վոչվոք բան չի անում այնտեղ, թեև նրա բոլոր բնակիչները, աշխատանքի ընդունակ մարդիկ, ամբողջ օրն զբաղված են գործով: Ամեն ինչ կարծես մեխված ե իր տեղում, և վոչ մի բանի վրա փոշու հատիկ չկա: Այս ազարակում ամեն ինչ կատարվում ե խռնուսեքի ճշտութեամբ: Բայց վոչ մի սպասավոր չեք տեսնի. ամեն ինչ անում են տերերն իրենք:

Ճաշից հետո տանտիրուհին, ձյունի պես ձերմակ չամչիկը (չեպչիկ) գլխին և ակնոցն աչքերին, նստում ե այլձիկների հետ միասին. բոլորը կար են անում, կարծես ուրիշ գործ չեն ունեցել և չեն ունենալու: Տան աշխատանքը չերեք չի նկատվում, կարծես այդ տանն ընդունված չի վոչ ուտել, վոչ խմել, վոչ ել առհասարակ հոգ տանել կենսական ամենամանրամեջտ պահանջ-

ների մասին: Մինչդեռ այդ բոլորն արվում ե անկասկած, միայն չերեք վոչվոքի չեք տեսնի խոհանոցում աշխատելիս, վորովհետև այնտեղ զբաղված են հենց այն ժամանակ, չերք վոչվոքի մտքովը չի անցնում տյնտեղ նայելու: Կերակրվում են նույն խոհանոցում օրը յերեք-չորս անգամ, և, չնայած դրան, այնտեղ հատակի վրա մի չնչին լաքա անգամ չես տեսնի չերեք. սեղանները, աթոռները և ամբողջ կահ-կարասին կարծես վարպետի ձեռից հենց նոր են դուրս յեկել. ամեն բան կանգնած ու պակած ե այնտեղը, ուր պետք ե: Ուղղակի չես հասկանում, թե յերբ են անում այն բոլորը, ինչ կոչվում ե տան աշխատանք:

Ահա այսպիսի մի ազարակում եր անցրել որիորդ Ռֆելիան իր քառասուն ու հինգ տարին: Նրա ծնողները, տարիքով, բայց դեռ բոլորովին ժիր ու թարմ ծերունիներ, իրենց մեծ աղջկանը՝ որիորդ Ռֆելիային, նայում ելին վորպես «չերխայի»: Այդ պատճառով նրա՝ Ավգուստինի (Սենտ-Քլերի) մոտ գնալը, վորը պետք ե տեղի միքանի օր, չենթարկվեց ամենալուրջ քննութեան, վորպես «անփորձ աղջկա» համար վերին աստիճանի կարևոր և վտանգավոր բան: Վերջապես, չերբ խնդրը դրական լուծում ստացավ, Ռֆելիայի հայրը զրքերի պահարանից հանեց աշխարհագրական հին քարտեզը և սկսեց նայել թե ինչ չերկայնութեան ու լայնութեան վրա չի գտնվում Նոր-Որլյանը: Հետո նա կարգաց մի հին ճանապարհորդի ընդարձակ հողվածը այդ չերկրի կլիմայի, ֆլորայի, ֆաունայի և այլ բաների մասին: Մայրը որը միքանի անգամ անհանգստութեամբ հարցնում եր, թե Նոր-Որլյանը բավականաչափ կարգին քաղաք ե, վոր «Չահել» աղջիկը կարողանա անվախ ապրել այնտեղ: Ծուռով ամբողջ գյուղը, վոր կազմված եր միայն խոշոր ագարակներից, իմացավ որիորդ Ռֆելիայի՝ Նոր-Որլյան գնալու մտադրութունը. ու ամբողջ օրերով այդ մասին ելին խոսում միայն. որվա մանր չարիքները միառժամանակ մոռացան: Ամբողջ կյանքի ընթացքում որիորդ Ռֆելիան չերեք այնքան հրավեր չեր ստացել իր հարևաններից, Ռֆելիան չերեք այնքան, և ամենուրեք քննվում եր նրա՝ Նոր-ինչպես այդ ժամանակ, և ամենուրեք զննվում եր Նոր-Որլյան գնալու խնդիրը: Վոմանք դառնում ելին, վոր լավ կանի չգնա, վոմանք, ընդհակառակը, խրախուսում ելին: Բարեբախտաբար, որիորդ Ռֆելիան նրանցից չեր, վոր գլուխը կորցնեք այդ խոսքերից. այդ պատճառով, ինչ-վոր ասում ելին Նոր-Որլյանին թեր և դեմ—նրա վրա վոչ մի տպավորութուն չարավ: Յերբ նա սկսեց պատրաստվել ճանապարհ ընկնելու, սկսվե-

ցին անվերջ գրուցներ, թե Սենտ-Քլերն ինչ է նվիրել նրան— մետաքսե շալ, վոր հասնում եր մինչև փեշի ծայրը, մետաքսե հովանոց, գեղեցիկ գլխարկ, սիրուն կոշիկներ և տասերկու թաշկինակ՝ ծայրերն ասեղնագործ: Իսկ չերբ իմացան, վոր Ավգուստինը այդ բոլորին վճարել է ամբողջ հիսուն դոլլար—այդ տեղերում չտեսնված մի գումար—չտեսնող հառաչեցին:

Այժմ ավելի լավ է ոգավենք առիթից և նայենք որիորդ Ռֆելիային այն ժամին, թե ինչպես է պատրաստվում Նոր-Որլյան մտնելու: Նա կանգնած է տախտակամածի վրա, իր հորեղբոր վորդու և նրա աղջկա կողքին: Բարձր, վոսկրոտ մարմինն հագել է գեղեցիկ, դարչնագույն, ամառային զգեստ: Նրա յերկար, դեղնավուն դեմքը՝ փոս ընկած աչքերով ու իրար սեղմած բարակ շուրթերով, արտահայտում է անընկճելի յեռանդ և դիմացկունություն, իսկ թուխ աչքերը նայում են այնպես, կարծես շարունակ փնտռում է, թե վորտեղ է պետք իր աջակցությունն ու ոգնությունը: Նրա շարժումները վճռական են ու արագ. նա քիչ է խոսում, բայց պարզ ու վորոշ: Ճշտապահություն մեջ կարող եր մրցել ամենաճիշտ ժամացույցի հետ, և յեթե նա հարկավոր եր համարում մի վորևե բան անել, այդ ժամանակ ավելի հեշտ եր կանգնեցնել սուրացող շոգեմեքենան, քան նրան: Նրա կարծիքով ամենասարսափելի արատը, վոր դառնում է ամեն չարիքի պատճառ, անվնականությունն եր: Այդ խոսքի տակ նա հասկանում եր յուրաքանչյուր գործողություն, վորը չեր վերաբերում հարցի անմիջական լուծմանը: Այդ պատճառով նա մեծագույն արհամարհանքով եր վերաբերվում թույլ ու անվճռական մարդկանց և սարսափելի չեր սիրում նրանց, ովքեր վոշինչ չեն անում կամ չգիտեն ինչպես գործի ձեռնարկեն, ամաչում են կամ գործից վախենում: Նա նույնիսկ իր արժանապատվությունից ստոր եր համարում խոսքերով քննել այդպիսի մարդկանց արարքը և, նրանց նայելիս, դեմքին տալիս եր պերճախոս, արհամարհական արտահայտություն միայն: Որիորդ Ռֆելիան հաստատակամ եր և կենդանի, գործունյա խելքի տեր: Նա ուներ և կրթություն. շատ լավ եր իմանում համաշխարհային պատմությունը և ծանոթ եր անգլիական բոլոր կլասսիկներին:

Սակայն ինչպես եր պատահել, վոր մի այդպիսի անձնավորություն, ինչպիսին եր որիորդ Ռֆելիան, համաձայնել եր հետևել Ավգուստինին, և վոչ միայն սիրահոժար, այլև ուրախությունը: Չէ՞ վոր Ավգուստինը յուրաքանչյուր քաղաքիսին հակասում

եր այն բոլորին, ինչ որիորդ Ռֆելիան համարում եր խակական մարդու համար անխախտ բան, և տոհասարակ շատ կողմերով ուղղակի նրա հակապատկերն եր հանդիսանում: Բայց դա կարելի չե շատ պարզ բացատրել նրանով, վոր որիորդ Ռֆելիան, գրեթե յերկու անգամ մեծ լինելով իր հորեղբոր վորդուց, մոր պես սիրում եր նրան: Քանի դեռ Ավգուստինն ապրում եր նրա ծնողների մոտ, որիորդ Ռֆելիան վոչ միայն նրան, յերեխային ցուցց եր տալիս անհրաժեշտ հոգացողություն, այլև նրա առաջին դաստիարակչունն եր բարոյական խնդիրներում: Յեվ ահա բավական եր, վոր Ավգուստինն ասեր, թե նա հարկավոր է իր տանը՝ տնտեսությունը նայելու, Յեվային դաստիարակելու և քայքայված գործերը կարգի բերելու համար, վոր որիորդ Ռֆելիան դա անմիջապես համարել իր պարտականությունը: Այն մտքը, թե Ավգուստինի տանը ամեն բան խառը վիճակումն է, ինչպես արտահայտվում եր ինքը՝ Ավգուստինը, նա իր սրտին մոտ ընդունեց, միաժամանակ նա հասկանում, գնահատում և սիրում եր Յեվային, ու վճռեց ամբողջ կյանքը նվիրել այդ աղջկան: Նա Ավգուստինին նայում եր, վորպես հեթանոսի, բայց ներում եր, վորովհետև Ավգուստինը, չնայած դրան, ազնիվ եր, մարդասեր և վեհանձն իր վարմունքների մեջ:

Գալով Նոր Անգլիայից, ուր ստրկություն չկար, որիորդ Ռֆելիան՝ Սենտ-Քլերի հետ խոսելիս ասում եր նրան, թե ամոթ բան է զբաղվել մարդկանց առևտրով: Սենտ-Քլերը համաձայնում եր նրա հետ, բայց միշտ պատասխանում եր միևնույնը.

— Յես անդոր եմ այդ բանը վերացնել և անում եմ այն, ինչ կարող եմ, այսինքն թեթևացնում եմ նրանց վիճակը, նրանց, ովքեր ընկնում են ինձ մոտ:

Սենտ-Քլերը հորաքույր Ռֆելիային իր տունը հրավիրեց նրա համար, վոր տնտեսությունը կարգի բեր և զբաղվի Յեվայի դաստիարակությունը: Սենտ-Քլերի կինը շահել, գեղեցիկ, բայց քմահաճ ու դյուրագրգիլ կին եր: Բացի դրանից, Յեվայի ծնվելուց հետո, նա հաճախ հիվանդանում եր, որվա մեծ մասը անց եր կացնում թախտին պռակած, այնպես վոր թե յերեխան, թե տան ամբողջ տնտեսությունը թողնված եր բացառապես տան բազմաթիվ ծառաներին: Սենտ-Քլերը տեսնում եր, վոր ծառաները անկարգ են, վոր նրանք, ինչպես և կինը, որերով վոշինչ չեն անում, վոր տանը տիրում է անկարգություն,—բայց նա

Ինքն անկարող էր վորեւ բան փոխել: Այդ ժամանակ նա մտածեց հրավիրել մորաքույր Ոֆելիային, վորը դաստիարակվել էր մի աչնպիսի տան մեջ, ուր տիրում էր անսովոր մաքրություն և խիստ կարգ ու կանոն:

Գալու հետեւյալ օրն իսկ մորաքույր Ոֆելիան գործի ձեռնարկեց: Նա վեր կացավ ժամը 4-ին և իր սենյակը կարգի բերեց ինքը, վորով և սպասուհուն շատ դարձացրեց: Հետո սկսեց նայել բոլոր պահեստներն ու նկուղները, վորոնց բանալիները տիրուհին հանձնեց նրան: Ամեն ինչ կարգի բերելով, որիորդ Ոֆելիան գնաց խոհանոց, բայց գործն այստեղ փոքր ինչ դժվարացավ. նա հանդիպեց աղախնի Դինայի ամենավճռական դիմադրության:

Նեղրուհի Դինան շատ տարրինակ կլին էր: Նա նույնքան նշանավոր խոհարարուհի յեր, վորքան և հորքուր Խլոյան: Բայց սա աշխատում էր բոլորովին այլ կերպ: Նա արհամարհում էր ամեն տեսակ սխտեմ և ամեն մի կարգ ու կանոն. խոհանոցում վոչ մի իր չուներ իր վորոչ տեղը. դնում էյին ուր պատահում էր. սեղանների և աթոռների վրա կիտված էյին անպետք իրեր: Յեվ այդ քոսի մեջ նա ինչ-վոր մի հրաշքով ստեղծում էր իր զարմանալի կերակուրները:

Դինան համոզված էր արդեն, վոր նոր տիրուհին նոր կարգեր է մտցնելու, և պատրաստվեց դիմադրել: Յերը հորաքույր Ոֆելիան ներս մտավ, նա, ըստ սովորության, կարճ ծխամորճը բերանին նստել էր հատակին, սևամորթ յերեխաների մի ամբողջ խմբով շրջապատված: Յերեխաները գետնախնձոր ու սիսեռ էլին մաքրում, թոչուններ էյին փետրում և կատարում էյին այլ նախապատրաստական աշխատանքներ, իսկ Դինան ծխում էր հաճույքով և ժամանակ առ ժամանակ խմորեղենի գլանով խփում իր ջահել ոգնականներից վորեւ մեկի գլխին... Յերը որիորդ Ոֆելիան ներս մտավ, նա վոտքի չելավ և համառորեն շարունակեց ծխել, կամենալով ցույց առ իր անկախությունն ու արհամարհանքը:

Հորաքույր Ոֆելիան բաց արավ արկղներից մեկը:

— Դու այս արկղի մեջ ի՞նչ ես դնում, — հարցրեց նա:

— Ինչ պատահում է, որիորդ, — պատասխանեց Դինան:

Ըստ յերևութին այդպես էլ կար: Հորաքույրն ամենից առաջ հանեց այնտեղից արյունոտ մի անձեռոցիկ. նրա մեջ, հավանորեն, հում միս էյին դրել:

— Սա ի՞նչ բան է, Դինա: Մի՞թե միսը դնում ես անձեռոցիկի մեջ:

— Իհարկե, չե, որիորդ. ձեռիս ուրիշ բան չկար, դրա մեջ դրի: Դրել եմ այդտեղ, վոր լվանանք:

Հորաքույրը շարունակեց նայել արկղը: Այնտեղ կային սոխի գլուխներ, կեղտոտ թաշկինակներ, մի հին կոշիկ, բրդի թելի կծիկ և ինչ-վոր գործվածք, ծխամորճ, ծխախոտ, չինական յերկու ափսե, պատռված յերեսարբիչներ, թոկի կտորներ և կարկատանի ասեղներ: Հորաքույր Ոֆելիայի բոլոր հարցերին Դինան պատասխանում էր բացահայտ արհամարհանքով, վորից յերևում էր, վոր իր սահմանած կարգը չի կամենում փոխել:

— Յես ամբողջ խոհանոցը կնայեմ, Դինա, — ասաց հորաքույրը, — և ամեն ինչ ինքս կարգի կբերեմ, իսկ դու արդեն կհետևես, վոր այդ կարգ ու կանոնը չխանգարվի:

— Ախ, որիորդ Ոֆելիա, մի՞թե կարելի յե, վոր որիորդն այդպիսի բաներով զբաղվի: Սկի չեմ տեսել, վոր ձեզ նման տիրուհիները խոհանոց մաքրեն ու կարգի բերեն: Դա սկի հարկավոր էլ չի:

Յեվ Դինան հեռացավ զայրացած: Իսկ հորաքույր Ոֆելիան տեսակավորեց ամանները, մի կողմ դրեց կեղտոտ սփռոցներն ու անձեռոցիկները, զանազան շաքարամաններից շաքարը թափեց-հավաքեց մի տեղ. ամեն ինչ մաքրեց, լվաց ու հավաքեց իր սեփական ձեռով աչնպես արագ ու ճարպիկ, վոր Դինային զարմացրեց:

— Յեթե հյուսիսի բոլոր որիորդները եղպես են, նրանք էլ ինչ որիորդ են, — ասաց Դինան, խոհանոցի հակառակ կողմ քաշվելով ու իր ոգնականներին դիմելով. — մաքրելու ժամանակը գա, յես ուրիշներից վատ չեմ մաքրի, իսկ առաջժամ չեմ սիրում, վոր տիրուհին խառնվում է իմ գործերի մեջ և բոլոր բաներն ենպես թագցնում է, վոր էլ վոչինչ չեմ կարող գտնել:

Պետք է խոստովանել, վոր, իսկապես, ժամանակ էր լինում, յերը Դինան հանկարծ սկսում էր խոհանոցը մաքրել: Այդ ժամանակ ստեղծվում էր ինչ-վոր աներևակայելի բան: Բոլոր արմանակ ստեղծվում էր ինչ-վոր աներևակայելի բան: Բոլոր արկղներն ու պահարանները առկն ու վրա յեր անում, նրանց միջի ապրանքը թափում հատակի վրա: Ապա սկսում էր հավաքել, կարգի բերել: Դինան ամեն ինչ անում էր հանդիստ, առանց շտապելու: Նա ծխամորճը բերանին նստում էր հատակին և սկսում ջոկել ու տնտղել ամեն մի փալասի կտոր, նախքան կգլտ-

ներ նրա հարմար տեղը: Իր ջանքի ոգնականներին ստիպում եր յեռանդով, խնամքով սրբել պղնձեղենը: Մի խոսքով՝ միքանի ժամ շարունակ խոհանոցում չտեսնված քուտս եր տիրում: Յերբ ամեն ինչ մաքրվում եր, ավելորդ իրերը տեղավորվում էին տնկյուններում, Դինան հագնում եր սիրուն շորերը, կապում եր մաքուր գոգնոցը և բոլորին վստիկում խոհանոցից այն պատրվա- կով, թե կամենում ե, վոր խոհանոցը մաքուր մնա: Սակայն Դի- նայի այդ մաքրասիրությունը չերկար չեր տևում, և շուտով, շատ շուտով խոհանոցն ընդունում եր իր նախկին տեսքը...

Միքանի օրվա մեջ օրիորդ Ոֆելիան պահարաններում և մառաններում օրինակելի կարգ ու կանոն ստեղծեց: Բայց Դի- նայի հետ չկարողացավ գլուխ հանել: Տեսնելով, վոր ամեն մի պաշար ավելորդ ե նրա դեմ, օրիորդ Ոֆելիան, ստիպված, թույլ տվեց, վոր նա խոհանոցում իշխի:

ԳԼՈՒԽ XIII

Տ Ո Պ Ս Ի Ն

Մի անգամ, չերբ հորաքույր Ոֆելիան, ըստ սովորության, զբաղված եր տնտեսության գործերով, ներքևից լսեց Սենտ-Քլերի ձայնը.

— Ոֆելիա, յեկեք այստեղ, ձեզ բան եմ ցույց տալու:

— Ի՞նչ կա, — հարցրեց օրիորդ Ոֆելիան, սանդուխով իջ- նելով:

— Տեսեք ինչ նվեր եմ բերել ձեզ համար, — ասաց Սենտ-Քլերը, առջ քաշելով մի փոքրիկ, ութ-ինը տարեկան նեպ- բուն:

Գա սևամորթ ցեղի ամենասև ներկայացուցիչներից մեկն եր: Նրա հուլունքների պես կլորիկ ու փայլուն աչքերը ան- հանգիստ մի առարկայից մշուտին ելին անցնում: Բերանը զար- մանքից կիտարաց եր խոես այն հրաշալիքների, վորոնցով լիքն եր հյուրասենյակը: Գանգուր մազերը բազմաթիվ հյուսերով կախկխված էին ուսերին: Դեմքի արտահայտությունը ներկա- չացնում եր խորամանկության, կովարարության և տխրազին լրջության ինչ-վոր խառնուրդ: Նրա հագին վոշինչ չկար, բացի մի կեղտոտ շապկից: Նա կանգնել եր խոհարհ դեմքով, ձեռները կրծքին դրած:

— Ասացեք, խնդրեմ, Ավգուստին, — հարցրեց օրիորդ Ոֆե- լիան, — այս աղջկան ինչո՞ւ համար եք բերել այստեղ:

— Նրա համար, վոր դուք զբաղվեք նրա դաստիարակությամբ: Սա ինձ շատ հետաքրքրական թվաց, — պատասխանեց Սենտ-Քլերը: — Տոպսի, յեկ այստեղ, — կանչեց նա աղջկան, — ցույց տուր, թե ինչպես ես չերգում ու պարում:

Տոպսիի աչքերը փայլեցին առանձին խենթ կրակով, և նա սկսեց նեգրական մի տարրինակ ու միորինակ յերգ. միաժա- նակ, յերգի տակտի համեմատ, ձեռներն ու վոտները շար- ժում եր, պտտվում, ծափ տալիս. վերջում ծուլ չեղավ մի յերկու անգամ, ինչ-վոր ձայն հանեց, վոր նման եր շոգեշարժի սուլոցի, և գորգի վրա կանգնեց մեխված ինման, խոհարհ կերպով ձեռները կրծքին դրած, կլորիկ աչքերը փայլեցնելով:

Շորաքույր Ոֆելիան նայում եր նրան զարմանքից քարա- ցած: Յերբ Տոպսին վերջացրեց, Սենտ-Քլերը նորից դիմեց նը- րան:

— Ե, Տոպսի, սա քո նոր տիրուհին ե: Բեզ նվիրում եմ սրան: Աշխատիր լավ պահել քեզ:

— Այո, պարոն, — պատասխանեց Տոպսին կեղծ լրջությամբ, աչքերը տարրինակ փայլեցնելով:

— Ասացեք, խնդրեմ, Ավգուստին, — ասաց օրիորդ Ոֆելիան, — ինչո՞ւ համար եք այս աղջկանը նվիրում ինձ: Ինչի՞ս ե պետք: Միթե մեր տանը քեզ չերեխաներ կան: Ել ինչ կարիք կար մեկն ել առնելու:

— Այ ինչ, — ասաց Սենտ-Քլերը, մորաքույր Ոֆելիային մի կողմ տանելով, — այս աղջիկը պատկանում եր յերկու հարեցող կողմ տանելով, — այս աղջիկը պատկանում եր յերկու հարեցող կողմ տանելով: Ամեն օր, ճաշարանի մոտով անցնելիս, լը- ճաշարան պահողի: Ամեն օր, ճաշարանի մոտով անցնելիս, լը- սում եյի աղջկա լաց ու կոծ, վորին անխնա ձեծում ելին: Իա ինձ զզվացրեց, և յես վորոշեցի նրան գնել: Բացի դրանից, սա ինձ բավական խելոք թվաց: Վերցրեք այդ գազանի ճուտին և աշխատեցեք մարդ դարձնել:

— Լավ, — ասաց օրիորդ Ոֆելիան, — կանեմ ինչ կարճո՞ղ եմ, — և Տոպսիին մոտեցավ մի այնպիսի տեսքով, վորով մոտենում են սարդին, զզվելով ձեռք տալ նրան:

— Ի՞նչ կեղտոտ ե, — բացականչեց օրիորդ Ոֆելիան, — և համարյա մերկ:

— Տարեք խոհանոց, — խորհուրդ տվեց Սենտ-Քլերը, — և կար- զպրեցեք լավ լվանան դրան ու հազցնեն:

Քեռի թոճասի տնակը—6

աղջկա ուսերից ու սկսեց թափահարել նրան: Այդ ժամանակը նրա մյուս թեքից վայր ընկան ձեռնոցները:

— Այ տեսնում ես,—բացականչեց հորաքույրը,—հիմի չե՛ր պիտի ասես, թե ժապավենը չես գողացել:

Տոպսին խոստովանեց, թե ձեռնոցները վերցրել է, բայց ժապավենի գողութունը հավառորեն ժխտեց:

— Լսիր, Տոպսի,—ասաց որիորդ Ոֆելիան,—յեթե անկեղծորեն խոստովանես ամեն բան, կներեմ քեզ:

Այդ խոստովանից հետո Տոպսին, լաց լինելով, խոստովանեց, վոր ժապավենն ու ձեռնոցները գողացել է:

— Լավ, հիմի ասա տեսնեմ, գուցե ուրիշ բան էլ ես վերցրել: Յերեկ դու վազվզում էիր տան մեջ:

— Այո, որիորդ, վերցրել եմ այն կարմիր բանն էլ, վոր որիորդ Յեվան վիզն է գցում:

— Ի՞նչ վատ աղջիկ ես: Ել ի՞նչ: Ասա:

— Վերցրել եմ Ռոզալի կարմիր ականջոցերն էլ:

— Իսկույն բոլորը բեր, ինչ վերցրել ես:

— Չեմ կարող, որիորդ, վառել եմ:

— Ի՞նչպես թե վառել ես: Դու ելի ստում ես, Տոպսի:

— Չե, ճիշտ. նրանք վառեցի, բոլորը վառեցի,—հավատացնում եր Տոպսին, արցունք թափելով:

— Իսկ ինչո՞ւ վառեցիր:

— Վորովհետև յես դարձելի, վատ աղջիկ եմ:

Այդ ըոպելին սենյակ մտավ Յեվան՝ մարջանի մանյակը վզին, վորի մասին հենց քիչ առաջ խոսում էին:

— Յեվա, վճռեղից վերցրիր մանյակդ,—հարցրեց զարմացած որիորդ Ոֆելիան:

— Ի՞նչպես թե վորտեղից: Այսոր չեմ էլ հանել:

— Իսկ յերեկ վզի՞դ եր:

— Այո, հորաքույր: Յերևակայեցիք, մոռացել էյի հանել և այդպես վզիս քնեցի ամբողջ գիշերը:

Որիորդ Ոֆելիան շմեց բոլորովին: Բայց նա դեռ չեր կարողացել բերանը բանալ, չեր դուռը նորից բացվեց, և ներս մտավ Ռոզան՝ հենց նոր հարթուկած սպիտակեղենով լի կողովը ձեռին: Նրա ականջներին կարմրին էլին տալիս մարջանի ականջոցերը:

— Ի՞նչ անեմ հիմի այս աղջկան,—հուսահատ բացականչեց հորաքույրը:—Տոպսի, ինչո՞ւ ինձ ասիր, թե մանյակն ու ականջոցերը գողացել ես:

— Դուք հրամայեցիք, վոր խոստովանեմ, որիորդ:

— Բայց յես քեզ չասի, թե խոստովանիր այն, ինչ չես արել: Դա միևնույն է, նշանակում է սուտ ասել, Տոպսի:

— Մի՞թե, որիորդ,—բացականչեց Տոպսին ամենամանկեղծ զարմանքի արտահայտությամբ:

Յեվան, վոր ներկա չեր այդ տեսարանին, մոտեցավ Տոպսին և անխոս կանգնեց նրա առջև: Միքանի ականթարթ նայեց փոքրիկ վայրենուն, հետո ասաց իր քնքուշ ձայնով:

— Խեղճ Տոպսի, ինչո՞ւ յես գողանում: Դու ամեն բան կունենաս, ինչ քեզ պետք է: Յես պատրաստ եմ իմ բոլոր իրերը տալ քեզ, միայն թե ծածուկ մի վերցնի:

Դա առաջին փաղաքշական խոսքն էր, վոր Տոպսին լսում էր կյանքում: Արցունքի նման մի բան փայլեց նրա համարձակ կլորիկ աչքերում: Բայց իսկույն ևեթ հավաքեց իրեն, դեմքը ծամածոց և ծիծաղեց: Նա չեր կարողանում հավատալ, վոր իր հետ խոսում են փաղաքշանքով, և չեն պատրաստվում հայհոյելու և ծեծելու:

Բայց ինչպես վարվել Տոպսիի հետ: Որիորդ Ոֆելիան ուղղակի չգիտեր ինչ անի:

Որիորդ Ոֆելիան շատ լուրջ կերպով ձեռնարկեց Տոպսիի դաստիարակութան ու կրթութան գործին: Նշանակեց հատուկ ժամեր աշխատանքի համար. սովորեցնում էր կարգալ և կարել: Կարգալը սովորեց շատ շուտ: Կարի բանն ավելի դժվար էր:

Նա կատվի պես շարժուն ու ճարպիկ էր և կապկի պես անհանդիստ. կարը ձեռին մի տեղ նստելը կատարյալ տանջանք էր նրա համար: Տոպսին ասեղները ծածուկ կտորում էր կամ պատի ծակերը կոխում, թելերը խճճում էր, յերբեմն ամբողջ մի տի ծակերը կոխում, թելերը խճճում էր, յերբեմն ամբողջ մի կոճ լուսամուտից դուրս էր շարժում, և այդ բոլորն անում էր այնպես ճարպիկ ու աննկատելի, վոր որիորդ Ոֆելիան վու՛չ մի կերպ չեր կարողանում բռնել նրան հանցանքի ժամանակ:

Շուտով Տոպսին դարձավ շատ նշանավոր անձնավորություն տան մեջ: Նա նմանվելու անսովոր տաղանդ ուներ. պատրում էր, յերգում, սուլում, կատվի ճարպիկությամբ բարձրանում էր ամենաբարձր ծառերը: Նա իր ծիծաղաշարժ արարմունքներով ուրախացնում էր տան սեամորթ չերեխաներին, վորոնք ամեն տեղ կրնկակոխ հետևում էին նրան: Յեվան նույնպես շատ սիրով ժամանակ էր անցնում Տոպսիի հետ, ինչ վոր որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

որիորդ Ոֆելիային դուր չեր գալիս բնավ: Այդ մասին հայտնեց

նուչնիսկ Սենտ-Քլերին և խնդրեց, վոր Յեվային արգելի այդ փչացած աղջկա հետ խաղալու:

—Վոչինչ,—ասաց Սենտ-Քլերը,—Տոպսիի ընկերակցությունը Յեվայի համար ոգտակար ե: Ինչ վերաբերում ե Տոպսիի պակասություններին, հավատացնում եմ, վոր Յեվան վոչ մի վատ բան չի յուրացնի:

Սենտ-Քլերի տան սպասավորներն սկզբում արհամարհանքով ելին վերաբերվում փոքրիկ նեգրուհուն: Բայց կամաց-կամաց հասկացան, վոր նրա հետ պետք ե զգուշ լինել: Տոպսիի վիրավորանքը չեր ներում և վրեժխնդիր եր լինում ճարպիկ կերպով: Բոլորին, ովքեր արհամարհանքով ելին վերաբերվում Տոպսիին, ամենակարճ միջոցում մի վորեե անհաճո բան եր պատահում: Կամ ականջողերն ելին կորչում կամ հագուստները մեղավորը հանկարծ զիպչում եր տաք ջրով լի դույլի, կամ անըստպասելի կեղտաջուր եր թափվում գլխին: Յեվ այս բոլորն արվում եր ահպես ճարպկորեն, վոր Տոպսիին բռնելու վոչ մի հնար չեր լինում:

Տոպսին զարմանալի ճարպիկ եր և ընդունակ ամեն տեսակ աշխատանքի: Նա շատ շուտով սովորեց անկողին գցել և սենյակ հավաքել ահպես լավ ու մաքուր, վոր պահանջկոտ որիորդ Ոֆելիան անգամ վոչ մի պակասություն չեր գտնում նրա աշխատանքի մեջ: Բայց միշտ պետք եր հետեել նրան: Բավական եր, վոր հորաքույրը մի անգամ Տոպսիին թողներ առանց հսկողության, նա սենյակը տակն ու վրա չեր անում: Անկողին գցելու փոխարեն բարձի չերեսը հանում եր, գանգուր գլուխը կոխում բարձի մեջ և հաճախ այնտեղից դուրս եր գալիս փետուրներով ծածկված: Սավանը վերցնում եր մահճակալից և փրուում հատակին. բարձին հանգցնում եր որիորդ Ոֆելիայի կոֆտան և չամչիկը (չիպչիկը) և բարձի հետ զանազան խաղեր սարքում հայելու առաջ. ծամածուլություններ եր անում, պարում, չերգում:

Մի անգամ, այդ խաղերի ժամանակ, հորաքույրը վրահասավ:

— Տոպսի,—բացականչեց նա համբերությունը հատած:— Ինչո՞ւ քեզ այդպես վատ ես պահում:

— Չգիտեմ, որիորդ: Գուցե նրա համար, վոր դարչելի յեմ:

— Չգիտեմ ուղղակի ի՞նչ անեմ քեզ, Տոպսի, ի՞նչպես վարվեմ քեզ հետ:

Տոպսիի դաստիարակությունը այս վոգով շարունակվեց յերկու տարի: Որիորդ Ոֆելիան հետզհետե ընտելացավ նրան, ինչպես մի վորեե հիվանդության, անհրաժեշտ չարիքի: Բայց վոչ մի կերպ չեր կարողանում ստիպել իրեն՝ փոքրիկ նեգրուհուն սիրելու:

ԳԼՈՒԿ XIV

ՅԵՎԱՅԻ ՅԵՎ ՀՈՐ ՄԱՀԸ

Առաջին չերկու տարին որերը Թոմասի համար անցնում ելին աննկատելի: Թեև կնոջից ու յերեխաներից բաժանված, նա իրեն առանձնապես զժբախտ չեր զգում: Նրա գլխավոր մխիթարությունը Յեվան եր, վորին կապվում եր որըստորե ավելի ու ավելի:

Շուտով Թոմասն իր նամակին պատասխան ստացավ, վոր գրել եր Ջորջ Շելբին, նախկին տիրոջ վորդին: Նամակում գրված չեին ընտանեկան զանազան նորություններ, թե հորքուր իջույան Լուիզվիլում*) վարձվել ե շաքարահաց պատրաստող մոտ, և վոր նրա ամբողջ վաստակը հավաքվում-պահվում ե քեռի Թոմասին յետ գնելու համար, վոր Մոսին ու Պետին առողջ են, վոր աղջիկը վաղվզում ե տան մեջ, և նրան նայում-խնամում եր սպասավորները: Այդ նամակը Թոմասին սքանչացրեց, վերացրեց. դա նրան թվում եր անսովոր մի բան, և նա մինչև անգամ ուզում եր դնել շրջանակի մեջ, վոր կախ տա իր սենյակի պատին, բայց չեր կարելի այնպես անել, վոր միաժամանակ թղթի չերկու կողմն ել չերեա:

Թոմասի ու Յեվայի բարեկամությունը գնալով խորանում եր: Թոմասին առանձին ուրախություն եր պատճառում կատարել և գուշակել իր փոքրիկ բարեկամուհու ամենափոքր ցանկությունը: Առավոտը, գնումները համար շուկա գնալիս, նա Յեվայի համար գնում եր ամենագեղեցիկ ծաղիկները, զրպանում պահում եր ամենալավ զեղձերը կամ նարինջները: Յեվան սովորաբար իր բարեկամին սպասում եր բակի դռան մոտ, և Թոմասի սիրտը ճիւղում եր ուրախությունից, չերը տեսնում եր աղջկա վոսկեհներ գլուխը և լսում եր նրա քնքուշ ձայնը:

— Ի՞նչ Թոմաս, ի՞նչ համար ի՞նչ ես բերել:

*) Լուիզվիլ—քաղաք Հարավային Նահանգներում:

Յեվան, իր հերթին, աշխատում էր վորքան կարելի չե շատ ուրախութիւնն պատճառել թոմասին: Նա արդեն լավ կարգում էր և իմանալով, վոր թոմասը շատ է սիրում ընթերցում լսել, հաճախ գնում էր նրա սենյակը և բարձր ձայնով կարգում նրա համար: Նեգրը նրան լսում էր խանդաղատանքով և արցունքն աչքերին:

Սենտ-Քլերին և հորաքույր Ոֆելիային հաճախ վախեցնում էր այն, վոր Յեվան շատ տպավորվող էր, և վոր այդ բանը կարող էր զարգանալ նրա հետ միասին: Ծառայողներից վորքե մեկի նկատմամբ յեղած ամենաչնչին անարդարութիւնից նա գունատվում էր և լալիս: Յեվ յերբ հայրն աշխատում էր հանգըստացնել նրան, նա բացականչում էր.

— Ո՛ր, հայրիկ, այդ բոլորն այնպէս է ծանրանում սրտիս, այնպէս է ծանրանում:

Ամառը Սենտ-Քլերի ընտանիքը գնաց ամառանոց, վորն ընկած էր մի գեղեցիկ լճի ափին: Յեվան որերն անցնում էր թոմասի հետ միասին, այգում, վոր լիքն էր սքանչելի ծաղիկներով: Մի յերեկո Յեվան թոմասի հետ նստած էր զրուցարանում, լճի ափին: Նրա ծնկներին զրված էր մի բաց գիրք, վորը հենց նոր կարդացել էր թոմասին: Աղջիկը մտախոհ նայեց յերկընքին, լճին և ասաց հանկարծ.

— Գիտես ինչ, քեռի թոմաս. ինձ թվում է, թե շուտով մեռնելու յեմ...

Թոմասը վախեցած նայեց նրան:

Տխուր նախազգուշացումը ծակեց նրա սիրտը: Նա շատ անգամ էր նկատել, վոր Յեվան նիհարում և, շուտ հոգնում, շնչառութիւնը դառնում է ընդհատ, յերբ յերկար ման է գալիս կամ վազում: Թոմասը լսել էր, ինչպէս որիորդ Ոֆելիան ասել էր, վոր Յեվան հագում է, և վոչ մի գեղ նրան չի կարող ոգնել:

Այժմ լսելով աղջկա տարրինակ խոսքերը, նա տեսավ, վոր Յեվայի այտերը վառվում են հիվանդագին կարմրությամբ, և նրա ձեռը շոշափելով զգաց, թե վորքան օտք էր նա:

Այդ ժամանակ լավեց հորաքույր Ոֆելիայի ձայնը, վոր կանչում էր Յեվային.

— Յեվա, տուն արի. դու գիտես, չե՞, աղջիկս, վոր արևը մայր մտնելուց հետո քեզ չի կարելի այգում նստել:

Հորաքույր Ոֆելիան հիվանդներ շատ էր պահել և իր փորձված աչքով տեսնում էր, թե ինչ է կատարվում Յեվայի հետ:

Նա փորձեց խոսել այդ մասին Սենտ-Քլերի հետ, ասաց, վոր աղջիկը գունատվում է, նիհարում, վոր նա համառ ու չոր հազ ունի: Բայց հայրն սկզբում վանեց իրենից աղջկա հիվանդութեան սարսափելի միաքը և սկսեց որիորդ Ոֆելիային համոզել. թե նա չափազանցնում է, թե այդ բոլորը դատարկ բան և, թե աղջիկը բոյ է քաշում ուղղակի, վորով և բացատրվում է նրա գունատութիւնն ու թուլութիւնը:

Սենտ-Քլերն աշխատում էր մխիթարել իրեն, բայց ներքուստ անհանգստանում էր և հուզվում: Նա ուշադիր հետևում էր Յեվային, չէր թողնում իրենից հեռանա, քաղաքից նրա համար դեղորայք էր բերում: Ամենից ավելի նրան անհանգստացնում էր աղջկա լրջութիւնն ու շուտ տպավորվող լինելը: Յեվան հաճախ արտահայտում էր իր մանկական հասակին անհամապատասխան մտքեր ու հայացքներ: Այդպիսի բոպեններին Սենտ-Քլերը հանկարծակի անդիմադրելի վախ էր զգում:

Մի առժամանակ Յեվան իրեն լավ զգաց: Նա կարծես ամբաստանվեց, կարողանում էր նորից գրոսնել և խաղալ Տոպսիի հետ:

Մի անգամ ճաշից հետո Սենտ-Քլերը պատշգամում նըստած՝ ծխում էր: Որիորդ Ոֆելիան ու Յեվան հենց նոր վերադարձել էին զբոսանքից: Հորաքույրը գնաց իր սենյակը զըլգարձել ելին զբոսանքից: Հորաքույրը գնաց իր սենյակը զըլխարկն ու շալը վերցնելու, իսկ փոքրիկ Յեվան աշխուժորեն պատմեց հորը, թե ինչ է տեսել զբոսանքի ժամանակ: Հանկարծ որիորդ Ոֆելիայի սենյակից լավեց զայրացած ձայն և մանկական ճիչ:

— Ով գիտի, Տոպսին ելի անկարգութիւնն է արել,— ասաց Սենտ-Քլերը:

Մի բոպէ անց յերկաց հորաքույրը՝ Տոպսիի ձեռքի քաշելով:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Սենտ-Քլերը:

— Պատահել է այն, վոր յես ել չեմ կարող տանջվել այս աղջկա ձեռքին: Յես սրան փակել եյի իմ սենյակում և կարգադրել, վոր դասը սովորի, իսկ սա, անախտանը, տեսել է, թե վորտեղ եմ դրել պահարանի բանալին. իմ բացակայութեամբ բացել է, դիտարկի կտորը հանել և ափկնիկի համար շորեր ձեւել: Հիմի, ասացեք, ի՞նչ անեմ սրան: Բոլոր միջոցները փորձեցի— սովորեցրի, համոզեցի, պատժեցի— վոչինչ չօգնեց, նա մնացել է ելի առաջվանը:

— Հապա մի այստեղ արի, Տոպսի,— ասաց Սենտ-Քլերը,— ասա տեսնեմ, դու ինչե՞ս յես քեզ այդպէս վատ պահում:

— Յերևի նրա համար, վոր չար սիրտ ունեմ,—պատասխանեց Տոպսին, կլորեկ աչքերը փայլեցնելով,—որիորդ Ֆելիան ասուած է, թե դա չար սրտից է:

— Միթէ չես հասկանում, թե որիորդ Ոֆելիան վորքան շատ բան է արել քեզ համար: Նա քեզ գիր է սովորեցնում, հոգ է տանում քո մասին, իսկ դու բոլորովին չես ուզում ուղղվել:

— Այո,—խոնարհ պատասխանեց Տոպսին,—առաջվա տիրուհիս ել նուզնն եր ասում... Նա ինձ ձեռնում եր սաստիկ, մազերս քաշում—վոչինչ չորհնեց: Կարծում եմ՝ դա նրանից է, վոր յես նեգրուհի յեմ, չեմ կարող ուղղվել: Թեկուզ բոլոր մազերս պոկեն, միևնույն է, չի ոգնի:

— Յես ստիպված պիտի լինեմ գրանից հրաժարվել,—ասաց որիորդ Ոֆելիան,—յես չեմ կարող գրան գաստիարակել:

Յեվան, վոր լուռ ներկա յեր այս տեսարանին, նշան արավ Տոպսիին, և նրանք միասին դուրս գնացին: Տան մի անկյունում գտնվում եր ապակեպատ փոքրիկ պատշգամ, ուր Սենտ-Քլերն առանձնանում եր ընթերցանութւան համար: Աղջիկները գնացին այդտեղ: Սենտ-Քլերը ծածուկ հետեց նրանց և ապակեպատ դռան մոտենալով՝ վարագույրը բարձրացրեց: Մի բոպե անց նա նշան արավ որիորդ Ոֆելիային, վոր նա ևս մոտենա, և յերկուսն էլ սկսեցին նայել ներս: Աղջիկները նստեցին հատակի վրա՝ իրար կողքի, Տոպսին՝ սովորական անհաշտ տեսքով, Յեվան՝ խորին խղճահարուժյան արտահայտությունը դեմքին:

— Տոպսի, ինչո՞ւ չես քեզ այդպես վատ պահում,—ասում եր Յեվան,—ինչո՞ւ չես աշխատում ուղղվել: Միթէ դու վոչվոք չես սիրում, Տոպսի:

— Միրէլ. չես չգիտեմ ել, թե ինչպես կարելի չէ սիրել: Յես սիրում եմ սառը շաքար և ուրիշ մրգեր, ահա բոլորը,—պատասխանեց Տոպսին:

— Բայց դու քո հորն ու մորը սիրել ես, չէ՞:

— Յես չերբեք հայր ու մայր չեմ ունեցել:

— Ճիշտ է, չես այդ մոռացել ելի. բայց գուցե չեղբայր ունես, կամ քույր, կամ մորաքույր...

— Վոչվոք չունեմ և չերբեք ել չեմ ունեցել:

— Բայց, Տոպսի, չեթե աշխատելիք լավանալ, դու կարող ելիր...

— Յես չեմ կարող լավանալ—բացականչեց Տոպսին հուսահատ,—վորովհետև յես սեամորթ եմ: Այ, յեթե կարողանայի

մորթիս փոխել, դառնալ սպիտակ, այն ժամանակ կաշխատելի:

— Բայց միթե չի կարելի սեամորթներին սիրել,—ասաց Յեվան,—չէ՞ վոր որիորդ Ոֆելիան սիրում է քեզ:

Տոպսին բարձրաձայն ծիծաղեց...

— Որիորդ Ոֆելիան. նա ինձ տանել չի կարող: Նա ավելի շուտ ձեռ կտա գորտին, քան թե ինձ: Վոչվոք նեգրերին չի սիրում: Իսկ յես թքել եմ եղպես սիրո վրա,—անսպասելի վերջացրեց Տոպսին և շվճացրեց:

— Տոպսի, խեղճ աղջիկ, չես քեզ սիրում եմ,—գոչեց Յեվան իր փոքրիկ ձեռը նրա ուսին դնելով,—յես սիրում եմ քեզ և ուզում եմ, վոր դու ուղղվես: Յես չերկար չեմ ապրելու, Տոպսի, շուտով մեռնելու յեմ, և դու իմ խաթեր համար պետք է աշխատես լավանալ:

Տոպսի հանդուգն աչքերը լցվեցին արցունքներով, և պայծառ կաթիլները գլորվեցին այտերն իվալը: Նա գլուխն իջեցրեց ծնկներին և լաց չեղավ, իսկ Յեվան շոյեց նրա գանգուր մազերը:

Հորաքույր Ոֆելիան, շփոթված, հեռացավ դռան մոտից:

— Յես միշտ մի տեսակ գարշանքի զգացում եմ ունեցել դեպի նեգրերը,—ասաց նա Սենտ-Քլերին,—վորքան ել աշխատեցի, չկարողացա այդ աղջկան սիրել, բայց չեյի կարծում, թե նա այդ բանը կնկատի:

— Յերեսան միշտ զգում է այդ,—ասաց Սենտ-Քլերը: Յեվա՞ ձեր բոլոր ջանքերը, ձեր բոլոր հոգատարությունը վոչ մի ոգուտ չեն բերի, քանի գարշանքի այդ զգացումը ձեր սրտումն է:

— Չգիտեմ ուղղակի ինչ անեմ,—հոգոց քաշեց հորաքույրը:

— Յեվան, ըստ յերևութին, գիտի,—տուարկեց Սենտ-Քլերը,—ինչպես յերևում է, պետք է նրանից սովորեք:

Մինչ այդ, ժամանակավոր լավացումից հետո, փոքրիկ Յեվայի դրությունը ամառվա վերջին կրկին վատացավ, չնայած դեղերին և հորաքույր Ոֆելիայի հոգածու խնամքին: Յեվան այնպես թուլ էր, վոր այլևս չեր կարողանում քայլել: Նա շարունակ պառկած եր լինում և յերբեմն խնդրում եր թոմասին՝ գլորնակ պառկած եր լինում և յերբեմն խնդրում եր թոմասին: Նա շարունակ կած ման ածել իրեն սենյակում կամ վերանդում: Նա շարունակ մաածում ու խոսում եր իր մոտիկներին և բարեկամներին մասին:

Մի անգամ, հոր հետ առանձին մնալով, Յեվան նրանից խոսք առավ, վոր նա իր մահից հետո ազատություն կտա իր բոլոր ստրուկներին:

Իր մահից միքանի որ առաջ Յեվան պահանջեց, վոր իր սենյակը կանչեն բոլոր ծառաներին: Նա հրաժեշտ տվեց բոլորին. չուրաքանչյուրին միքանի փաղաքշական խոսք ասավ և բաժանեց նրանց իր մազերի խոսպոպները, վոր նրա պահանջով կտրոււմ եր հորաքույր Ոֆելիան:

Յերբ այդ բոլոր ծիսակատարությունից հետո բոլոր ծառաները դուրս չեկան սենյակից, որիորդ Ոֆելիան յետ նայելով, տեսավ՝ Տոպսին կանգնել և անկյունում:

— Դու վիրտեղից յեկար,— հարցրեց նա աղջկան:

— Յես բոլոր ժամանակ այստեղ եյի,— ասաց Տոպսին, արցունքները սրբելով: — Ո՛ր, որիորդ Յեվա, յես շատ վատ աղջիկ եմ յեղել, բայց միթե ինձ վոչինչ չեք տալու:

— Կտամ, խեղճ Տոպսի, իհարկի կտամ. ահա, սո, և ամեն անգամ, յերբ այս մազերին նայես, հիշիր, վոր չես քեզ շատ եյի սիրում և ուզում եյի, վոր դու լավ աղջիկ դառնաս:

— Ո՛ր, որիորդ Յեվա, կաշխատեմ,— լրջորեն ասաց Տոպսին,— բայց այնքան դժվար և լավ աղջիկ դառնալը:

Տոպսին յերեսը ծածկեց գոգնոցով ու լաց չեղավ: Որիորդ Ոֆելիան դուրս բերեց նրան սենյակից:

Միքանի որ հետո Յեվան մեռավ:

Սենտ-Քլերը ցնցվեց աղջկա մահով: Նրան թվում եր, թե կյանքն ել իմաստ չունի այժմ, յերբ իր ամենաթանգազին եակը չկա: Միայն թո՞մասի հետ եր, վոր նա իրեն թեթև ու լավ եր զգում: Նա հաճախ թո՞մասին կանչում եր իր մոտ, զրուցում եր հետը, լսում նրա պարզ, անկեղծ խոսքերը:

Սենտ-Քլերը Յեվային տված իր խոստումը չկատարեց. նա թո՞մասին ազատություն չտվեց— նա սարսափում եր մնալ մենակ, առանց այդ հավատարիմ բարեկամի:

Սենտ-Քլերը, աղջկանից հետո, մի տարի յել չապրեց: Նահիվանդացավ և մեռավ, չկարողանալով ազատության թուղթ տալ թո՞մասին:

Քեռի թո՞մասը մնաց Սենտ-Քլերի տանը: Բայց յերկար չապրեց այդտեղ: Շուտով նրան, ուրիշ միքանի նեղրերի հետ, ծախեցին ստրկավաճառի, և քեռի թո՞մասն ընկավ մի ազահ մարդու ձեռք:

ԳԼՈՒԽ XV

ԱՆՊԱՇՏՊԱՆ ՄԱՐԴԻԿ

Մեծ և լինում այն ստրուկների վիշտը, յերբ նրանք կորցրում են իրենց բարի տիրոջը: Յեվ այդ վիշտը, վոր հասնում և կատարյալ հուսահատության, միանգամայն հասկանալի չե. ավելի անպաշտպան ու թշվառ եակներ, քան ստրուկները նման: տխուր հանգամանքներում, դժվար և գտնել:

Հորից զրկված յերեսան առնվում և հարազատների, մերձավորների և որենքի պաշտպանության տակ. նա հայտնի դիրք ունի և վորոշ իրավունքներ, վորոնք չի կարելի խախտել անպատիժ: Իսկ ստրուկին չեն կարող պաշտպանություն ցույց տալ վոչ հարազատները, վոչ բարեկամները և վոչ ել որենքը, վոր ստրուկին կենդանուց կամ ապրանքից ավելի բարձր չի համարում և վոչնչով նրան չի պաշտպանում: Նրան չի մերժվում միայն մի բան— հոգու և մարմնի վորոշ ցանկություններն ու պահանջները և այդ ել այն չափով, վորչափով հաճելի չե նրա տիրոջ:

Դժբախտաբար, իրենց անսահման իշխանությունն իշարը չզործադրող ստրկատերերի թիվը չատ քիչ և. այդ հայտնի յե ամենքին, մանավանդ ստրկին:

Այժմ կարելի չե յերեակայել, թե ինչ եր կատարվում անսպասելի մեռած Սենտ-Քլերի ստրուկների հետ: Ամբողջ տունը լցված եր հուսահատական լացով ու հեկեկանքով:

Տիկին Սենտ-Քլերը, այս անգամ իսկապես մինչև հոգու խորքը ցնցված, ուշաթափվում եր շարունակ սկսած այն բուպից, յերբ մեռնող մարդուն բերին, և տիկինը հրաժեշտ անգամ չկարողացավ տալ նրան:

Որիորդ Ոֆելիան, ոժտված անսովոր յեռանդով և հաստատուն բնավորությամբ և սովոր լինելով ինքն իրեն տիրել, մեռնող ազգականից չհեռացավ, մինչև նրա հոգին տալը:

Թո՞մասն ամբողջ գիշեր չհեռացավ իր տիրոջ գիակից, մի անգամ իսկ չմտածելով իր սեփական դրության մասին, այն մասին, թե Սենտ-Քլերի մահը միանգամից վերջ և գնում ազատվելու իր բոլոր հույսերին:

Յերբ Սենտ-Քլերի մարմինը հողին հանձնվեց, և բոլորը նորից տարվեցին իրենց հոգսերով, առաջին հերթին զարթնեց այն հարցը, թե ինչ պիտի անել հիմա:

Այդ հարցը պտավում էր շարունակ ջահել այրու գլխում: Իր նյարդային ցնցումներից փոքր ինչ կազդուրված, շրջապատված լացող սպասուհիներով, նա սգազգեստի կտոր ընտրեց իր համար և մտածեց, թե ինքը ինչ անի հիմա, մենակ ու անփորձ մի կին: Նույն հարցն զբաղեցնում էր և որիորդ Ոֆելիային, նա սաստիկ ցանկանում էր հայրենիք վերադառնալ, բայց սիրտ չեր անում այդպիսի մի բոպելին թողնել իր վշտահար ազգականուհուն: Ապաստվորները համար հարցն ուրիշ կերպ էր դրված. նըրանցից ամեն մեկն իրեն հարց էր տալիս, թե ինչ է լինելու իր վիճակը: Լավ իմանալով իրենց տիրուհու բռնակալ ընավորութունը, վորի անսահման իշխանության տակ էլին այժմ, այդ դժբախտ մարդիկ սարսափով էլին նայում իրենց ապագային և վոչինչ չէին անում, բացի անվերջ տանջանքները:

Սենտ-Քլերի մահից յերկու շաբաթ հետո հանկարծ որիորդ Ոֆելիայի սենյակն ընկավ սպասուհի Ռոզան՝ լալով, վրանգլուխն անկարգ և տանջված տեսքով:

— Ո՛ր, տիրուհի,—բացականչեց նա չոքելով և պառավ աղջըկա փեշերը համբուրելով,—տիրուհուս խնդրեցեք... միջնորդեցեք... նա ուզում է ինձ ծեծել տա:

Յեվ ջահել աղջիկը ցույց տվեց որիորդ Ոֆելիային մի դըրութուն, վորով տիկին Սենտ-Քլերն իր խոշոր ձեռագրով խընդրում էր ուղղիչ տան վերատեսչին՝ հրամայել, վոր դրաբեր աղջըկան մորակի տասնուհինգ հարված տան:

— Ինչո՞ւ համար: Դու ինչ ես արել,—հարցրեց որիորդ Ոֆելիան:

— Յես տիրուհուն ոգնում ելի հագուստը չափելու: Նրան թվաց, թե յես ծալքերը այնպես չեմ դրստում, ու ապտակեց ինձ, իսկ յես, տաքարյուն աղջիկ, ասացի, թե մեղավոր չեմ, և կարիք չկար ինձ խփելու: Յես, իհարկե, պետք է լռելի, բայց այնպես մի զզվելի բնավորութուն ունեմ, վոր չեմ կարողանում ինձ պահել, յերբ ինձ հետ անարդար են վարվում... Տիրուհին գոռաց, վոր յես յերես եմ առել, և վոր ինքը կարող է խրատել ինձ իմ համարձակության համար այնպես, վոր ել չմոռանամ: Նա այս թուղթը գրեց և հրամայեց տեղ հասցնել անմիջապես: Իսկ յես գրագետ եմ և թուղթը կարգացի... Ո՛ր, թանգագին տիրուհի,

խղճացեք ինձ, բարեխոսեք... Չե՞ վոր յես այդ տեսակ ծեծի չեմ դիմանա... Ուղղիչ տանն այնպես են խփում, վոր միսը վոսկրից պոկում են:

Որիորդ Ոֆելիան մտախոհ՝ գրութունը ճմրթեց ձեռքում: Նա վաղուց լսել էր արդեն, թե ինչ և կատարվում ուղղիչ տանը, ուր վերատեսուհը և նրա ստորադրյալներն աշխատում էլին միմյանց գերազանցել իրենց զազանային արարքներով: Նա անկեղծորեն խղճում էր թշվառ Ռոզային, վոր նուրբ, քընքուռ և փխրուն աղջիկ էր: Որիորդ Ոֆելիան վրդովվեց այդ կարգադրության համար, սակայն, իրեն հատուկ խոհմուտթյամբ, թագրեց, թե ինչ է կատարվում իր հոգում, և հանգիստ ասաց միայն.

— Դու այստեղ նստիր, մինչև յես կերթամ, կխոսեմ տիրուհուդ հետ:

«Ո՛ր, ինչ սարսափելի յե, ինչ դաժանութուն է: Իսկ յես գեռ խղճում ելի այդ վատ կնկան», քրթմնջում էր որիորդ Ոֆելիան ճանապարհին, այրու հասցեյին:

Յերբ նա ներս մտավ, այրին նստած էր հայելու առաջ: Աղախիններից մեկը սանրում էր նրան, մյուսը չոքած՝ տաքացրած սրբիչով շփում էր նրա վոտները:

— Այսոր ի՞նչպես եք զգում ձեզ,—հարցրեց որիորդ Ոֆելիան, նստելով առաջին պատահած աթոռին:

Ջահել կինն առաջ մի խոր հոգոց քաշեց, հետո աչքերը արբեց թաշկինակով և տանջված ձայնով ասաց.

— Ինչպես միշտ... Իմ գրության մեջ մի՞թե կարելի յե լավ լինել:

— Կլավանաք, հույս ունեմ... Յես յեկել եմ ձեզ մոտ Ռոզայի գործով,—քաջաբար գործի անցավ որիորդ Ոֆելիան:

— Դա ի՞նչ գործ է,—չարությամբ հարցրեց տիկին Սենտ-Քլերը, կարմրելով ու հոնքերը կիտելով:

— Դուք ինքներդ կհասկանաք, թե ինչ գործ է: Բավական է ասեմ, վոր նա գիտակցում է իր հանցանքը և զղջում է:

— Հը՛մ, գիտակցում և զղջում է... Նա դեռ շատ կզղջա և յերկար կհիշի իր հանցանքը: Յես բավական արդեն տարել եմ նրա հպարտութունն ու անբարտավանությունը. այժմ համբուրութունս հատել է, և յես վճռեցի ինչպես հարկն է դաս տալ այդ անամոթ աղջկան... Յես ցույց կտամ նրան, թե ով եմ և կստիպեմ շան նման քաշ դալ իմ առաջ:

պատրաստ ունենա, քան ինքը վաստակի իր ապրուստը: Մա-
նավանդ վոր սովոր է և...

— Ի՞նչպես թե ազատութիւնը ինչին է պետք: Նա հենց
այդ ազատութեան հուսով է ապրում,—չհամբերեց որիորդ ՈՖե-
լիան և ընդհատեց խոսակցին:—Բացի այդ՝ դա նրան խոստաց-
վել է...

— Այդ նեղերը անասուններ են,—չարութեամբ ճշաց աչ-
քին, վտարով Ձենին հրելով, վոր բավական մտեցել էր նրան,
բերած կտորները կարգի բերելու:—Դրանք յերբեք վոչ մի բա-
նից գոհ չեն, թեկուզ վտտից գլուխ վոսկի հագցրու նրանց... Միշտ
այն են ուզում, ինչ չեն կարող ստանալ... Առհասարակ սկզբուն-
քով դեմ եմ յես ստրուկներին ազատութեան, և իմոնցից հլ յեր-
բեք վոչ մեկին բաց չեմ թողնի. դա կանեմ միայն այն դեպ-
քում, յեթե նեգրն ինքը վճարի ինձ շուկայի գինը: Նեգրերը
վորեք բանի պիտանի չեն այն ժամանակ միայն, յերբ տերերի
հսկողութեան ու խնամքի տակ են լինում, բայց տվեք նրանց
ազատութիւն, նրանք իսկուչն սկսում են ծուլանալ, հարբեցո-
ղութեամբ զբաղվել և անառակութիւն անել, հասնում են ան-
բարոյութեան վերջին աստիճանին և, պարզ է, կոտորվում, վո-
չընչանում են վորդերի պես: Յես հարչուրավոր դեպքեր եմ տեսել
և գտնում եմ, յես վատ վարված կլինեցի, յեթե իմ ստրուկ-
ներից վորեք մեկին իր համար ֆլասակար ազատութիւն տայի:

— Բայց թո՞մասը մյուսներին նման չի: Նա այնպիսի վարքի
տեր է, այնքան գործունայ, վոր նրանից չպետք է վախենալ:
Նա իր ազատութիւնը ի չարը չի գործադրի:

— Ա՛խ, ՈՖելիա, վորքան միամիտ եք, չնայած ձեր տա-
րիքին... Հավատացեք իմ փորձառութեանը, վոր ձեռք եմ բերել
նեգրերի հետ մշտապես շփվելուց. նեգրերից ամենալավերը լավ
են այնքան ժամանակ միայն, քանի դեռ ուրիշը զավազանի տակ
են. հեռացրիք—նրանք իսկուչն յերես են առնում և փչանում:
Լավ եմ ճանաչում դրանց:

— Բայց մտածեցեք, Մերի, յեթե դուք թո՞մասին աճուրդի
հանեք, նա կարող է վատ մարդկանց ձեռ ընկնել, իսկ մի՞թե նա
արժանի չէ այդ բանին:

— Դատարկ բան է,—խստորեն ասաց համառ կինը:—Հիսուն
դեպքից մեկն է պատահում, յերբ լավ ստրուկը վատ մարդու
ձեռ է ընկնում: Ինչ ուզում են ասեն—տերերի մեծամասնու-
թիւնը լավ մարդիկ են և իզուր տեղը վոչվորքի չեն վերավո-
րում: Չե, այդ կողմից հանգիստ չեղեք:

— Դե լավ, թող այդպես լինի,—ասաց որիորդ ՈՖելիան, վճռե-
լով անձնատուր չլինել մինչև վերջին հնարավորութիւնը:— Բաց
դուք պետք է նկատի ունենաք մեր թանգազին Ավգուստինի վեր-
ջին ցանկութիւնը, այն է՝ թո՞մասին ազատութիւն տալ. նա
այդ բանը խոստացել է Յեվային, վորը մեռնելիս հորը խնդրել
է այդ մասին: Մի՞թե դուք սիրտ կանեք հակառակ գնալ յերկու
հանգուցյալի կամքին:

— Իսկ դուք մի՞թե չեք ամաչում, վոր իմ սիրտը կտըր-
տում եք իմ սարսափելի կորուստները հիշեցնելով. — բացական-
չեց ջահել կինը, յեռանդով հոտ քաշելով ձեռի սրվակից:— Տեր
աստված, վորքան դժբախտ եմ,—չարունակեց նա, գլուխը բար-
ձին դնելով և ժամանակ առ ժամանակ հեկեկալով:—Ի՞նչուրը դեմ
են ինձ... Ի՞նչուրը տանջում են ինձ, հարձակվում են ինձ վրա... Հա-
ղիվ սրտիս վերքերը միքիչ վրա չեն գալիս, նորից բաց են ա-
նում անխիղճ ձեռով, վորպեսզի հրճվեն, թե ինչպես սիրտս ար-
նաքամ լինում... Չեզանից, համենայն դեպս, որիորդ, ավելի
վշտակցութիւն ու նրբանկատութիւն ելի սպասում, բայց դուք
մյուսներից վոչնչով լավ չեք... Նուչնպես պատրաստ եք ինձ
տանջել... Յես յերկու սարսափելի կորուստ եմ ունեցել. կարծում
եմ, կարելի չէ խղճալ ինձ, աջակցել և մխիթարել իմ սարսափե-
լի վշտի մեջ, բայց չե: Անգամ դուք, ազգականուհի, կարծես
դիտմամբ, ամեն բոպե իմ մեջ զարթեցնում եք տխուր հիշողու-
թիւններ, թեև պիտի հասկանալիք, վոր դրանով վերջնականա-
պես տանջում եք ինձ... Ո՛ր, վորքան անզգա յեն մարդիկ:

Ջահել կինն սկսեց գլուխը խփել բարձերին, գոռալ վայրե-
նի ձայնով, ծղրտալ, քրքրալ, կոկորդը բռնել աչնպես, կարծես
խեղդվում էր: Մի խոսքով՝ նորից նյարդաչին հուզմունքի մեջ
ընկավ: Գլուխը բարձերին խփելով՝ նա պահանջում էր, վոր լու-
սամուտը բաց անեն, քունքերը շփեն, կրծքի կոճակներն արձա-
կեն և ալին:

Տեսնելով վոչ մի արդյունքի չի հասնելու, որիորդ ՈՖելիան
տխուր սրտով հեռացալ իր սենյակը: Պարզ էր, վոր տղ համառ
կինը վոչ մի կերպ չի համաձայնի թո՞մասին ազատութիւն տալ,
իսկ յեթե պատին սեղմեր, նա նորից դիմելու յեր իր սովորա-
կան գենքին—խսեղիկային. վերջիվերջո հաղթելու յեր ելի նա:

Յեվ իսկապես, որիորդ ՈՖելիայի հետեւյալ յերկու փորձն
էլ նուչն վախճանն ունեցան, ինչ վոր ասալինը:

Մտածելով, թե ել ինչ կարելի չէ անել թո՞մասի համար,

պառավ որիորդը վորոշեց նամակ գրել տիկին Շելլերին՝ թոմասի տխուր դրուժյան մասին և խնդրել, վոր նա ոգնության հասնի։ Նա այդ բանն արավ հենց այն օրը, յերթ թոմասին, Սենտ-Քլերի-մյուս ստրուկների հետ, ուղարկեցին շուկա։

ԳԼՈՒԽ XVI

ԼԻՋԱՅԻ ՅԵՎ ՋՈՐՋԻ ՓԱԽՈՒՍԸ ԿԱՆԱԴԱ

Տրոմպի ընտանիքը, ուր թագնվեց Լիզան իր փախուստից անմիջապես հետո, փախստականին ուղարկեց հարևան նահանգը։ Այստեղ Լիզան տեղավորվեց գյուղում, մի բարեսիրտ գյուղացու ընտանիքում։ Պատահաբար գյուղում հայտնվեց և Ջորջը, Լիզայի ամուսինը, վոր փախել էր իր խտասիրտ տիրոջից։

Բայց գյուղում քնալ անկարելի չէր։ Ջորջին սաստիկ հետևում, հալածում էին։ Նա այդ գիտեր և ստիպված էր շտապել հեռու։ Պետք էր վորքան կարելի յե շուտով հասնել Կանադա, ուր նեղրերն ազատ էին, և ուր նրանք կարող էին կատարելապես անվտանգ զգալ իրենց։ Վորոշվեց չերեկոյան հանգստանալ և գիշերը վրա հասնելուն պես ճանապարհ ընկնել։

Յերեկոյան յեկավ Ֆենչաս Ֆլետչերը, վոր հանձն էր առել Ջորջին և Լիզային՝ յերեխալով հանդերձ՝ տանելու։ Նա հայտնեց կարեոր նորություններ. մի օր առաջ, յետ ընկած մի ճաշարանում ընթրելիս պատահաբար լսել էր միքանի մարդու խոսակցություն, թե Լիզայի հետքը գտել են և թե հետևյալ օրն իսկ աշխատելու չեն բռնել նրան՝ յերեխայի հետ միասին։

— Դուք անմիջապես պետք է փախչեք, — ասած Ֆլետչերը։ — Յես հանձն եմ առնում ձեր առաջնորդը լինելու։

— Յես չեմ ուզում ձեզ վտանգի չենթարկել, — պատասխանեց Ջորջը, — տվեք մենակ ձեր սայլակը, մենք չերկուստղամարդ ենք — չես ու նեգր Ջիմը։ Մենք կարող ենք զինքը ձեռներևս ճանապարհ բացել մեզ համար։

— Այդպես, այդպես, — ասաց Ֆլետչերը, — կովելը սիրով թողնում եմ ձեզ, բայց ճանապարհը յես ձեզանից լավ գիտեմ։

Վորովհետև տանտերն էլ խորհուրդ տվեց չհրաժարվել Ֆլետչերի աջակցութունից, ուստի Ջորջը վորոշեց վերցնել նրան վորպես առաջնորդ։

Շուտով, ընթրիքից հետո, գլուխը ծածկած մի մեծ սայլակ

մոտեցավ տանը։ Գիշերն աստղալույս էր, և Ֆլետչերն արագ ցած իջավ, վոր ճամպորդներին ողնի նստելու։ Ջորջը՝ չերեխան գրկին և Լիզան դուրս յեկան տնից բարի տանտերերի ուղեկցությամբ։ Սայլակում նստած էլին ևս չերկուստղամարդ։ Չհեղ նեգր Ջիմը՝ իր պառավ մոր հետ։ Թե Ջիմը և թե Ջորջը լավ զինված էլին և պատրաստ, յեթե հարկ լինի, իրենց կյանքն ու ազատությունը պաշտպանելու։

Ֆլետչերն աշխատում էր վորքան կարելի յե լավ տեղավորել ճամպորդներին, վորովհետև ամբողջ գիշեր ճամպա էլին կտրելու վատ, քարքարոտ ճանապարհով։ Նա առաջակողմի նըստարանը ծածկեց գոմշի կաշիներով և այդտեղ նստեցրեց կանանց ու փոքրիկ Գարրիին։ Ջորջն ու Ջիմը տեղավորվեցին նրանց դիմաց յետին չոր նստարանի վրա, իսկ Ֆլետչերը բարձրացավ սայլի առաջակողմը։ Հրաժեշտի միքանի խոսքեր, մի-ծրացավ սայլի առաջակողմը։ Հրաժեշտի միքանի խոսքեր, մի-քանի ցանկություններ, — և սայլակը ճանապարհ ընկավ։ Յերեխան շուտով քնեց մոր ծնկներին։ Թշվառ, վախեցած պառավը փոքր ինչ հանգստացավ, և նույնիսկ Լիզան սկսեց ննջել, չնայած իր անհանգիստ մտքերին։

Գիշերվա ժամը 3-ի մոտ փախստականները ձիու վոտնատրոփ լսեցին իրենց յետևից։ Դա Կոոսն էր արշավում, Ֆլետչերի բարեկամը, վորին Ֆլետչերը խնդրել էր հետախույզի գեր կատարել և, հետապնդողներ տեսնելու դեպքում, վաղորոք զգուշացնել փախստականներին։ Չիավորը շուտով յերեաց։ Յերը նա մոտեցավ, Ֆլետչերն իսկույն կեթ ճանաչեց նրան և սայլակը կանգնեցրեց։

— Ի՞նչ կա, — հարցրեց Ֆլետչերը։
— Հետապնդողները շատ մոտիկ են, — ասաց Կոոսը. — տասը հոգի չեն. բոլորը հարբած և գալլի պես կատաղած։
Ֆլետչերը ձիերին հնչ տվեց։ Հետապնդողները բոլորովին մոտ էլին արդեն։ Բայց հանկարծ փախչողների առաջ ժայռեր ցցվեցին։

Ֆլետչերը լավ ծանոթ էր այդտեղին, դրա համար էլ շտապեց հասնել նրան։

— Դուրս չեկեք շուտով, մի դանդաղեք, — հրամայեց Ֆլետչերը, — ինչ գու, Կոոս, զնա հարևանի մոտ և ոգնություն խնդրիր։

Բոլորը դուրս թռան սայլակից։ Կոոսն իր ձին կապեց սալակից և վագեց։ Ֆլետչերը չերեխան ձեռն առավ և անցավ։ Նա,

ցանկապատը ճեղքելով, գնաց դեպի ժայռերը: Ճամպորդները տեսան այժմ մի նեղ արահետ, վոր տանում եր ժայռի կատարը:

— Յեկեք իմ յետևից, — հրամայեց Ֆլետչերը, — մեր վորսորդական հին բունն այստեղ է: Յեկեք:

Նա յերեխան ձեռին գնում եր առջևից և աջձամի ճարպկությամբ մի ժայռից մյուսին եր թռչում: Նրան հետևում եր Ջիմը՝ դողահար մորը շալակած, իսկ Ջորջն ու Լիզան գնում եյին բոլորի յետևից: Հետապնդողները մոտեցան ժայռին և կանչվում ատոցներով ու հայհոյանքներով սկսեցին վեր բարձրանալ: Միքանի ըսպելուց փախստականները հասան ժայռի կատարը: Այդտեղից արահետը գնում եր նեղ կիրճով, ուր կարելի չեր առաջ գնալ միայն իծաշարուկ, և անսպասելի տարավ-հասցրեց նրանց մի փոսի, մի արշին լայնութուն ունեցող ճեղքվածքի, վորի աջ կողմը բարձրանում եյին մի խումբ ժայռեր, վորոնց կատարը ունեւր բավական ընդարձակ տարածութուն:

Ֆլետչերը թեթև կերպով թռավ ճեղքվածքի մյուս կողմը և չերեխային դրեց ժայռի գլխին, վոր ծածկված եր փափուկ, գանգուր մամուռով:

— Շուտ, — ձայն տվեց նա, — թոեք, յեթե կյանքներդ թանգ ե ձեզ համար, — և բոլորը, մեկը մյուսի յետևից թռան ճեղքվածքի վրայից: Ժայռի գլխին գտնվող միքանի քար պաշտպանում եյին փախստականներին ներքև կանգնածների աչքից:

— Թող հիմի փորձեն վերև բարձրանալ, — ասաց Ջորջը: — Այստեղից նշան բռնելը շատ հարժար է, — և նա ատրճանակը ձեռին կանգնեց ճեղքվածքի ափին:

Հետապնդողների խումբը կազմված եր յերկու վոստիկանից, միքանի հարբած մարդուց և յերկու մաքսանենգից՝ Լոկերից և Մարքսից, վորոնց Գելին վարձել եր՝ Լիզային ու յերեխային բռնելու համար:

Այն ժամանակ, յերբ մարդիկ ներքև խորհրդակցում եյին բարձրանալ վերև թե վոչ, ժայռի կատարին յերևաց Ջորջը և ձայն տվեց նրանց.

— Ո՞վ եք դուք և ի՞նչ եք ուղում:

— Մենք փնտռում ենք փախստական նեգրերին՝ Ջորջին ու Լիզային, և նրանց վորդուն, նույնպէս և Ջիմին: Մեզ հետ վոստիկանութուն կա:

— Յես Ջորջն եմ: Բայց կենդանի չեմ հանձնվի: Յեով ով վոր ձեզնից մոտենա — կսպանվի:

— Մեռածի համար ել նույնքան կտանանք, վորքան կենդանի ֆնացածի, — ասաց Մարքսը և կրակեց:

Գնդակն անցավ, վոչվոքի չվերավորելով:

Լոկերն շտապով ժայռը բարձրացավ, նրա յետևից և մյուսները: Ջորջը կրակեց և Լոկերին վերավորեց: Բայց նա, չնայած վերքին, թռավ ճեղքվածքի մյուս կողմը: Բայց Ֆլետչերն արագ շարժումով հրեց նրան, և Լոկերն ընկավ խորխորատը՝ և մի բուշարժումով հրեց նրա հեծեծանքը յերեսուն վոտնաչափ խորութունից: պելից լավեց նրա հեծեծանքը յերեսուն վոտնաչափ խորութունից:

Նա կարող եր տեղնուտեղը մեռնել, բայց, բարեբախտաբար, ծառի ճյուղերը բռնեցին նրա հագուստը, և այդ բանը թուլացրեց անկման թափը:

Յերբ մյուս հետապնդողները տեսան, թե ինչ պատահեց Լոկերին, շտապեցին հեռանալ:

Վոչ Ջորջը, վոչ Ֆլետչերը վրիժառու մարդիկ չեյին և, յերբ հետապնդողները հեռացան, նրանք իջան փոսը, այնտեղից հանեցին ծանր վիրավորված Լոկերին և սայլ նստեցրին: Այնուհետև Ֆլետչերը Լոկերին տարավ հարևան ագարակը և վիրավորին հանձնեց մի սրտացավ պառավի խնամքին:

Նույն ագարակում ապաստան գտան նաև Ջորջն ու կինը: Լոկերին պառկեցրին մաքուր անկողնում, և նա զարմացավ, վոր գտնվել են մարդիկ, վորոնք իրեն վերաբերվել են յեղբայրական սիրով ու կարեկցութեամբ: Միքանի ժամանակից հետո նա սկսեց լավանալ և խոսել իրեն խնամող պառավի հետ:

Մի որ նա հարցրեց անվճարական ձայնով.

— Փախստականները դեռ այստեղ են:

— Այստեղ են:

— Հըմ... Խորհուրդ տվեք շուտով հեռանան աչստեղից և անցնեն լիճը: Միայն այնտեղ կարող են ապահով լինել:

— Լավ, — անվրդով պատասխանեց պառավը:

Լոկերի նախազգուշացումը իզուր չանցավ փախստականների համար: Նույն որը յերեկույան նրանք հրաժեշտ տվին իրենց հյուրընկալ տանտիրոջ և ճանապարհ ընկան: Նրանք բոլորը հողմված եյին այնպես, վոր դժվար եր ճանաչել: Ավելի ապահով լինելու համար խումբը բաժանվեց յերկու մասի: Առաջ ճամպա ընկան Ջիմն ու մայրը, իսկ միքանի ժամ հետո՝ Ջորջն ու Լիզան՝ իրենց յերեխայով: Սանդուկում փախստականները ապահով տեղ գտան մի աղանդավոր անդլիացու տան: Հետևյալ որվա առավոտը լճից պիտի անցնելին աղատության յերկիրը:

Ազատութիւնն: Ի՞նչ մոզական խոսք: Շատերի համար այդ դատարկ բառն է միայն. բայց ինչո՞ւ չե՞ մարդկանց սիրաբար դողում այդ խոսքը լսելիս: Այս խոսքի համար ինչո՞ւ չե՞ այնքան արշուճ թափվել աշխարհում և քաջութիւնն ու հերոսութիւնն կատարվել: Հիշեցե՛ք, հպարտ ամերիկացիներ, թե՛ ձեր լավագույն մարդկանցից ու կանանցից քանի՞սն են ընկել կռիւի դաշտում այդ խոսքի համար, և խոստովանեցե՛ք, վերջապէս, վոր ձեզանից ե կախված միայն, վոր այդ խոսքը դատարկ հնչչուն չմնա: Մի մոռանաք չերբեք, վոր բանն աջն չե՛ միայն, վոր ամբողջ ազգն իրեն ազատ համարի և պարծենա դրանով: Հարկավոր ե, վոր չուրաքանչյուր առանձին մարդ նույնպէս, այդ ազգի մեջ, իրեն միանգամայն ազատ դգա:

Ձեր հայրերի աչքում ազատութիւնն այն եր, վոր ազգը վո՛չ-վոքից կախում չունենա, ապրի իր որենքներով ու հաստատութիւններով, իսկ այս ջահել մարդու՝ Ջորջի համար, վոր կանգնած ե մեր առջև ձեռները լայն կրծքին ծալած, ազատութիւնը այն ե, վոր ինքը շղթակապ չլինի և խայտառակ պատժի չենթարկվի. վոր իրավունք ունենա իր ընտրած կցանքի ընկերուհուն կին անվանելու և նրան ուրիշների բռնութիւնից ու կամայականութիւնից պաշտպանելու. վոր պահպանի և դաստիարակի իր չերեխային, յերկուց չկրելով ամեն բոպե, թե՛ նրան կխլն իրենից և կծախեն. վոր, վերջապէս, ունենա իր ազատութիւնը, իր տունը, ինքն աշխատի միայն իր համար ու իր ընտանիքի, այլ վո՛չ թե Գարրիսի նման հրեշի:

Այս բոլոր մտքերը պաշարել և հուզում ելին Ջորջին, յերբ նայում եր, թե ինչպէս կինը, տղամարդու շորեր հագած, կանգնել եր հայելու առաջ և պատրաստվում եր յերկար մազերը կտրելու, վորպէսզի նրանք տղամարդու գլխարկի տակ չնկատվին:

Չահել կինը այն տնից, ուր պառկած եր Լոկերը, դուրս եր չեկել տղամարդու հագուստով. այդ հագուստը տվել եր նրան տանտիրոջ վորդին, բայց մազերը կտրել չեր կարողացել, հուշար գնելով գիշերվա խավարի վրա: Այժմ, ցերեկով, անկարելի յեր թողնել:

— Ջորջ, ախր ամառս են, ի՞նչպէս կտրեմ, — հոգոց քաշելով ասաց Լիզան, հավաքելով իր թավշանման մազերը, վոր հառնում ելին մինչև կրունկները:

Յերիտասարդը, պատասխանի փոխարեն, տխրութեամբ նայեց միայն կնոջ իսկապէս գեղեցիկ մազերին և լուռ յետ դար-

ձափ: Լիզան մի անգամ ևս հոգոց քաշեց, վերցրեց առջևը՝ սեղանին դրած մկրատը և ամսոսանքով սկսեց կտրտել մազերը, վոր ընկնում ելին նրա շուրջը՝ հատակին և իսկույն ևեթ ողակվում վոսկեփայլ ոձերի նման:

— Ե՛հ, վերջացավ, — ասաց Լիզան, չերբ մազերի վերջին փունջն ել ընկավ: — Կարգին տղա դառա, այնպէս չի՞, Ջորջ, — կարմրելով ու ծիծաղելով ավելացրեց նա, ձեռը խուզած գլուխը քսելով:

— Դու միշտ ել, ամեն հագուստի մեջ ել լավ ես, սիրելիս, — պատասխանեց Ջորջը, նրանով հիացած:

— Բայց դու ինչո՞ւ տխուր ես այդպէս, — շարունակեց Լիզան, չոքելով մարդու առաջ և այտը նրա ձեռին սեղմելով: — Չի՞ վոր ազատութիւնը մոտ ե. նավով որ ու գիշերվա ճամպաջե մնում միայն... Յերեակալիք, Ջորջ, վաղն արդեն կանազա չենք լինելու... դրախտում:

— Իսկ չեթե հանկարծ այդ դրախտը չընկնե՞նք, Լիզա: Հանկարծ մեզ բռնեն նրա, այսպէս ասած, դռների մոտ: Այդ միտքն ե սհա, վոր դբողեցնում ե ինձ: Ո՛ր, չեթե այդպէս բան պատահի, լիս ել չեմ դիմանա: Դա կլինի վերջին ծանր հարվածը:

— Մի վախի, սիրելիս, — վստահ ձայնով ասաց Չահել կինը, ձեռները նրա վզովը պատ տալով: — Յես զգում եմ, վոր փրկվելու չենք:

— Այո, յես ել ուզում եմ հավատալ, վոր կփրկվինք, — բացականչեց Ջորջը, սիրով նայելով կնոջ գեղեցիկ աչքերին: — Մի՞թե մեր ստրկութիւնը վերջացավ իր բոլոր տանջանքներով ու ստուրացումներով: Մի՞թե ազատ պիտի լինենք յերկնքի թռչունների պէս...

— Կլինենք, Ջորջ, յես հավատացած եմ, — ասաց Լիզան հուսալից ձայնով: — Ներքին մի ձայն ասում ե ինձ, վոր շուտով մեր տանջանքները կվերջանան, և մենք կապրենք իսկական մարդու նման:

— Այո, Լիզա, ճիշտ ես ասում. նույնպէս չեմ կասկածում, — ասաց չերիտասարդը, կնոջը համբուրելով: — Իսկապէս, — շարունակեց նա ուրախ տոնով և կնոջն իրենից փոքր ինչ հեռացնելով, — դու կարգին տղա յես. կարճ մազերը քեզ չերկարից ավելի լավ են սագում... Դե, ճամպա ընկնենք: Գլխարկդ միտքի թեք գիր... այ այդպէս... Շատ լավ ե: Վախենամ թե ճանապարհին պատահող կանայք սիրահարվեն քեզ վրա... Բայց ինչո՞ւ կտրեմ չի գալիս: Գարրին ել, յերեկ...

Այդ բոլորին դուռը բացվեց, և սենյակ մտավ տարիքավոր մի կին՝ Գարրիի ձեռից բռնած: Գարրիին աղջկա շորեր էին հապցրել:

— Ախ, ինչ սիրուն է,— բացականչեց Լիզան, ձեռները տարածելով:— Ձորջ, արի սրա անունը դենք Գարրիետ... Յեկ աչտեղ, Գարրիետ ջան,— շարունակեց մայրը, չերեխային իր մոտ կանչելով:

Բայց չերեխան տեղից չեր շարժվում. նա տարակուսանքով նայում էր ջահել, անձանոթ «քեռուն», վորը, սակայն, աչքերով ու ձայնով այնպես հիշեցնում էր մայրիկին, բայց և այնպես, չերեխի, «ոտար քեռի» չեր: Յերբ ծնողները դուրս չեկան ազարակից, չերեխան արդեն քնած էր, այդ պատճառով չեր կարող նկատել, վոր մայրը տղամարդու շոր է հագել: Այժմ նա շփոթված ու ալլալված կախվում էր իրեն ներս բերող կնոջ փեշերից և քիչ էր մնում լաց լինի, մտածելով, թե մայրը տեղ է գնացել առանց իրեն: Վորովհետև նրա համար տեղ չկար այն փոքրիկ սենյակում, վորը հատկացրել էին Ձորջին ու Լիզային, այդ պատճառով նա գիշերն անցրել էր տիրուհու մոտ, վորը նրան աղջկա շորեր հազցնելով՝ ասել էր, թե դա արվում է նրա համար, վոր «չար քեռին» չճանաչի նրան և մորից չխլի:

— Դու ուրեմն մայրիկիդ չես ճանաչում,— ծիծաղելով ասաց Լիզան, դեպի չերեխան գնալով:

— Ախ, Լիզա,— թեթև հանդիմանանքով կամացուկ ասաց Ձորջը, կնոջ թեք բռնելով:— Այդ լավ է, վոր քեզ չի ճանաչում. քեզ չի մոտենա և այդպիսով չի մատնի մեզ... Տես, այս քեռին ինչքան նման է մայրիկին, այնպես չե՞, Գարրի,— դիմեց նա վորդուն:— Մայրիկն առաջուց գնացել է և դրան ուղարկել է մեր չետերից: Բայց միտդ պահիր, վոր դու ել տղա Գարրին չես, այլ աղջիկ ես, անունդ Գարրիետ: Յեթե մոռանաս, չար մարդագալը կտանի և կուտի քեզ:

Տղան անխոս գլխով արավ և, հորը մոտենալով, դարձացած նախեց նոր ջահել «քեռուն»:

— Ձորջ,— ասաց Լիզան,— ցույց տուր, թե ինչպես պետք է վերարկուն դրեմ ուսերիս... Այսպես,— ասաց նա տղամարդու վերարկուն ուսերին դրելով և հայելու առջև պտտվելով:

— Այդպես, այդպես,— ծիծաղելով պատասխանեց Ձորջը, ձեռը նրա մեջքին խփելով:

— Իսկ ինչպես պետք է մեծ քայլեր անեմ և ինչպես

պետք է ձեռքերս պահեմ: Այսպես,— ասաց ջահել կինը, անելով համապատասխան, բայց շատ ծիծաղելի շարժումներ:

— Ձե, չե, այդպես չե,— ուրախ առարկեց Ձորջը:— Հիշիր, վոր դու չերիտասարդ տղա յես, հանգիստ և համեստ բնավորության տեր, այն ժամանակ դժվար չի լինի բնական դիրք ընդունել:

— Իսկ ձեռնոցներս ուր են... Ախ, հրես: Տեր աստված, ինչ խոշոր են: Մեկի մեջ չերկու ձեռս ել կտեղավորվի:

— Վոչինչ: Լավ է, վոր մեծ են, թե չե տեսողը կկասկածեր: Տիկին Սմիտին կխնդրենք՝ միքիչ բամբակ տա՝ մեջները դնես:

— Հիմի կրերեմ,— ասաց տարիքավոր կինը, վոր ժպտալով նայում էր այդ տեսարանին:— Ասենք, յես ել հագնվեմ, վոր իբրև ձեր հորաքույրը ճանապարհ դնեմ ձեզ... Հրեն կառքն ել դալիս ե: Գնանք, Գարրիետ ջան, գլխարկդ դնեմ ու կառքով տանեմ քեզ մայրիկիդ մոտ,— դիմեց նա Գարրիին ու բռնեց նրա ձեռը: Յերեխան անխոս հետեց նրան, բնագդաբար զգալով, վոր իբ փրկությունն այդ բարի հորաքույր ձեռին է:

Միքանի բոլոր անց բոլորն արդեն կառքի մեջ էին, վորը տանելու չեր նրանց նավահանգիստ:

Տիկին Սմիտը մի փոքրիկ կալվածք ուներ Կանադայում, ուր և տանում էր փախտականներին: Ձորջն ու Լիզան ճանապարհին նրա ազգականները պիտի ձևանային, իսկ Գարրին՝ թողը, անհայր, անմայր վորը, նրա խնամքին փնայած:

Յերբ կառքը նավահանգիստ հասավ, Ձորջն ու Լիզան ցած թռան, հետո իջեցրին «հորաքույր» և աղջկա շորեր հագած վորդուն և, առանց շտապելու, կամրջակով անցան մտան նավը: Մինչ Լիզան տիկին Սմիտին և «թուանը» տարավ կանանց սենյակը, Ձորջը սրտատրոփ մոտեցավ դրամարկլին՝ տոմսակ գնելու և ճամպորդների գրքում արձանագրվելու: Հերթի կանգնած՝ նա լսեց, թե ինչպես մեկն ասում էր.

— Յես բոլոր նավամոտողներին նայեցի, բայց ձեր փախուստականների նման մարդ չնկատեցի:

Ձորջը նախեց խոսողին և հագուստից ճանաչեց, վոր նա ծովային վոստիկանության ծառայող էր, իսկ նրա խոսակիցը՝ իրենց հետապնդող Մարքսն էր, վիրավորված Լոկերի ընկերը, վոր վորսորդական շան հոտառությամբ փախստականներին հետևե էր մինչև այս կետը:

— Նրանց սպիտակներից դժվար է դանադանել, մտնավանդ
Վնոճը,—ասաց Մարքսը:— Բայց նա, վորն այդ կնոջ մարդն է
կոչվում, աջ թևին խարանած կնիք ունի, վորով նրան կարելի
չէ ճանաչել:

Ջորջի ձեռքը, վոր այդ բոպեյին դրամարկից ստացած փողի
մնացորդը գրել էր գրպանը, դողաց ակամա: Բայց չբրիտասարդն
խսկույն կեթ տիրեց իրեն: Առանց շտապելու շուռ չեկավ, ան-
տարբեր հայացքով նայեց խոսողներին և կամաց անցավ տախ-
տակամածով, վորոնելով Լիզային, վորն արդեն սպասում էր
նրան կայուտի կողքին:

Շուտով հնչեց կամրջակները վերցնելու ազդանշանը, և
Ջորջը ներքին ուրախութեամբ նկատեց, թե ինչպես Մարքսն ու
վոստիկանական գործակալն շտապեցին ափ իջնել: Դրանից հետո
մեքենավարը սուլեց, և նավը հանդարտ հեռացավ նավահանգստից:
Փախստականները փրկվեցին: Վորպեսզի ակամա չմտնեն իրենց
ուրախութունը, նրանք, առանց միմյանց նայելու, շտապեցին
հեռանալ տարբեր կողմեր:

Հիանալի սր էր: Երբ լճի կապույտ ակիքները շողշողում է-
լին արևի տակ: Փչում էր թեթև թարմացնող զեփուռ:

Ո՛, վորքան գաղտնիքներ ունի մարդկային հոգին: Ո՞վ կա-
րող է գուշակել, թե ինչ էր կատարվում Ջորջի հոգում այն ժա-
մանակ, չերբ նա արտաքուստ հանդիստ և շինծու անտարբերու-
թեամբ մտանցավ տախտակամած չեկած տիկին Սմիտին, վորն
իր թոռանը խողալիքներով ու քաղցր բաներով զբաղեցնելով,
գուրս էր չեկել «ազգականներին» նայելու: Այդքան ջանքերից
հետո ձեռք բերած չերջանկութունը չբրիտասարդին այնքան մեծ
էր թվում, վոր ամեն բոպե սպասում էր, թե ծխի պես կցնդի:
Մինչդեռ նա վոչ մի մկանով իր վախը չէր մատնում, աշխատե-
լով նայել այնպես, կարծես թե մտքումը վոչինչ չկա, բացի գե-
ղեցիկ չեղանակի պատճառած բավականութունից: Նույնը կա-
տարվում էր Լիզայի հետ, վորը մոտեցավ Ջորջին, ոգավելով ան-
վանյալ հորաքրոջ ներկայութունից: Ջահել կինը նույնպես շատ
լավ էր կատարում իր դերը:

Մինչ այդ նավը գնում էր առաջ, ժամերը թռչում էլին:
Վերջապես, չերկացին որհնված Կանադայի ափերը, չերկաց բո-
լոր դժբախտների ազատության չերկիրը, դժբախտներ, վոր հե-
ծում էլին սարկության խայտառակ և տանջող լծի տակ:

Ահա և Ամգերստերեզ քաղաքի նավահանգիստը: Տիկին

Սմիտի ձեռքը բռնած՝ Ջորջը մեքենայորեն սկսեց ափ իջնել:
Յերիտասարդին կարծես անթափանցիլ մշուշ էր պատել, վորի
միջից նա վոչինչ չէր տեսնում պարզ: Լավ է, վոր նրա ուղե-
կցուհին հասկացավ, թե ինչ է կատարվում նրա հոգում, և ան-
նկատելի զեկավարեց նրա քայլերը, այլապես նա կարող էր մարդ
տրորել կամ ընկնել ուրիշի վոտների տակ: Լիզան տանում էր
Դարրիին. նա նախապես շնջացել էր չերկխային, վոր լու մինչ-
և նավից իջնելը:

Տիկին Սմիտը վարձեց հարմար մի կառք և իր հովանավո-
րյալներին տարավ մի ծանոթ միսինարի տուն, ուր շատ փա-
խստականներ ելին պահվել զանազան ժամանակ: Իր կալվածքը
դեռ հեռու չէր, այդ պատճառով բարի կինը չբրիտասարդներին
հնարավորութուն տվեց հանդստանալ իրենց հուզումից, նախ-
քան այնտեղ գնալը:

Յերբ ամուսինները, վերջապես, մենակ մնացին իրենց ս-
պահով ապաստարանում, նրանք ուրախության արցունքներով
նետվեցին միմյանց գրկի: Իրենց զգացումներին ազատութուն
տալով անկապ բացականչութունների, զրկախառնումների, համ-
բուշրների ու արցունքների միջոցով, նրանք սկսեցին փաշփա-
յել ու համբուրել տարակուսած չերկխային և բացատրել այն
բոլորը, ինչ անհասկանալի չէր նրան:

Ո՛, ինչ մեծ չերջանկութուն է ազատութունը: Յեվ ազա-
տության ցանկութունը միթե մարդու ամենաազնիվ ձգտումնե-
րից մեկը չէ: Ի՞նչ կարող է ավելի լավ լինել, չերբ ստրկության
մեջ ծնված, մեծացած և տանջված մարդը հանկարծ հնարավո-
րութուն է ստանում անվախ շնչել, շարժվել, խոսել, զգալ մտա-
ձեղ և գործել: Խոսք չկա արտահայտելու այն չերջանկութունը,
վոր պիտի զգա մի այդպիսի մարդ, չերբ ազատության առաջին
օրը պահելում է քնելու այն զիտակցութեամբ, թե ինքն այժմ
որենքի հովանավորության տակ է, որնք, վոր պաշտպանում է
այն սրբազան իրավունքները, վորոնք արված են բոլոր մարդկանց
անխտիր, բաց վորոնցից նա, իր մերձավորի կամայականու-
թեամբ, զրկված է չեղել մինչև այսօր:

Այո, Ջորջի և նրա կնոջ ուրախությունն անսահման էր:
Նրանք չուներին վոչ մի թիզ հող, չուներին անդամ համեստ մի
տնակ, վոր կարողանային անվանել իրենցը. նրանց զբաղանում
մի դուլար անգամ չկար. նրանք չուներին ավելի, ինչ ունեն
չերկնային թռչունները և դաշտի ծաղիկները, բայց և այնպես

նրանք այնքան չերջանիկ էյին, վոր ամբողջ գիշեր չկարողացան քնել: Նրանք հրճվանքով նայում էյին իրար և իրենց չերեխաչին, վորը առաջվանից ավելի թանգ եր թվում նրանց, վորովհետև այժմ իրավունք ունեւին նրան սիրելու և պաշտպանելու. նրանք աշխատում էյին ընտելանալ այն մտքին, վոր իրենք, վերջապես, ազատ մարդիկ են, բայց ա դ մրանգամից անել չէին կարողանում, ինչպես միանգամից շանգոտանալ չի կարող ծովը, վոր յերկար հուզվել, ալեկոծվել և կատաղի փոթորկից:

ԳԼՈՒԽ XVII

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ

Նոր-Որլյանի մեծ տանը աղմուկ եր տիրում: Այդ տունը, վոր լավ հայտնի յեր քաղաքի բնակիչներին, ստրուկների շուկան եր: Այնտեղ սևամորթ ստրուկներին ծախում էյին աջնպես, ինչպես ծախում են անխոս անասուններին. այդտեղից միշտ լսվում եր հեծեծանքների և լացի ձայն:

Թոմասը և Սենտ-Քլերի մյուս ստրուկները նույնպես հայտնըվեցին այս տանը: Հետևյալ որը պետք և աճուրդ լիներ: Վաճառքի բերված չուրաքան: յուր նեզը ակամա մտածում եր այն մասին, թե ինչ և սպասում իրեն. նա աշխատում եր խմբված գնորդների մեջ գտնել: գուշակել իր ապագա տիրոջը: Վախն ու տխրությունը պատել եր թշվառներին: Բայց նրանք, ովքեր վաճառում էյին նրանց, չէին ուզում, վոր ստրուկները տխուր դեմք ունենան. չէ վոր այդ ժամանակ նրանց լավ գին չէյին տա: Բայց, վորպեսզի նեգրերին ստիպեն ուրախ դեմք ցույց տալ, տերերը դրա համար միջոցներ ունեյին—մտրակ և բուռնցք: Յեվ նեգրերը, կոպիտ վերակացուի մտրակից սթափված, ուրախանում էյին, քրքրում և ինչ-վոր անմիտ չերգեր յերգում:

Հետևյալ որը աճուրդով ծախվող ստրուկների մեջ կային չերկու կին—մայր ու աղջիկ: Մոր անունը Սուսաննա չեր, աղջրկանը՝ Եմմա: Նրանք յերկուսն ևլ դաստիարակվել էյին մի բարի կնոջ մոտ, վորը նրանց հետ շատ մեղմ և սիրալի չեր վարվում: Այդ կինն աղքատացել եր և վորդու պատճառով, վոր խրվել եր պարաքերի մեջ, ստիպված եր չեղել ծախել թե մորը, թե աղջրկան: Այդպես Սուսաննան ու Եմման բերվել էյին ստրուկների շուկան:

Սուսաննան ու Եմման չէյին կարողանում քնել: Նրանք վախենում էյին, վոր տարբեր մարդկանց ձեռք ընկնեն և, այդպիսով, ընդմիշտ բաժանվեն իրարից:

— Մայրիկ, փորձիր քնել, —ասում եր Եմման, — գլուխդ դիր ծնկներիս:

— Ի՞նչպես կարող եմ քնել, Եմմա: Գուցե վերջին գիշերն և, վոր անցնում ենք միասին... — Յեվ Սուսաննան ծանր հոգոց քաշեց, հիշելով, թե ինչպես վաճառականը Եմմայի ձեռներն ու մազերը դիտեց և ասաց, վոր աղջիկն առաջնակարգ ապրանք և, վորի համար կարելի յե լավ փող ստանալ...

Հետևյալ որը շուկայում մեծ բազմություն ևր հավաքվել: Աճուրդի բացումից առաջ, բազմությունը ճեղքելով առաջ յեկավ մի բարձրահասակ, լիքը-լիքը տղամարդ: Նա մտեցավ ստրուկներին և սկսեց ուշադիր նայել նրանց: Թոմասը միանգամից ատելություն զգաց դեպի նա և սարսափով մտածեց, վոր ինքը կարող և ընկնել այդ, ըստ յերևութին, չար և դաժան մարդու ձեռքը: Այդ մարդուն անվանում էյին Լեգրի:

Աճուրդն սկսվեց: Սենտ-Քլերի սպասավորներից միքանիսը ծախվեցին արդեն:

— Առաջ արի, հերթը բռնն և, — ձայն տվին Թոմասին:

Թոմասը յեկավ բարձրության վրա: Լեգրին բռնեց Թոմասի ծնոտը և բերանը լայն բաց արավ, վոր ատամներին նայի: Իսկ մի բուպե հետո Թոմասը լսեց մի չարագուշակ ձայն.

— Գու ծախված ես:

Լեգրին կոպտորեն բռնեց նրա ուսերից և, մի կողմ հրելով, ասաց.

— Կանգնիր աչտեղ:

Շուտով ծախվեց և Սուսաննան: Բարձրությունից իջնելիս նա կանգնեց և յետ նայեց: Եմման ձեռները մեկնել ևր դեպի մայրը: Սուսաննան իրեն գնողին աղաչեց, վոր աղջկանն ևլ առնի:

— Չեմ կարող, այդքան փող չունեմ... — պատասխանեց վաճառականը:

Միքանիս բուպե անց Եմմային գնեց նույն Լեգրին, վորը գնեց և Թոմասին. շուտով նրանց յերկուսին ևլ տարան մյուս ստրուկների հետ:

Աճուրդը վերջացավ: Մայր ու աղջիկ բաժանվեցին, գուցե ընդմիշտ...

ԳԼՈՒԽ XVIII

ՀԱՆԱՊԱՐԴԻՆ

Նույն որը յերեկոյան Լեզրին նոր գնած ստրուկներին տա-
լալ իր պլանացալան: Թոմասը, ձեռներն ու վոտները շղթայած,
նստել եր փոքրիկ շոգենավի նեղլիկ տրյուսովում (բեռներ զնելու
տեղ): Նրա մարմինն այնքան չէր ցավում շղթաներից, վորքան
սիրաբ ճնշվում եր թախիժից ու վշտից: Այժմ ամեն ինչ վերջա-
ցած եր նրա համար. ազատվելու և կնոջ ու յերեխաների հետ
ապրելու յերազները ծխի պես ցնդել էին. հուշ չուներ նույն-
խակ, թե հեռու ապագայում այդ բանը կարող է իրագործվել: Նա
զգում եր, վոր ավելի լավ է չհիշի այդ բաները: Այո, անհրա-
ժեշտ է ամեն ինչ մոռանալ:

Յեւ թոմասն աշխատում եր չհիշել այն բոլորը, ինչ վոր յե-
ղել եր կյանքում և ինչ վերջացել եր ընդմիշտ: Այժմ պետք եր
մտածել, թե ինչպես դուր գա այն մարդուն, վոր դարձել եր իր
տերը:

Ստրկության ամենասարսափելի հեռանկարներից մեկն այն
է, վոր նեզերը, վորոնք այնպես հեշտությամբ հարձարվում են
շրջապատող միջավայրին,— բարեկիրթ տներում չուրացնում են
լավ սովորութուններ, զարգացնում են իրենց գեղեցկի ճաշակը
և իրենք բարեկիրթվում. բայց այդ բոլորը նրա համար է կարծես,
վոր վիճակները փոխվելիս, կոպիտ, տգետ և խստասիրտ մարդ-
կանց լծի տակ ընկնելիս, նրանք ել ավելի խորն են գիտակցում
իրենց վոչնչութունը և այնպես են տանջվում, ինչպես յերբեք
չեցին տանջվի, չեթե ապրած լինելին հասարակության տականք-
ների շրջանում միայն:

Լեզրին տանում եր ութ ստրուկ, վորոնց գնել եր Նոր-
Որլանսի միքանսի աճուրդներում: Դրանք բոլորը զուգ-զուգ
շղթայված էին: Յերը շոգենավը դեռ բավական հեռու յեր ա-
փից, Լեզրին ստրուկներին դուրս բերեց տախտակամածը: Ձեռ-
ները զրպանները գնելով, կոպիտ քիթը վեր տնկած և ինչ վոր
թեթե յերգ յերգելով՝ սկսեց մանրազնին զիտել իր մարդկանց:
Միքանսիսին նայելով, Լեզրին ծխամորճը վառեց և մոտեցավ
Թոմասին, վոր նստել եր մի կողմ, իր սնդուկի վրա: Թոմասը
հագնված եր այնպես, ինչպես միշտ հագնվում եր Սենտ-Քլերի տա-
նը—վայելուչ ու գեղեցիկ:

— Վեր կաց,— կոպտորեն հրամայեց Լեզրին, հեզնանքով
նայելով նրա նոր հագուստներին ու գեղեցիկ կոշիկներին:

Թոմասը հնազանդվեց:

— Ոձիքդ հանիր,— շարունակեց Լեզրին:

Թոմասը շղթայված ձեռները բարձրացրեց վեր, բայց չկա-
րողացավ հասցնել վզին: Այդ տեսնելով, Լեզրին ինքը պոկեց
նրա ոսլայած ոձիքը և կոխեց իր գրպանը:

— Հանիր բոլորը և այս հագիր,— կարգադրեց Լեզրին, Թո-
մասին նետելով նրա իսկ սեփական վարտիքն ու բաճկոնը, վոր
հագնում եր նա աշխատանքի ժամանակ:

Նրանց շուրջը հավաքվել էին արդեն հետաքրքիրներ: Լեզ-
րին Թոմասին տարավ բամբակի հակերի մոտ, նրա շղթաները
արձակեց և կրկնեց շորերը փոխելու հրամանը: Յերկարաճիտ կո-
շիկների փոխարեն տվեց նրան մի զուգ հին կոշիկ, վոր նեզ-
րերը հագնում են պլանտացիաներում աշխատելիս: Թոմասը ան-
նկատելի կերպով գրպանումը թագցրեց փոքրիկ մի գլորք, վոր
միշտ մոտն եր պահում: Մինչ այդ Լեզրին խառնում եր նրա
անդուկը: Այնտեղից հանեց հին շորեր և Թոմասին հարկադրեց
հագնել: Յերկու մետաքսե թաշկինակ գտնելով՝ Լեզրին դրանք
ևս կոխեց իր գրպանը: Միքանսի հասարակ բաներ, վոր Յեվա-
յից հիշատակ էլին մնացել Թոմասին, և վորոնք այնպես սիրում
եր նա, Լեզրին արհամարհական ծիծաղով նետեց ջուրը: Այլ ի-
րերի թվում նա գտավ նաև յերկու գիրք:

— Չլինի՞ դու գրադեա ես,— հարցրեց Լեզրին, գրքերին
նայելով:

— Այո, պարոն—պատասխանեց Թոմասը:

— Ուրեմն դու սովոր ես գանազան հիմարութուններ կար-
գալ ազատության և կապիտալիստների մասին, հմ: Խորհուրդ
կտամ շուտով թողնես այդ հիմարութունները:

Հետո Լեզրին շուռ յեկավ գեպի Եմման:

— Իսկ դու ինչո՞ւ յես տխրել, սիրունիկս,— գիմեց նա Եմմա-
յին, վորը նստել եր գլուխը կախ և գեմքը թախիժով պատած:
Յեւ Լեզրին բռնեց նրա կրակը:

Աղջիկը ցնցվեց և նայեց նրան այնպիսի սարսափով ու ար-
համարհանքով, վոր Լեզրին կարժրատակեց:

— Ի՞նչպես ես համարձակվում այդպես նայել ինձ, վորոր-
մելի արարած,— Քշշաց Լեզրին, աղջկա ուսը ցնցելով և փսիւն-
քը շաղ տալով:— Մի՞թե մոռացել ես, վոր յես քո տերն եմ: Հի-

շիր, վոր չես քեզ լավ կարող եմ վերաբերվել այն ժամանակ մի-
այն, յեւր դու արժանի լինես քո հնազանդութեամբ, խոնարհու-
թեամբ և ուրախ տեսքով: Իսկ յեթե միշտ այդպես պիտի նայես
ինձ, այն ժամանակ քո բանը վատ կլինի. այս բանը լավ հիշիր...
Դու յեւ, պառավ դեղնառեխ, ուրախ դեմք շինիր,—բոլորեց նա
մի տարիքավոր մուլատուհու վրա, վոր շղթայով կապված եր եմ-
մային:—Վոչ մեկիդ դեմքը թթված չտեսնեմ, յես այդ բանը տա-
նել չեմ կարող: Լսում եք: Ձեզ նման զգվելիները պետք է ու-
րախ աչքերով նայես իրենց տիրոջ, վորի շնորհիվ կերակրվում և
ապրում են... Յեթե կտարավել սկսեք, բուռնցքս դորձ կդնեմ և
կստիպեմ ձեզ ժպտալ, — շարունակեց նա, շարութունից գողալով
և անազին բուռնցքը մուլատուհու քթի առաջ թափ տալով: Դե,
նայեցեք աչքերիս, յեթե չեք ուզում իսկույն ևեթ իմ բուռնցքի
համը տեսնել,—պահանջեց նա, փոքր ինչ չետ-յետ գնալով, վոր-
պեսզի ամբողջ խմբին կարողանա միանգամից տեսնել:

Բոշոր հայացքները, կարծես կախարհված, սկամա դար-
ձան դեպի նրա աչքերը:

— Այդպես, հավանութուն տվեց նա:—Յերևում է, վոր
բուռնցքս ներշնչում է հարկավոր հարգանքը. ասենք զարմանա-
լի չե. իմ բուռնցքը մուրձի պես բան է. վորքան շատ է դորձ
ունենում նեղրերի մեջքի հետ, այնքան ավելի պնդանում է:
Լափե՛ք ե, չե՛ք,—շարունակեց Լեզրին, բուռնցքը մտտեցնելով Թոմա-
սի դեմքին այնպես, վոր նա սկամա ընկրկեց:—Այս բնական
զենքի միջոցով չես մեն-մենակ պատժում, կարգի չեմ հրավի-
րում իմ բոլոր ստրուկներին: Յես հո վերակացու չունեմ. ինքս
և՛ տեր եմ, և՛ վերակացու, և հավատացեք, վոչ մի բան աչքա-
թող չեմ անում: Ով իմ սիրտը չի շահում, ով իմ կարգադրու-
թյունը չի լսում, նրա կաշին քերթում եմ. այդպես էլ իմացեք:
Խնայել չգիտեմ—հիշեցեք այս բանը:

Այս խոսքերն ասելով՝ Լեզրին շուտ լեկավ կրունկներ
վրա, գնաց բուռնցքի կողմը և միանգամից գլխին քաշեց մի մեծ
բաժակ ողի, այնինչ թշվառ ստրուկները իրար չերես ելին նա-
յում. նրանք հասկացան, թե ինչ է սպասում իրենց այդ մար-
դու մոտ:

— Այ թե ինչպես եմ ներկայանում յես իմ նոր ստրուկնե-
րին,—ծիծաղելով ասաց Լեզրին մի տարիքավոր և ազնիվ դեմ-
քով մարդու, վոր հետաքրքրութեամբ լսում եր նրա խոսակցու-
թյունը նեղրերի հետ: Թող միանգամից իմանան, թե ում հետ

գործ ունեն, վոր խարուսիկ ցնորքներով չտարվեն. սա ամենա-
լավ ձևն է:

— Շատ լավ ձև է,—հեզնանքով պատասխանեց անծանոթը
և Լեզրին նայեց մի այնպիսի հետաքրքրութեամբ, կարծես հան-
դիպել եր դեռևս չտեսնված մի հրեշի:

— Այո, — շարունակեց Լեզրին,—չես այն նարմանագուկ-
ներից չեմ, վորոնք վերակացուների, կառավարիչների, գործա-
կատարների և նման սրիկաների մի ամբողջ շտապ են պահում,
վորոնք ստեղծված են հենց նրա համար, վոր խաբեն ու քթնե-
րիցը բռնած ման ածան այդ տեսակ նարմանագուկներին: Ձե,
իմ գործս յես ինքս եմ տեսնում և իմ նեղրերի հախից գալիս
եմ, այ էս բուռնցքով... Յեթե կուզեք՝ շոշափեցեք: Յերկաթի
պես է, մուրձից ավելի լավ է գործ տեսնում... Շոշափեցեք, պա-
րոն,— շոշափեցեք,—կրկնեց Լեզրին, անծանոթին դիմելով:—Այս
տեսակ ձեռը հազվագյուտ է, և արժի, վոր սրան նայեն:

Անծանոթը զղվանքով մատը դիպցրեց Լեզրի մինչև ար-
մունկը բաց թեին, վորի վրա աչքի ելին ընկնում անսովոր
մեծութեամբ միանները, և կեղծ պարզամտութեամբ ասաց.

— Այո, հետաքրքրական ձեռք է... Յերևի ձեռ սիրտն էլ
նման է ձեր ձեռքին:

— Ո՛ր, այո, բուլբուլին նման է,—խապոտ քրքիջով հավա-
տացրեց Լեզրին:—Միրտս նույնպես յերկաթյա չե, վոչ մի բանով
չի կարելի փափկացնել: Դա շատ լավ հայտնի չե իմ բոլոր նեղ-
րերին: Սրիկաները գիտեն, վոր ավելի հեշտ է մեղմացնել կա-
տաղի վազրին, քան ինձ, և այդ պատճառով զգուշ են... Այո,
պարոն, մարմնի և բնավորութեան այն ուժը, վոր յես ունեմ, քիչ
կտեսնեք. կարող եմ պարծենալ: Ով Միմոն Լեզրին չի տեսել—
նա յերկաթե մարդ չի տեսել:

— Շատ ուրախ եմ, վոր հանդիպում եմ ձեզ... Դրանք,
ուրեմն, նո՛ր ստրուկներ են,—ասաց անծանոթը, գլխով հեռվում,
շոգենավի մյուս ծայրում չերեացող ստրուկներին ցույց տալով:

— Այո, հենց յերեկ եմ գնել նոր-Որլյանում... Այստեղ,
դրանց մեջ կա մեկը, անունը Թոմաս, վորին հանձնարարեցին,
վորպես շատ բանիմաց մարդու: Յես մեծ գին տվի նրան, վոր-
պեսզի կառապան կամ վերակացու դարձնեմ .. Գործս ընդար-
ձակվում է, և մենակ դժվար է կառավարել, վորովհետև մասերի
բաժանվելու ընդունակութուն չունեմ այնուամենայնիվ: Յես
նկատեցի, վոր նա գրագետ է, այդ պատճառով նրա գլխում գա-

նազան հիմար մտքեր, բաներ կան, վոր չպետք է լինեն նեզրի գլխում... Բայց դա վոչինչ. շուտով չես իմ ձևով կդատարարակեմ նրան, և այդ հիմարութունները գլխիցը կհանեմ: Միայն թե իզուր վեցրի աչն պառավին, վոր նստած ե, ալ, ջանել աղջկա կողքին: Հիվանդ ե, քիչ ե մնում հողին փչի: Ասենք, համարյա ձրի չեմ ձեռք բերել, բայց ելի կարող ե աշխատել: Ինչո՞ւ չեք այդպես նայում ինձ: Դուք կարծում եք՝ չես կախարհ չեմ, չեմ կարող ստիպել, վոր այդ մեռնող պառավը աշխատի: Չե, պարոն, չես հենց այդ տեսակ կախարհ եմ. այդպիսիները վոչ միայն աշխատում են ինձ մոտ, այլև պարում են, յեթե չես այդպիսի տեսարանով զվարճանալու ցանկութուն ունենամ:

— Ամենևին, պարոն,—բացականչեց անծանոթը:—Ընավ չեմ կասկածում, վոր դուք այդ հատկութունները ունեք... Բայց ասացեք խնդրեմ, քանի՞ տարի չեն ապրում ձեր նեզրերը, չերբ դուք այդպես որինակելի չեք վարվում նրանց հետ:

— Դա կախված է նրանց կազմվածքից: Շատ առողջները և ուժեղները ապրում են վեց, յոթ տարի, իսկ թույլ անպետքները սատկում են չերկու-չերեք տարվա մեջ: Սկզբում աշխատում ելի պահպանել դրանց, հիվանդներին բժշկում ելի, լավ կերակրում, տալիս ելի անկողին՝ վերմակ, բարձ—առհասարակ վոչինչ չելի խնայում, վոր վոչ մի բանից գանգատավոր չլինեն: Բայց հետո համոզվեցի, վոր դա ավելորդ ծախս է և իզուր հոգս. միևնույն է, ճանձների պես սատկում ելին: Այդ ժամանակ վորոշեցի, վոր նեղվելու կարիք չկա. թողի բոլոր հիմար քնքշութունները և սկսեցի նեզրերին պահել ինչպես հարկն է, այսինքն վորպես անասունների: Ուղեցին տրանջալ, բայց բուռնցքս գործի դրի, և այդ որվանից գործն ավելի քան լավ է գնում... Հենց վոր մեկը սատկում է, նրա տեղն իսկույն դնում եմ նորը և գրտնում եմ, վոր դա ավելի ձեռնասու չի, քան նրանց չետից քաշ գալը և քնքշութուններ անելը...

— Ո՞ր դա ինքնին պարզ է... Սակայն, իմ ուղեկիցը կանչում է ինձ: Թույլ տվեք շնորհակալութուն հայտնել ձեզ այն բավականության համար, վոր ավիք ինձ, բացատրելով նեզրերի հետ վարվելու ձեր գեղեցիկ սխտեմը:

Ասելով այս լիակատար անկեղծության տոնով, անծանոթը հեռացավ կեզրից և գնաց դեպի բուժփետի մոտ նստած չերիտասարդը, վոր բացահայտ զզվանքով լսում էր վերև բերված խոսակցութունը:

— Լավ է,—հարցրեց անծանոթը, կանգնելով իր ուղեկցի առջև:—Բայց խնդրեմ, դրանով չգատեք Հարավի բոլոր պլանտատորներին:

— Ո՞ր, իհարկե,—բացականչեց չերիտասարդը,—չես շատ լավ եմ հասկանում, վոր դա դադան է, և հաշվի չպիտի առնել: Վորքան ել մարդկանց մեծամասնութունը վատ է, բայց այդպիսի սրիկաներն, այնուամենայնիվ, քիչ են: Սարսափելի չե միայն, վոր մեր որենքները հովանավորում են դրանց, թույլ տալով անսահմանորեն իշխել մյուս մարդկանց վրա, վորոնց վոչընչով չեն պաշտպանում այդպիսիների գազանային կամայակալութունից... Մի փոքր չափով, յերևի, հարավային բոլոր պլանտատորները նման են սրան, խոստովանեցեք:

— Այո, իսկապես, նրանք բոլորն ել գրեթե բավական անսիրտ են, բայց և այնպես նրանց մեծամասնութունը, այս վայրենու հետ համեմատած, հեղ հրեշտակներ են: Սա ուղղակի ինչվոր...

— Այո, դուք իրավացի չեք,—ընդհատեց չերիտասարդը:—Բայց սարսափելի չե մտածել, վոր այնպիսի սքանչելի մարդիկ, ինչպիսին և դուք եք,—լուսավորված, փափկասիրտ, ազնիվ և մարդասեր,—ձեր գոյությամբ կարծես հավանութուն եք տալիս և այդ տեսակ սրիկաների գոյության: Չե՞ վոր, չեթե պլանտատորների մեջ չլինեյին այնպիսի լուսավոր անձնավորութուններ, ինչպիսին դուք եք,—ստրկութունը մնալ չեր կարող, նա վաղուց կխորտակվեր իր սեփական ծանրության տակ: Բայց հենց ձեր մարդասիրութունը, ձեր ազնվութունը և մեծահոգութունը անուղղակի կերպով աջակցում է այդ կեզրիներին՝ կոպիտ կամայակալության և խոսատարության:

— Շնորհակալ եմ, չերիտասարդ բարեկամ, ձեր լավ կարծիքի համար,—իբ հերթին ընդհատեց խոսակցին տարիքավոր անծանոթը:—Բայց, խնդրեմ, թողնեք այդ նյութի մասին խոսելը, քանի վոր չորս պատի մեջ չենք: Այս նավի վրա այնպիսի մարդիկ կան, վորոնց մեր մտքերը կարող են դուր չգալ, և վորոնք պատրաստ են դանակով առարկել այն բոլորի դեմ, ինչ իրենց ճաշակով չի:

Յերիտասարդը ուսերը վեր քաշեց արհամարհանքով, բայց և այնպես լռեց:

Մինչև այդ, եմման խոսում էր իրեն կապված պառավ մուլատուհու հետ:

— Գու ճւմ ելիր պատկանում, մորաքույր,—հարցրեց Չահել աղջիկը, կարեկցութեամբ նայելով պառավի մաշված դեմքին:

— Պարոն Ելիսին... Նա ապրում է Նոր-Որլանում, Լևի փողոցի վրա, հայտնի հարուստ է: Գուցե լսել ես:

— Չէ, չեմ լսել... Բարձր մարդ է:

— Քանի չեր հիվանդացել՝ բարի յեր: Ամբողջ վեց ամիս պառկեց և այդ ժամանակում այնքան չար, անհամբեր դարձավ, ել վոչ մի բանով անկարելի յեր նրան գոհացնել: Որ ու գիշեր վոչվոքի հանգիստ չեր տալիս: Մինչև անգամ նրան մոտենալը յերկյուզալի յեր. թույլը թույլ, բայց բուռնցքով այնպես եր լսփում մարդու յերեսի: Յես ինքս ել հիվանդ, բայց ստիպված էյի մյուսներից ավելի շատ նստել նրա մոտ, վորովհետև բոլորից ավելի լավ գիտելի նրա սովորութիւնները և կարողանում էյի խնամել: Բայց պատահեց, վոր գիշերը քնով անցա և ժամանակին դեղ չտվի նրան: Իրա համար կառավարչին հրամայեց, վոր ինձ ծախի այնպիսի մի մարդու, վոր ինձ ծեծի... Ահա ինչու յեմ ընկել այս դեղին սատանայի ձեռը: Դա, իհարկե, ծեծելով կմեռցնի ինձ:

— Ընտանիք ունե՞ս, մորաքույր:

— Մարդ ունեմ և չորս յերեխա: Բայց վերջին ժամանակներս մարդուս տեսնում ելի չերեք տարին մի անգամ, վորովհետև նա լավ փականագործ է, և պարոնը տվել եր նրան ուրիշ տեղ աշխատելու: Յերեխաներս ել ձեռիցս առան, և յես մնացի մեն-մենակ: Յեթե յերեխաներիցս մեկն ու մեկը մոտս լիներ—ելի հեշտ կլիներ մեռնելը... Ո՛հ-ոհ-ոհ,— խոր հոգոցով վերջացրեց պառավը իր տխուր պատմութիւնը:

Եմաման ուղեց մխիթարել թշվառ կնոջը, բայց հարկավոր խոսք չգտավ: Յեվ իսկապես, նա մխիթարական ինչ կարող եր ասել, չեր ինքը պառավից լավ դրութեան մեջ չեր գանվում, և յերկուսն ել Լեզրիից, վատից բացի, լավ բան չեյին կարող սպասել:

Մինչ այդ, նավը դանդաղ առաջ եր գնում Կարմիր գետի ծուռումուռ և կավոտ ափերի միջով: Դժբախտ ստրուկների արցունքով մթազնած աչքերը վոչինչ չեյին տեսնում, բացի մի-որինակ, մերկ ափերից և անհյուրընկալ ու ամայի հարթավայրերից:

ԳԼՈՒԽ XIX

ԼԵԳՐԻԻ ՊԼԱՆՏԱՑԻԱՆԵՐՈՒՄ

Շուտով Թոմասը, Եմաման և մյուս ստրուկները հասան Լեզրիի պլանտացիաները: Այդտեղ նրանց զիմավորեց առողջ նեզր Սամբոն, Լեզրիի աջ ձեռքը և նրա բոլոր քմահաճույքները կատարողը: Սամբոն, վոր աչքի յեր ընկնում անսովոր դաժանութեամբ և վիթխարի ուժով, կարգված եր նեզրերին հսկելու, վորպեսզի բուռնցքով և մտրակով հարկազրի նրանց աշխատել և պատժի, յեթե նեզրերը վատ կատարեն իրենց ծանր աշխատանքը:

Սամբոն նորեկներին տարավ ստրուկների բնակավայրը. դրանք վողորմելի տնակներ էյին, իրար կողքի շարված և գտնվում էյին կալվածքից հեռու: Այդ տնակները կեղտոտ, աղքատիկ տեսք ունեյին: Թոմասը իրեն մխիթարում եր նրանով, վոր թեև հասարակ, աղքատիկ տնակում է ապրելու, բայց մաքուր կպահի այն, գրքերի համար դարակ կշինի, կունենա իր սեփական անկյունը, ուր կարող է, ծանր աշխատանքից հետո, հանգըստանալ: Նա նայեց տնակներից միքանիսը. ամենուրեք կեղտ էր, խավար, չկար վոչ մի կահկարասի. մահճակալի փոխարեն անկյունում թափված եր կեղտոտ ձղնոտ:

— Սրանցից վո՞րն է իմը,— հարցրեց Թոմասը իր հետգնացող նեզրին:

— Չգիտեմ. կուզիս մտիր սրա մեջ: Այստեղ դեռ մեկի համար ել տեղ կլինի: Մեզանում ամեն տեղ լիքն է. ուղղակի չգիտենք նոր յեկածներին ուր տեղավորենք:

Ուշ յերեկո յեր արդեն, յերբ տնակների բնակիչները վերադարձան դաշտից, ուր նրանք ամբողջ օրը բամբակ էյին հավաքել. նրանց բերին հոտի պես առաջ արած, տղամարդկանց ու կանանց միասին: Կեղտոտ, գզգզված շորերով, աշխատանքից հոգնած, նրանք նորեկներին այնքան ել սիրալիբ չընդունեցին: Բոլոր դեմքերը այսուր էյին, մռայլ, ձայները խոպոտ ու կոպիտ: Իսկույն մե՞ծ սկավեց յերկանքի շուրջը, վորով նեզրերը սիմինդ էյին աղում ընթրիքի համար: Ամբողջ օրը, առանց պուլս բարձրացնելու, աշխատել էյին դաշտում վերակացուների մտրակի տակ: Ամենայեռուն ժամանակն եր, բամբակը պետք եր հավա-

քել վորքան կարելի չե շուտ, և տերն, ալդ պատճառով, նեգրե-
րին ստիպում եր աշխատել վորքան կարելի չե շատ:

Թոմասը նայեց իր նոր ընկերներին, աշխատելով գեթ մի
համակրելի դեմք գտնել: Բայց թշվառ ստրուկներն ավելի անա-
սունների եյին նման, քան մարդկանց. տղամարդիկ մուսյլ եյին,
կոպիտ. կանաչք—նիհար և ծայր աստիճան հյուժոված: Այժմ բո-
լորը հարձակվեցին յերկանքների վրա, վորոնց թիվը շատ քիչ
եր: Յերկանքները գրավեցին ավելի ուժեղները, իսկ թուլերը,
մանավանդ կանաչք, ստիպված եյին մինչև ուշ գիշեր սպասել
իրենց հերթին:

Թոմասը, ամբողջ ուրը ճանապարհ կտրելուց հետո, սաստիկ
քաղցած եր և վոտի վրա հազիվ եր կանգնում:

— Ե՛ս քեզ, վերցրո՛ւ, — ասաց Սամբոն, նետելով նրան մի
տոպրակ սիմինդ:— Լավ պահիր: Ամբողջ շաբաթ ել բան չես ստա-
նալու:

Թոմասն ստիպված չեղավ չերկար սպասել իր սիմինդն ա-
ղալու հերթին: Հերթի սպասելով, նա նախ աղաց յերկու կնոջ
համար, վորոնք հուզեցին նրան իրենց հոգնած, խղճալի տես-
քով: Հետո ցախ դրեց կրակի վրա, ուր նեգրերը թխում եյին
իրենց բլիթները, և դրանից հետո միայն սկսեց պատրաստել իր
սեփական ընթրիքը: Թոմասի վարձուքը բոլորին դաբմացրեց.
խղճահարությունը, կարեկցությունը, բարի, ընկերական ղգա-
յուլմներն անձանոթ ելին այստեղ, վաղուց մոռացված եյին այս
վայրենացած մարդկանց կողմից: Կանայք չերախտադիտաբար
հուշեցեցին Թոմասի բլիթը և հետևեցին մինչև թխվելը:

Ընթրիքից հետո կանաչք գնացին իրենց տնակները, իսկ
Թոմասը մնաց հանգչող խարույկի մոտ:

Հետևյալ օրն իսկ Թոմասը գնաց աշխատանքի. նա փորձ-
ված ու ժիր աշխատող եր. ինչ բանի վոր ձեռ եր տալիս—լավ
կատարում եր: Նա, իր խաղաղ, հանգիստ բնավորությամբ, հույս
ունեի խուսափել տիրոջ և նրա մարդկանց բռնություններից ու
խստություններից: Բայց դա դուր հույս եր:

Լեգրին լավ դիտեց Թոմասին և իսկույն գնահատեց նրան,
վորպես ժիր և բանիմաց աշխատավորի: Բայց նրա հեզությունն
ու խոնարհությունը Լեգրին դուր չեկան: Թոմասի լուրթյան
մեջ Լեգրին դատապարտություն եր տեսնում իր խստասրտության,
իր բոլոր արարքների նկատմամբ. նա այդ լուրթյան մեջ տես-
նում եր ինչ-վոր ներքին, անհասկանալի ուժ, վորը, ինչ ել ու-

զում ելինի, պետք եր խորտակել, պետք եր նրան դարձնել ըստ-
րուկ լոջ միայն մարմնով, այլև հոգով:

Լեգրին նկատել եր Թոմասի բարի, ընկերական վերաբեր-
մունքը դեպի մյուս ստրուկները—նրա խղճահարությունը դեպի
դժբախտներն ու խեղճերը, պատրաստակամությունը ոգնել թուլ-
լերին ու հիվանդներին: Դա նույնպես դուր չեր գալիս դաժան
տիրոջ: Նա Թոմասին գնել եր այն նպատակով, վոր նրան դարձը-
նի կառավարչի նման մի բան, վորին կարողանար հանձնել տըն-
տեսությունը իր բավական հաճախակի բացակայությունների
միջոցին: Բայց կառավարիչը ամենից առաջ պիտի ունենար դա-
ժանություն և խստություն: Լեգրին գտավ, վոր Թոմասը չա-
փազանց մեղմ եր, ուստի պետք եր կատաղեցնել նրան: Յեվ նա
վորոջ ժամանակից հետո ձեռնարկից իր ծրագրերը իրագործելուն:

Մի անգամ առավոտյան, յերբ բանվորները դուրս չեկան
դաշտը, Թոմասը նրանց մեջ նկատեց մի կին, վորին մինչև այժմ
դաշտը, Թոմասը նրանց մեջ նկատեց մի կին, վորին մինչև այժմ
վոջ մի անգամ չեր տեսել: Նա քայլում եր մյուսներից առանձ-
նացած և իր արտաքինով իսկույն ուշադրություն եր գրավում:
Նա բարձրահասակ եր, բարեկազմ, մաքուր և ճաշակով հանգը-
ված: Կլինեի չերեսունուհինգ, քսուսուս տարեկան. դեմքն այն
դեմքերից եր, վոր մի անգամ տեսնելիս՝ չես մոռանում: Թոմասը,
նրան նայելով, չեր կասկածում, վոր այդ կինը անցյալում ինչ-
վոր սարսափելի պատմություն ե ունեցել և անսովոր վիշտ ե
սպրել: Աչքի եյին ընկնում մանավանդ աչքերը—խոշոր, սև,
վշտով ու հուսահատությամբ լիքը:

Մյուս ստրուկներն, ըստ չերկուրթին, լավ եյին ճանաչում
այդ կնոջ. քատերը շուտ ելին գալիս և նայում նրան: Խեղճ, ցըն-
ցոտիներ հագած ամբողջը, նրան տեսնելով, չկարողացավ իր չա-
րախնդությունը թազցնել:

— Տես վորտեղ ե հասել... Շատ ուրախ եմ, — նկատեց բան-
վորներից մեկը:

— Հա-հա, — ծիծաղեց մյուսը:— Թող եղ խանութն իմանա,
թե ինչ քաղցր բան ե աշխատելը...

Կինը վոջ մի ուշադրություն չեր դարձնում այդ խոսքերին
և շարունակում եր քայլել նույն հպարտ ու արհամարհական
տեսքով:

Դաշտում Թոմասն աշխատում եր անձանոթ կնոջից քիչ
հեռու. իսկույն ևեթ նկատեց, վոր նա աշխատում ե անսովոր
ճարպկությամբ ու արագ: Որվա ընթացքում Թոմասն աշխա-

տում եր կողք-կողքի այն մուլատուհու հետ, վորին Լեզրին գնել եր թոմասի հետ միաժամանակ: Մուլատուհին, ըստ չերևութին, շատ հիվանդ եր. աշխատում եր մեծ դժվարութեամբ. թոմասը լսեց, թե նա ինչպես է տնքտնքում, և տեսավ, վոր քիչ է ֆուռում ուշագնաց լինի: Թոմասը զգուշորեն մոտեցավ նրան և իր քաղած բամբակի մի մասը դրեց նրա կողովը:

— Ախ, հարկավոր չի, հարկավոր չի, — շշջաց կինը: — Կըբարկանան քեզ վրա...

Այդ բոպեյին մոտեցավ Սամբոն: Նա իր ծանր կոշիկով հրեց մուլատուհուն և մարակով խփեց թոմասի յերեսին:

Թոմասը լռեց և շարունակեց աշխատել. բայց խեղճ կինն ուշաթափվեց: Գազան կտրած Սամբոն մոտեցավ նրան և մտրակի միքանի հարվածով ուշքի բերեց: Թշվառ կինը գերմարդկային ուժ գործ դրեց իր վրա և նորից սկսեց աշխատել:

Յերբ Սամբոն հեռացավ, թոմասը, չմտածելով, թե ինչ վըտանդի է լենթարկում իրեն, կրկին մոտեցավ մուլատուհուն և իր բամբակն ամբողջ դրեց նրա կողովը...

— Հարկավոր չի, հարկավոր չի, — շշջաց կինը: — Դու չես իմանում, թե դրա համար ինչ կանեն քեզ...

— Յես ավելի կզիմանամ, քան դու, — պատասխանեց թոմասը իր տեղը դառնալով:

Այս բոլորը կատարվեց մի բոպեյի մեջ:

Հանկարծ անծանոթ կինը, վորն այնքան մոտ եր չեկել, վոր լսեց թոմասի խոսքերը, իր խոշոր, մոռյլ աչքերը բարձրացրեց և ուշադիր նայեց թոմասին: Ապա, իր կողովից միքանի բուռը բամբակ վերցնելով, դրեց թոմասի կողովը:

— Դու այստեղի բաները լավ չգիտես, — ասաց նա, — թե չե այդ բանը չեցիր անի: Յերբ մի ամիս ապրեա, կհասկանաս, վոր այստեղ ուրիշին ոգնել չի կարելի. վոր այստեղ ամեն մտրդ պետք է մտածի իր սեփական կաշվի մասին:

Թոմասն ուզեց պատասխանել, բայց այդ վայթկյանին յերևաց Սամբոն, և կինն արագ վերադարձավ իր տեղը: Նա այնպես արագ եր աշխատում, վոր թոմասը զարմանում եր: Որվա ընթացքում նա վոչ միայն կարողացավ իր կողովը լցնել, այլև միքանի անգամ բամբակ դրեց թոմասի կողովը:

Մուլտն եր արդեն, յերբ հոգնած բանվորները սայլերով ու վտտով գնացին դեպի այն տունը, ուր կշռում և տեղավորում էին բամբակը: Այստեղ նրանց սպասում եր Լեզրին, վոր խո-

տում եր չերկու վերակացուի հետ: Դանդաղորեն նեզրերը մըտնում եչին այն սենյակը, ուր դրված եր կշեռքը, և ուր Լեզրին ստուգում եր կողովները քաշը: Մինչ այդ Սամբոն արդեն պարոնին գանգատվել եր մուլատուհու վրա, և Լեզրին վորոշել եր պատժել նրան, չնայած վոր մուլատուհու կողովը բավական լիքն եր: Միևնույն ժամանակ միջոց եր գտել թոմասին փորձելու համար:

— Այստեղ արի, թոմաս, — կանչեց նա: — Իեղ ասել եմ, վոր սե աշխատանքի համար չեմ վերցրել քեզ: Յես ուզում եմ քեզ դարձնել վերակացու: Հենց հիմա կարող ես գործիանցնել: Վերցըրու այս կնկանը, — ցույց տվեց նա մուլատուհուն, — և ծեծիր, վորովհետև վատ է աշխատել:

— Վոչ, — պատասխանեց թոմասը, — յես այդ բանը չեմ կարող անել:

— Ի՞նչ, — և մտրակը շոռաչեց թոմասի գլխին:

— Կկատարեմ հիմա, սրիկա, իմ հրամանը, թե՛ չե:

— Վոչ, հիմա յե չեմ կարող, — պատասխանեց թոմասը, ձեռով գլխի արյունը սրբելով: — Կարող եք ինձ սպանել, բայց չես այդ բանը չեմ անի:

Լեզրին կոշիկով խփեց թոմասին և, կատարելով իր գործը, դուրս ելավ, ձայն տվեց:

— Սամբո, Կվիմբո, այս շանը ծեծեցեք այնքան, ինչքան կզիմանա:

Սամբոն ու Կվիմբոն բռնեցին թոմասին...

ԳԼՈՒԽ XX ԿԱՍՍԻՆ ԽՆԱՍՈՒՄ Ե ԹՈՄԱՍԻՆ

Գիշերն չեկավ: Գցված մի առանձին ամբար, կոտորված մեքենաների, բամբակի հակերի, կողովները և զանազան անպետք բաների մեջ, դժբախտ թոմասը ամբողջովին ծեծված ու արյունը վառակել եր չոր հողին: Չնայած իր արիութեան և համբերատարութեան, նա ժամանակ առ ժամանակ խուլ տնքոցներ եր արձակում: Գիշերը խոնավ եր և հեղձուցիչ. ծանր ու դուռ վիտում ելին մլակների ամբողջ խմբեր, վորոնք ավելի ելին ծանրացնում թոմասի տանջանքները: Բացի որանից, նրան տանջում եր և ծարավը, տանջանքներից ամենասարսափելին: Դրսից լավեց թեթև քայլերի ձայն, և ամբարի ճեղքից չե-

քեաց լապտերի լույս: Դուռը կամացուկ բացվեց, և շեմքին յե-
րևաց մի կանացի կերպարանք:

— Ո՞վ ես,—հարցրեց Թոմասը:—Ով ել լինեք, աղաչում եմ,
մի կու՛մ ջուր տվեք:

— Իսկո՛ւչն, խեղճ մարդ, իսկո՛ւչն կըբերեմ,—սլատասխանեց
կրճքային մի ձայն:

Յեկողն այն խորհրդավոր կինն եր, վորին բոլորը «որիորդ
կասսի» եյին անվանում: Թոմասին մոտենալով, նա լապտերը
դրեց գետին, ձեռի փոքրիկ կողովից հանեց ջրով լի մի շիշ ու
բաժակ և, Թոմասի գլուխը բարձրացնելով, ջրով լիճքը բաժակը
մոտեցրեց նրա շրթունքներին:

— Խմիր, սիրելիս, խմիր, ինչքան ուզում ես,—սիրալիր
ասաց կինը:—Յես գիտեցի, վոր դու ծարավից տանջվելիս կլի-
նես: Առաջին անգամը չի, վոր դիշիրները գալիս եմ քեզ նման
անբախտներին ջուր տալու:

— Շնորհակալ եմ, տիկին,—ասաց Թոմասը, ծարավը փոքր
ինչ հագեցնելով:

— Ինձ տիկին մի ասի,—ասաց կասսին:—Յես ել քեզ նը-
ման մի անբախտ ստրուկ եմ, բայց ավելի ստորացված... Ապա-
սիր,—ավելացրեց նա,—չես քեզ համար հիմի բան-ման կըբերեմ:

Նա դուրս յեկավ և մի բոպե անց ներս բերեց խոտով լի-
քը մի դոշակ: Դոշակը չերկտակ ծալված եր, և մեջը դրված էին
սառը ջրով թրջած սավաններ: Դոշակը բանալով և վրան մի սա-
վան փռելով՝ կինն ոգնեց Թոմասին դոշակի վրա պռակելու, ա-
պա նրա վերքերով պատած մարմինը ծածկեց յերկրորդ սավա-
նով: Ջրով թրջված քաթանի շփումը բարեբար աղպեցութուն
արավ անմիջապես ծեծից ջարդված նեղրի վրա:

Թոմասի գլխատակը մի գիրկ հին բամբուկ դնելով՝ կասսին,
վոր վաղուց արդեն սովոր եր դաժանության նման դոհերի տան-
ջանքները մեղմացնել, ասաց.

— Ես բոլորն ես, ինչ կարող եմ անել քեզ համար. բայց
հույս ունեմ, վոր այս միքիչն ել կոգնի:

Թոմասը ջերմագին շնորհակալութուն հայտնեց: Կասսին
նստեց նրա կողքին, գետնի վրա, ձեռներով ծունկը գրկեց և ան-
շարժ սև աչքերի կես-մտախոհ, կես-տխուր հայացքը հռոպ մի
անկյուն: Նրա չերկար փափուկ մազերը դուրս եյին յեկել գըլ-
խաշորի տակից և դեմքը շրջապատել:

— Իմ խեղճ բարեկամ,—ասաց նա փոքր ինչ լռելուց հե-

տո,—քո ասածն ու արածը իրավացի չեք, բայց դրանից բան
դուրս չի գա և դուր տեղը ֆլասսում ես քեզ: Քո տերն ելի նույն
հրեշն ես, և դու նրան չես կարող փոխել, հավատա ինձ: Ամենից
լավն այն ես, հնազանդվես, թե չե կկորչես, առանց մեկին ո-
գուտ տալու:

Հնազանդվել: Թոմասը շփոթվեց: Մարդկային թուլությու-
նը և գրեթե անտանելի տանջանքները առաջուց սրդեն նրան
ներշնչել եյին այդ միտքը, բայց մինչև այժմ նա քաջաբար դի-
մադրում եր այդ գայթակղության, իսկ այժմ այս կինն անա
նույնն ես ասում վստահ կերպով:

— Ո՛ր, ինչ անեմ, աստված,—սարսափով շշնջաց Թոմա-
սը:—Մի՛թե չես ոգնելու ինձ:

— Ինչո՞ւ չես ասածուն դիմում,—մի տեսակ չարությամբ
ասաց կասսին:—Նա յերբեք մեզ չի լի, վորովհետև նա իսկի
չե՛լ չկա, չեթե աստված լիներ—լավերը կկոտորվեյին, չարերը
կուրախանային... Չե, բոլորը դեմ են մեզ—թե յերկիրը, թե
չերկիրքը: Բոլորը մեզ դռով ասում են՝ մեղք գործեցեք, և վո-
չինչ չի մնում մեզ անելու, յեթե վոչ անդունդն ընկնել-կոր-
չել: Մեզ համար ել ուրիշ յե՛լք չկա, յես վաղուց համոզվել եմ
դրանում:

Թոմասը սարսափից դողաց, հուսահատված կնոջ այդ դառն
խոսքերը լսելով:

— Խեղճ մարդ, դու դեռ չգիտես, թե ինչեր են կատար-
վում այստեղ,—շարունակեց կասսին:—Յես ամեն ինչ գիտեմ,
ամեն ինչ: Հինգ տարի չե արդեն՝ յես այդ հրեշի ձեռին եմ և
յնով եմ ճանաչում... Ո՛ր, այնպես եմ ատում յես նրան, այնպես
եմ ատում, վոր զգվում եմ նրա մափին խոսել... Իմացիր, բարե-
կամ, վոր նրա պլանտացիան գանվում ե անապատի մեջ. շուրջը
վո՛չ մի գյուղ, վոչ մի սպիտակ մարդ, վոր վկա լինի, թե ինչ-
պես են քեզ շների բերանը տալիս, կենդանի վառում, կախում և
մեռցնելու չափ ծեծում: Քեզ ասում եմ, վոր այստեղ վոչ մի մարդ
և վոչինչ չի կարող առաջն առնել մեր խոտասիրտ դեռ: Յեթե
կարողանայի մի կողմնակի մարդու պատմել այն բոլորը, ինչ
հինգ տարվա մեջ տեսել եմ այստեղ, նրա մազերը բիզ-բիզ կլի-
նեյին և արյունը կսառչեր...

— Չե, դու նրա հետ կավել չես կարող, չեթե չես ուզում
վոչնչանալ: Դու կարծում ես՝ այսքան տարի յես իմ բարի կամ-
քով եմ ապրել այս դժոխքում: Ո՛ր, չե, չե... Յես այսպիսի վիճակ

չէյի սպասում, յերբ մեծացա են բարի ընտանիքում, վոր հարազատ աղջկա պես դաստիարակից ինձ... Այո, յես իմ կամքով չեմ ընկել այն գազանի ձեռք և այսքան տարի նրա կինը յեղել: Ամեն ըոպե չես անիծել եմ իմ գոյությունը... Յես ուզում եյի փախչել, բայց ատաղին իսկ որերը հասկացա, վոր դա անկարելի չե. այդ դեկ շները չէին թողնի հեռուն զնալու... Հիմի ուզում ե իմ փոխարեն կին դարձնի այն ջահել աղջկան, վոր հետը բերել ե: Նա չել լավ դաստիարակված ե, կարգաւ-գրել գիտի, մինչև անգամ հավատում ե աստծուն: Ո՛ր, այդ սրիկա պլանտատորներն ու կարվածատերերը գիտմամբ ինչ-վոր աստված են հնարել, վորովհետև ձեռնասու բան ե:

— Դու յերեսայի պես պարզասիրտ մարդ ես, բարեկամ: Գոնե մտածեյիր, թե ում համար ես զոհաբերում քեզ: Ախր այստեղ չկա մի մարդ, վոր արժանի լինի այդ զոհաբերության: Հավատա ինձ, վոր ամեն մեկը նրանցից, ում համար մի լավ բան կանես, ուրախությամբ քո բարությունը կհատուցի մի վորևե սարսափելի ստորությամբ: Այստեղ բոլորն ստոր ու խստասիրտ են, վոչ միայն չեն ուզում իրար պաշտպանել, այլև պատրաստ են իրար ունել ուղղակի: Ծիշա, դու բոլորովին զուր տեղն ես քեզ տանջանքի յենթարկում այդ անասունների պատճառով...

— Ինչ ել ուզում ե լինեն, յես չեմ կարող նրանց չխըզճալ,— չեռանդով ընդհատեց թոմասը:— Նրանք մեղավոր չեն, վոր ընկել են այդպես... Ձե, չե, որիորդ կասսի, ինձ մի համոզեք չես ուզում եմ մնալ այնպես, ինչպես յեկել եմ այստեղ: Ինձ ել աշխարհում վոչինչ չի մնում, բացի այն գիտակցությունը, վոր չես վարվում եմ ազնվորեն ու արդար: Յես կորցրել եմ կնոջս ու յերեսաներիս, զրկվել եմ իմ բարի տիրոջից, վոր խոստացել եր ինձ ազատել, բայց մեռավ խոստումը կատարելուց առաջ. ահա թե ինչու չեմ ընկել այստեղ... Այո, յերկրի վրա ինձ համար ել վոչինչ չի մնացել. մի խլեք ինձանից գոնե յերկինքը... Յեթե չես մյուսների նման քարասիրտ դառնամ, կզրկվեմ վերջին մխիթարությունից— յերեկից արքայություն ընկնելուց... Ձե, չես չեմ ուզում սիրտս քարացնել: Ուրախությամբ մարմինս կզոհեմ, վոր հոգիս անարատ ու բարձր պահեմ:

— Յեթե դու հավատում ես աստծուն, պետք ե իմանաս, վոր նա չի կարող մեզ պատժել այն չարության համար, վոր անում ենք հակառակ մեր կամքի: Նա հաշիվ կպահանջի նրբանից, ով մեզ հարկադրում ե այդ չարությունն անելու,— ա-

սաց ջահել կինը:— Յեթե միայն նա կա, իհարկե,— ավելացրեց նա:

— Ուզում ես, չես իմ տխուր պատմությունն անեմ քեզ... Այո,— շարունակեց կասսին:— Ուրեմն լսիր և իմացիր, վոր ինձ նման շատերը կան: Ինձ դաստիարակել են շքեղության մեջ: Յես շատ լավ հիշում եմ, ինչպես բոլորովին փոքրիկ, տիկնիկի նման հագնված, խաղում եյի շքիկ կահավորված սենյակներում: Մեծ դահլիճից մի դուռ տանում եր մեծ այգին, ուր մենք, այսինքն՝ չես յեղբայրներիս ու քույրերիս հետ տապկնոցի ելինք խաղում: Ո՛ր, ինչ յերևելի ծառեր կային և ի՜նչ առատ ծաղիկներ... Յերբ հասակս առա՛ ինձ տարան մտիկ դանվող վանքը, ուր շատ ուրիշ աղջիկների հետ սկսեցի սովորել մայրենի և Ֆրանսական լեզուներ, յերաժշտություն, նկարչություն, դանազան տեսակի ձեռագործեր և ուրիշ շատ բաներ: Դեռ տասըրո տարեկան չկայի, չերբ հանկարծ հայրս մեռավ: Յերբ նրա դորձերն սկսեցին քննել տեսան, վոր դրանք շատ խառն են, և վոր նրա ամբողջ կարողությունը պետք ե տալ պարտքերը ծածկելու...

— Նրա շարժական և անշարժ կայքի ցուցակը մտցրին և ինձ, վորովհետև չես ստրկուհուց եյի ծնվել իսկ հայրս չեր կարողացել ինձ ազատել, ինչպես կամենում եր: Յես վաղուց դիտելի, վոր սարկուհի յեմ, բայց դա ինձ յերբեք չեր շփոթում: Մեծանում եյի հորս որինսական յերեսաների հետ և վոչ մի տարբերություն չէյի նկատում իմ և նրանց միջև: Յես մորս չէյի հիշում: Ատում եյին, վոր նա մեռել ե ինձ ծնելուց հետո: Յես մայրիկ կանչում եյի հորս կնոջը, վորը ինձ միշտ սիրով եր վերաբերվում: Հորս մահը կայծակի հարված չեղավ ինձ համար: Նա դեռ ջահել եր և յեռանդոտ. վոչվոք չիր սպասում, թե այդպես շուտ կմեռնի: Բայց այն ժամանակ Նոր-Որլանում, ուր ապրում ելինք, սկսվեց խուլերա, և հայրս ատաղին զոհերից մեկն չեղավ:

— Թագումից անմիջապես հետո հորս կինը վերցրեց իր յերեսաներին ու զնաց իր հոր մոտ, իսկ ինձ թողեց: Յես այն աստիճան շմամ եյի, վոր միանգամից չհասկացա, թե դա ինչ սարսափելի նշանակություն ունի ինձ համար: Ամեն որ մեր տունն եր գալիս մի ջահել փաստաբան, վորին հանձնարարված եր հորս գործերը կարգի բերելու: Նա հաճախ խոսում եր հետս և մխիթարում ինձ: Մի անգամ նա իր հետ բերեց մի ջահել մարդ, վորն ինձ թվում եր կարգին և ազնիվ մարդու իզեալ...

— Յերբեք չեմ մոռանա իմ առաջին ծանոթութիւնն այդ մարդու հետ: Նա զբոսնում էր ինձ հետ այգում և դեպի ինձ շատ քաղաքավարի չեր: Նա ասում էր, վոր հաճախ տեսել ե ինձ վանք տանելիս, վոր սիրում ե ինձ, վոր ցանկանում ե իմ բարեկամը, հովանավորն ու պաշտպանը լինել: Այնուհետև հասկացանել տվեց, վոր յերկու հազար դոլլարով գնել ե ինձ, և վոր չես, այգալիսով, դարձել եմ նրա սեփականութիւնը, ու դրա հետ միաժամանակ հասկացնել տվեց, վոր չի ուզում իչարը գործադրել իր իրավունքը, այլ սպասում ե, վոր չես սիրեմ իրեն: Յե՛վ յես սիրեցի՛ նրան... Ո՛ր, վորքան ջերմ ու խորն էլի սիրում յես այգ մարդուն... Յես սիրում եմ նրան նուշնիսկ հիմա և հավիտյան պիտի սիրեմ... Յե՛վ նրան անկարելի չեր չսիրել. նա այնքան լալիս էր, գեղեցիկ, ազնիվ...

— Նա տեղավորեց ինձ մի տան, վոր պակաս շքեղ չեր, քան այն տունը, ուր մեծացել էլի: Յես ունեյի կառքեր, ձիեր, ծառաներ, թանգագին հագուստներ և այնքան թանգարժեք իրեր, վոր չունեի վոչ մի ազատ կին: Կարճ—ինչ կարելի չեր վորով ձեռք բերել՝ ունեյի: Բայց այդ բոլորը քիչ էլի գնահատում: Ինձ հարկավոր էր միայն նա... Յես նրան սիրում էիլ ավելի, քան ինձ, և պատրաստ էլի անել բոլորը, ինչ նա կամենար: Բայց նա ինձանից վոչինչ չեր պահանջում, բացի սիրուց, վորով և սիրտս լիքն էր դեպի նա: Յես էլ իմ կողմից ցանկանում էլի միայն մի բան՝ վոր նա չել սիրի ինձ այնպես, ինչպես յես իրեն եմ սիրում, և ամուսնանա ինձ հետ: Յես գտնում էլի, վոր դա լավագուցն ապացուցը կլինէր նրա՝ դեպի ինձ ունեցած զգացումների անկեղծութիւն: Բայց նա հավատացնում էր ինձ, վոր դա անկարելի չէ, վորովհետև որենքը թուլլ չի տալիս ամուսնանալ սեփական ստրկուհու վրա, թեկուզ ամուսնութիւնից առաջ ազատութիւն ստացած լինի:

— Բայց յես անփորձ էլի և հավատում էլի նրան, մանավանդ վոր նա ասում էր, թե քանի վոր անկեղծորեն սիրում ենք իրար, դրանով իսկ դառնում ենք մարդ ու կին: Յե՛վ յես, իսկապես, ինձ համարում էլի նրա կինը, վորովհետև ամբողջ յոթը տարի, վոր անցրի նրա հետ, վոչվոքի յերեսի չեմ նայել, բացի նրանից. յես միայն նրանով էլի ապրում ու շնչում...

— Մեր բախտավոր կենակցութիւնն ութերորդ տարում նա բռնկեց դեղին տենդով: Քսան որ յես նրա անկողնից չհեռացա, հետևում էլի նրա ամենափոքր շարժումին և խնամում սիրող

կնոջ հոգատարութեամբ: Իմ խնամքի շնորհիվ նա առողջացավ և ավելի կապիկեց ինձ հետ, զգալով, վոր իր փրկութեամբ միայն ինձ ե պարտական: Նա վերաբերվում էր ինձ գուրգուրանքով, ինձ անվանում էր պահապան-հրեշտակ և յերգվում էր անդավաճան սիրով... Մենք յերկու գեղեցիկ յերեսա ունեյինք. տղաս կոչվում էր հոր անունով—Հենրի, աղջկաս անունը Ելիզա չեր: Տղաս նման էր հորը, աղջիկս՝ ինձ: Մարդս շարունակ ասում էր, թե յես ամբողջ Լուիզիանում ամենագեղեցիկ կլինն եմ, և շատ հրպարտանում էր ինձանով ու մեր յերեսաներով: Նա հաճախ բաց կառքով զբոսանքի չեր տանում ինձ և ուրախանում էր, տեսնելով ու լսելով, թե ինչպես են մեզանով հրձվում, ինչպես են գովում ինձ ու յերեսաներիս... Ո՛ր, ինչ հրաշալի ժամանակ էր դա: Յերեսի, վոչվոք այգալիսի յերջանկութիւնն չի ունեցել, ինչպես յես:

— Բայց, ավաղ, իմ յերջանկութիւնը յերկար չտեսց... Հենրին մի հորեղբոր տղա ունեի, վորով շատ էր պարծենում: Բայց այդ մարդը առաջին իսկ հանդիպումին ինձ վրա վաստակավորութիւնն արավ և ինչ-վոր անհասկանալի սարսափ ազդեց ինձ: Յերեսի, դա մի նախազգացում էր, վոր նա չար բան ե անելու իմ դէմ: Առաջ նա ուրիշ քաղաքում էր ապրում, իսկ այժմ տեղափոխվեց մեզ մոտ՝ Նոր-Որլեան: Նա հաճախ Հենրիին տանում էր հետը և յերկուսն էլ չքանում էլին մինչև առավոտ: Յես չեյի համարձակվում բան ասել Հենրիին, վորովհետև նա շատ զլուրազրգիռ էր, և վախեցնում էլի բարկացնեմ... Հետո իմացա, վոր նա Հենրիին տանում ե թղթախաղի: Դժբախտաբար, Հենրին այն մարդկանցից էր, վոր բավական ե մի անգամ զայթակղվին, վորպեսզի էլ ուժ չունենան դիմադրելու, թեև զիտակցում են, վոր կործանվում են...

— Բացի դրանից, նա Հենրիին ծանոթացրեց ուրիշ մի ջահիլ ու գեղեցիկ կնոջ հետ, և յես շուտով նկատեցի, վոր նրա սրտի սիրելին մենակ յես չեմ: Հենրին այգ բանն ուղղակի զգացնել չեր տալիս, բայց չե՛ վոր սիրած մարդու սառնութիւնը զլացվում ե ամեն ըտպի: Սկզբում յես ինձ մխիթարում էլի նըրանով, թե դա ինձ թվում ե միայն, վոր նա փոխվել ե դեպի ինձ, բայց սարսափելի ճշմարտութիւնը բացվեց շուտով: Մի րոտ կտոր-կտոր էր լինում, բայց չեյի համարձակվում սիրած մարդու մի խոսքով անգամ հանդիմանել...

— Այդ մարդը կամենում էր ամուսնացնել Հենրիին և դրա

համար նրան համոզում էր, վոր ինձ ու յերեխաներին ծախի իրեն, վորպեսզի, մի կողմից, մեր վաճառքից ստացած փողով ծածկի թղթախաղի պարտքը, իսկ մյուս կողմից — կարգին մարդ չերևա հարսնացուի աչքում... Մի սարսափելի որ Հենրին հայտնեց ինձ, վոր գործով պիտի գնա ուրիշ քաղաք, ուր կմնա մոտ չերեք շաբաթ: Նա փայտիայեց ինձ նախկին քնքշանքով և հավատացրեց, թե կաշխատի շուտով վերադառնալ: Բայց չես զգում ելի, վոր նա ինձ հրաժեշտ է տալիս ընդմիջտ, վոր սրանով ամեն ինչ վերջանալու յե... Կարծես քարացած, չկարողացա վոչ խոսել, վոչ էլ լաց լինել այդ սարսափելի բոլորչին: Նա միքանի անգամ համբուրեց ինձ ու յերեխաներին և, ինչպես յերևում էր, ինքն էլ հուզված էր: Հետո ձի նստեց ու գնաց... Յես աչքերով հետևեցի նրան, մինչև վոր թագնվեց հեռվում: Այդ ժամանակ յես ուշաթափվեցի...

— Նույն որը չեկավ Հենրիի հորեղբոր վորդին և սասանի ժպիտով ասաց, վոր ինձ ու յերեխաներիս գնել է... Յես կրկին ուշաթափվեցի: Յերբ նորից ուշքի չեկա, նա ցույց տվեց ինձ գնման թուղթը. յես, խկապես, համոզվեցի, վոր յերեխաներիս հետ միասին ծախված եմ դրան այն մարդու կողմից, վորին ամենից ավելի չեմ սիրել աշխարհում: Յես անիծեցի իմ նոր տիրոջ և գոռացի յերեսին, թե ավելի շուտ կմեռնեմ, քան թե անձնատուր կլինեմ նրան:

«Ինչպես ուզում ես, — պատասխանեց նա: — Բայց իմացած չեղիր, վոր չեթե համառես, յերեխաներիդ կծախեմ և այնպես կանեմ, վոր էլ յերեք չտեսնես նրանց... Առաջին իսկ որը, յերբ քեզ տեսա, վորոշեցի, վոր դու պետք է իմ ձեռքի տակ լինես: Դրա համար յես Հենրիին սովորեցրի թուղթ խաղալ, ծանոթացրի ուրիշ կնոջ հետ և ամեն բան սարքեցի այնպես, վոր նա զրավվի նրանով և ցանկանա ամուսնանալ: Քո ուշաթափումներից, արցունքներից ու ճիչերից ամենին չեմ վախենում, և չեթե կամովին անձնատուր չլինես, ինչ յես իրավունք ունեմ պահանջելու, այն ժամանակ կստիպեմ ուժով»:

— Նա չերկար խոսեց այս վողով: Յեվ յես զիջեցի, վորովհետև ինձ էլ վոչինչ չեք մնում, յեթե չեյի ցանկանում յերեխաներից զրկվել: Ամեն անգամ, յերբ յես սարսափով նրան հեռացնում էի ինձանից, նա ինձ լռեցնում էր յերեխաներս ծախելու սպանալիքով... Ո՛ր, ինչպես էյի ասնջվում: Ինչ տանջանքներով էի փրկում իմ նախկին յերջանկութունը... Մերել ընդմիջտ կոր-

ցըրած մեկին և հողով-մարմնով պատկանել ուրիշին, ատելի և զզվելի մեկին, դրանից էլ թնչը կարող է ավելի վատ ու սարսափելի լինել այս աշխարհում... Հենրին սիրում էր, յերբ կարգում էի, յերգում կամ դաշնամուրի վրանվագում. սիրում էր և պարել ինձ հետ: Նրան փոխարինողը նույնպես ստիպում էր ինձ անել այդ բոլորը. դա, իհարկե, մի նոր տանջանք էր ինձ համար: Իսկ հրաժարվել անկարելի յեր, վորովհետև այն ժամանակ պետք է տուժելին անմեղ յերեխաներս:

— Աղջիկս՝ Ելիզան շատ հանգիստ և համեստ բնավորութուն ուներ, և նրան դժվար էր բարկացնել, կովացնել: Բայց տղաս՝ Հենրին, հոր նման հպարտ էր ու տաքարյուն, բացի դրանից, սովոր չեք, վոր հետը կոպիտ վարվին: Չար մարդն իր վերաբերմունքով հաճախ բարկացնում էր նրան, և դրանից ոգտրվելով, սաստիկ պատժում նրան: Ճիշտ է, որինքն ինքը իրավունք էր տվել նրան՝ վարվել մեղ հետ այնպես, ինչպես խելքը կտրում է: Բայց, չնայած նրա բոլոր պակասութուններին, նրա մեջ, այնուամենայնիվ, մնացել էր դեռ բնածին ազնվութուն, իսկ դա ստիպում էր նրան փնտռել վոչ այնքան այն իրավունքը, վոր մարդկանց կողմից գրված էր թղթի վրա, վորքան, այսպես ասած, բարոյական իրավունք: Նա կոպիտ ուժի դիմում էր միայն ծայրահեղ դեպքերում:

— Յես աշխատում էյի յերեխաներիս հարգանք և հնազանգութուն ներշնչել դեպի նա և այնպես էյի անում, վոր վորքան կարելի չեքիչ յերևան նրա աչքին: Բայց և այնպես նրանց փրկել չկարողացա: Չայրացած, վոր չեմ կարողանում և չեմ էլ ուզում սիրել իրեն, Բուտլերը — այսպես էյին կոչում այդ ժարդուն — ծախեց նրանց մի որ, յերբ ասացի, թե վոչ միայն չեմ սիրում իրեն, այլև զզվում եմ նայելուց: Նա ցույց տվեց ինձ յերեխաներիս վաճառելու թուղթը և ստացած փողը — իմ անմեղ յերեխաների արյան գինը... Յես անիծեցի մարդկանց և ամբողջ աշխարհը ու խենթութուններ արի: Բուտլերն աշխատեց հանգըստացնել ինձ, ասելով, թե չեթե սիրով վերաբերվեմ իրեն, թույլ կտա յերեքն յերեխաներիս տեսնելու... Դրանով կարողանում էր զսպել ինձ:

— Յերեխաները ձեռից խլած կինը ամեն բան կարող է անել, միայն թե հնարավորութուն ունենա յերեխաներին տեսնելու: Յեվ յես սկսեցի ինձ բռնադատել, աշխատելով ցույց չտալ այն, ինչ կատարվում է ներսս, յերբ նա փայտոյում էր ինձ:

Իրա համար նա խոստացավ յերեխաներին չեռ գնել: Յես հավատացի և կրկնապատիկ ուշագիւր չեղա դեպի նա:

— Մի անգամ, ինչպես պատահեց, անցա այն տան առջևից, ուր ստրուկներ եյին ծախում: Պատահաբար բաց դռնից նայեցի բակը: Կարող ես յերեւակայել, թե ինչ պատահեց ինձ, յերբ տեսա այնտեղ իմ փոքրիկ Հենրիին: Նա յել նկատեց ինձ, դուրս պրծավ իրեն բռնող նեղրերի ձեռից և, արցունքն աչքերին, վազեց ինձ մոտ ու դողահար յերկու ձեռով կախ ընկավ փեշերիցս: Նեղրերը վազեցին նրա չեռեից, թափելով աչքախի հայտնաբերներ, վոր յերբեք չէյլ լսել: Նրանցից մեկը (աչնպիսի սարսափելի դեմք ուներ, վոր Սամբոն դուրեկան է նրանից) կոպիտ ձևով յերեխան պոկեց ինձանից և սպառնաց, թե նրան կխրատի, թե ինչ է նշանակում դուրս փախչել անցորդներէ մոտ: Իմ բոլոր ջանքը՝ փափկացնել այդ դահիճների սիրտը— ապարդյուն անցավ: Յես ավել նրանց մոտոս յեղած ամբողջ փողը, — իսկ դա բավական շատ էր, վորովհետև ինձ հանձնարարված էր տան համար խոշոր գնուճներ կատարել — բայց նրանք չվերցրին: Իմ բոլոր աղաչանքներին ու յերգումներին, թե դա իմ վորդին է, պատասխանում էյին հեզանքով: Յերեխաս ճշում էր, լալիս, փեշերիցս կախ ընկնում և աղերսում, վոր վերցնեմ-տանեմ իրեն և չթողնեմ այդ չար մարդկանց մոտ .. Ո՛ր, վորքան սարսափելի յեր այդ... Յես յերեխաս խլում էյի նեղրերից, իսկ նրանք ինձանից: Այդ կովի մեջ նրանք շորերս պատտեցին և քիչ մնաց կուռս դուրս գցեն: Մեր շուրջը բազմութուն հավաքվեց, բայց վոչվոք պաշտպան չկանգնեց մեզ: Բոլորը հետաքրքրությամբ ու բավականությամբ նայում էյին այդ ձրի տեսարանին: Գտնվեցին նույնիսկ մարդիկ, վորոնք ուղղակի ծաղրում-ծիծաղում էյին իմ անոգ դրության վրա... Ինչ կարող էյի անել: Իհարկե— վոչինչ: Դահիճները հաղթեցին:

— Յես խելագարի պես վազեցի տուն: Ականջումս շարունակ հնչում էր յերեխայիս սիրտ կտրատող ձիջը, տեսնում էյի նրա՝ ինձ վրա գցած աղբսող հայացքը. յերբ նրան տանում էյին: Բուռլերը տանն էր: Մի կերպ, անկապ, կցկտուր, լոց լինելով պատմեցի պատահածը և աղաչեցի՝ յերեխայիս վերագարձնել: Բայց նա ծիծաղելով պատասխանեց, թե Հենրիի համար ավելի ոգտակար է գտնում, վոր նա մնա այնտեղ, ուր գտնվում է, վորովհետև չես իմ խելառությամբ միայն փչացնել կարող եմ նրան. իսկ այն մարդիկ, վորոնց նա հանձնված է, պիտանի

մարդ կղարձենն նրան, կսանձահարեն նրա կատաղի բնավորությունը... Կատաղությունս բռնեց: Հազիվ եմ հիշում, թե ինչպես վերցրի սեղանին դրված դանակը և հարձակվեցի այդ չար դեկ վրա և տեղնուտեղը ուշագնաց յեղա:

— Չգիտեմ, վորքան ժամանակ մնացի այդ անգիտակ դրության մեջ. յերբ, վերջապես, ուշքի յեկա, տեսա պառկած եմ մի մաքուր, բայց բոլորովին պարզ կահավորված սենյակում, վոր սկի նման չեր իմ նախկին բնակարանին: Անկողնիս մոտ պառկած էր մի պառավ նեղրուհի, վորին առաջ չէյլ տեսած: Նկատելով, վոր ուշքի յեկա, այդ կինը դուրս գնաց և միքանի բոպե անց վերադարձավ մի մարդու հետ. դա բժիշկ էր, վոր միքանի անգամ յեղել էր մեր տանը: Հարցուփորձից իմացա, վոր Բուռլերը գնացել է, հրամայելով, վոր ինձ փոխադրեն ծառաների սենյակներից մեկը և կարգադրել է լավանալուն պես ծախել ինձ: Իմացա նաև, վոր ջերմախտ ունեմ և վոր միքանի շաբաթ է պառկած եմ: Մեռնել էյի ուղում սրտանց, բայց բախտը մերժեց...

— Յերբ սկսեցի վոտի կանգնել, ինձ խնամող կինը սանրեց մազերս ու վորքան կարելի յե լավ հագրեց: Գալիս էյին սղամարդիկ, ծխում, ծիծաղում, նայում ինձ ինչպես ապրանքի և, առանց քաշվելու, քննադատում էյին իմ արտաքինը— յերեսս, աչքերս, հասակս: Յես նրանց նայում էյի այնպիսի չար աչքերով և նրանց հարցուփորձին պատասխանում էյի այնպիսի շամառ լուությամբ, վոր նրանցից վոչվոք չեր ուզում Բուռլերի նշանակած գինը տալ ինձ: Գնողներից մեկը սպառնաց ձեռնել ինձ, յեթե չես ուրախ դեմք չլինեմ, բայց այդ սպառնալիքը բնավ չազդեց վրաս:

— Մի անգամ մի գնորդ յեկավ, անունը Սոյուաբոտ. դա ինձ վերաբերվեց կարեկցությամբ: Համոզեց ինձ՝ իմ վշտի պատճառը վատահել իրեն: Խոստացավ փնտռել յերեխաներիս և առհասարակ անել ամեն մի հնարավոր բան, վոր նորից լավ զգամ ինձ: Նա գնեց ինձ և տարավ իր տունը: Մյուս որը նա գնաց այն տունը, ուր յերեխայիս տեսել էյի, վորպեսզի Հենրիին առնի: Բայց առևտրականն ասել էր, թե տղայիս միքանի ժամանակ առաջ ծախել է մի պլանտատորի վրա: Հենրիի մասին էլ բան չլսեցի: Սոյուաբոտը փնտռեց և աղջկաս: Աղջիկս գտնվում էր մի պառավ կնոջ մոտ, վորը կտրականապես հրաժարվել էր ծախել նրան՝ ինչ գնով ուղում է լինի...

—Յեթե Ստյուարտի հոգատարութիւնն ու լավ վարվեցողութիւնը չլինէր, յես չեյի դիմանա յերեխաներէս չտեսնելու վշտին: Նա անկեղծորեն կապվեց ինձ հետ և յես, յերախտագիտութիւնից, նույնպէս սիրեցի նրան, վորքան կարող եյի ալք բոլոր վշտերից հետո: Մի տարի անց մի ուրիշ տղա ունեցաւ... Ո՛ր, վորքան թանգ եր այդ յերեխան ինձ համար... Այնքան թանգ, վոր չեյի կարող թուլ տալ, վոր կենդանի մնա... Յես ամիրանխմացրի նրան և կրճքիս սեղմած, այնքան որորեցի, մինչև վոր քնեց հովիտայն... Շատ տխրեցի այդ յերեխայի համար: Բոլորը կարծում էյին, թե պատահաբար եմ թունավորել, ու խղճում էյին ինձ... Բայց ինքդ մասձիր, թե մահից ավելի ինչ լավ բան կարող եյի տալ այդ յերեխային: Աննիերի խտտաբերտութիւն չէր լինի իմ կողմից, յեթե նրան թողնելի ապրեր այն բանից հետո, յերբ հասկացա իրավազուրկ սարուկների գոյութիւն ամբողջ սարսափը...

— Նորից խոյերա յեղավ: Ստյուարտը մեռավ: Մեռան բոլորը, ովքեր կամենում էյին ապրել. բայց յես, տանջված, թուլ, վոր վոտիս վրա հաղիվ էյի կանգնում և մահը խնդրում էյի պորպես վողորմութիւն, մնացի կենդանի: Ինձ կրկին ծախեցին, և յես ձեռքից-ձեռք ընկա, մինչև վոր, վերջապէս, յեկա այստեղ...

Կինը հանկարծ ընդհատեց իր խոսքը և, յերեսը ծածկելով, լաց յեղավ: Նրան լսելով, Թոմասը իր սեփական տանջանքները մոռացավ:

— Ո՛ր, ինչքան ցավ կա աշխարհում, — արցունքն աչքերին շշնջաց Թոմասը, նայելով դժբախտ կնկան, վոր իր ամբողջ հոգին բացել էր նրա առաջ: — Մի՛թե այդ բոլորը հարկավոր ե: Մի՛թե մարդիկ ստեղծված են տանջանքի համար:

Գուշակելով կարծես, թե ինչ է կատարվում Թոմասի սրտում, և կամենալով ավելի հուզել, ալեկոծել նրան, Կասսին, մի փոքր լռելուց հետո, ասաց իսկ ձայնով.

— Յե՛վ դու ասում ես, թե աստված կա, վոր ամեն ինչ լսում ու տեսնում է և վերջը ամենքին իր արժանի հարկը կտա: Նույնն ասում էյին ինձ վանքի կույսերը: Նրանք հավատացնում էլին, թե հանդ դատաստան է լինելու, ուր քննվելու յի ամեն բան. առաքինութիւնը վարձատրվելու յի, արատը՝ պատժելու: Իսկ մտածել էք արդոք, մխիթարիչներ, թե ինչ բան է անմեղ տեղը տանջվել և տեսնել սեփական յերեխաների տառապանքը:

Մի՛թե դուք յերեակայում էք, թե բավական և մարդուն տալայն աշխարհում վարձատրութիւնն ստանալու խարուսիկ հուշար, վորպեսդի նա չզգա այն հարվածները, վոր ամեն կողմից թափվում են իր գլխին, կամ վարպետի դրանք ընդունի խոնարհութիւն ժպտով... Վնչ, վնչ, այդ բոլորը սուտ ե, հիմարութիւն և կեղծավորութիւն... Յեթե աստված կա, ավելի լավ չի հենց սկզբից թուլ չտա շարութիւնն ու անարդարութիւնն, քան հետո դատի այն, ինչ ինքը թուլ է ավել:

— Ջահել ժամանակս յես նույնպէս հավատում էյի աստուծուն և աղոթում էյի նրան, բայց, ժամանակի ընթացքում, յերբ շարութիւն անսահման ծովում մի կաթիլ բարութիւնն օտտա միայն, յերես թեքեցի նրանից... Ավելի ճիշտը, դադարեցի նրա գոյութիւնը հավատալուց և ավելի ու ավելի քարացա սրտով, այնպէս վոր հիմա հավատում եմ միայն շարութիւնն ու ծիծին... Յե՛վ ինքս ել ընդունակ եմ դարձել շարութիւնն .. յես ել չեմ տատանվի, չեմ դողա, յեթե շարութիւնն անելու բան լինի, — տենդային հուզման մեջ շշնջաց Կասսին, ձեռները կոտորելով և աչքե, ըր փայլեցնելով: — Այո, իմ ձեռը չի դողա, յեթե աշողվի խեղդել այն հրեշներից մեկին, վորոնք այնպէս տանջում են ուրիշներին... Յե՛վ այդ կանեմ... յեթե չանեմ այսոր, կանեմ վաղը... վորքան շուտ, այնքան լավ: Իսկ դրանից հետո թող ինձ կենդանի վառեն:

Նա վայրենի քրքջաց, բառնցքները շարժեց ջղաձգաբար և շուրջը նայեց բոցավառ, խենթութիւն կրակով լեցուն աչքերով: Թոմասը սարսափեց և ակամա շարժում արավ նրանից հեռանալու: Կասսին նկատեց այդ և, կամքի սաստիկ ուժ գործ դնելով, տիրեց իրեն, կույցավ Թոմասի վրա և գրեթե հանդիստ ու պարզ ձայնով ասաց.

— Դու ինձանից մի վախի: Յես քեզ վոչինչ չեմ անի, բացի այն փոքրիկ բարութիւնից, վոր կարող եմ... Քեզ ինչպէս ես զգում: Զուր չիս ուղում:

— Տվեք, խնդրեմ. — պատահանեց Թոմասը զարմացած, նայելով այդ տարորինակ կնոջը, վոր կարողանում էր արագորեն մի ծայրահեղութիւնից մյուսին անցնել:

Թոմասն ուզում էր ելի ինչ-վոր բան ասել, բայց Կասսին ձեռի շարժումով կանգնեցրեց նրան և ասաց առաջվա իր հեղնական ծիծաղով.

— Ել խոսքեր մի վատնիր — ավելորդ ե: Հիմի ինձ հակա-

— Պետք է կանչել Սամբոյին ու Կլիմբոյին, — ասաց նա, — թող յերգին ու պարեն մի վորեւե վայրենի պար. դա մոռալ մըտքերս կցրի:

Լեզրին դուրս յեկավ պատշգամ և կանչեց իրեն մոտիկ նեղրերին:

Գիշերվա ժամը յերկուսին Կասսին, Թոմասի մոտից դառնալիս, ճիչ, յերգ ու պարի դոփուլուն լսեց հյուրասենյակից, և մեջընդմեջ շան հաջոց: Նա պատշգամ բարձրացավ և ներս նստեց: Լեզրին ու յերկու նեղրը բոլորովին հարբած էին. նրանք յերգում էին, վռոնում, աթոռները շարաում և զզվելի ծամածուծութուններ անում...

ԳԼՈՒԹ XXII

ՅՈՍԱՍԻ ՇԵՏԱԳԱ ՓՈՐՁՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ

Անցավ մի քանի օր: Թեև Թոմասի վերքերը դեռ բոլորովին չէին բուժվել, բայց նրան քշեցին աշխատանքի: Թոմասն անարտուճ և բարեխիղճ կերպով կատարում էր բոլորը, ինչ հրամայում էին, և յերբեք չէր հրաժարվում անգամ ամենածանր պարտականութունից:

Բայց աշխատելը քանի դնում դժվարանում էր, վորովհետև դեռ տկար էր. բացի բարոյական տանջանքները, բացի մշտական վերավորանքներն ու ստորացումները, նա ստիպված էր տանել և ծանր ֆիզիկական ցավ: Թոմասն սկզբում հուշառներ, թե յերեկոները գեթ մի քանի բուսելի հանդիստ կունենա, թե կարող է յերբեմն վորեւե բան կարգալ: Բայց դա միանգամայն անկարելի յեղավ: Թոմասը, ինչպես և մշտաները, աշխատանքից վերադառնում էր այն աստիճան թուլացած, ուժասպառ. վոր կարողանում էր միայն մեկնվել և անշարժ պառկել: Լեզրին իր ստրուկներին աշխատեցնում էր անգամ կիրակի օրերը:

Այժմ Թոմասն էլ չէր գարմանում նեղրերի տխուր, մոռալ տեսքից: Նա ինքն սկսել էր կորցնել իր աշխուժութունը: Կասկածը հետզհետե սողաց նրա սիրտը: Նրան թվում էր արդեն, թե սարսափելի չարիքի դեմ պայքարելն իր ուժից վեր է:

Լեզրին արդեն նկատել էր Թոմասի արամազրության մեջ կատարված փոփոխութունը և հրճվում էր: Նա հավատացած էր, թե անհնազանդ ստրուկին ընկճել է արդեն:

Մի անգամ յերեկոյան Թոմասը մտախոհ նստած էր հանդ-

չող խարույկի առաջ: Հանկարծ առջևը տեսավ տիրոջը — Լեզրին:

— Հը՛, վճնց ես, սարսաղ, — ասաց նա: — Դու, ինչպես յերեկում ե, սկսում ես անձնատուր լինել... Այդպես էլ գիտելի, վոր խուճուճ զլխիցդ կհանեմ հիմարություններդ:

Թոմասը լուռ էր:

— Դու հիմար եյիր, — շարունակեց Լեզրին: — Դու քո սեփական ոգուտը չհասկացար: Յես քեզ ուզում եյի ախր լավ գործի դնել: Ձե՛ վոր դու ալելի լավ կապրելիր, քան Սամբոն ու Կլիմբոն, և քիչ էլ աշխատանք կանելիր: Ծե՛ծ ուտելու փոխարեն ինքդ ուրիշներին կձե՛ծելիր, մի՛թե լավ չէր լինի:

— Վոչ, պարոն, — համողված պատասխանեց Թոմասը:

— Թող հիմար համառությունդ, — ասաց Լեզրին, — և իմ կողմն անցիր: Յես քեզ համար կարող եմ շատ բան անել:

— Վոչ, — տաքացած պատասխանեց Թոմասը, — կապրեմ իմ ուզածի պես. չես չեմ կարող խղճիս հակառակ դնալ:

— Ե՛, հիմար, — բարկացած ասաց Լեզրին, թքեց Թոմասի վրա ու վտտով լսփեց նրան:

Թոմասը մնաց մենակ: Նա տխուր էր: Այդ գիշեր նա յերկուր մտածեց իր վիճակի մասին: Վոչ, նա չի չեմ թարկվի Լեզրին, նա իրեն հավատարիմ կմնա և արիաբար կտանի ամեն տեսակ վերավորանքներ, ու տանջանքներ, վոր դեռ տեսնելու չէ:

Այդ որվանից Թոմասը կարծես փոքր ինչ աշխուժացավ: Լեզրին ալդ նկատեց:

— Թոմասին ի՛նչ է պատահել, — հարցրեց նա Սամբոյին: — Մի քանի օր առաջ այնպես տխուր էր, իսկ հիմա ուրախացել է: Գուցե ուզում է փախչել, — ասաց Սամբոն:

— Թող մի փորձի: Այն ժամանակ էլ կենդանի չի մնա:

— Այո, ել ապրել չի կարող, — ասաց Սամբոն: — Մեր շնեքով ենպես յետելցն ընկնենք վոր: Այ կուրախանանք հա, յեթե շներն ատամները խրեն գրա մարմինը:

— Տես, ուշքդ վրադ պահի, այդ Թոմասին լավ հսկիր, — ասաց Լեզրին:

— Վստահ յեղեք, — ասաց Սամբոն, — աչքաթող չեմ անի:

Այս խոսակցութունը տեղի չէր ունենում, այն ժամանակ, յերբ Լեզրին ձի չէր նստում, վոր հարեան քաղաքը դնա:

Գիշերը առն վերադառնալիս նա մտածեց ձիու գլուխը թեքել և գնալ ստրուկների բնակավայրը, վորպեսզի տեսնի, թե այնտեղ ամեն ինչ կարգին է արդյոք:

Հիանալի, լուսնյակ գիշեր եր: Լիզրին դեռ քիչ հեռու չեր ստրուկներէ բնակավայրից, չերբ յերգի ձայն լսվեց: Դա բոլորովին չտեսնված բան եր: Ականջ դնելով՝ Լեզրին իսկուշն գլխի ընկավ, վոր Թոմասն և չերգում:

— Այդ դժու յես, սևամորթ,— գոռաց նա, ձին դեպի Թոմասը քշելով և մտրակը նրա վրա թափ տալով:— Ի՞նչպես ևս համարձակվում վոռնալ այստեղ, յերբ դու պետք ե անկողնում պառկած լինես: Ձենդ կտրիք իսկուշն և գնա քնիր:

Լեզրին սարսափելի գրգռված եր Թոմասի ուրախ տրամագրությունից: Ուստի նեզրի գլխին ու ուսերին հարվածներէ կարկուտ տեղաց:

ԳԼՈՒԽ XXIII

ԿԱՍՍԻԻ ՅԵՎ ԵՄՄԱՅԻ ՓԱՒՈՒՍՏԸ

Ուշ յերեկո չեր արդեն: Թոմասը դեռ չեր քնել: Նա տնակում նստած, ըստ սովորության, մտածում եր իր ընտանիքի մասին: Հանկարծ մեկը ձայն տվեց: Թոմասը նայեց և մթան մեջ տեսավ Կասսիին:

— Թոմաս,— ասաց Կասսին հուզված,— ուզում ես ազատութուն ստանալ: Գնանք ինձ հետ:

Թոմասը լուռ եր:

— Այո,— շարունակեց Կասսին,— չեթե ուզում ես ազատութուն ստանալ, գնանք անմիջապես: Լեզրին պինդ քնած ե, չես նրա գինու մեջ փոշի չեմ լցրել, այնպես վոր շուտով չի զարթնի. նրա սենյակի դուռը բաց և, կացինը պատրաստել եմ...

Թոմասը միայն հիմա հասկացավ, թե ինչու յեր Կասսին հուզված:

— Ձե,— ասաց,— չես չեմ փախչի: Դու փախիր, քեզ հետ տար և խեղճ Եմմային, բայց Լեզրին չպետք ե սպանես:

— Դու բարի մարդ ես, Թոմաս, յես այդ գիտեմ. բայց ել սպասել չեմ կարող և կարծում եմ, վոր մի այգպիսի դազան սպանելը, ինչպիսին Լեզրին ե, հանցանք չի: Նրա մահը կլինի բոլոր գոհների հատուցումը:

Յերկար Թոմասը համոզում եր Կասսիին այդ բանը չանել: Նրան հաջողվեց, վերջապես, համոզել դժբախտ կնոջը, վոր իր փրկության համար պետք ե ուրիշ ճանապարհ ընտրի:

Կասսին, յերկար մտածելուց հետո, գտավ այդ ճանապարհը:

Լեզրի տան ընդարձակ տանիքը (չերգակը) լիքն եր նախկին տանտերերի անպետք կահ-կարասիներով՝ փոշով ու վոստայնով ծածկված: Այդ նույն տեղը գրված ելին անագին արկըղներ, վորոնցով մի ժամանակ բերել ելին այդ կարասիները: Պատերին դեմ արած՝ նրանք հիշեցնում ելին դազաղներ: Կեղտի հաստ շերտով ծածկված փոքրիկ լուսամուտից արևի հագլիվ միքանի շող եր ներս ընկնում. այդ լուսավորության մեջ այդտեղ գտնվող առարկաներն ընդունում ելին ամենաֆանտաստիկ ձևեր: Այնտեղ վորեւ բանի համար ուղարկված նեզրերը, չկարողանալով կարգին նայել առարկաներին, սարսափում ելին նրանցից, ինչ աչքերին յերևում եր, և կամպոսիկ իրենց ընկերներին պատմում ելին, վոր տանիքում մեծերն եր կան և ամեն տեսակ սատանաներ: Նեզրերն անչափ սնահալատ մարդիկ են, այդ պատճառով Լիզրի ստրուկների մեջ այն համոզումն եր գուցեցել, թե տանիքը «վտանգավոր ե:

Այգպիսի լուրերի տարածմանը ավելի նպաստում եր այն հանգամանքը, վոր տերը մի անգամ այնտեղ միքանի որով փակել եր մի անհնազանդ նեզրուհու, վորն այնտեղից ուղիղ գերեզմանատուն գնաց: Այդ որվանից շատերն սկսեցին հավատացնել, թե գիշերները տանիքից լսվում են սարսափելի ձայներ՝ հեկեկանքներ, հարվածներ, շղթաների շառաչուն, վոտների դոփշուն և աղաղակներ: Այդ պատմութունների լուրը հասավ Լեզրիին: Նա կատաղեց և փրփուրը բերանին հայտնեց ժողովված ստրուկներին, թե յեթե մի անգամ ել այդ տեսակ հիմարութուն լսի, բոլորին՝ մեկ-մեկ, շղթայակապ կպահի տանիքում, վոր համոզվեն, թե ինչ կա այնտեղ և ինչ չկա: Այդ սպառնալիքը նեզրերին հարկադրեց լեզուներն իրենց քաշել. բայց և այնպես առասպելը շարունակեց իր գոյութունը և հետզհետե հարստացավ նոր գունավորումներով, այնպես վոր սկսեցին խուսափել մինչև անգամ տանիքը տանոջ սանդուղքից և մուտքից:

Անավաստի՝ Կասսին մտածեց ողտվել այս առասպելից, վոր իրեն ու Եմմային ազատի ատելի մարդու անտանելի լծից:

Կասսիի սենյակը գտնվում եր հենց տանիքի տակ: Թոմասի հետ խորհրդակցելու հետևյալ իսկ որը Կասսին բացելուց կարգադրեց, վոր իր իրերը տանեն ներքին հարկում գտնվող սենյակը: Այդ մասին լսելով՝ Լեզրին շատ զարմացավ և հարցրեց ստրուկուհուն.

— Դա ի՞նչ ե նշանակում, Կասսի:

— Դա նշանակում է, վոր յես ուզում եմ ուրիշ սենյակում ապրել, և ուրիշ վոչինչ,—չոր պատասխանեց Չահել կինը:

— Ինչո՞ւ հանկարծ այդպես ուզեցիր, հետաքրքրական է իմանալ:

— Խելքիս փչել է, պրծավ գնաց:

— Գրողը տանի: Չե՞ վոր ամեն մի ցանկությունն վորեն պատճառ ունի: Կարծեմ, լեզուդ չի չորանա, լեթե ասես, թե ինչն է ստիպում քեզ փոխել սենյակդ, վորը, կարծեմ, իսկի չե՛ր վատ սենյակ չի, և վորի մեջ դու ապրել ես...

— Ինչո՞վ է լավ, չե՞րք նրա մեջ չեմ կարողանում քնել:

— Ո՞վ է քեզ խանդարում քնելու:

— Ո՞վ... գուցե, ասեմ, բայց չնեղանաս, յեթե քեզ դուր չգա:

— Ասա:

— Այնտեղ ամբողջ դիշեր սատանաներ են պար գալիս... հասկացմը,—նշանակալից ասաց Կասսին և մի այնպիսի հայացքով նայեց Լեզրին, վոր նրա մարմինը փշաքաղվեց:

— Յեթե չես հավատում,—շարունակեց Չահել կինը,—խորհուրդ կտամ ինքդ գրչերես այդ սենյակում, և դու քո սեփական տեղանքով կհամոզվես, վոր այնտեղ քանի ժամանակ ե՛մ ինչ սատանաներ են ապրում... Բայց գուցե և ինչ-վոր տանջված մարդկանց անհանդիստ հոգիներ են... Չգիտես, գուցե այնտեղ մեկին սպանել են մինչև քո այս տունն օտնելը,—կարծես ասաց նա իմիջի ալյուց, սուր աչքերը Լեզրի յերեսին հառելով:

Լեզրին ատամները կրճտեց և բռնեցքները սեղմած հարձակվեց խոսակցի վրա: Բայց Կասսին քրքրվելով շուտ յեկավ, ազատվեց հարվածից և վազեց, ասելով, թե յեթե նա հետևի իրեն, ինքը կհախվի տանիքում, վոր այնտեղ ավելի «ուրախ» լինի:

Լեզրին մտածեց: Կասսին այդ մարդու վրա տարորինակ ազդեցություն ուներ: Նա տեր էր, հրամայող ու դահիճ և շատ լավ էր հասկանում, վոր նա ամբողջապես գտնվում է իր իշխանություն տակ, բայց և այնպես, նա չեր կարող հաշվի չառնել այդ յեռանդուն կնոջը, վոր ամեն քայլափոխին նրա՝ տիրոջ կամքին հակադրում էր իր սեփականը: Նա Կասսին գնել էր հենց նրա համար, վոր լավ դաստիարակված էր և թվում էր՝ սգնվական ծագում ունի. դա շոյում էր Լեզրի ինքնասիրությունը, և նա աշխատում էր կտրել Կասսի հպարտությունը, վորպեսզի հետո պարծենա իր կոպիտ ուժով: Ստորացումն այդ

կնոջ մեջ արթնացրեց բոլոր ներհաճ կրքերը և ստիպեց լարել իր բոլոր ուժերը, վորպեսզի բարոյապես իրեն յենթարկի նրան, ով Ֆրզիկապես իշխում էր իր վրա: Յե՛վ այդ բանը աջողից նրան. Լեզրին թեև ինքն իրեն անգամ չեր խոստովանում, բայց սկսեց նրանից վախենալ և շատ բաներում յենթարկվել նրան:

Կասսին իր սենյակի պատերի և առաստաղի մեջ շշերի բկերը թաղել-հարմարեցրել էր այնպես, վոր քամու ամենաթեթև շունչն անգամ վռնոցի, լացի և ախուր գանգատի ձայներ հանի: Ապա նա դիտմամբ մարդիկ էր տանում այնտեղ, վոր այդ անարկու ձայները յսելով, սարսափահար ելին լինում: Պարզ է ինքնին, վոր դրա հետևանքով տանիքի մասին յեղած առասպելը կենդանացավ և նորից, չնայած տիրոջ սպառնալիքին, սկսեց խոսք ու զրույցի նյութ դառնալ պլանտացիայում:

Չար և տգետ մարդը սնահավատություն գերի չե: Իսկապես կրթված մարդը վոչնչից չի վախենում, վորովհետև ճշմարտությունը լուսավորում է նրա համար անհայտը, և նա այնտեղ տեսնում է կարգ ու ներդաշնակություն: Իսկ տգետ մարդուն աշխարհը պատկերանում է վորպես անկարգ քաոս, ուր սարսափելի արարածներ են վխտում:

Թոմասի հետ ունեցած զրույցը Լեզրի սրտում զարթեցրեց մանկական հավատալիքների մութ արձագանքները, բայց չարի ազդեցությունը այդ արձագանքները հիշեցնում էին նրան միայն բնություն մութ ուժերի մասին, վորոնք պատժում են հանցագործությունները:

Լավ իմանալով իր կատարած բաղամթիվ մութ գործերը, իմիջի ալյուց, և իր տան տանիքում գործածը, Լեզրին հավատաց ներ իմիջի ալյուց, և իր տան տանիքում գործածը, Լեզրին հավատաց ներ են կատարվում, և չհակառակեց նրան ուրիշ սենյակ փոխազրվելու:

Նույն այդ որվա յերեկոյան նա նստած էր իր սիրած տեղը՝ հյուրասենյակի բուխարու առաջ: Յեղանակը զգվելի չեր. բուքը վռնում էր, և ամբողջ տան մեջ լավում էլին այն սարսափելի ձայները, վոր փոթորկի ժամանակ լավում են միշտ սափելի ձայները, վոր փոթորկի ժամանակ լավում են միշտ սափելի ձայները: Լուսամուտների ապակիները զողողում էին ավերակ տներում: Լուսամուտներն ու դռները շրխում էլին, քամին էլին և գնդգնդում, փեղկերն ու դռները շրխում էլին, քամին սուլում, վռնում և լալիս էր ծխնելուչներին մեջ, իսկ բուխարուց ժամանակ առ ժամանակ ծխի քուլաներ էլին բարձրանում անհամար կայծերով լցված:

Լեզրին իր հաշիվներն եր ստուգում, իսկ Կասսին, վորին հրավիրել եր իր մոտ զրուցելու, նստել եր անշարժ, մտախոհ հայացքը կրակին հառած:

Վերջապես, Լեզրին հաշիվները դրեց մի կողմ և բաց արավ սեղանի վրա դրված հին հաստ գիրքը, վոր լիքն եր ամեն տեսակ ֆախտաստիկ պատմություններով մեռելների, ուրվականների և նման բաների մասին, վորոնք թույլ մտքերին կարող են սարսափ ազդել:

Լեզրին գիրքը թերթեց և հետո արհամարհանքով շարժեց մի կողմ:

— Դու միթե այս բոլոր հիմարություններին հավատում ես, Կասսի,—հարցրեց նա, կրակակալը վերցնելով ու բուխարու կրակը խառնելով:

— Նրա դեմքից, սակայն, պարզ չերևում եր, վոր նա այդ հարցնում ե նրա համար միայն, վորպեսզի իր սեփական սնահավատ համոզումներին պատասխան ստանա:

— Ակամա հավատում ես,—պատասխանեց Չահել կինը, օչքը չհեռացնելով կրակից և ժամանակ առ ժամանակ դիտմամբ ցնցվելով փոթորկի յուրաքանչյուր թափից:

— Հիմար-հիմար հեքիաթներ ես կարդացել, դրա համար ել քեզ թվում ե: Ասենք, դա կախված ե նրանից, թե ով ինչ խելք ունի: Յես կարող եմ հարյուր այդպիսի գրքեր կարդալ և, այնուամենայնիվ, վոչ մի բանի չեմ հավատա, վոչնչից չեմ վախենա, իսկ կանաչք պատրաստ եմ ամեն մի հիմարության հավատալու...

Կասսին նայեց նրան մի հայացքով, վորից Լեզրին միշտ սարսափում եր, վորովհետև այդ հայացքի մեջ արտահայտվում եր և՛ հեգնանք, և՛ սպառնալիք, և՛ ինչ-վոր մի ուրիշ բան, վոր Լեզրին չեր կարողանում վորոշել, բայց վորը ազդում եր նրան ամենաճնշող կերպով: Նրա համար առանձնապես անտանելի չեր Կասսիի անշարժ աչքերի լայնացած բիբերի սուր փայլը:

— Այ, դու չերևակայել ես, թե մեր տանն ինչ-վոր չար վոգիներ կան,—շարունակեց նա քիչ հետո, հեգնական չեղանակով, աշխատելով սիրտ տալ ինքնիրեն,—բայց, իսկապես, դրանք, քեզ վախեցնողները, քամին ու մկներն են միայն... Յեթե դու փոթորկի ժամանակ ծովի վրա լինելի, ինչպես չես եմ յիզել, արինակ, դու խելքդ բոլորովին կկորցնելի:

Կասսին շատ լավ եր հասկանում, թե այդ բոլորը Լեզրին

ինչու համար ե ասում և, վորպեսզի նրան հասցնի իր ցանկացած դրության, բոլոր ժամանակ իր սարսափելի խորհրդավոր հայացքը նրանից չեր հեռացնում:

— Ի՞նչ ես այդպիսի աչքերդ չոել վրաս: Ինչու չես պատասխանում,—բազկաթոռի մեջ կուչ գալով ձայնը բարձրացրեց Լեզրին:—Միթե կարո՞ղ ես ապացուցել, վոր դա մկներն ու քամին չեն:

— Բայց միթե մկները կարող են սանդուղից իջնելիս մարդու նման թիփփացնել և փակ դուռը բանալ,—դանդաղ, խոսքերը ատամների արանքից արտասանելով, հարցրեց Կասսին, հայացքի արտահայտութունը բնավ չփոխելով:—Միթե մկները կարող են մարդու կերպարանք ընդունել, մոտենալ քեզ և ձեռները տարածել քեզ վրա: Այ այսպես, ինչպես չես եմ անում:

Յեվ Կասսին դանդաղորեն վեր կացավ, սպառնալից շարժումով ձեռները բարձրացրեց նրա գլխավերև ու կարծես պատահաբար իջեցրեց Լեզրիի ուսերին, մեկը նրա այտին դիպցնելով: Նրա քարացնող հայացքի ազդեցության ներքո Լեզրին իրեն զգում եր ինչպես մղձավանջի մեջ. բայց Կասսիի սառուցի պես սառը ձեռի հպումից սթափվեց և սարսափելով նրա ձեռը նետեց դին: Ու հայնոյանքներ թափելով՝ նա բազկաթոռի հետ միասին քաշվեց մի կողմ:

— Թո՞ղ ֆոկլոսներդ,—խուլ ձայնով ասաց նա, ճակատի սառը քրտինքը սրբելով և աշխատելով թագցնել իրեն բռնած դողը:—Քո կարծիքով ո՞վ ե ման գալիս այդպես: Հո մողելներ չին իսկապես,—ավելացրեց նա, մեքենայորեն կրակակալով ծնկներին խփելով:

-- Յես ի՞նչ գիտեմ: Այդ բանը քեզ պիտի հարցնել. տերը դու չես և ինձանից լավ պիտի իմանաս, թե ինչ ե կատարվում այստեղ, քո տանը,—հեգնանքով պատասխանեց Կասսին:

— Բայց դու, հաստատ, տեսի՞ր ես այդ բոլորը... Իե խոսի՞ր, Կասսի:

— Ի՞նչ ասեմ: Ինքդ գնա այն սենյակը, և ամեն բան կիմանաս:

- Յեվ... դա տանիքից ե գալիս:
 - «Դա»-ն վո՞րն ե:
 - Այն, վորի մասին խոսում եյիր:
 - Յես շատ բանի մասին եմ խոսել...
- Լեզրին վեր թռավ և անհանգիստ յետ ու առաջ քայլեց,

քթի տակ ինչ-վոր մումուալով: Վերջապես, կանգնեց նա Կասսիի առջև և ասաց:

— Յես ուզում եմ իմանալ՝ դա ի՞նչ բան է: Ատրճանակներս կվերցնեմ և կերթամ այնտեղ:

— Գնա՛: Գուցե նրանք վախենան քո ատրճանակներից և դադարեն սուռնդ սարսափի դցելուց:

Լեգրին կատարած՝ վուրը գետին խփեց:

— Ե, դրողը տանի քեզ քո հնարքներով, — մանչաց նա, սարսափով նայելով, թե ինչպես է Կասսին շրթունքները չեա տանում և սուր փայլուն ատամները կրճատում, պահպանելով դեմքի մնացյալ մասի կատարյալ անշարժությունը, վուրը, քրքիջի հետ միացած, իսկապես, սարսափելի սպալորություն եր անում:

— Թո՛ղ, սատանի անունը մի հիշի... Լսի՛ր, — հանկարծ դեմքին ու աչքերին վախեցած արտահայտություն անելով, շնչաց ջանել կինը, մատնացույց անելով անկյունի փայտե ահագին պատյանի մեջ գտնվող ժամացույցը, վուրը հենց նոր սկսեց խփել:

Լեգրին մեքենայորեն համրեց տասերկու հարված. վերջին հարվածի ժամանակ Կասսին նկատեց, վոր Լեգրին չերկյուղով յետ նայեց, կարծես յետևն ինչ-վոր սարսափելի բան տեսնելուց վախենալով:

— Կեսգիշեր է, — խորհրդավոր շուռնալով շարունակեց ջանել կինը, վերկենալով և ժոտենալով այն դռանը, վոր միջանցքով տանում եր դեպի վերին հարկի սանդուղը: — Լսում ես, — ավելացրեց նա, այդ դուռը բանալով և դեպի միջանցքի խորքը ցույց տալով:

— Լսում եմ՝ ինչպես է քամին վոռնում, — պատասխանեց Լեգրին, աշխատելով սիրտ տալ իրեն:

— Չե, Սիմոն, — կամացուկ ասաց Կասսին, նրա ձեռը բռնելով ու իր յետևից դեպի միջանցքը տանելով, — սա քամին չի... Լսվ լսի՛ր:

Վերևից խուլ վոռնոցի և լացի ձայներ կլին գալիս: Լեգրիի ծնկներն իրար դիպան, և նա շղաձորեն պինդ բռնեց իր ուղեկցի ձեռը:

— Ատրճանակներդ վերցրու և գնա այնտեղ... Ի՞նչ ես կանգնել... Չե՞ վոր ուզում ելիր գնալ այնտեղ և սպանել բոլորին, ովքեր խոսվում են այս տանգիշերվա հանգիստը, — կծու ծաղրով շարունակեց Կասսին:

— Չե, յես այնտեղ չեմ գնա, — ընկճված ձայնով պատասխանեց Լեգրին, աշխատելով յետ դառնալ հյուրասենյակը:

— Ինչո՞ւ: Չե՞ վոր դու չես հավատում վոգիներին, ուրվա-կանների և նման «հիմար» բաների. ել ինչո՞ւ չես գնում... Չե, — շարունակեց Կասսին, նրա ձեռը պինդ բռնելով, — յես հիմի քեզ կստիպեմ, վոր գնաս, վորպեսզի ինքդ համոզվես, թե սուտ չեմ ասում, ինչպես սուտ չելին ասում ուրիշները, չերը խոսում ելին, թե տանը վոգիներ կան:

Յեվ նա համառոտ Լեգրին ուժով քաշ տվեց մութ միջանցքով, ծիծաղելով այնպիսի ծիծաղով, վորից Լեգրիի արյունը սառավ յերակներում:

Մինչ այդ վերից շարունակ լսվում ելին վոչ մարդկային ձիչեր, վոռնոցներ ու ծիծաղներ:

— Թո՛ղ ինձ. թո՛ղ... անիծյալ, — գոռաց Լեգրին, աշխատելով ազատվել իրեն կնոջ ամրապինդ ձեռներից:

Ամբողջ ուժը լարելով՝ նա, վերջապես, ազատվեց և վազեց յետ, դեպի հյուրասենյակը, վորտեղից ուրախ լույս եր ընկնում: Կասսին ծիծաղելով հետևեց նրան:

— Հը՞, համոզվեցի՞ր հիմի, — հարցրեց Կասսին, հրճվելով Լեգրիի սարսափից ստուած դեմքով, չերը նա թուլացած՝ բազկաթուղի նստեց կրակի առաջ և ամբողջ մարմնով սկսեց դողալ ուռի տերևի պես:

— Գրողը տանի քեզ, — մոմաց նա, չերեսը շրջելով:

— Դա ինչո՞ւ համար է: Տանիքի ձայները հո յես չեմ հանում... Ա՛խ, Սիմոն, Սիմոն, մի՞թե կարելի չե անհասկանալի բաները հերքել, — շարունակեց Կասսին ուրիշ տոնով: — Ինքդ գիտես, վոր վախկոտներից չեմ և այժմ, չերևի, հասկացար, թե ինչո՞ւ յեմ սենյակս փոխում, — խորհրդավոր արտահայտությամբ ավելացրեց նա:

Լեգրին լուռ եր. նա, աչքերը հատակին հառած, դողում եր ամբողջ մարմնով: Հետո վերկացավ, մոտեցավ հին պահարանին, վերցրեց մի շիշ ողի և միանգամից այնքան խմեց, վոր իսկույն շամեց: Կասսին չարախնդունությամբ հետևում եր նրան, մերթ ծաղրելով, մերթ կեղծ յերկյուղ ցույց տալով: Շշի ողին խմելով՝ Լեգրին պահանջեց, վոր Կասսին իրեն նշարան տանի: Կասսին կատարեց այդ, չղաղարելով, սակայն, բոլոր ժամանակ խայթել նրան: Յերբ, վերջապես, Լեգրին քնեց հարբած մարդու ծանր քնով, Կասսին հաղթական ժպիտով դուրս յեկավ նրա նշարանից:

Մի հավատարիմ նեպրի ողնությամբ նա հետևյալ որերը կարողացավ այնպես անել, վոր պլանտացիայի մյուս բնակիչներն աշխատում էլին վորքան կարելի չե խուսափել «անիծյալ» տնից, իսկ Լեգրին ինքն սկսեց գիշերները գնալ հարևանի մոտ, լուրջ կերպով մտածելով այն մասին, վոր մի այլ տեղ մի վորևե հասարակ, եթանագին տուն շինի իր համար, իսկ հինը քանդի հիմնահատակ, վորպեսզի նրանից ել վոչ մի հետք չմնա:

Այդ բոլորը կասսին անում եր մի նպատակով, վոր իր փախուստը գլուխ բերի: Նրա նպատակն այն եր, վոր Լեգրին հեռացնի տնից և, այդպիսով, վերակացուներին զրկի տանը հակելու ցանկությունից:

Վերջապես, բոլոր անհրաժեշտն արված եր, և մի յերեկո, յերբ Լեգրին մեկնել եր, կասսին անցավ բակի միջով: Համոզվելով, վոր մոտերքում վոչվոք չկա, նա վերադարձավ իր սենյակը, ուր եմման ինչ-վոր մանր կապոցներ եր կապում:

— Գլխարկդ դիր՝ դնանք, — ասաց Չահել կինը, կապոցներն առնելով ու իր լայնեզր ծղոտե գլխարկը ծածկելով:

- Շուտ չի՞, — հարցրեց եմման:
- Չե, — առարկեց կասսին, — ամենալավ ժամանակն եր:
- Բայց մեզ կարող են տեսնել:
- Հենց այդ ել ուզում եմ:
- Ի՞նչպես թե, — ասաց եմման տարակուսած, աչքերը լայն բանալով:

— Շատ պարզ ե, — ժպտալով պատասխանեց կասսին: — Վորպեսզի դու գործը չփչացնես քո անտեղյակությամբ, քեզ բացատրեմ իմ կազմած ծրագիրը: Հիմի մենք կփախչենք ձեի համար, այսինքն այնպես, վոր Սամբոն ու Գլիմբոն մեզ նկատեն, բայց վոչ շուտ, քան մենք բակից դուրս յեկած կլինենք: Անհրաժեշտ ե, վոր մենք ճահճին հասնենք ավելի շուտ, քան նրանք շները բաց կթողնեն մեզ վրա: Մինչև նրանք կպատրաստվեն մեզ բռնելու, մենք ճահճի միջով կանցնենք դեպի փոքրիկ լիճը ու լող տալով դուրս կպանք այն բաց տեղը, վորի ծայրը գալիս հասնում ե մեր տան յետին մուտքին: Ջրի վրա վոչ մի հետք չի մնա: Մեզ կփնտռեն յեղեգնուտի մեջ, իսկ մենք հանգիստ յետ կգանք տուն ու կբարձրանանք տանիքը, ուր, յերկու խոր արկղում, յես անկողին եմ պատրաստել և մի ամբողջ շաբաթվա պաշար:

— Լեգրին մեզ բռնելու համար կկազմակերպի իսկական

շուրջկալ և ողնության կկանչի շրջանի բոլոր պլանտատորներին: Նա սովոր չի, վոր իր ստրուկները անհետ կորչեն: Այդ պատճառով ամբողջ շրջանը, յերևի, վոտքի կհանի և քսան մղոն տարածության վրա մկան ծակերն անգամ կխուզարկի, մինչև, վերջապես, չհամոզվի, վոր մենք գետինն ենք անցել: Իսկ մենք, մինչ այդ, կապրենք տանիքում և ամեն կերպ կվախեցնենք բոլորին: Իսկ հետո, յերբ կդադարեն մեզ փնտռելուց — իսկ դա իսկույն կնկատվի, — մենք արդեն վերջնականապես կփախչենք:

— Ե, սիրելի կասսի, միայն քեզ պես խելոք կինը կարող ե այդ տեսակ ճարպիկ ծրագիր կազմել, — բացականչեց եմման և վոգետորության տենդի մեջ գրկեց նրան ու համբուրեց:

Կասսին նրա համբույրին պատասխանեց համբույրով, փոքրիկ կապոցները վերցրեց և ասաց.

— Քնքշությունների ժամանակը չի: Գնանք:

Յերկնքում դուրս յեկավ նորածին լուսնի դժգույն մանգաղը: Կանայք, աննկատելի, դուրս յեկան տնից, կտրեցին անցան ամբողջ բակը և դիմեցին դեպի ճահճը, վորին նայում էլին վերակացուների տնակի լուսամուտները: Սակայն փախըստականները դեռ այդ տնակին չեյին հասել, յերբ հանկարծ նրանց դեմը յեկավ ինքը Լեգրին: Ինչ-վոր նախազգացում դըրդել եր նրան կես ճանապարհից վերադառնալ:

— Կասսի, դա նա յե, — սարսափելով շշնջաց եմման, Լեգրին տեսնելով և իր ուղեկցի ձեռից կախ ընկնելով:

— Ավելի լավ: Վազիր, — ասաց կասսին, թափով վազելով և աղջկանը յետևից տանելով:

Փախստականներին նկատելով Լեգրին ողբ լցրեց կատաղի ձայներով:

— Ել չեմ կարող... ուշս գնում ե, — հեծեծաց եմման, իսկապես ուշագնաց լինելու պատրաստ:

— Յեթե այդպես բան պատահի, յես քեզ կսպանեմ, — Փշռացրեց կասսին, շորի տակից դաշույնը հանելով և եմմային ցուցց տալով:

Սպառնալիքն ազդեց. աղջիկը չուշաթափվեց, այլ, ընդհակառակը, ամրապնդեց և առուչք կերպով հետևեց իր ուղեկցին, վորը ճահճով տարավ նրան դեպի խիտ յեղեգնուտը:

— Այդ լավ ե, — ծիծաղով ասաց Լեգրին նրանց յետևից, — իրանք թակարդը մտան: Հիմի հեշտությամբ կրոնենք դրանց...

Եյ, Սամբո, Կվիմբո,—ձենը գլուխը գցեց նա, բակին մոտենալով:—Յերկու կին փախան ճահիճով: Հինգ դոլլար, ով կրունի: Բոլոր շներին բաց թողեք... Ենամ արեք:

Նրա ձայնի վրա դուրս թափվեցին մի խումբ նեգրեր. բոլորի առջևից վազում ելին Սամբոն ու Կվիմբոն: Բոլորն իսկապես իրարով անցան, ինչպես նախատեսում էր Կասսին: Միքանիսին գրավում էր խոստացած պարգևը, իսկ մյուսները պատրաստ ելին ձրիապես ապացուցել տիրոջը դուր գալու իրենց ցանկութունը: Նրանք, իհարկե, այդպիսի յեռանդ ու ջանասիրութուն չեյին ցուցաբերի, յեթե Լեգրին նրանցից պահանջեր մի վորեն լավ բան: Ստրկության անեծքներից մեկը հենց այն է, վոր մարդկանց հակում է առանձնապես դեպի վատ արարքները:

Առաջմ նրանք վազում ելին լապտերներ բռնած, մյուսները արձակում եյին շներին, վոր վայրի հաջոցներով գրավեցին մյուս բոլոր ստրուկների ուշադրութունը, վորոնք հենց նոր եյին քնել որվա աշխատանքից հոգնած:

— Յեթե բռնել չկարողանանք, պարոն, կհրամայեք կրակել. — հարցրեց Սամբոն:

— Փախել են Կասսին ու Եմման:— Առաջինի վրա կարող եք կրակել, բայց յերկրորդին աշխատեցեք վողջ և անվնաս բերել ինձ, — հրամայեց Լեգրին:— Յեթե մեծին սպանեք, չես մինչև անգամ գոհ կլինես, բայց փոքրը ինձ դեռ պետք է... Մի-մի հրացան վերցրեք և հիշեցեք, վոր բռնողին հինգ դոլլար եմ տալու, իսկ մյուսներին մի-մի բաժակ ողի:

Սամբոն տուն վազեց հրացաններ բերելու: Այնուհետև հետապնդողների ամբողջ խումբը՝ լապտերներով ու վայրի աղաղակներով, կատաղորեն հաջող շների առաջնորդութամբ, նեղվեցին դեպի ճահիճը: Լեգրին այդ հորդային հետևեց այնպես, ինչպես կար—ձին հեծած:

Մինչ այդ փախստականները հասան փոքրիկ լճին, լող տալով անցան մյուս ափը և յետին մուտքով նորից տուն մտան, ուր այդ ժամանակ վոչ մի շունչ չկար, վորովհետև ծառաներն այնտեղ գալիս ելին միայն ցերեկով, իսկ որը մթնելուն պես վերադառնում եյին իրենց տնակները, վոր գտնվում եյին բանվորների բնակավայրում:

— Ե՛, վորան սկսվեց,— նկատեց Կասսին, հյուրասենյակի լուսամուտներից մեկի մոտ կանգնելով:— Նայիր, տես, Եմմա,

ինչպես են ամեն կողմից կրակներ վազում... Յեթե այնտեղից դուրս չգայինք, մեզ ել փրկութուն չեր լինի, իսկ հիմի թող ինչքան ուզում են փնտռեն: Յեթե չես չմտածելի ծածուկ այստեղ դառնալու, մենք հեռու փախչել չեյինք կարող, վորովհետև շուրջը միքանի մղոնի վրա վոչ մի գյուղ չկա, ուր կարողանայինք թափնվել:

— Իսկ յեթե հանկարծ գլխի ընկնեն, մեր հետքը գտնեն ու գան այստեղ, — թոթովեց դողահար Եմման:— Իսեր աստծո, գնանք վերև:

— Մի վախի, հիմար ջան, նրանք հո չեն կարող հոտ քաշել, թե ուր ենք գնացել, — քմծիծաղ տվեց Կասսին:— Մեր հետքը գտնել չեն կարող, վորովհետև ջուրը հետք չի թողնում, ինչպես ասել եմ: Ամենաշատը, յեթե տրորած յեղեգներով մեզ հետևեն մինչև լիճը, իսկ այնտեղից շները յետ պիտի դառնան: Բայց ամենից հավանականն այն է, վոր բոլոր ժամանակ մեզ փնտռեն ճահիճում, և կփնտռեն այդտեղ միքանի ժամ շարունակ: Մենք կարող ենք նույնիսկ մեր թրջված շորերը հանել և սրբել այստեղ մեր շորերից կաթած ջրերը: Այս հետքերը թողնելը մեզ համար ավելի վտանգավոր է... Ա՛, — հանկարծ ընդհատեց նա ինքն իրեն, պատահաբար նայելով սեղանին, ուր ընկած էր մի կապ բանալի, վոր, յերևի, Լեգրին էր մոռացել, — այ քեզ հիանալի առիթ՝ ճանապարհածախս ձեռք բերելու...

Բուխարիում դեռ կրակ կար, վոր վառել էր Լեգրին իր գնալուց առաջ, այդ պատճառով ահագին սենյակը այնքան լույս էր, վոր կարելի չեր նրա մեջ յեղած առարկաները ջոկել: Կասսին ընտրեց բանալիներից մեկը և մոտեցավ պահարանին, վորի մեջ Լեգրին պահում էր իր փողը: Պահարանը բանալով՝ Կասսին հանեց այնտեղից մի կապ թղթաղբամ և համրեց:

— Ո՛, Կասսի, այդ բանն անել չարժեք, — բացականչեց Եմման աղերսող ձայնով:

— Ինչո՞ւ վոր, — ասաց Կասսին չորությամբ:— Բո կարծիքով ինչն է լավ — սովամահ լինել թե հնարավորութուն ունենալ ուտել և ճանապարհորդել մինչև ազատ նահանգները: Ի՞նչ կարծիքով՝ վերջինն անհամեմատ լավ է, իսկ առանց փողի՝ մենք հազիվ թե կարողանանք մեզ փրկել: Յես ել հենց նոր մտածեցի այդ մասին, բանալիները տեսնելով, վոր Լեգրին յերևի պատահաբար է մոռացել... Դե, գնանք վերև, շորներս փոխենք և հետո մեր հետքերը սրբենք:

— Բայց դա չէ՞ վոր գողութիւնն է, — շարունակեց Եմման, տեղից չշարժուելով:

— Գողութիւնն, — հեզնական ժպիտով կրկնեց Կասսին: — Սա ինչ գողութիւնն է, յերբ բոլոր այս փողը վոչ ալ ինչ է, բայց, չեթե մեր արյունը, մեր արցունքը, մեր տանջանքը... Ձե, աղջիկս յես չեմ գողանում, յես միայն չետ եմ վերցնում մի մասը այն բոլորի, ինչ Միմոն Լեզրին ծծել է ինձանից, քեզանից և նման հարչուրավոր դժբախտներից... Գնանք, — վերջացրեց նա, ջահել աղջկա ձեռը բռնելով:

Նրանք խարխափելով բարձրացան տանիքը, ուր Կասսին մոմ վառեց և Եմմային ցույց տվեց արկղներում սարքած անկողինները, սլաշարով լիքը փոքրիկ արկղը և ուրիշ շատ հարկավոր բաներ:

— Տեսնում ես, ինչ լավ եմ սարքել այստեղ, — ասաց Կասսին հպարտութամբ: — Ձեմ մոռացել նուշնիսկ մոմեր, գրքեր և ձեռագործ վերցնել, վորպեսզի չձանձրանանք:

— Մոմեր: Բայց չէ՞ վոր դրսից կարող են լույսը տեսնել, — նկատեց Եմման:

— Ավելի լավ, չեթե տեսնեն, — պատասխանեց ջահել կինը, — դա կհաստատի միայն իմ տարածած լուրը, թե այստեղ սատանաներ կան: Հավատա, հիմի վոչվոք, նուշնիսկ Լեզրին, համարձակութիւնն չի ունենա այստեղ գալու, վոր իմանա, թե ինչ լույս է: Ընդհակառակը, այդ լույսը տեսնելով, բոլորը կվախենան վոչ միայն մեր ապաստարանը, այլև ներքին հարկը մտնելու: Իսկ յեթե համարձակվեն ներքին հարկը մտնել, դա, համենայն դեպս, կանեն ցերեկը: Բայց վոչ գիշերը: Կարող ես, աղջիկս, բոլորովին հանգիստ լինել, վոչվոք իր քիթն այստեղ չի խոթի: Ավելի շուտ իրենց շների փաչ կանեն, քան այստեղ կգան:

Չոր շորեր հագնելով՝ Կասսին ու Եմման մոմը ձեռներին պնացին ցած և ջնջոցներով սրբեցին իրենց թաց շորերից կաթած ջրերը:

— Հերիք է, — ասաց Կասսին, յերբ նորից դուրս չեկան միջանցքը: — Այստեղ սրբելու կարիք չկա, վորովհետև գիշերն այստեղ մարդ չի մտնելու, իսկ մինչև առավոտ ինքն իրեն կչորանա: Հիմի կարող ենք գնալ մեր ապաստարանը և այնտեղից դուրս չգալ այնքան ժամանակ, մինչև վոր կհնչի մեր ազատութեան ժամը:

— Դու քիչ առաջ ինչո՞ւ էյիր ուզում ինձ սպանել, Կասսի, — հարցրեց Եմման, յերբ նրանք կրկին տանիք բարձրացան և փակվեցին այնտեղ:

— Դա սպառնալիք էր միայն, վոր ստիպեմ քեզ ուժերդ հավաքես, — պատասխանեց Կասսին: — Ինչպես տեսար, նպատակիս հասա: Քեզ ուշաթափութիւնից ազատելու համար ավելի լավ միջոց չեյի կարող մտածել: Իդեպ, խնդրում եմ պինդ կենաս և չընկճվես, ինչ ել պատահի: Առուչդ լինելը մարդու կամքից է կախված. չեթե մարդ չուզի, նրան վոչ մի բան վոչ կվախեցնի, վոչ կզարմացնի: Մեր դրութեան մեջ չպետք է քնքուշ լինել և ամեն մի չնչին բանից ուշաթափվել: Լավ մտածիր, վոր յեթե յես չլինեցիր, դու հիմա մեր դահճի ձեռին կլինեյիր, իսկ նա քեզ չեր ների փախչելու փորձ անելուց հետո:

Եմման դողաց և յերեսը ծածկեց ձեռներով: Կասսին վերցրեց Ֆրանսերեն մի գիրք և, կարծես վոչինչ չեր պատահել, սկսեց կարդալ:

Փոքր ինչ անշարժ նստելով՝ Եմման պառկեց և, ապրած հուզումներից հոգնած, քնեց շուտով: Անցավ յերկու ժամ: Կասսին դուրս կարդում էր: Հանկարծ բախում լսվեց ձիու վոտնատրոփ, շների հաջոց և մարդկային ձայների ազմուկ: Եմման զարթնեց և ճիչ արձակելով, վեր թռավ սարսափած:

— Ինչ պատահեց քեզ, — հանգիստ արտասանեց Կասսին: — Այդ մերոնք են վերադառնում: Կրկնում եմ — վոչնչից մի վախենա: Հավատա, մեկ չեն գտնի... Յես կարծում եմ, այնպես են հոգնել, վոր շտապելու չեն իրենց տեղերը... Առավոտյան դեմ նորից կսկսեն փնտռել: Այդպես կշարունակվի մի ամբողջ շաբաթ, մինչև վոր, վերջապես, կհանգստանան... Այո, իմ պարոն Լեզրի, այս անգամ դու քո վորսը չես գտնի, և ձեր բոլոր ջանքն իդուր կանցնի, — քմիծաղով վերջացրեց Կասսին:

— Լռեցեք, խնդրում եմ: Չէ՞ վոր կլսեն, — շնջաց դողահար Եմման:

— Ձեն լսի: Իսկ յեթե լսեն — ավելի լավ, — շարունակեց Կասսին: — Դու մի մոռանա, վոր նրանց կարծիքով այստեղ սատանաներ են ապրում:

Լսելի չեր, թե ինչպես Լեզրին, ամեն տեսակ հայնոյանքներ թափելով, մտավ տուն, իսկ նրա ուղեկիցները ձիերը ախոտարան, շները կոպեցին, և հետո ցրվեցին իրենց տները: Վորովհետև ներքև ամեն ինչ լռեց, կարելի չեր կարծել, վոր Լեզ-

բին գնացել է քնելու: Փոքր ինչ էլ նստելով՝ պառկեց և կասսին և շուտով քնեց խոր քնով: Եմման էլ չէր կարողանում քնել: Խեղճ աղջիկը հիշում էր այդ յերեկոյի բոլոր սարսափները և մտածում, թե տեսնես ել ինչեր է պատահելու, մինչև վոր կասսիի հետ միասին հասնեն ազատութեան և յերջանկութեան յերկիրը: Սակայն ջահելութունն ու հոգնածութունն իրենցն աբին. առավոտյան դեմ նա քնեց:

ԳԼՈՒԽ XXIV

ԹՈՄԱՍ ՄԱՀԸ

Կասսիի և Եմմայի փախուստը սաստիկ կատաղեցրեց Լեգրիին: Անաջող հետապնդման իր զայրույթը նա վճռեց թափել թոմասի գլխին: Նրա աչքից չվրիպեց այն ուրախութունը, վոր փայլեց թոմասի աչքերում, յերբ ինքը Լեգրիին նեգրերին հաշտում էր կասսիի փախչելու մասին: Թոմասը չմասնակցեց փախուստական կանանց հետապնդելուն: Լեգրին ուզում էր ստիպել նրան՝ մյուս նեգրերի հետ գնալու, բայց հետո վճռե ժամանակ չկորցնել, վարովհետև գիտեր, վոր թոմասը, միևնույս է, չի գնաու, ինչ սպառնալիք ուզում էս տուր:

Անաջող վորոնումից հետո տիրոջ ատելութունը դեպի անհնազանդ ստրուկը հասավ իր ծայր աստիճանին: Չնայած թոմասի խոնարհութեան, Լեգրին նրա մեջ զգում էր ինչ-վոր ուժ, վորի առջև ստիպված էր նահանջել: Յեվ այդ բանը նրան կատաղեցնում էր:

— Ե՛յ, Կվիմբո,—ասաց Լեգրին,—թոմասին բեր այստեղ: Սրիկա: Այդ փախուստը, յես կարծում եմ, նա յե սարքել: Յես նրան ձեծելով կապանեմ, յեթե չասի, թե վորտեղ են նրանք:

Յերբ թոմասին կանչեցին տիրոջ մոտ, նրա սիրտը ցավից կուչ չեկավ: Նա գիտեր վորտեղ են գտնվում կասսին ու Եմման, բայց հաստատ վճռել էր, ինչ ուզում է անելին, նրանց չմատնել:

— Ե՛յ, թոմաս,—ասաց Լեգրին նրան մոտենալով և նրա ոձիքը բռնելով. նա կատաղութունից չէր կարողանում խոսել, — գիտե՞ս, վոր վորոշել եմ քեզ սպանել:

— Շատ կարելի չե, պարոն:

— Յես քեզ կսպանեմ,— գոռաց Լեգրին,— յեթե չասես վորտեղ են գտնվում անիծյալ կանայք: Գիտե՞ս վորտեղ են:

— Գիտեմ, բայց չեմ կարող ասել,— պատասխանեց թոմասը:— Պատրաստ եմ մեռնել, բայց չեմ հաշտնի՝ ինչ գիտեմ:

— Դու գիտես և չե՞ս ուզում ասել,— շարունակեց գոռալ Լեգրին:— Ուրեմն յես քեզ կստիպեմ, վոր ասես:

Թոմասը շարունակում էր լռել:

— Տարեք սրան,— բղավեց Լեգրին Սամբոլին ու Կվիմբոյին,— մի խնայեք:

Լեգրին ինքը առաջինը հարվածեց թոմասին և վայր գլորեց նրան: Թոմասն ընկավ հատակին: Սամբոն ու Կվիմբոն բարձրացրին նրան և սկսեցին ձեծել: Լեգրին նրանց մոտ կանգնած, հրամաններ էր տալիս:

— Տվեք դրան: Տվեք, քանի չի խոստովանել:

Յերբ թոմասն ուշաթափվեց, Լեգրին, կարծելով, թե մեռավ, հեռացավ: Սամբոն ու Կվիմբոն, մենակ մնալով, թոմասին տարան մի մութ սենյակ, վերքերը լվացին, անկողին շինեցին և բերանը մի թաս ողի լցրին:

Սամբոն ու Կվիմբոն հանկարծ զգացին, վոր իրենք վատ բան են անում— անպես աղբեց նրանց թոմասի հեղութունը: Ողին խմացնելուց հետո թոմասն աչքը բաց արավ:

— Ո՛ր, թոմաս,— ասաց Կվիմբոն,— մենք շատ մեղավոր ենք քու առաջ:

— Ամբողջ սրտով ներում եմ ձեզ,— թույլ ձայնով պատասխանեց թոմասը:

Յերկու որ անց՝ Լեգրիի կիսավերակ, մույլ տան առջև կանգ առավ մի գեղեցիկ կտոք, վորի միջից ցած թռավ մի լերիտասարդ և մոտեցող նեգրին հաշտնեց, թե կամենում է պլանտացիայի տիրոջը տեսնել:

Դա Զորջ Շելլին էր: Բայց միքիչ յետ դառնանք և տեսնենք թե ինչպես այդ պատանին հաշտնվեց սյստեղ:

Որիորդ Ոֆելիայի նամակը, վոր գրել էր տիկին Շելլին, զանազան հանգամանքների շնորհիվ յերկու ամիս մնաց մի ինչ-վոր պոստային զբառնչակում, այդ պատճառով տեղ հասավ այն ժամանակ միայն, յերբ խեղճ թոմասը գտնվում էր արդեն Լեգրիի հեռավոր պլանտացիայում:

Տիկին Շելլին խորին վշտով կարգաց թոմասի կյանքում տեղի ունեցած տխուր փոփոխութունը, բայց, չնայած իր ջերմ ցանկութեան, չկարողացավ անմիջապես ոգնութեան գալ նրան:

Բանը նրանումն էր, վոր Սենտ-Քլերի մահից հետո պարոն

Շեղբին հիվանդացավ վատ տեսակի տենդով. ամբողջ որերով ուշադուրույս պառկած՝ գառանցում էր: Կիսն ու ավագ վորդին, վոր բավական մեծացել էր արդեն, հերթով պահում էին հիվանդին, վոր կարիք ուներ ամենահոգածու խնամքի: Այդ պատճառով թոմասի գործով առաջժամ կարելի չէր միայն տեղեկանք ստանալ մեռած Սենտ-Քլերի հավատարմատարից, իմանալու, թե ո՛ւր է գտնվում թոմասը:

Հաղիվ պատասխան էր ստացվել, պարոն Շեղբին նույնպես մեռավ: Նրա կիսն ու վորդին ստիպված էին միառժամանակ բոլոր մյուս գործերը թողնել և ամբողջովին նվիրվել այն հոգսերին, վոր առաջ է բերում ընտանիքի գլխավորի մահը, մանավանդ, չերբ նրա գործերը խառնված են:

Հանդուցյալ պարոն Շեղբին վերջերս այնպիսի բարձր կարծիք ուներ իր կնոջ բնավորության ու ընդունակության մասին, վոր դարձրեց նրան իր կտակակատարը: Այդպիսով, տիկինը հանկարծ կանգնեց մի մեծ, բայց խճճված գործի գլուխ: Իրեն հատուկ չեռանդով տիկինը, մարդու մահից հետո, ձեռնարկեց պարզելու այն բոլորը, ինչ թեթևամիտ պարոն Շեղբին խճճել էր իր ամբողջ կյանքի ընթացքում: Ձորջի ոգնությունը նրան աշողվեց միքանի ամսվա ընթացքում հաշիվներն ստուգել, պարզել պարտքերի գումարը, ագարակը ծախել, պարտատերերի փողը տալ և նոր տուն գնել: Բարեբախտաբար, մնացած կարողությունը լիովին բավական էր, վոր նա իրեն վայել և միանգամայն ապահով կյանք վարեր: Բանից պարզվեց, վոր հնարավոր է նույնիսկ թողնել բոլոր սարուկներին և թոմասին յետ գնել:

Սենտ-Քլերի հավատարմատարի տեղեկությունները թոմասի մասին շատ աղքատ էին: Վորովհետև թոմասը աճուրդով էր ծախվել, հավատարմատարը վկայում էր միայն նրա ծախվելու փաստը. բայց թե ո՞վ էր առել և ո՞ւր էր տարել—գժվար էր իմանալ, վորովհետև աճուրդավորները չերբեք չեն հետաքրքրվում գնորդների անունով, տեղով, կարողությունները ու դիրքով. նրանց գործն է միայն ստրուկներին ծախել կարելույն չափ բարձր գնով և ստացած գումարը տալ տերերին:

Հենց վոր մայրը հնարավոր գտավ առանց վորդու ոգնություն յուր գնալ, Ձորջը մեկնեց Նոր-Որլյան և սկսեց տեղեկություններ հավաքել թոմասին գտնելու և յետ գնելու համար:

Յերկար անաշող փնտռումներից հետո, վոր յերիտասարդին հուսահատություն դուր հասցրեց, նա պատահաբար հանդիպեց

մի ծերունու, վոր ծանոթ էր Լեգրին և գիտեր, վոր թոմասին նայե գնել: Ձորջը նույն որը, յերբ իմացավ վորտեղ է գտնվում թոմասը, շոգենավ նստեց և գնաց: Հասնելով Լեգրիի պլանտացիային մոտ գտնվող քաղաքը, Ձորջը նույնիսկ չհանգստացավ, անմիջապես կառք վարձեց և գնաց պլանտացիա: Լեգրին ընդունեց նրան իր նշանավոր հյուրասենյակում:

— Յես հենց նոր իմացա,—սկսեց յերիտասարդը, ուղղակի գործի դիմելով,—վոր դուք Նոր-Որլյանում՝ աճուրդում գնել եք մի սարուկ նեգր, անունը թոմաս: Այդ թոմասը իմ հանգուցյալ հոր սիրած մարդն էր, և յես ուզում եմ նրան յետ գնել:

Լեգրին կարմրեց, և նրա աչքերը փայլեցին չարություն կրակով:

— Այո,—գրգռված ասաց նա,—չես, իսկպես, սարսափելի հիմարություն ունեցա այդ թոմասին գնելու, միքանի մարդկանց լավ կարծիքներով հրապուրված... Սատանան գիտի, թե նրան ինչի համար էլին գովում... Ավելի հանդուգն, անհնազանդ ու համառ անասուն կյանքումս չեմ տեսել: Նա խոսվություն գցեց ընկերների մեջ և ոգնեց փախչել յերկու կնոջ, վորոնք մոտ յերկու հազար դոլլար էլին նստել ինձ վրա: Յերբ պահանջեցի, վոր նրանց տեղն ասի, նա, առանց ամաչելու, հայտնեց, թե յերբեք այդ բանը չի անի: Յես թեև քիչ մնաց նրա կաշին քերթելի, բայց և այնպես նա վոչինչ չասաց: Դա սրանից յերկու որ առաջ էր, իսկ այժմ այդ համառ շունը, յերեկի, արդեն սատկած կլինի... Ասենք, ով է իմանում, այդ անասունները շատ դիմացկուն են...

— Ի՞նչ եք ասում,—բացականչեց Ձորջը, խայթվածի պես տեղից վեր թռչելով:—Նա վորտեղ է: Յես ուզում եմ նրան տեսնել... մեռած կամ կենդանի:

Յերիտասարդը նույնպես կարմրեց գայրույթից. նրա աչքերը կաշի էր հիյն ցայտում, բայց կարողացավ իրեն զսպել, վոր զգացմունքներին ազատություն չտա:

— Նա պառկած է դատարկ ամբարում, — ասաց խոսակցությունը ներկա գտնվող նեգրուհին:

Լեգրին քացով խփեց նեգրուհու փորին և կոպիտ հայնոյանքներ տեղաց: Ձորջն արագ դուրս չեկավ բակը և աճապարեց դեպի ամբարը, վոր ցույց տվեց նրան առաջին պատահած մարդը:

Թոմասը դեռ կենդանի չէր, բայց այլևս տանջանքներ չէր

զգում, վորովհետև նրա նշարդային ամբողջ համակարգութունը այնպես եր շլատված ու շարդված սաստիկ ծեծից, վոր Ֆիզիկական ցավեր զգալու ընդունակութունը կորցրել եր: Նա գրեթե բոլոր ժամանակ գտնվում եր ընդարմացած վիճակում և հազիվ շնչում եր: Բայց նա այնքան ուժեղ եր, վոր դեռ գիմարում եր մահվան:

Գիշերները ծածուկ նրա մոտ եյին գալիս նրա թշվառ ընկերները, զոհում եյին իրենց հանգստի թանգագին ըողկները, վորպեսզի գեթ միքանի ուշացած լավութուն անեն այն մարդուն, վորն այնքան շատ հոգացողութուն եր ցույց տվել նրանց, և վորին նրանք այնքան չերկար ժամանակ չեյին հասկանում: Այժմ խեղճերն ուրախ կլինեյին ամեն տեսակ նվերներ բերել, վոր ցույց տան նրան իրենց ուշացած զղջումն ու համակրանքը, բայց, դժբախտաբար, նրանք կարողանում եյին բերել միայն մի բաժակ ջուր և սիմինդի հացի մի կտոր, վոր Թոմասն ուտել անգամ չկարողացավ:

Սեղճ Թոմասի ամենամեծ մխիթարանքն այժմ այն եր, վոր նրա ստոշող մարմինն ընկնում եյին այդ թշվառ եակների անկեղծ զղջման և խղճահարության ջերմ արցունքները:

Մինչև անգամ Կասսին, բռնվելու վտանգն անտեսելով, նրան ծեծելու առաջին իսկ գիշերը յեկավ Թոմասի մոտ: Նա իր ապաստարանում լսել եր, թե դահիճներն ինչ են անում նրան, և հասկացել եր, վոր Թոմասն իրեն զոհաբերում և նրան և եմմային: Յեվ մեռնողը Կասսիի սիրտը լցրեց յերբեք չզգացած ուրախությամբ ու հուշերով: Կասսին, նրա խոսքերից զգացված, յերկար լաց յեղավ, խոստանալով համբերատարության և ներողամտության որինակ վերցնել նրանից, և, յերկար տարիներից հետո, Կասսիի սիրտը առաջին անգամ մեղմացավ, փափկեց:

Իր հին բարեկամին ծեծված-շարդված տեսնելով՝ Զորջ Շելբին քիչ մնաց ուշաթափվեր:

— Ո՛ր, իմ խեղճ բարեկամ, իմ խեղճ Թոմաս, — ասաց նա հուսահատ ձայնով, արցունքների միջից ու ծունկի յեկավ մեռնողի առաջ: — Բեռի Թոմաս, իմ հին բարեկամ, ինձ ճանաչում ես:

Մեռնողը լսեց և ճանաչեց նրա ձայնը: Թոմասը ծանրացած կռվերը դժվարությամբ բաց արավ, նայեց իր վրա կուսած, վշտից ծովաված դեմքին ու կամացուկ շշնջաց:

— Ուրեմն բոլորովին մոռացված չեմ, բոլորովին մենակ չեմ: Ուրեմն դեռ բարի, սիրող սիրտ կա:

— Ո՛ր, Թոմաս... սիրելի Թոմաս, մի անգամ ել նայիր ինձ, միքանի խոսք ասա, — հեկեկանքից լնդհատվող ձայնով ասաց պատանին, նկատելով, վոր մեռնողը նորից աչքերը փակեց, և նրա շնչառությունն սկսեց թուլանալ: — Ինձ ճանաչում ես, Թոմաս... Յես Զորջն եմ ասիր... քո Զորջը, վորին այնպես սիրում եյիր...

— Այո... պարոն... Զորջ... — ջանք գործ գնելով մոմաց Թոմասը, մի անգամ ևս բանալով փոս ընկած աչքերը, վոր սկսել եյին արդեն հանգչել:

Նա վերջին ուժերը հավաքեց և ձեռները կրծքին դրեց, նրա խոր ընկած, հավիտյանս փակվելու պատրաստ աչքերից սկսեցին հոսել վերջին արցունքները:

— Պարոն Զորջ, — թռավ մեռնողի կապուտած շուրթերից, — չես կարծում եյի... ինձ... մոռացել եք... իսկ այժմ տեսնում եմ... վոր ինձ... դեռ հիշում եք:

Քանի խոսում եր, ձայնն ավելի հնչեղ եր դառնում, աչքերը բոցավառվում ելին, և նա ինքը կարծես ամբալընդվում եր:

— Ո՛ր, — շարունակեց նա գրեթե հաստատուն ձայնով, — ինչ բախտավորություն ե, վոր մի անգամ ևս տեսնում եմ ձեզ, պարոն Զորջ... Յես ուրիշ ել վոչինչ չեմ ուզում... Այժմ հանգիստ կմեռնեմ...

— Ձե, սիրելի Թոմաս, դու չես մեռնի, — բացականչեց Զորջը, համբույրներով ծածկելով նրա դեմքն ու գլուխը: — Յես կըփրկեմ քեզ... չես յեկել եմ քո յետևից, վոր տանեմ մեզ մոտ... Յես ամբողջ յերկու ամիս փնտսել եմ քեզ... յես բժիշկներ կբերեմ, նրանք քեզ կլավացնեն, և դու առաջվա պես կապրես մեզ մոտ, կնկալ ու յիրեխաներիդ հետ միասին...

— Ձե, պարոն Զորջ, ուշացել եք, — հանդիստ ասաց Թոմասը:

— Ա՛խ, Թոմաս, այդպես մի խոսի... Այդ տանջում ե ինձ, — հեկեկում եր Զորջը: — Միրտա կտոր-կտոր ե լինում, յերբ մտածում եմ, թե ինչեր ես կրել այստեղ... Ո՛ր, իմ խեղճ բարեկամ...

— Ինձ խեղճ մի անվանեք, պարոն, — հանդիսավոր արտասանեց Թոմասը: — Յես առջ խեղճ, նվաստ եյի, այժմ... իմ նըվաստացումը վերջացավ...

Մեռնողի ձայնը նորից թուլացավ, բայց և այնպես, նա այդ խոսքերն ասավ այնպիսի յեռանդով ու այնպես համոզված, վոր Բեռի Թոմասի տնակը, — 11.

Ջորջին ֆուլմ եր զարմանալ նրա հոգու արիւթյան վրա և անխոս խոնարհվել նրա առաջ:

— Խեղճ Խլոյին չասեք, թե ինձ ինչ դրութեան մեջ տեսաք, — շարունակեց Թոմասը նրա ձեռը բռնելով: — Դա ծանր հարված կլինի նրա համար... Իմ սիրելի չերխեք... անգին աղջիկս... Մի ժամանակ սաստիկ տանջվում եյի նրանց հիշելով... և ցավից սիրտս կտոր-կտոր եր լինում... Նրանց ասացեք, վոր հետևիկն ինձ... վոր չմոռանան իմ աված որինալը... Ասացեք պարոնին... բարի տիրուհուն և... ձեր տան բոլոր... բոլոր մարդկանց, վոր չես միշտ սիրել եմ նրանց... այնպես եմ սիրել... վոր վոչ վոք չերևակայել չի կարող... Միրում եմ և հիմա... սիրում եմ բոլոր մարդկանց... ուր ել նրանք լինեն և ով ել... լինեն... Միրուց բացի... աշխարհում ուրիշ լավ բան չկա... Ո, պարոն Ջորջ... ինչ մեծ չերջանկութունն է... լինել աղնիվ և բարի...

Այդ ժամանակ ամբարի դռան մեջ չերկայ Լեզրին, զալբուլթով նայեց այնտեղ գտնվողներին և կրկին հեռացավ անխոս:

— Հրեշ, — բացականչեց Ջորջը բարկացած:

Այն ժամանակավոր բւժը, վոր առաջ էր յեկել մեռնողի մեջ սիրած չերիտասարդին տեսնելու առթիվ, հանկարծ գաղաբեց: Նրա վերջը մոտենում եր, աչքերը փակվում եյին, և կուրծքը ծանր բարձրանում-իջնում եր, իսկ շնչառութունը գնալով թուլանում: Նրա սև դեմքը հանդիսավոր արտահայտութուն ընդունեց:

— Ո՞վ կարող է խլել... մեղանից... մարդուն սիրելու ցանկութունը...

Մի վերջին հոգոց ել—և Թոմասն անցավ հավիտենութեան գերկը:

Ջորջ Շելլին չերկար նայեց նրան խանդաղատագին լուութեամբ: Հետո նրա աչքերը փակեց ու վեր կացավ, սիրտը վըշտով ու թախիծով լիքը: Նրա ականջներում հնչում եյին Թոմասի խոսքերը. «Ո՞, ինչ չերջանկութունն է մարդ սիրելը»:

Իր չետեր շարժում լսելով՝ Ջորջը յետ դարձավ:

Նրա առջև կանգնած եր Լեզրին:

Մահվան հանդիսավոր ներկայութունը սանձահարեց ընական դուրազգրգութութունը և ստիպեց նրան զսպել իր սրտում յեռացող զայրուլթը այդ գաղանի դեմ: Նա բավականացավ նրանով միայն, վոր շահնալից հալացք նետեց Լեզրիի վրա և նրանից, վորպես մի անմաքուր ու գարշահոտ բանից, վորքան կարելի յե հեռու կանգնեց: Ապա իր ձայնին բավականին հոստատակամութուն ու արտահայտութուն տալով՝ ասաց, մեռելին մատնացուցց անելով:

— Դուք սրանից, ինչ կարողացել եք, վերցրել եք: Նրա մեռած մարմինը ձեզ, իհարկե, պետք չի: Նրան ծախեցեք ինձ: Յես ուզում եմ նրան թաղել:

— Յես մեռելներին առևտուր չեմ անում, — կոպիտ պատասխանեց Լեզրին: — Կարող եք ձրի վերցնել և թաղել ուր ուզում եք:

— Տղերք, — դիմեց Ջորջը խմբված նեղրտողաներին, վորոնք փոքրահասակ լինելով դեռ գաշտալին աշխատանքներին չեյին ուղարկվում—մի բան բերեք ինձ և ողնեցեք մարմինը կտոք տանելու:

Տիրոջ կողմից բողոք չտեսնելով, պատանի նեղրտը շտապեցին կատարել այն, ինչ յեկվոր պարոնը խնդրում եր:

Ջորջն այլևս վոչ խոսքով, վոչ հայացքով չդիմեց Լեզրիին, վոր՝ կեղծ անտարբերութեամբ՝ չեր խառնվում նրա կարգադրութուններին և իրեն աշխուժի չեր բերում ինչ-վոր ուրախ չերդ շվլացնելով:

Ջորջն իր վերարկուն փռեց կառքի մեջ և, նեղրերի ողնութեամբ, իր ձեռք բարեկամի դեմքը տեղավորեց այնտեղ:

Յերբ պատրաստութունները վերջացան, Ջորջը յետ դարձավ իր բոլոր դործողութունները դիտող Լեզրիին և ասաց չոր.

Մի կարծեք, թե այս սարսափելի դործն այսպես ել անհետևանք կմնա ձեզ համար: Անմեղ տանջվածի արյունը վրեժխնդրութունն է պահանջում: Քաղաք հասնելուն պես յես անմիջապես կգիմեմ իշխանութուններին և կհայտնեմ ձեր չարագործութեան մասին: Որեքը թեև ստրկատերերին լայն իրավունք է տալիս ստրուկների նկատմամբ, բայց, այնուամենայնիվ, թույլ չի տալիս վողջ-վողջ քերթել նրանց կաշին:

— Խնդրեմ, հայտնեցե՞ք ում կուղեք և ինչքան կուղեք, — արհամարհանքով, մատները շրխկացնելով պատասխանեց Լեզրին: — Հետաքրքրական է իմանալ միայն, թե ով է լինելու ձեր վկան և տահասարակ ինչ ապացույցներ ունեք, առանց վորի ձեր հայտարարութունը վոչ մի արժեք չի ունենա և կմնա անուշադիր:

Ջորջն իսկույն հասկացավ, վոր Լեզրին իրավացի չեր. նրա ամբողջ կալվածում մի սպիտակ մարդ չկար, իսկ սեամորթների վկայութունները ուղարկութեան չեյին առնվում հարստալին նահանգների դատական հիմնարկներին կողմից:

— Ո՞, — ցավելով խոսեց Ջորջը, — դուք ամեն բան շատ լավ եք նախատեսել... Բայց և այնպես, հույս ունեմ, վոր չերբեկեցե պատասխան կտաք ձեր չարագործութեան համար: Նեղրերի խայտառակ առևտուրը չերբեկեց հո կղադարի:

— Մի մեռածի համար վորքան ազմուկ,— հեզւանքով նը-
կատեց Լեզրին, ուսերը թոթվելով:

Ինչպես կալծը գցես վառողի տակառի մեջ, այնպես այդ
խոսքերը բռնկեցին Ջորջին. նա հարձակվեց պլանատատուի վրա
և մի ուժեղ հարվածով գետին գլորեց նրան:

Կան մարդիկ, վորոնց վրա ձեծը և, առհասարակ, ամեն տե-
սակ նվաստացումները բարերար արդեցուցութուն են անում նը-
րանք խոր հարգանքով են լցվում դեպի այն մարդը. ով չի վա-
խենում իրենցից և ավելի ուժեղ է յերևում: Այդ մարդկանց
թվին եր պատկանում և Լեզրին: Գետնից յեղնելով և շորերի փո-
շին թափ տալով՝ նա անխոս և նկատելի հարգանքով յերկար նա-
չեց հեռացող կառքի յետևից, մինչև վոր նա բոլորովին ծածկվեց:

Պլանտացիայից քիչ հեռու գտնվում եր մի ավազաբլուր,
վորի զարդարանքը կազմում էին մի յերկու ծառ: Ջորջն այդ
բոլորը նկատել եր դեռ առաջ, յերբ գալիս եր Լեզրի մոտ, իսկ
այժմ ուղիղ դնաց դեպի այդ բլուրը:

Նրա ցուցմունքով իր հեռ յեկած ջահել նեզրերը մի գե-
րեզման փորեցին այդ բլուրի վրա:

— Իսկ ձեր վերարկուն ի՞նչ անենք, պարոն,— հարցրին նը-
րան, յերբ փոսը պատրաստ եր:

— Մարմինը փաթաթեցեք մեջը և դրեք հողը,— պատաս-
խանեց Ջորջը և ավելացրեց, դիմելով նրան, ով ալիս չեր կա-
րող իրեն լսել.— Յես քեզ համար ել վոչինչ չեմ կարող անել,
իմ ձեռ բարկամ: Թող իմ վերարկուն քո վերջին յերկրային
հագուստը լինի:

Խոնարհ լուսթյուն պահպանելով՝ նեզրերը խնամքով փա-
թաթեցին մեռելի մարմինը վերարկուի մեջ, իջեցրին փոսը և
թաղեցին, ապա թարմ խոտեր քաղեցին և դրին նրա գերեզմա-
նի վրա:

— Հիմա գնացեք, աղերք,— ասաց Ջորջը, ամեն մեկին մի
գոլլար տալով:

Բայց նեզրերը տեղներից չչարժվեցին:

— Դուք վորևե բան եք ուղում ասել ինձ,— հարցրեց Ջորջը:

— Այո, պարոն,— պատասխանեց նրանցից մեկը,— մենք ու-
ղում ենք ձեզ խնդրել, վոր մեզ գնեք:

— Մենք հավատարմությամբ կձտոռայինք ձեզ,— ավելաց-
րեց մյուսը:

— Խնդրում ենք, պարոն, գնեցեք մեզ,— աղերոսեց յերրոր-
դը.— Մեր տիրոջ մոտ ապրելը շատ դժվար և:

— Ուրախությամբ կգնեյի ձեզ բոլորիդ, բայց չեմ կարող,—

ախրությամբ ասաց յերխոսասարդը:— Գնացեք սուն, վոր յեր-
կար բացակայելու համար ձեզ չպատժեն: Շնորհակալ եմ ձեր ոգ-
նության համար:

Խեղճ նեզրերը իրենց դանդուր գլուխները կախեցին և տը-
խուր-արտուժ չեա դարձան:

— Գետի Թոմաս,— ասաց Ջորջը, ծունկ խոնարհելով իր ձեռ
բարեկամի թարձ գերեզմանի առաջ,— յերդվում եմ քեզ, վոր այ-
սորվանից բոլոր ուժերս կգործադրեմ, վորպեսզի ոգնեմ իմ դըժ-
բախտ հայրենիքին, ստրկության խայտառակութունից ազատ-
վելու: Թող հողը փետուր լինի քեզ վրա, ով ազնիվ մարդ:

ԳԼՈՒԽ XXV

ԱՋՍՏՎԱԾՆԵՐԸ

Ջորջ Շելլին մորը հայտնեց միայն, վոր տուն և դառնում,
բայց վոչ մի խոսք չգրեց իր վորոնումների տխուր հետևանքի
մասին: Նա ուզում եր ամեն ինչ գրել, բայց հենց վոր սկսում
եր, աչքերը լցվում էին արցունքով, և գրիչն ընկնում եր դողա-
կող մատներից. ուստի բավականացավ մի տողով միայն, թե
նոր Որլյանից դուրս է յեկել և հույս ունի շուտով մորը գրկե-
լու: Այդ համառոտ տեղեկութունն ստանալով՝ տիկին Շելլին
մութ կերպով հասկացավ, վոր վորդու հոգին հանդիստ չի, և
սկսեց տագնապով սպասել նրան:

Այն օրը, յերբ նա պիտի գար, տիկին Շելլին տանը բո-
լորն իրարանցման մեջ էին. սպասավորները պատրաստվում ե-
լին հանդիսավոր կերպով դիմավորել իրենց ջահել և սիրելի տի-
րոջը:

Տիկին Շելլին ինքը նստել եր հյուրասենյակում, ուր, աչ-
նան խոնավության պատճառով, բուխարիում կրակ եր վառված:
Հարևան սեղանատանը ընթրիքի ու թեյի պատրաստութուն և-
յին տեսնում:

Դռան մեջ յերևաց հորքուր Խլոյան՝ նոր հագուստ հագած
ձյունի պես ձերմակ գոգնոցը կապած, վառ կարմիր փաթթոցը
գլխին, վորի տակ նրա կրոր սև դեմքը փայլում եր սպասումի
ուրախությամբ:

— Յես սեղանը սարքել եմ պարոնի սիրած տեղը— վառա-
բանին մոտիկ,— գեկուցեց նա:— Բայց ինչո՞ւ Սալլին չի հանել են
լով թեյամանը, վոր ջահել պարոնը անցյալ տարի նվիրեց ձեզ...
Միթե չեք կարգադրել, տիրուհի:

— Ո՛ր,—հեկեկում եր նա,—ներեցեք ինձ... սիրելի, թան-
զագին ատրուհի: Յես... կողիտ բան ասի... Բայց սիրտս կտոր-
կտոր ե լինում...

— Գիտեմ, գիտեմ, պատասխանեց տիկին Շելլին, ամուր
գրկելով նրան:—Ուրախ կլինելի քեզ ոգնել, բայց չեմ կարող:
Մխիթարվիր նրանով, վոր մեռել ե վորպես հերոս ե վորպես
ազնիվ մարդ:

Կաց եր լինում ե Ջորջը: Միառժամանակ սեղանատանն ել
վոչինչ չեր լավում, բացի հեկեկանքն ու տխուր հառաչանքները:
Վերջապես, յերիտասարդն առաջինը սթափվեց: Նստելով
խեղճ այրու մյուս կողմը, Ջորջը բռնեց նրա ձեռը ե պարզ, հասկա-
նալի խոսքերով պատմեց Թոմասի մահվան հուզիչ պատմութունը
ե հայտնեց նրա վերջին խոսքը:

— Ինչպես ապրեց, ենպես ել մեռավ,— գոգնոցով արցուն-
քից թրջված աչքերը սրբելով առայ հորքուր Խուլան, չերը յերի-
տասարդը վերջացրեց իր պատմութունը:— Հույս ունեցի եսը
տեսնել նրան, բայց, ինչպես չերեում ե, բախտ չունեցի:

Իր վերադառնալուց յերեք շաբաթ հետո Ջորջ Շելլին հա-
վաքեց իր տանը մնացած բոլոր ստրուկներին: Իմեճ գարմանս
նրանց, յերիտասարդը մի կապ թուղթ ձեռին մոտեցավ նրանց
ե բարձր ձայնով կարգաց մեկը մյուսի չետեից: Դրանք
ստրուկներին ազատ արձակելու թղթեր էյին: Վերջին թուղթը
կարդալով Ջորջը անուռն-անուռն կանչեց բոլոր ստրուկներին ե
յուրաքանչյուրին տվեց իր ազատման թուղթը:

Բոլորը հուզմունքից լաց ելին լինում, բայց վոչվոք թուղթ
վերցնել չեր ուզում:

— Մեր ինչին ե պետք ազատութունը,— առարկում էյին
հուզված ձայներով: Մենք ձեզ մոտ ստրուկութուն չենք դուռ, ե
վոչ մի տեղ այսպես լավ չի լինի .. Մեզ դուրս մի անեք: Ձե՞
վոր մենք բոլորս ձեզ ծառայում ենք հավատարմությամբ ու
յեռանդով:

Դժվարությամբ նեզրերին հանգստացնելով, Ջորջը ասաց.

— Բարեկամներս, յես մտադիր չեմ ձեզ դուրս անել, ինչ-
պես կարծում եք: Կարևր չկա, վոր մենք բաժանվենք իրարից:
Ինձ բավական հող ե մնացել, ե բավական ել ձեռքեր են պետք.
վոր այդ հողերը մշակեն: Առաջվա պես ծառաներ հարկավոր են
ե տան համար: Դուք բոլորդ կարող եք մնալ, յեթե ուզում եք.
բայց այս որվանից դուք ազատ եք ե պետք ե ձեր աշխատանքի
համար ինձանից վարձ ստանաք. ինչպես այդ արվում ե ամեն

անդ, ուր մարդիկ ազատ են ե ծախում են միայն իրենց աշխա-
տանքը, բայց վոչ իրենց:

— Ազատ լինելու ձեր գլխավոր ոգուան այն ե, վոր իմ
մեռնելու դեպքում ձեզ վոչվոք չի կարող բռնությամբ ծախել
այս կամ այն վատ մարդու վրա: Այդ վտանգը չի լինի: Դուք կա-
րող եք ինքներդ ձեզ համար ընտրել մի այնպիսի նոր տեր, վո-
րին կուզեք ծառայել: Յես ժամանակ-առժամանակ կհավաքեմ
ձեզ այստեղ ե կբացատրեմ ձեր նոր իրավունքները, վորպեսզի
վոչ մի դեպքում չխաբվեք, յեթե յես չլինեմ: Հույս ունեմ, վոր
ձեր ազատութունը իզուր չեք գործադրի, այլ կմնաք առաջվա
պես ազնիվ, շանասեր ու աշխատասեր: Առայժմ բոլորը, ինչ ու-
զում ելի ասել:

— Թոմասի դերեզմանի վրա, բարեկամներս,— վերջացրեց
յերիտասարդը,— յես խոստացա, վոր ել չերեք վոչ մի ստրուկ
չեմ պահելու ե ձեզ բոլորիդ կազատեմ, վոր իմ պատճառով չերը-
կեցե կտրված չմնաք ձեր ընտանիքներից ու բարեկամներից,
չվաճառվեք ե դաժան մարդկանց ձեռ չընկնեք, վոր ձեզ ոտա-
բության մեջ չմեռցնեն, ինչպես մեռցրին մեր խեղճ Թոմասին:
Ձեր ազատությամբ ուրախանալով, յերեք մի մոռանաք, վոր
դուք պարտական եք նրան, պլխավորապես, մեր ձեր բարեկամ
Թոմասին, վորի մահը բաց արավ իմ աչքերը, ե յես տեսա այն
սարսափելի չարիքը, վոր կոչվում ե ստրուկութուն: Աշխատեցեք
յերախոսապարտ լինել ոտարության մեջ տանջված ե նահատակ-
յերանով, վոր սիրեք նրա այրուն ու չերե-
ված ձեր ընկերոջը նրանց մասին: Հիշեցեք, վոր դուք պար-
խաներին ե հող տանեք նրանց, յերը կտանեք նրա տնակը
տական եք նրան, ամեն անգամ, յերը կտանեք նրա տնակը
կամ վորեւ մեկին նրա ընտանիքից: Թող քեռի Թոմասի տնակը՝
այդ սքանչելի մարդու հուշարձանը լինի ձեզ համար, վոր միշտ
հիշեցնի նրան ե ցանկութուն ներշնչի հետեւ նրան ե լինել
նույնպիսի ազնիվ ու բարի, ինչպիսին նա յեղավ մինչև իր վեր-
ջին շունչը:

ԳԼՈՒԽ XXVI

ՎԵՐՋԱԲԱՆ

Թոմասի մահվան հետեյալ գիշերը Կասսին ու Նմման փա-
խան կեզրիի կալվածքից: Արևը ծագելուց առաջ նրանք կանդ
առան մի փոքրիկ անտառում հանգստանալու: Կասսին հագել եր
սև շորեր, գլխին գրել եր սև գլխարկ, վորի քողն իջնում-ծած-

կում եր դեմքը: Նրանք պայմանավորվել էյին, վոր Կասսին իրեն ձևացնելու չի վորպես նշանավոր կին, իսկ Եմման լինելու չի նրա սպասուհին:

Կասսին դատարարակվել էր հարուստ տան մեջ, ադատ խոսուում էր ֆրանսերեն, ուրեմն վոչվոր չէր կարող կասկածել, թե փախստական ստրկուհի չի:

Յերեկոյան Կասսին ու Եմման շոգենավի վրա էյին արդեն: Առաջին մարդը, վորին տեսավ Կասսին, Զորջ Շելլին էր: Կասսին այդ յերիտասարդին տեսել էր տանիքից նայելիս. նա տեսել էր, թե ինչպես է նա թոմասի մարմինը տանում և հասկացել էր, թե ով է, վորովհետև նրա մասին գիտեր թոմասի պատմածներին: Նավի վրա նրանք ծանոթացան: Առաջին իսկ բողբոջին, չէր Զորջը տեսավ Կասսին, նրան դարմացրից, վոր նա շատ նման է իր ծանոթներին մեկին, բայց թե ում—հիշել չէր կարողանում: Սեղանի շուրջը հանդիպելով Զորջն ուշադիր նայեց նրա դեմքին, աշխատելով հիշել, թե ում է նման: Զորջի սևեռուն հայացքը շփոթեցրից Կասսին. նա մտածեց, վոր չէրիտասարդը կասկածում է ինչ-վոր: Այդ ժամանակ Կասսին վորոշեց պատմել նրան իր գլխով անցածը:

Զորջը շատ հուզվեց նրա ախուր պատմութունից և խոտացավ գործ գնել բոլոր հնարավոր միջոցները՝ նրանց պաշտպանելու և ապահով տեղ հասցնելու:

Նույն նավով գնում էր մի ֆրանսուհի, դե-Տոււ ազգանունով, իր տասերիս տարեկան սիրունիկ աղջկա հետ: Զորջի հետ ծանոթանալով և իմանալով, վոր նա կենտուկիի նահանգից է, պատմեց, թե ինքը շահել ժամանակ ապրել է այնտեղ և ճանաչում և այնտեղի շատ կարվածատերերի:

— Չէք ճանաչում արդոք վոմն պարոն Գարրիսի,— հարցրեց ֆրանսուհին, — նրա կարվածքը պետք է վսր ձերինից հետու չլինի:

— Այո,— պատասխանեց Զորջը,— կարվածատեր Գարրիսն ապրում է մեզից քիչ հեռու, բայց մենք նրա հետ մոտ ծանոթութուն չենք պահպանում:

— Նա, կարծեմ, շատ ստրուկներ ունի,— կրկին հարցրեց դե Տոււն:

— Այո, շատ, — պատասխանեց փոքր ինչվարմացած Զորջը:

— Զգիտե՞ք արդոք... նա չի ունեցել մի տղա... մուլտա... անունը Զորջ:

— Զորջ: Ինչպես չի, գիտեմ. նա ամուսնացավ մորս սպասուհու հետ և փախավ Կանադա:

— Փախավ: Ի՞նչ չեղջանկութուն,— արագորեն ասաց դե-Տոււն, և նրա աչքերը լցվեցին արցունքով: — Զորջը իմ չեղբայրն է,— ասաց նա:

Զորջ Շելլին զարմանքից քարացավ: Դե-Տոււն պատմեց իր կյանքը. իրեն ծախել են հարավում. այն ժամանակ չեղբայրը դեռ փոքր էր: Նա ընկավ մի բարի և մեծահոգի մարդու ձեռք, վորը տարավ նրան Վեստ-Ինդիա, ազատութուն տվեց իրեն և ամուսնացավ հետը: Վերջերս նրա մարդը մեռավ, և նա այժմ գնում է կենտուկի չեղբորը փնտռելու: Նա անհամբեր հարցուփորձում էր Զորջին չեղբոր և նրա կնոջ մասին:

— Կինն սքանչելի չի,— ասաց Զորջը.— շատ գեղեցիկ և ընդունակ կին է, նա մորս սիրելին էր:

— Նա ձեր տանն և ծնվել:

— Վոչ: Հայրս գնել էր նրան Նոր-Ուրլյան գնացած ժամանակ վոմն պարոն Սիմոնսից:

Այդ ժամանակ Զորջը իր յետևը մի ճիչ լսեց: Յեա դարձավ և տեսավ Կասսին անշունչ փոված և հատակին: Զորջն ու դե-Տոււն շատ անհանդստացան, ուշաթափության պատճառը չհասկանալով: Նրանք բարձրացրին Կասսին, տարան իր կայուսը և սկսեցին ուշքի բերել նրան: Նա միքանի բողբոջից ուշքի յեկավ և, չերեսը պատին դարձնելով, լաց յեղավ:

— Աղջիկս: Աղջիկս,— կրկնում էր խեղճ կինը արտասուքների միջից:

Հանդստանալով, Կասսին բացատրեց, վոր Նոր-Ուրլյանում Սիմոնսից գնած կիզան իր աղջիկն է, վորին այնքան տարի վողբում է:

Կասսին և դե-Տոււն միասին մեկնեցին Կանադա՝ Զորջին ու կիզային փնտռելու: Յերկար վորոնելուց հետո նրանց աջողկեց, վերջապես, գտնել մի ազարակատեր, վորի մոտ փախստականներն ապրել էին վորոշ ժամանակ՝ Կանադա մանելուց հետո: Նրանից իմացան նաև, վոր Զորջն ու կիզան ապրում են Մոնրեալում, և ազարակատիրոջ հետ միասին գնացին այնտեղ:

Յերեկոյն չէր: Մոնրեալի փոքրիկ բնակարանը մաքուր էր և կոկ: Բուխարին վառվում էր ուրախ, սեղանը ծածկված էր ձյունի պես ճերմակ սփռոցով, և ամբողջ ընտանիքը պատրաստվում էր ընթրելու:

Կանկարծ դուռը ձեծեցին, և սենյակ մտավ ծանոթ ազարակատերը՝ չերկու աիկնոջ հետ: Ծանապարհին պայմանավորվել

էլին, վոր ազարակատերը նախ միքանի խոսք կասի, վոր Զոր-
ջին ու Լիզային նախապատրաստի անսպասելի հանդիպումին:
Ազարակատերը սենյակ մանկելով, թաշկինակը հանեց և այն և
հաղաց, վոր ճառն սկսի, չերբ հանկարծ դե-Տուն քանդեց նրա
ամբողջ ծրագիրը: Տիկինն ընկավ Զորջի վզով և, առանց վորեն
նախաբանի, բացականչեց.

— Զորջ: Միթե չես ճանաչում ինձ: Յես քո քույրն եմ,
Եմիլիան:

Կասին նստեց աթոռին և հավանորեն իր դերը շատ լավ
կկատարեր, յեթե նրան չմոտենար փոքրիկ Լիզան, վորը, ինչպես
մի խնձոր կես արած, նման էր իր սեփական աղջկան՝ մանուկ
ժամանակ. Կասին նրա ձեռները բռնեց, սեղմեց իր կրծքին և
ասաց.

— Աղջիկս, չես քո մայրիկն եմ ախր:

Այդ բոպելին նա անկեղծորեն հավատում էր դրան:

Ազարակատիրոջ բանը հեշտ չէր—նա ստիպված էր ամեն
ինչ բացատրել և ամենքին հանգստացնել: Վերջիվերջո նրան
աջողից ասել իր պատրաստած ճառը և, չերբ նա խոսում էր,
ուռնկնդիրները բոլորը լալիս էին:

Միքանի որ հեռո դե-Տուն մանրամասն պատմեց Զորջին
իր գործերի մասին: Նրա մարդը թողել է բավական խոշոր կա-
րողութուն, և նա առաջարկում է Զորջին՝ ոգնել իրեն գործերը
կարգի բերելու:

— Ինձ սովորելու հնարավորութուն տուր, — ասաց Զոր-
ջը, — դա յեղել է միշտ իմ նվիրական լերագր:

Ամբողջ ընտանիքը վորոշեց մեկնել Ֆրանսիա և իրենց հետ
տանել Եմմային: Եմման շողենավի շտուրմանին շատ դուր չե-
կավ, և նա ամուսնացավ Եմմայի հետ: Զորջը չորս տարի դասա-
խոսութուններ լսեց ֆրանսական մի համալսարանում և դարձավ
միանպաստան կրթված մարդ:

Ուսումն ավարտելով՝ Զորջն ամբողջ ընտանիքով փոխա-
դրվեց Աֆրիկա: Նա վճռեց, վոր իր տեղը սպիտակ մարդկանց
ըրջանը չի, վորոնք արհամարհում են իր ցեղակիցներին, այլ
աղքատ, տգետ և հարստահարված սեղերի շրջանը: Այնտեղ նա
կգործադրի իր գիտութունն ու ընդունակութունները:



10

« Ազգային գրադարան



NL0376638

451

~~107~~
